

# ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ


գրական-գեղարվեստական հանդես

52 2018 53

## ՊԻԵՄՆԵՐ

Ուրբեն ՄԱՐՈՒԽՅԱՆ	2	ՀԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ, ԶՈՒՐԸ ԳՅԻՐ
Խաչիկ ՉԱԼԻԿՅԱՆ	18	ԵՎԱՅԼՆ... կամ ճԵՐՄԱԿ ՔԱՌԱԿՈՒՍԻ
Կարինե ԽՈԴԻԿՅԱՆ	42	ՊԱԹ(ոլոգիկ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Գուրգեն ԽԱՆՁՅԱՆ	64	ԿՈԼԻՉԵՅ 21
Լիա ԻՎԱՆՅԱՆ	86	ԶԱԽՈՐԴ ԱՄՊԵՏԻ ՏԵԽՈՒ ԱՐԿԱԾՆԵՐԸ
Էղվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ	116	ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ԾԱՂԻԿԸ
Սմբատ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ	130	ԵՐՋՎՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՈՒ ԺԱՄԸ

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



## Ռուբեն ՄԱՐՈՒԽՅԱՆ

Այս թատերգությունը աշխարհի ամենասեծ, ամենասիանձարեղ,  
ամենախմասուն ու ամենամարդասեր գրողին՝ Հովհաննես  
Թումանյանին պաշտելով եմ գրել,

գրել եմ նրա ստեղծագործության մտահիմերով:

Սիրելի ռեժիսոր, սիրելի երաժիշտ ու նկարիչ, սիրելի դերասաններ,  
ներեք, եթե որևէ բան այնպես չէ: Իսկ եթե բեմադրելու լինեք այս պիեսը,  
մի կարևոր բան մեկընդմիշտ հիշեք. մեր Հայրենիքից գեղեցիկ երկիր ոչ մի  
տեղ չկա ու մենք նրա ծառան ենք, նրա տերն ու պաշտպանը...

# ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ, ԶՈՒՐԸ ԳՅԻՔ

(Հերիաք-պիես երկու գործողությամբ՝  
Հովհաննես Թումանյանի «ԽՈՍՈՂ ԶՈՒԿԸ»  
հերիաքի մոդիվներով)\*

Գործող անձինք  
ԴԵՐԱՍԱԾՆՈՒՀԻ  
ԴԵՐԱՍԱԾ

ՏԻԿՆԻԿՆԵՐ  
ՊԻՊՈՉ - ներկայացումը վարող կատակաբան  
ԶԿՆՈՐՍ  
ՎԱՐԴԱՆՈՒԾ  
ՉՈՒԿ - դառնում է ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ՀՐԵՇ - դառնում է ՄՈՒԿ  
ԿՈՎ

## Ն Ա Խ Ա Բ Ե Մ

Հնչում է ներկայացման սկիզբն ազդարարող երաժշտությունը: Մեծ  
ճամպրուկը քարշ տալով, դահլիճ է մտնում Դերասանուին:

ԴԵՐԱՍԱԾՆՈՒՀԻ - (*հսկիկ*): Բարև,  
սիրելի երեխաներ, հարգարժան  
հանդիսատես: Ուշանալու հա-  
մար ներեցեք, խնդրում եմ:  
Ճամպրուկս շատ-շատ ծանր է:  
(Ճամպրուկը մի կերպ քարծրաց-  
նում է բեմ, դնում հատակին:) Իմ  
դերասան ընկերոջ ճամպրուկն էլ  
ծանր է: (Կանչում է:) Շտապիր,  
պարոն դերասան, շտապիր, երե-  
խաները մեզ են սպասում: Շտա-  
պիր...  
Սիրելի երեխաներ, տատիկներ ու

պապիկներ, մայրիկներ ու հայ-  
րիկներ, մենք տիկնիկային թատ-  
րոնի դերասաններ ենք, մենք...

ԴԵՐԱՍԱԾ - (Մեծ ճամպրուկով բարձ-  
րանում է բեմ): Այն, այն, մենք  
տիկնիկային թատրոնի դերասան-  
ներ ենք, մեր ներկայացման բոլոր  
անհրաժեշտ իրերը այս ճամպ-  
րուկների մեջ են: Մենք շրջում ենք  
աշխահով մեկ, խելացի, ուշիմ ու  
աշխատասեր երեխաներին պատ-  
մում իմաստուն հեքիաթներ... Նե-  
րեցնք, ավելի ստույգ...

\* Նվիրվում է Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին

**Ճամպրուկներից մեկի միջից  
լսվում է Պիպոզի գոռգոռոցը:**

**ՊԻՊՈԶ -** Խեղրվին եմ... Ծնչահեղձ  
եմ լինում... Ծուտ ինձ հանեք այս  
մութ տեղից... Վայ, վայ-վայվայ-  
վայ... Ծուտ արեք, քանի շունչս  
չեմ փշել... Հանեք, ինձ հանեք  
այստեղից...

**ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ -** Պարոն դերասան,  
արագ ճամպրուկի բաց, Պիպոզը  
շնչահեղձ է լինում... (Ճամպրուկի  
վրա կռանալով:) Համբերիր,  
համբերիր, սիրելի Պիպոզ...

**ԴԵՐԱՍԱՆ - (բացում է ճամպրուկը):**  
Պիպոզ, սիրելի Պիպոզ...

**Ճամպրուկից դուրս է քոչում Պի-  
պոզը:**

**ՊԻՊՈԶ -** Լավ է լուսավոր ու տաք  
դահլիճում ապրել, քան մութ ու  
խեղրուկ ճամպրուկում... (Հանդի-  
սավոր ու ներշնչված:) Իմ ջերմ  
ողջունները ձեզ, թանկագին  
հանդիսատես: Թույլ տվեք ներ-  
կայանալ...

**ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ -** Ես ձեզ կներկա-  
յացնեմ, սիրելի Պիպոզ, նեղութ-  
յուն մի քաշեք:

**ՊԻՊՈԶ -** Ծնորհակալություն:

**ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ -** Ծանոթացեք,  
խնդրում եմ: Մեր թատրոնի տա-  
ղանդավոր տիկնիկ-դերասան,  
կատակարան Պիպոզ Պիպոզի  
Պիպոզյան... Ծափահարություն...

**ՊԻՊՈԶ - (խոնարհվում է աջ ու**

**ձախ):** Զգացված եմ... Ծնորհա-  
կալություն: Սիրելի հանդիսատես,  
ես ծնվել, մեծացել ու ապրում եմ  
այս թատրոնում: Ես սքանչելի հե-  
քիաթներ գիտեմ...

**ԴԵՐԱՍԱՆ -** Սպասիր, սպասիր, Պի-  
պոզ: Մինչև հեքիաթ պատմելը,  
մենք պետք է բեմը հարդարենք:  
Խնդրում եմ, օգնիր մեզ:

**ՊԻՊՈԶ -** Խնդրեմ: Ճամպրուկների  
միջից հանեք վարագույրները և  
կախեք ահա, այստեղ...

**Դերասանները քացում եմ  
ճամպրուկները, հանում վարա-  
գույրները, հարդարում են բեմը:**

**ՊԻՊՈԶ -** Ծնորհակալություն... Սի-  
րելի հանդիսատես, այս հեքիա-  
թը, որ իմա ձեզ պիտի  
ներկայացնեն մեր տիկնիկային  
թատրոնի դերասանները, գրել է  
հայ հանձարեղ բանաստեղծ  
Հովհաննես Թումանյանը: Ծա-  
փահարություն... Թանկագին դե-  
րասաններ, հեքիաթն սկսելու  
համար հորդառատ գետ է պետք:

**ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ - Գետ:**

**ՊԻՊՈԶ -** Այո, այն, հորդառատ գետ:

**ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ - (դերասանին):**

Մենք գետ ունենք:

**ԴԵՐԱՍԱՆ -** Այո, գետը ճամպրուկիդ  
մեջ է:

**ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ -** Իսկապես, գետն  
իմ ճամպրուկում է: (Բացում է  
ճամպրուկը, հանում երկար,

կապտագույն շղարշե կտորը:)  
Խնդրում եմ, բռնիր այս ծայրից ու  
մի քանի քայլ հեռացիր: (Դերա-  
սանը կատարում է նրա հրահան-  
գը:) Ծնորհակալություն: Հիմա  
թափահարիր... Համաշափ, հան-  
գիստ թափահարիր, ահա այս-  
պես:

**Կտորը թափահարում են այն-  
պես, որ ալիքներ առաջանան:**

**ՊԻՊՈԶ -** Օ՛, ինչ հորդառատ գետ է:  
Խնդրում եմ, գետը տեղադրեք բե-  
մում: (Դերասանները կատարում  
են հրահանգը:) Ծնորհակալութ-  
յուն:

**ԴԵՐԱՍԱՆ -** Էլ ինչ է պետք, Պիպոզ:  
**ՊԻՊՈԶ -** Ձենորսի տնակ ու նավակ:

**ԴԵՐԱՍԱՆՈՒՅՆ -** Ձենորսի նավակն  
ու տնակը քո ծամպրուկն են:

**ԴԵՐԱՍԱՆ -** Այն, այն, իմ ծամպրու-  
կում են: (Ճամպրուկից հանում է  
տնակն ու նավակը, տեղադրում է  
գետակի ափին:) Խնդրեմ, տնակն  
ու նավակը պատրաստ են:

**ՊԻՊՈԶ -** Ծնորհակալություն: Դերա-  
սաններ, անցեք բեմ, ներկայա-  
ցումը սկսում ենք: (Դերասանները  
վերցնում են ծամպրուկները,  
անցնում են բեմ:) Ծնորհակալութ-  
յուն... Սիրելի հանդիսատես, ծա-  
փահարեք դերասաններին, որ

ոգևորվեն... Ծնորհակալություն...  
Վառեք բեմի լուսերը... (Վառվում  
են բեմի լուսերը:) Ընչեցրեք ե-  
րաժշտությունը... (Ընչում է երաժ-  
շտությունը:) Ծնորհակալություն...  
(Երգում է:)

**Օ՛, հեքիաթ իմ, հեքիաթ իմ,**  
**Ծունչ առ, ապրիր մեր բեմում,**

**Ու մեր բեմը թող օծվի,**

**Աստղալուսով հեքիաթի...**

**Այն, ինչ չկա մեր կյանքում,**

**Մենք հեքիաթում թող տեսնենք,**

**Ապրենք խնդության պահեր**

**Մեր այս հեքիաթ աշխարհում...**

**Օ՛, հեքիաթ իմ, հեքիաթ իմ,**

**Իմ հեքիաթի հերոսներ,**

**Ծունչ առեք դուք մեր բեմում,**

**Մեզ ինդություն պարզենք...**

Թանկագին հանդիսատես, այ-  
սօր, այստեղ դուք ձեր աչքերով

կտեսնեք, ձեր ականջներով

կլսեք, թե ինչպես է ձուկը խոսում:

Աշխարհում չտեսնված ու չլսված

մի բան, որը միայն ու միայն մեր

թատրոնում է տեղի ունենում, մեր

գետի մեջ լողացող ձկան հետ:

Ծափահարություն... (Դեպի կու-  
լիսները:) Դերասաններ, պատ-

րաստ, ներկայացումը սկսում  
ենք:

**Պիպոզը գնում է:**

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Պատկեր առաջին

**Հնչում է Զկնորսի մեղեղին: Գետն ալիքվում է:  
Հայտնվում է Զկնորսի նավակը:**

**ԶԿՆՈՐՍ - (թիավարում է ու երգում):**

Զկնորսի բախտը թե  
հանկարծ թերի,  
Զուկը ջրում չի համբերի,  
Կգա, ուռկանը կընկնի բաց,  
Զկնորսը կունենա  
պանիր ու հաց:  
Զկնորսի բախտը թե  
հանկարծ ժպտա,  
Ուկե ձկնիկն էլ չի համբերի,  
Կգա, ուռկանը կընկնի բաց,  
Զկնորսը կունենա շքեղ պալատ,  
Դուռ, լուսամուտ ուկեջրած...  
(Ուռկանը ջուրն է զցում ու քաշում): Ես ինչ ծանր է... Երևի ուռկանը լիքը ձուկ է լցվել: Բախտս ժպտում է... Չէ, մենակ չեմ կարող դուրս հանել, Վարդանուշին կանչեմ... Վարդանուշ... Վարդանուշ... Ընդ, ինչ, Վարդանուշ...

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - (հեռվից): Ո՞վ է ինձ կանչում:**

**ԶԿՆՈՐՍ - Ես եմ, քո ամուսինն եմ:**

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - Խեղղվում ես:**

**ԶԿՆՈՐՍ - Չէ, շնչում եմ:**

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - Բա ինչո՞ւ ես ինձ կանչում, որ չես խեղղվում:**

**ԶԿՆՈՐՍ - Ծուտ, շուտ արի, բախտ-**

ներս ժպտում է... Արի, արի, արի...

**Վազելով գալիս է Վարդանուշը:**

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - Ժպտացող բախտը ո՞ւր է:**

**ԶԿՆՈՐՍ - Ուռկանը լիքը ձուկ է լցվել: Օգնիր... Օգնիր, ջրից հանենք...**

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - Մի կողմ քաշվիր... Հիմա մի մատով կքաշեմ, դուրս կհանեմ:**

**ԶԿՆՈՐՍ - Քաշի, քեզ տեսնեմ:**

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - (քաշում, քաշքառում է): Չէ, շատ-շատ լիքն է:**

**ԶԿՆՈՐՍ - Բա որ ասո՞ւմ եմ... Բոնի, միասին քաշենք: Բոնեցիր: Ապրես: Հենց ասեմ՝ մեկ, երկու, երեք, հոպլա, կքաշես...**

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - Քաշեցինք, ասա:**

**ԶԿՆՈՐՍ - Մեկ, երկու, երեք, հոպլա... Լաշում-քաշքառում, երկուսով վայր են ընկնում:**

**ՎԱՐԴԱՆՈՒՇ - «Հոպլան» լավ չասացիր, դրա համար էլ դուրս չեկավ:**

**ԶԿՆՈՐՍ - Ես որ հոպլա էի ասում, դու դեռ ծնված չէիր:**

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Հոպլան ես կասեմ:  
Ես որ ասեմ, դուրս կգա:

**ԶԿՆՈՐԸ** - Ասա:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Բոնեցինք: Քաշեցինք: ՄԵԿ, Երկու, Երեք, հոպլայ...

**Քաշում-քաշքում, ուտկանք ջրից  
հանում են:** Ուտկանից դուրս է  
թռչում գեղեցիկ մի ձուկ, պոչով  
խփում է Ձկնորսին, գցում գետ-  
ճին:

**ԶԿՆՈՐԸ** - Վայ, վայ, վայ, ականջս...  
Վայ, վայ, վայ, գլուխս...

**Վարդանուշը հարձակվում է  
Ձկան վրա: Զուկը պոչով խփում  
է Վարդանուշին:**

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (Վայր է ընկնում):  
Վայ, վայ, վայ, մեջքս, քիթս...

**ԶԿՆՈՐԸ** - (Վեր է կենում): Վարդա-  
նուշ, գլուխտ պահի, գլսիդ չզար-  
կի...

**Զուկը պոչով զարկում է Ձկնորսին:**

**ԶԿՆՈՐԸ** - (Վայր է ընկնում): Վայ,  
վայ, վայ... Վարդանուշ, փրկիր...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (զայրացած): Չես  
ամաչում, գետինը չես մտնում, այ  
Ճնկ:

**Զուկը պոչով զարկում է Վարդա-  
նուշին:**

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (փողում է գետնին):  
Մեռա...

**ԶԿՆՈՐԸ** - Վարդանուշ, շնչիմ ես:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Մեռած-մեռած շնչում  
եմ:

**ԶԿՆՈՐԸ** - Ի՞նչ անենք:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Կացինը բերենք,  
գլուխը կտրենք:

**ԶԿՆՈՐԸ** - Չէ, չէ, չէ... Մեղք է:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Բա ի՞նչ անենք:

**ԶԿՆՈՐԸ** - Մեզ զցենք վրան, շունչը  
կտրենք: Չեռքս բռնի: Երկու, Ե-  
րեք, չորս, հոպլայ, թռանք...

Իրաք ձեռք բռնում, թռչում են  
Ձկան վրա: Զուկը թպրտում-  
թպրտում, հանդարտվում է:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Շունչը փչեց:

**ԶԿՆՈՐԸ** - Էսքան տարի ձկնորս եմ,  
իս տեսակ ձուկ առաջին անգամ  
եմ բռնում:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Շուկայում սրան  
շատ փող կտան:

**ԶԿՆՈՐԸ** - Հա, շատ փող կտան:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Ինձ համար հոլունք  
կառնես, Նանիս՝ շալ, Զանիին՝  
շալվար, Վանին՝ գլխարկ, Գա-  
գովին՝ կոշիկ, Նանարին՝ գոլպա,  
Լալային՝ քիշմիշ, Գալոյին՝  
բլուզ... Հա, չմոռանաս՝ յուղ ու  
բրինձ էլ կառնես...

**ԶԿՆՈՐԸ** - Գնա, պղինձը դիր կրա-  
կին: Յուղն ու բրինձը բերեմ,  
վլավ ուտենք:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Գնամ, օջախը վա-  
ռեմ, պղինձը դնեմ կրակին: Վա-  
ղուց վլավ չենք կերել:

- Վարդանուշը գնում է:** Ձկնորսը փորձում է Ձկանը շալակել:
- ԶՈՒԿ - (արձագանքվող ձայնով):** Մարդ ախատեր, մարդ ախատեր... Ախատեր...
- ԶԿՆՈՐՍ - (Չուրջը նայելով):** Ո՞վ է, ո՞վ է ինձ կանչում...
- ԶՈՒԿ - Ես եմ, մարդ ախատեր... Ես...**
- ԶԿՆՈՐՍ - Սատանա ես, գել ես, գազան ես, ով ես, երևա...**
- ԶՈՒԿ - Չէ, չէ, սատանա չեմ, գել չեմ, գազան չեմ... Ես եմ, մարդ ախատեր:**
- ԶԿՆՈՐՍ - Զո՞ւկ... Դու ես խոսհում... Ականջներիս չեմ հավատում:**
- ԶՈՒԿ - Ցավն է ինձ ստիպում խոսել:** Ցավը:
- ԶԿՆՈՐՍ - Ի՞նչ ցավ, այ ծուկ:**
- ԶՈՒԿ - Մայրս հիմա ինձ է սպասում... Ընկերներս, հայրս ինձ են փնտրում... Այս, այս, այս, ջո՞լ, ջո՞լ, ջո՞լ, ջո՞լ, շնչահեղծ եմ լինում, ջո՞լ...**
- ԶԿՆՈՐՍ - Հիմա... (Գետակից բռով ջուր է բերում):** Աիա, խմիր, խմիր, ծուկ ախատեր:
- ԶՈՒԿ - (ագահարար խմում է):** Ծնորհակալ եմ, մարդ ախատեր:
- ԶԿՆՈՐՍ - Զուկ ախատեր, դու էլ մեր նման մայր, հայր, բարեկամներ, ընկերներ ունես, աշխարհից բան ես հասկանո՞ւմ...**
- ԶՈՒԿ - Հա, մարդ ախատեր, մայրս հիմա ինձ է սպասում... Ջո՞լ, ջո՞լ, ջո՞լ, շնչահեղծ եմ լինում, ջո՞լ...**

- ԶԿՆՈՐՍ - Հիմա, ծուկ ախատեր:** (Լորից գետից ջուր է բերում:) Խմիր, խմիր, ծուկ ախատեր:
- ԶՈՒԿ - Ինձ ջուրը գցիր, մարդ ախատեր:** Մորս շատ եմ կարոտել: Խնդրում եմ, գետը գցիր, գնամ մորս մոտ:
- ԶԿՆՈՐՍ - Մայրդ որ իմանա՝ դու էստեղ էսպես տանջվում ես, քեզանից ավելի շատ կտանջվի... Լաց կլինի...**
- ԶՈՒԿ - Գցիր, գցիր, ինձ ջուրը գցիր, մարդ ախատեր, գնամ մորս մոտ:**
- ԶԿՆՈՐՍ - Հիմա, հիմա, ծուկ ախատեր:** (Ձկանը գցում է գետը:)
- ԶՈՒԿ - (Գլուխը ջրից դուրս հանելով):** Ծնորհակալ եմ, մարդ ախատեր, քո լավությունը երբեք չեմ մոռանա:
- ԶԿՆՈՐՍ - Գնաս բարով, ծուկ ախատեր... Իմ կողմից մայրիկիդ բարև տար...**
- ԶՈՒԿ - Ծնորհակալ եմ, շատ-շատ շնորհակալ եմ, մարդ ախատեր...**
- ԶԿՆՈՐՍ - Զգույշ եղիր, հանկարծ նորից ուռկան չընկնես... Գնաս բարնվ... Գնաս բարնվ... Գնաս բարնվ...**
- Գալիս է Վարդանուշը:**
- ՎԱՐԴԱՆՈՒԾ - Էդ ո՞ւմ ես «գնաս բարով» ասում:**
- ԶԿՆՈՐՍ - Ձկանը:**
- ՎԱՐԴԱՆՈՒԾ - Ո՞ւմ:**
- ԶԿՆՈՐՍ - Ձկանը...**

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Ո՞ր ձկանը:

**ԶԿՆՈՐԸ** - Էն, որ պոչով զարկեց գլխիդ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - ԳԺՎԵԼ ես:

**ԶԿՆՈՐԸ** - Ասաց՝ մայր ունեմ, հայր ունեմ, ընկերներ, հարազատներ ունեմ...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Զ՞ո՞ւկը:

**ԶԿՆՈՐԸ** - Հա, հա, խոսում էր... Խոսող ձուկ էր: Մայրը մեղք էր, բաց թողի, գնա իր մոր մոտ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Բա փլավը, շորն ու կոշի՞կը, շալվարն ու քիշմիշը... Վայ, վայ, անխելք մարդ... Ինձ ջուրն եմ գցում, քեզնից պրծնեմ...

**ԶԿՆՈՐԸ** - Զգես, քեզ ջուրը չգեսս... Առանց քեզ ես կմեռնեմ...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Բաց թող, բաց թող... Գցում եմ... Ինձ ջուրն եմ գցում...

Վարդանուշն ու Ձկնորսը քաշքաւում էն իրաք: Հայտնվում է Կովը:

**ԿՈՎ** - Մմուրու... Մմուրու... Մմուրու...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ}** - (միասին): Զա՞ն... Զա՞ն, զա՞ն...

**ԶԿՆՈՐԸ** - Էս ի՞նչ սիրուն կով է...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Երանի մեզ տային: Որ մեզ տան, ինձ գետը չեմ գցի:

**ԶԿՆՈՐԸ** - Հեյ, հեյ, կովատեր, արի, կովդ տար...

**ՀՐԵՑ** - (արձագանքվող ձայնով): Կովը նվիրում եմ ձեզ... Նվիրում եմ ձեզ... ձեզ... նվիրում եմ... նվիրում եմ...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Ծնորհակալ ենք...

Ծատ շնորհակալ ենք:

**ԶԿՆՈՐԸ** - Որ հարցնեն՝ ով է նվիրել, ինչ պատասխան տանք:

**ՀՐԵՑ** - Ասեք՝ տերը մենք ենք, մենք, մենք, մենք...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Վայ, վայ, Աստված ջան, էս ինչ թարս օր է...

**ՀՐԵՑ** - Թարս օր չէ, լավ օր է... Կովը նվիրում եմ ձեզ... Նվիրում եմ...

**ԶԿՆՈՐԸ** - Դու ո՞վ ես:

**ՀՐԵՑ** - Ես... Ես... Ես եմ...

**ԶԿՆՈՐԸ** - Ուզում եմ երեսդ տեսնեմ: Ո՞վ ես:

#### Խորիրդավոր երաժշտություն:

**ՀՐԵՑ** - (հայտնվում է): Բարի օր ձեզ... Հազար բարով...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (ձշում է): Վայ, վայ, վայ, ես մեռա... Վայ, մամա ջան...

**ԶԿՆՈՐԸ** - Սարի պես կանգնած, տերևի պես դողում եմ... Զվախենաս, Վարդանուշ...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Չեմ վախենում... Չէ, չէ, չէմ վախենում...

**ԶԿՆՈՐԸ** - Ասա՝ ո՞վ ես... Ո՞վ ես... Չեմ վախենում, չեմ վախենում...

**ՀՐԵՑ** - Հրեշի Հրեշի Հրեշյանն եմ:

**ԶԿՆՈՐԸ** - Վայ, քո տունը քանդվի, Հրեշ...

**ՀՐԵՑ** - Չեզ լավություն եմ ուզում անել:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Լեղիս ջուր է դարձել...

**ԾՐԵԾ** - Կովը նվիրում եմ ձեզ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ, ՁԿՆՈՐՍ** - (միասին):

Ինչ ես անում: Չհասկացանք, նորից ասա:

**ԾՐԵԾ** - Կովը նվիրում եմ ձեզ:

**ՁԿՆՈՐՍ** - Հենց էնպես նվիրում ես:

**ԾՐԵԾ** - Հիմա ով է հենց էնպես ինչ-որ մեկին ինչ-որ բան նվիրում:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Փոխարենը ինչ ես ուզում, Հրեշ:

**ԾՐԵԾ** - Երեք տարի կովը ծեզ կաթ կտա: Կարագ, պանիր կունենաք, ուրախ, զվարթ կապրեք:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Վայ, էս ինչ լավ իրեշ է... Ապրես, շատ ապրես, Հրեշ ախպեր:

**ՁԿՆՈՐՍ** - Սպասիր, խելոք կին... Երեք տարի հետո ինչ ես անելու, Հրեշ Հրեշյան:

**ԾՐԵԾ** - Գալու եմ ձեր տուն, ձեզ հարցեր տամ: Իմ հարցերին որ չպատասխանեք, ձեզ տանելու եմ՝ ինչ ծառա դարձնեմ: Համաձայն եք:

**ՁԿՆՈՐՍ** - Վարդանուշ... նուշ... խոսիր... Վարդանուշ... նուշ-նուշ... փուշ...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Լեզուս կապ է ընկել...

**ՁԿՆՈՐՍ** - Իմ բերանում էլ շունչ չկա... Վարդանուշ... նուշ-նուշ... փուշ...

**ԾՐԵԾ** - Երկար սպասել չեմ կարող: Ասեք՝ համաձայն եք:

**ՁԿՆՈՐՍ** - Վարդանուշ, երեք տարի հետո կամ կովը կսատկի, կամ՝ կովի տերը:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Համաձայն եմ: Այ մարդ, դու էլ ասա՝ համաձայն եմ:

Կաթ, մածոն, պանիր, կարագ... **ՁԿՆՈՐՍ** - Հա, կամ կովը կսատկի, կամ՝ կովատերը... Համաձայն ենք, համաձայն ենք... Կաթ, կարագ, պանիր...

**ԾՐԵԾ** - (*հոհոռում է*): Հա՛-հա՛-հաա՛... կաթ, կարագ, պանիր... Մնացեք բարով... Երեք տարի հետո գիշերը կգամ, ծեզ կտանեմ, ծառա կդարձնեմ... Հա, հա՛, հաա՛...

**Գնում է:**

**ԿՈՎ** - Մմուռուն... մմուռու... մմուռու...

**ՁԿՆՈՐՍ, ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (միասին): Զան, ջան, ջան...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (մոտենում է կովին): Անունդ ինչ է:

**ԿՈՎ** - Մմուռուն... Մուռուռուիիի...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Ինչ:

**ՁԿՆՈՐՍ** - Մանուշակ ասաց:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Մանուշակ է անունդ, կով ջան:

**ԿՈՎ** - Մաանննոուուու...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Քեզ վարդի պես կպահեմ, Մանուշակ ջան... Գնանք, գնանք...

**ՁԿՆՈՐՍ** - Հն, հն, հն, գնացինք, Մանուշակ ջան...

**ՁԿՆՈՐՍ**, Վարդանուշը, կովը գնում են:

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Պատկեր առաջին

Իրիկնամուտ է: Կովը բառաչում է: Մի խործ խոտ շալակիմ, դույլը ձեռքին  
գալիս են Ձկնորսն ու Վարդանուշը:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (կովի ծակատը շոյելով երգում է):

Կաթ ու կարագ տվող կով ջան,  
Յուղ ու պանիր տվող կով ջան,  
Մեր սիրելի, մեր քույր կով ջան,  
Մեր Մանուշակ, վարդ ու շուշան,  
Կաթ ու կարագ տվող կով ջան...

**ՁԿՆՈՐՍ** - (պարելով):

Մանուշակ ջան, Մանուշակ,  
Մեր հոյս, մեր լոյս, մեր ծրագ,  
Սարից ծաղիկ խոտ եմ բերել,  
Պաղ աղբյուրից ջուր եմ բերել  
Քեզ համար, որ ուտես-խմես,  
Առատ-առատ կաթ տաս մեզ,  
Մանուշակ ջան, Մանուշակ,  
Մեր հոյս, մեր լոյս, մեր ծրագ...

Դոան ուժգին թակոցը լնիհա-  
տում է նրանց երգը:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (ձեռքից դույլը վայր  
է ընկնում): Ո՞վ էէէ...

**ՁԿՆՈՐՍ** - (թաքնվում է կովի ետևում):  
Վարդանուշ, զնա, տես, ՞վ է:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Եսս միսում եմ...  
Ես... տկար ես... Ես չկամ...

**ՁԿՆՈՐՍ** - Վարդանուշ, երեք տարին  
հնց անցավ, չիմացանք... Գնա,  
դուռը բաց: (Դոան թակոցը  
կրկնվում է:)

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Ամենից շատ կա-  
րագ դու ես կերել, դու էլ գնա, դու-  
ռը բաց:

**ՁԿՆՈՐՍ** - Կովին տանեմ, մարագում  
թաքնեմ... Դուռը դու բաց...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Հրեշը եկել է մեզ  
տանի, իրեն ծառա դարձնի...  
Վայ, վայ...

Դոան թակոցը կրկնվում է:

**ՁԿՆՈՐՍ** - Ոռողվվվ էէէ...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - (դրսից): Մանուշակ  
անունով կովի տերերի տունը սա՞ է:

**ՁԿՆՈՐՍ** - (առաջ գալով): Կովին  
բան ունես ասելու:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Դուռը բացեք, ներս  
գամ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Ծատ լավ կով է: Կա-  
թը՝ անուշ, կարագը՝ համեղ, պա-  
նիրը՝ յուղալի... Երեք տարին չի  
լրացել... Գնա, կորի...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Դուռը բացեք:

**ՁԿՆՈՐՍ** - Մինչև չասես՝ ՞վ ես, չեմ  
բացի:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ճամփորդ եմ: Գիշե-  
րելու տեղ չունեմ: Գիշերը ձեր  
տանը կմնամ, լոյսը բացվի՝  
կգնամ:

**ԶԿՆՈՐՍ** - Վարդանուշ, հյուր է, հյուր... Հրեշը չէ: Աչքի լույս... Հյուր է:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Մեր տան դուռը հյուրերի առաջ բաց է: Համեցեր:

**ԶԿՆՈՐՍ** - (դուռը բացում է): Համեցեք, համեցեք...

**Ներս է գալիս Երիտասարդը:**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ներեցեք, որ նեղություն եմ տալիս:

**ԶԿՆՈՐՍ** - Չէ, չէ, ինչ նեղություն... Լենություն է, նեղություն չէ... Վարդանուշ, մածուն բեր, կարագ բեր...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Նեղություն մի քաշեք:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Պիտի նեղություն քաշենք, որ լավություն անենք:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ես ձեզանից միայն գիշերելու տեղ եմ խնդրում:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (լաց է լինում): Չենք կարող քեզ գիշերելու տեղ տալ... Չենք կարող... Չենք կարող...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Մահճակալ, անկողին չունեք, թե...

**ԶԿՆՈՐՍ** - Ամեն ինչ էլ ունենք, բայց չենք կարող քեզ էս գիշեր հյուր ընդունել, չենք կարող...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ինչո՞ւ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Էս գիշեր երեք տարին լրանում է... Էս գիշեր Հրեշը գալու է...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ո՞վ է գալու:

**ԶԿՆՈՐՍ** - Կով տվողը:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Ասաց՝ երեք տարի հետո կգամ:

**ԶԿՆՈՐՍ** - Ասաց, կգամ՝ ձեզ հարցեր կտամ: Հարցերիս չպատասխանեք, ձեզ կտանեմ, ինձ ծառակորածնեմ...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Վախենում եմ, քեզ էլ տանի, ծառա դարձնի: Գնա, երիտասարդ, մեղք ես:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չէ, չեմ գնա, կմնամ ձեզ հետ: Որտեղ դուք, էնտեղ էլ ես:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Դու գիտես, ձամփորդ ախպեր, ուզում ես՝ մնա, ուզում ես՝ գնա:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չեմ գնա: Մնում եմ:

**ԶԿՆՈՐՍ** - Վարդանուշ, ամենալավ, ամենափափուկ անկողինը պատրաստիր մեր հյուրի համար: Բմբովի բարձը կդնես գլխի տակ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ծնորհակալ եմ... Ծատ շնորհակալ...

**ԶԿՆՈՐՍ** - Գնանք, քնենք, լույսը բացվի, բարին հետը...

**Գնում են:** Երկնքում առկայժում են աստղերը: Ամպերի մեջ լողում է լուսինը: Գալիս է Պիպոզը:

**ՊԻՊՈԶ** - (Երգում է):

Գիշերն անուշ, զովն անուշ,  
Աստղ ու լուսին արթնացել,  
Ողջ աշխարհին այս գիշեր,  
Բաժանում են երազներ...  
Այս, երազներ, երազներ,  
Խաղաղ, բարի երազներ,

Աստղալոյսով օծեցեք  
Մեր երազներն այս գիշեր...

**Պիպողը գնում է:** Երկինքը  
բռնկվում է կարմիր բոցով:  
Հայտնվում է Հրեշը:

**ՀՐԵՇ** - (արձագանքվող ձայնով):  
Հաա... Խաղաղ է, հանգիստ է,  
գիշեր է: Քնել են բոլորը... Ես,  
միայն ես եմ արթուն... Ագահ եմ,  
անկուշտ եմ, ծակաչք եմ... Ուզում  
եմ՝ աշխարհի գանձերն իմը լի-  
նեն... Ուզում եմ՝ բոլոր մարդիկ իմ  
ծառաները լինեն... Հեյ, Ձկնորս,  
Եկել եմ ձեզ տանելու...

Մոտենում է Ձկնորսի տնակին,  
քակում դուռը: Դժմից գլուխը  
դրւում է հանում Վարդանուշը:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Տանը մարդ չկա...  
Ես էլ տանը չեմ... Կովն էլ տանը  
չէ...

**ՀՐԵՇ** - Երեք տարին լրացել է... Հա՛,  
հա՛, հա՛...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Չեմ վախենում, չեմ  
վախենում, չեմ վախենում, չեմ  
վախենում...

Տնից դուրս է քոչում Ձկնորսը:

**ՁԿՆՈՐՍ** - Վարդանուշ, չվախենաս...  
Տերկի պես դողում եմ...

**ՀՐԵՇ** - Պատրահստ եք իմ լավության  
պատասխանը տալու:

**ՁԿՆՈՐՍ** - Կովն ես տանելու, թե՞ մեզ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Կովն չենք տա, կո-  
վը չենք տա, չենք տա...

**ՀՐԵՇ** - Իմ հարցերին որ պատաս-  
խանեք, կովն կմնա ձեզ: Զպա-  
տասխանեք, ձեզ կտանեմ, ինձ  
ծառա կդարձնեմ...

**ՁԿՆՈՐՍ** - Հարցերը տուր: Վարդա-  
նուշ, ես կպատասխանեմ, չվա-  
խենաս:

**ՀՐԵՇ** - Առաջին հարց: Ես եկել եմ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Գրողի, ցավի, սա-  
տանայի գայիր... Սատկեիր, չգա-  
յիր...

**ՁԿՆՈՐՍ** - Քոռանայիր, չգայիր...  
Սատկեիր... վառվեիր...

**ՀՐԵՇ** - Դա պատասխան չէ: Դա ա-  
նեծք է... Առաջին հարցիս չպա-  
տասխանեցիք: Զասացիք՝ ինչու  
եմ եկել, կամ ինչով եմ եկել...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Օգնեցնք, օգնե-  
ցնք...

Ձկնորսն ու Վարդանուշը փախ-  
չում են:

**ՀՐԵՇ** - Ո՞ր եք փախչում: Հարցերիս  
պատասխանը տվեք, ծառաներ...

Հրեշի դիմաց հայտնում է Երի-  
տասարդը:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Սպասիր, Հրեշ:

**ՀՐԵՇ** - Սա ՞վ է: Սրան էլ ծառա  
կդարձնեմ... Հեյ, ՞վ ես:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Հարցերիդ պատաս-  
խան տվողն եմ:

**ՀՐԵՇ** - Դո՞ւ... Հա՛, հա՛, հա՛... Էդքան

խելք քեզ որտեղից, որ իմ հարցերին պատասխան տաս, այ երիտասարդ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Խելքը բնական է, գիտելիքները՝ ձեռքբերովի:

**ՀՐԵՇ** - Դե որ էդքան խելոք ես, պատասխանիր իմ հարցերին:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Պատրաստ եմ, հարցերդ տուր:

**ՀՐԵՇ** - Առաջին հարց: Ես եկել եմ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ես էլ եմ եկել:

**ՀՐԵՇ** - Որտեղից ես եկել:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Ծովի ափից:

**ՀՐԵՇ** - Ինչով ես եկել:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Կաղ մոծակը թամբել, վրան նստել, եկել եմ:

**ՀՐԵՇ** - Ինչ, ինչ ես արել: Մոծակին ինչ ես արել:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Մոծակին թամբել, վրան նստել, եկել եմ:

**ՀՐԵՇ** - Կաղ մոծակը: Մոծակը... Կաղ... Կաղ... Մոծակը...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Այո, կաղ մոծակը թամբել, վրան նստել, եկել եմ:

**ՀՐԵՇ** - Ուրեմն էդ ծովը պստիկ է եղիլ: Այ, էսքան:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չէ, չէ, պստիկ չէ: Մեծ, շատ մեծ ծով է: Արծիվը մի ծայրից մյուսը չի կարող թռչել:

**ՀՐԵՇ** - Հի, հի, հի, էդ արծիվը ճնշւթ է եղել, ծուտ է եղել: Պստիկ ծուտիկ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չէ, մեծ, շատ մեծ արծիվ է: Թևերի ստվերը քաղաք է ծածկում:

**ՀՐԵՇ** - Էդ քաղաքը եղունգիս չափ փոքր է: Հա, փոքր է:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չէ, մեծ, շատ մեծ քաղաք է: Նապաստակը մի ծայրից մյուսը չի կարող վազելով անցնել:

**ՀՐԵՇ** - Նապաստակը... Էդ նապաստակը փոքր, շատ փոքր ձագ է եղել:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չէ, մեծ, շատ մեծ նապաստակ է, մորթուց մի մարդու մուշտակ կարեցին ու չորս զոյգ կոշիկ:

**ՀՐԵՇ** - Էդ մարդը թզնիկ էր: Հա, թզնիկ էր:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չէ, հսկա էր: Ծնկին թառած աքլորը որ ծուղրուդու էր կանչում, իր ականջներին ծայնը չէր հասնում:

**ՀՐԵՇ** - Հի, հի, հի... Էդ մարդը խոնկ էր, խոնկ էր, խոնկ էր...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Չէ, կատարյալ լսողություն ուներ: Պախրան սարում խոտ էր ուտում, ինքը լսում էր, թե ինչպես է պախրան խոտը պոկում:

**ՀՐԵՇ** - Վայ, վայ, վայ... Գլուխս պտտվում է... Ձկնորսին կանչիր: Ձկնորսը թող պատասխանները տա:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Հարցերդ տուր: Ես եմ քո բոլոր հարցերի պատասխանները տալու:

**ՀՐԵՇ** - Վայ, մամա ջան, գլուխս դատարկվել է... Սիրտս թփթփում է...

**ԶԿՆՈՐՍ** - Վարդանուշ: Հրեշներն էլ մամա՞ ունեն:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Հրեշի մաման էլ հրեշ պիտի լինի:

**ՀՐԵՇ** - Վայ, վայ, գլուխս իմը չէ... Աչքերս մթնում են:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Հարցեր տուր, Հրեշ... Սպասում եմ:

**ՀՐԵՇ** - Մտածում եմ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Դու մտածիր, իսկ ես գնամ:

**ՀՐԵՇ** - Ո՞ր, ո՞ր ես գնում:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Էն քաղաքը, որ եղունգիս չափ է:

**ՀՐԵՇ** - Ինչ՞ի ես գնում:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Կաղ մոճակը թամբում եմ, հեծնում, գնում:

**ՀՐԵՇ** - Կաղ մոճակը թամբում է, հեծնում է... Վայ, վայ, աչքերս շաշանում են, սիրտս դմբդմբում է... Մոճակ, մոլշտակ, նապաստակ... Ես փախանակ... Հեծնեմ մոճակին, փախչեմ...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Հեյ, հեյ, Հրեշ, ո՞ր, ո՞ր ես գնում:

**ՀՐԵՇ** - Գնում են էն քաղաքը, որ եղունգիս չափ է... Եղունգիս...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - (առաջ գալով): Գնալի լինի, գալի չլինի, անկուշտ Հրեշ: (Ցավախելով հարժակվում է Հրեշի վրա:) Չեմ վախենում, չեմ վախենում, չեմ վախենում, չեմ վախենում...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Հանգստացեք, խաղաղվեք, բարեկամներս:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Չեմ հանգստանա,

մինչև ցախավելով չխփեմ Հրեշի դատարկ գլխին:

**ՀՐԵՇ** - Չխփես, չխփես, չխփես... (Ճոճվում է ու տապալվում գետնին:)

**ԶԿՆՈՐՍ** - Թողենք, թողենք պատառ-պատառ անեմ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Չմոտենաս, կարող է վնաս տալ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ** - Բարեկամներս, հանգստացեք, խաղաղվեք:

**Հրեշի ընկած տեղից ծովս է ել-նում:**

**ԶԿՆՈՐՍ** - Հրեշը վառվեց, մոխրացավ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Չէ, չէ, մուկ դարձավ: Սև մոնկ:

**ԶԿՆՈՐՍ** - Գնամ, մեր կատվին բերեմ, թող ուտի:

**ՄՈՒԿ** - Չէ, չէչ... չէչ... չէչ... Ես կատուներից վախենում եմ... Չէ, չէ, կատու չբերեք... Օգնեցնք, օգնեցնք... (Փախչում է այս ու այն կողմէ:)

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Մեր կատուն էս մկանը որ ուտի՝ կսատկի: Չբերես, կատվին չբերես:

**ԶԿՆՈՐՍ** - Ցախավելով, ցախավելով խփիր գլխին:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ** - Հա, ձիշտ ես ասում, ցախավելով սատկացնեմ...

**Վարդանուշը ցախավելով խփում է: Մուկը փախչում է:**

**ԶԿՆՈՐՍ - Չարը խափանվեց:**

**Կովկը բառաչում է:**

**ՎԱՐԴԱՆՈՒԾ, ԶԿՆՈՐՍ - (միասին):**

Զան, ջան, Մանուշակ ջան...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Բարեկամներս,  
մնացեք բարով:

**ԶԿՆՈՐՍ - Կովկը կմնա՞ մեզ:**

**ՎԱՐԴԱՆՈՒԾ - Հրեշը չկա՞:**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Այլևս ոչ մի հրեշ ձեզ  
չի անհանգստացնի: Մնացեք  
բարով:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ -** Գոնե անունդ ասա,  
որ օրինենք քեզ, բարի երիտա-  
սարդ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Դուք ինձ ձանաչում  
եք:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ -** Ես քեզ առաջին  
անգամ եմ տեսնում:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Ուշադիր նայեք:

**ԶԿՆՈՐՍ -** Ես էլ եմ առաջին անգամ  
տեսնում:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Դուք ինձ տեսել եք:

**ԶԿՆՈՐՍ -** Ե՞րբ, որտեղ...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Ձեր գետի ափին:

**ԶԿՆՈՐՍ -** Մեր գետի ափին:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Այո: Գետի ափին:  
խոսող ծկանը չճն հիշում:

**ԶԿՆՈՐՍ -** Ո՞նց չեմ հիշում: Մինչև  
իիմա ծայնը ականջում է:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Ես խոսող ծուկն եմ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ -** Վայ, քո ցավը տա-  
նեմ, Զուկ ախապեր: Ես էլ ասում  
եմ, որտեղ եմ տեսել: Սպասիր,  
սպասիր, մածուն բերեմ, կարագ

բերեմ, պանիր բերեմ... Վայ, ես  
քո ցավը տանեմ, Զուկ ախապեր:

**ԶԿՆՈՐՍ -** Էն ո՞նց էիր գլխիս  
խփում...

**ԵՐԻՏԱՍԱՐԴ -** Ցամաքում երկար  
մնալ չեմ կարող: Մնացեք բարով:

**Իրեն զցում է գետը:**

**ԶԿՆՈՐՍ -** Զուկ ախապեր, սպասիր,  
մի բան էլ եմ ուզում ասել:

**Չուկը գլուխը ջրից դուրս է հա-  
նում:**

**ԶՈՒԿ -** Լսում եմ:

**ՎԱՐԴԱՆՈՒԾ -** Մայրիկիդ մեր կող-  
մից բարև տար:

**ԶՈՒԿ -** Ծնորհակալ եմ:

**ԶԿՆՈՐՍ -** Զուկ ախապեր, էս ո՞նց ե-  
ղավ, որ դու մեզ օգնության հա-  
սար:

**ԶՈՒԿ -** Լավություն արա, ջուրը  
օցիր: Լավությունն ու բարությու-  
նը երբեք չեն մոռացվում:

**ԶԿՆՈՐՍ -** Հա, հա, ծիշտ ես ասում:  
Վարդանուշ, Զուկ ախապերը  
շատ-շատ ծիշտ է ասում՝ լա-  
վություն արա, ջուրը օցիր, մի օր  
անպայման պատասխանը կստա-  
նաս...

**ԶՈՒԿ -** Մնացեք բարով...

**ՎԱՐԴԱՆՈՒԾ} - (միասին):** Գնաս  
բարով, Զուկ ախապեր... Գնաս  
բարով...

**Հնչում է երաժշտությունը: Զկնորսն  
ու Վարդանուշը երգում են:**

Մի վախեցեք հրեշներից,  
Չար մարդկանցից,  
                  կախարդներից,  
Միշտ բարություն արեք դուք,  
Ու բարության հզոր ուժով,  
Դուք չարերին կհաղթեք...  
Հավ իմացեք, լյանքում երբեք,

Հավը, բարին չեն կորչում,  
Ապրում են շատ, երկար-երկար,  
Ազնիվ մարդկանց սրտերում...  
Հավ եղեք միշտ ու լավություն  
Միշտ արեք, երբեք-երբեք  
Չմտածեք,  
որ իզուր եք այն արել...

## Վ Ե Ր Զ Ե Ր Գ

Գալիս է Պիպոզը, հայտնվում են նաև Դերասանուիկն ու Դերասանը:

**ՊԻՊՈԶ** - Այո, այո, սիրելի հանդիսատես, լավությունն ու բարությունը երբեք ու երբեք չեն մոռացվում... Ծնորհակալություն դերասաններին, մեր տիկնիկներին և բոլոր նրանց, ովքեր ձեզ համար ստեղծել են այս ներկայացումը... Ուշադիր եղեք ձեր շրջապատի, ծառերի, ծաղիկների, կենդանիների նկատմամբ, ովքեր գիտե, գուց նրանք էլ մի օր ձեզ հետ կխոսեն...

**ԴԵՐԱՍԱՆՈՒԾԻ** - Ծնորհակալություն նաև քեզ, սիրելի Պիպոզ: Թանկագին երեխաներ, ծափահարեք Պիպոզին... Ծնորհակալություն...

**ՊԻՊՈԶ** - Մեր ներկայացումը ա-

վարտվեց: Դերասաններ, մեզ սպասում են, մենք ուրիշ քաղաքում ներկայացում ունենք... Գնացինք...

Դերասանուիկն, Դերասանը,  
Պիպոզը երգում են:

Մենք ձեզ համար խաղացինք,  
Ուկերառիկ մի հեքիաթ,  
Որ գրել է հանձարեղ,  
Թումանյանը Հովհաննես,  
Որ դուք բարի լինեք միշտ,  
Ու լավություն միշտ անեք...  
Մնաք բարով, երեխաներ ու  
մեծեր,  
Մաղթում ենք ձեզ նոր  
հանդիպում,  
Մեր թատրոնի ու մեզ հետ...

Մարտում են քեմի լույսերը: Դերասանները վերցնում են ճամպրուկները, գնում են կուլիսները:

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



## Խաչիկ ՉԱԼԻԿՅԱՆ

Կորուսարի մոտ կարդում ենք՝  
«Երկու անգամ երկու հավասար է չորսի, գումարած՝ հաշվողը»...  
Ի վերջո, ո՞րն է գումարի սահմանը և ինչ է այդ եզրագծից անդին:  
Արևմտյան քաղաքակրթությունը այդ եզրագծին հայտնաբերեց արտուր-  
դը, որը լի է տագնապով ու հուսահատությամբ... ի վերջո, ամենուր  
հանգելով սև քառակուսու: Այլ է հայոց պարագան, ուր  
ըմբուսությունն անգամ կարող է սիրո տոնի վերածվել:  
Տրամարանությամբ քառակուսին չեն հաղթահարի: Եթե պատուհանի  
քառակուսուց նայում են երկնքին, չի նշանակում, որ այն քառակուսի է:  
Սունդուկյանի մոտ արտուրդի քառակուսին ճերմակ է, լցված սիրով,  
միամտության հանող բարությամբ: Նա անսահման սիրում է իր  
կերպարներին, ինչի պատճառով  
քացասական հերոսները նրա մոտ չեն ստացվում:  
Անավարտ լինելու շնորհիվ այս միտումները հատկապես նկատելի են  
նրա «Եվայլն, կամ նոր Դիոգինէս» անավարտ պիետում, ինչը փորձի  
հնարավորություն է ընձեռել պատուհանի ճերմակ քառակուսուց դիտել  
Սունդուկյանին ու նրա հերոսներին:

# ԵՎԱՅԼՆ... կամ ՃԵՐՄԱԿ ՔԱՌԱԿՈՒՄԻ

(Հայր Գաբրիել Սունդուկյանի)

**Գործող անձինք**

**ԵՎԱՅԼՆ - նույն ինքը՝ ԽՈՐԾ, նույն ինքը՝**

**Գաբրիել Սունդուկյանը**

**ՄՈՍԵՍ - թիֆլիսյան վաճառական**

**ՆԻՆՈ - նրա կինը**

**ՂԱՂՈ - Մոսեսի եղբայրը**

**ՄԵՐԳՈ - տան ծառայողը, նույն ինքը՝**

**Ալեքսանդր Մակերնացին**

**Բեմը քաղքենիորեն ճոխ, ոչ այն է՝ ննջարան է, ոչ այն է՝ պարտեզ:**

**Այգուն հատուկ նստարան և լուսատու, ճոճանակ, մահճակալ, ջահ, հայելի: Հնչում է հանդիսավոր խմբերգ. երգողը Խորն է՝ Գաբրիել Սունդուկյանը: Բարձրահասակ է, դեղին տրիկոյով, ժանեկազարդ Ժիշտով, փարթամ կարմիր կեղծամով:**

**ԳԱԲՐԻԵԼ - (իր իսկ երգին գուգընթաց): «Մենք նույն նյութից ենք շինված, ինչ մեր երազները»... Մեր նախերգի համար ցանկալի կլիներ, որ այս խոսքերը պատկանեին ինձ՝ պարոն Գաբրիել Սունդուկյանցիս... Ինչպես և Ծեքսափիրի մյուս մտքերը, ինչո՞ւ ոչ, նաև՝ պիեսները, սոնետները... Բայց ես չունեմ Դիոգենեսից եկող՝ լապտերով օրը ցերեկով մարդ փնտրելու մոլորությունը: Սունդուկյանցական իմաստությունն առավել անառարկելի է. «Վուրդի հիվանդ ու**

**նեղսրտած կա, թե՝ մարդ, թե՝ կնիկ, Աստուծ նրանցը ջան տա ու առողջութին, ու իրանց ցավեմեն՝ ազատութին»: Ամեն ինչ ասված է, մնացյալը՝ Ճերմակ լուրյուն է: Ինչո՞ւ, ահա և սահուն անհրաժեշտությամբ առնչվեցինք բուն նյութին. «ԵՎԱՅԼՆ... կամ՝ ՃԵՐՄԱԿ ՔԱՌԱԿՈՒՄԻ»: Արարված առաջին: (Նրա նկարագրությունը մասամբ է համապատասխանում իրականությանը:) Բեմը ներկայացնում է շքեղ հյուրասենյակ Մուսեսի տանը: Երեք դուռ՝ մեկ,**

Երկու, երեք... Աջից՝ մեծ լուսամուտ, վենետիկյան կահկարասի, առաստաղից կախված է բյուրեղապակյա ջահ, հատակին՝ արևելյան շքեղ գորգ, սեղան, բազկաթոռ, բազմոց: Պատերին՝ ոսկեզօծ շրջանակներով նկարներ... (Խմբերգը լրում է:) Իմ անտիպ գրառումներից կարող եք տեղեկանալ, որ օրերից մի օր, տիկնոջ՝ Սոֆիայի հետ, բարեկամներից մեկի տանը հրավիրված էի ձաշի, ուր հյուրասենյակի պատին կախված երկու նկար գրավեցին ուշադրությունս: Նկարներից մեկում պատկերված էր տակառի վրա կանգնած մի երիտասարդ, ով ձեռքի ծաղկեփունջը պարզել էր պատշճամբում կանգնած գեղեցկուիուն:

**Վերևից իջնում է ճերմակ, մաքուր պաստառ:**

Ահավասիկ, այդ ցնցող պատկերը... Մտքի ինչպիսի խելահեղ թոփչք: Բնականաբար, այն չէր կարող չշանթահարել մեծ մտածողիս երևակայությունը: Սա դեռ ամենը չէ: Առավել ցնցող էր երկրորդ նկարը: Բայց այդ մասին ավելի ուշ:

Այն, ինչ ասվեց, իր անզարդ խիզախման մեջ արդեն իսկ վեր է մեր ըմբռնումից: Այս պարագայում մնացյալը՝ երաժշտություն է:

(Հնդիատված խմբերգը վերսկսվում է. Գաբրիելի աչքերը սառել են, բնազդորեն շարունակում է:) Հայելի, արծաթե աշտանակներ, թաշեն վարագույրներ, ծաղիկներ, ծաղիկներ... Իրիկնամուտ... Հսկայական ժամացույցը ցոյց է տալիս ժիշտ ժամը վեցը: Աչքերս սառեցին, մարդ է գալու:

**Հայտնվում է Սերգոյին փնտրող Մուսեը:**

**ՄՈՍԵՍ - Սերգո, Սերգո...**

**ԳԱԲՐԻԵԼ -** Խոլիքս գնում է խցկվիլ հերոսներիս կյանքի մեջ, լինել նրանցից մեկը, խառնվիլ նրանց նխսուկացին... Յիս նրանց ջանին դուրբան:

**ՄՈՍԵՍ - Սերգո... Այ տղա Սերգո...**

**ԳԱԲՐԻԵԼ -** Սերգո. տան ծառայողը: Իսկական անունը Սաշիկ է, բայց Սերգո են ասում:

**ՄՈՍԵՍ - (Նկատում է Գաբրիելին):**

Իյա... Մեղա քեզ, Տեր, սա՞ ով է... Ո՞վ իս: Տո, ձեն հանի, մունդոիկ, ո՞վ իս...

**ԳԱԲՐԻԵԼ -** Ես... Ես խորն եմ:

**ՄՈՍԵՍ -** Էդ ինչ բան է:

**ԳԱԲՐԻԵԼ -** Խորը՝ ներկայացման երգչախումբը:

**ՄՈՍԵՍ -** Բա որ խորն ես, ընչի՞ չես երգում:

**ԳԱԲՐԻԵԼ -** Կուզեմ՝ կերգեմ, կուզեմ՝ չեմ երգի:

**ՄՈՍԵՍ -** Վո՞նց թե... Էդ ես պիտի ուզեմ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Հրամանքդ... Բայց ես  
լսողություն չունեմ:

**ՄՈՍԵՍ** - Եւտո՞ ինչ... Ղաղոն էլ չու-  
նի, բայց թթի դշի պես ծլվում է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Հա, գիտեմ, Ղաղոն քո  
եղբայրն է:

**ՄՈՍԵՍ** - Ղաղոյին ով չգիտի... Երգի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ի՞նչ...

**ՄՈՍԵՍ** - Երգի, ասում իմ:

Գարրիելը երգում է հայտնի օպե-  
րային արխա: Հաջորդող տեսարա-  
նում նրա երգը ընդհատումներով  
շարունակվում է:

**ՄՈՍԵՍ** - Սերգի, այ տղա, ի՞նչ է-  
դար... Տո գեղնի տակն անցար...

**ՍԵՐԳՈ** - (ասես գետնի տակից  
հևասպառ հայտնվելով): Հը...

**ՄՈՍԵՍ** - Էստի ի՞ս... Տո, ձեն հանի,  
էլի, մունդոիկ... (Գարրիելին.) Դու  
էս հանգի մարդ ուստ էղած կան.  
չի խոսում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Խոսել չգիտի:

**ՄՈՍԵՍ** - Տո, վղնոց չգիտի... Այս  
սպանես, ձեն չի հանի: (*Սերգո-  
յին.*) Տո, ի՞նչ իս դեմս ցցվիլ, ուն-  
էլի աչքեմես: (*Սերգոն չքվում է:*)  
Էս է՛ էսպես: (*Նայում է Գարրիե-  
լին, վերջինս շարունակում է ընդ-  
հատած երգը:* Կանչում է կնոջը:)  
Նինո, Նինք...

**ԳԱԲՐԻԵԼ** - Նին՝ սաստիկ գեղեցիկ  
կին... Belle dame: Մարմնացյալ  
հրեշտակ, տեղական տարազով:

**ՄՈՍԵՍ** - Նինո, վայ քու ջիգը իմ  
շնոքին: Հեստի բան բերիմ գլխիդ,  
վուր գիդենաս ոչ...

**ՆԻՍՈ** - (հուզված ներս նետվելով):  
Օկտեցեք, մեռա...

**ԳԱԲՐԻԵԼ** - Սաստիկ գեղեցիկ կին,  
հովանոցը ձեռքին:

**ՄՈՍԵՍ** - Տո, զահրումար... Ի՞նչ  
խարար է: (Գլխարկը խփում է  
հատակին, հետո վերցնում, դնում  
է գլխին:)

**ԳԱԲՐԻԵԼ** - Մոսես, նրա ամուսինը՝  
վաճառական: Ֆուրաժկան գլխին,  
գետնին, նորից՝ գլխին: Նինո՝ գե-  
ղեցկագոյն տիկին:

**ՆԻՍՈ** - Օկտեցեք, մեռա... (Հնկնում  
է Գարրիելի գիրկը, վերջինս ա-  
կամայից երգում է:)

**ՄՈՍԵՍ** - Իյա... (Կնոջը վերցնելով  
նրա գրկից:) Տո, աննամուս,  
սսկվի ու ունի էլի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ազնվագոյն հրեշտակ...  
(Համբուրում է Նինոյի ձեռքը, Նի-  
նոն ապշած նրան է նայում: Գար-  
րիելը հեռանում է:)

**ՄՈՍԵՍ** - Նինո, ի՞նչ խարար է, օխ-  
նած հոգի, լիզուդ ի՞նչ էղավ:

**ՆԻՍՈ** - (լացելով): Էսենց էլ բան կու-  
իի, թե մարդ իր տանեմեն չկանե-  
նա ոտը դուս դնի:

**ՄՈՍԵՍ** - Հը, ի՞նչ է էլի... Տո, օխնած,  
ձեն հանի... Դե, ասա ու պրծի:

**ՆԻՍՈ** - Սիվնա նրա օրը: Վուր գիդե-  
նաս ինչեր ասավ, Աստուծ գիդ-  
նա, մաս-մաս կրնիս:

**ՄՈՍԵՍ** - Վահ...

**ՆԻՍՈ** - Էստուրն էլ վուր համփիրիս,  
եքուց էլոր փիս-փիս բանիր կու  
դուս գա:

**ՄՈՍԵՍ** - Նինո ջան, մե ասա տեսնիմ, ինչ իս ասում:

**ՆԻՍՈ** - Էլ ինչ պիտի ասիմ... Գեղինը պադու ու ինձ դևեր տանե... Չես գիդի, ասում է, թե ինչ հանգն իմ քիզ սիրում:

**ՄՈՍԵՍ** - Վունց թե, դրո՞ւստ իս ասում...

**ՆԻՍՈ** - Գիշերով քուն չունիմ ու ցերեկը մութն է ինձ համա առանց քիզ, կոսե...

**ՄՈՍԵՍ** - Վայ, ես նրա, լածիրակ...

**ՆԻՍՈ** - Սիրտս կրակ է ընգե...

**ՄՈՍԵՍ** - Լավ, հերիք է:

**ՆԻՍՈ** - Կրակ է ընգե ու էրում է, կոսե...

**ՄՈՍԵՍ** - Ասի՝ ձենդ կտրի:

**ՆԻՍՈ** - Ենպես էրվի նրա ջիգրը, վուր ես գիդենամ:

**ՄՈՍԵՍ** - Թու՛... (Գլխարկը գետնովն է տալիս:)

**ՆԻՍՈ** - (գլխարկը վերցնում է, դնում Մոսեսի գլխին): Ամա ես ինչ միո ունիմ:

**ՄՈՍԵՍ** - Ես սիաթիս գնամ, ակոքնիրը ջարդուիշուր անիմ, թո՛... (Գլխարկը նորից գետնովն է տալիս, ապա Նինոյի ծեռքից խում է գետնից նրա վերցրած գլխարկը, խնամքով դնում գլխին:) Ամա խալխն ինչ կոսե... Յա, էս գդակը էլ ինչի է գլխիս: (Գլխարկը նորից մի կողմ է նետում:) Սերգն, Սերգն...

**ՍԵՐԳՈ** - (հևասպառ հայտնվելով): Հը...

**ՄՈՍԵՍ** - Վազի գդակս բեր:

**ՆԻՍՈ** - Մոսես ջան, սիրտս շուր միտա, գանա առանց ծեծիլ չին կանա նրա ջիգրը հանի:

**ՄՈՍԵՍ** - (Սերգոյի ձեռքից գդակը խելով): Ունի էլի գլխեմնս:

**ՍԵՐԳՈՆ հեռանում է:**

**ՆԻՍՈ** - (ցածրածայն հեկեկում է):

Ախր, ես ինչ անիմ:

**ՄՈՍԵՍ** - Ձենդ...

**ՆԻՍՈ** - Էն անիծածի ջիգրը հերիք չի, դուն էլ իս ջիգրվում:

**ՄՈՍԵՍ** - Ձենդ, ասում իմ:

**ՆԻՍՈ** - Ես ինչ միո ունիմ:

**ՄՈՍԵՍ** - Ինչ միո ունիմ. Էն միոն ունիս, վուր դուն նրանց տուն վուտտդ իսկի չպիտի դնեիր: Չես գիդի, վուր էդ թավուրներուն էրես շանց տաս, գլխիդ էլ կու նստին:

**ՆԻՍՈ** - Բաս հորեսի դենը ասկականներես էլ կտրվիմ, էլի:

**ՄՈՍԵՍ** - Ասկական, ասկական...

Ինչ ասկական, էդ ասկական է...

Քո բիճու տոյի կնկա ախպոր աներոջ իշու գեղի զարիկումարն է...

Նրանց գլուխն էլ էնդի անիծվի, վուր գիդենամ:

**ՆԻՍՈ** - Ամա, ես ինչ անիմ...

**ՄՈՍԵՍ** - (պատուհանից դուրս է նայում): Էստի արի... Չեմ խփի, արի: Մի տես, նա չէ:

**ՆԻՍՈ** - Նա կուլի:

**ՄՈՍԵՍ** - Վընց թե՝ նա կուլի:

**ՆԻՍՈ** - Բաս հվ կուլի: Ասավ, վուր ակուշեմն դուս մտիկ արա, վուր

քիզ տեսնիմ, կոսե, թե չէ՝ ձլերք  
կու ննգնիմ, կոսե...

**ՄՈՍԵՍ** - Վ՞նից թե...

**ՆԻՍՈ** - Ճլերքն ննգնի նրա ջանը,  
վուր գիղենամ:

**ՄՈՍԵՍ** - Սերգի, Սերգո...

**ՍԵՐԳՈ** - (*վազքով հայտնվելով*):  
Հը...

**ՄՈՍԵՍ** - Հը ու ջան... Չոքի: (*Սերգո-  
յին ծնկի է բերում, նստում ուսե-  
րին:*) Վէր կաց... (*Պատուհանից  
բղավելով:*) Պարոն, հեյ, պարոն...

**ՆԻՍՈ** - Էտ ինչ իս անում:

**ՄՈՍԵՍ** - Անո՞ւմը...

**ՆԻՍՈ** - Ախր, Մոսիկ ջան...

**ՄՈՍԵՍ** - Էդ հառամզադի անո՞ւմը...

**ՆԻՍՈ** - Եվայն:

**ՄՈՍԵՍ** - Ասում իմ՝ անո՞ւմը:

**ՆԻՍՈ** - Դե ասի, էի՞ Եվայն:

**ՄՈՍԵՍ** - Ի՞նչ... Էդ ինչ ուսնգի անում  
ա... (*Սերգոն ծիծաղում է:*) Ձենդ...  
(*Պատուհանից բղավում է:*) Հեյ,  
պարոն Եվայն...

**ՆԻՍՈ** - Վայ, Մոսես, Մոսես... Էտ  
ի՞նչ իս անում:

**ՄՈՍԵՍ** - Սուս կաց... Պարոն Ե-  
վայն... Ախ, ես քու... Չի լսում,  
խոտը դումիտումն է: Սերգո, Սեր-  
գո... Ուր կորավ էդ մարդը: Սերգո,  
Սերգո...

**ՆԻՍՈ** - Ներքիվդ է:

**ՄՈՍԵՍ** - Գնա, կանչե, չուստ արա:

**ՆԻՍՈ** - Սերգո, վիրև նայի:

**ՄՈՍԵՍ** - (*նկատելով Սերգոյին իր  
տակին:*) Սերգո... Էստի իս... Տո,  
ձեն հանի, մունդոիկ, ասա՝ հը...

**ՍԵՐԳՈ** - Հը...

**ՄՈՍԵՍ** - Հը ու ջան... Ռադ էդի:  
(*Սերգոն, Մոսեսը ուսերին, դուրս  
է շտապում:*) Այ տղա, մոլափի,  
ինձ տեղը դի: Ախ, վունց իմ հեր-  
սոտած... (*Սերգոյի ուսերից իջնե-  
լով:*) Մոդ արի... Սերգո, էն  
մայթին կայնած տղին տենում իս:

**ՍԵՐԳՈ** - Հա:

**ՄՈՍԵՍ** - Էս սիաթիս վազի, ասա,  
վուր իրեն ձեն իմ տալի: (*Սերգոն  
դուրս է վազում:*) Էտ ի՞նչ աննա-  
մուս շոր իս հագի:

**ՆԻՍՈ** - Ձու հավնած դերյան ի:

**ՄՈՍԵՍ** - Ձենդ...

**ՆԻՍՈ** - Ամա ես ինչ միդ ունիմ:

**Սերգոն ենալով վերադառնում է:**

**ՄՈՍԵՍ** - Հը, խոսա, ի՞նչ կա... Տե-  
սա՞ր... Ասի՞ր...

**ՍԵՐԳՈ** - Հա:

**ՄՈՍԵՍ** - Ինքն ինչ ասավ:

**ՍԵՐԳՈ** - Ասավ՝ հը...

**ՄՈՍԵՍ** - Հա, ուրեմն գնա, ասա,  
վուր տուն հրամե:

**ՍԵՐԳՈ** - Հա: (*Գնում է:*)

**ՆԻՍՈ** - Վայ, Աստուծ, էտ ի՞նչ իս ա-  
նում:

**ՄՈՍԵՍ** - Սերգո, Սերգո... (*Սերգոն  
էտ է գալիս:*) Ասա, վուր Նինդն է  
կանչում:

**ՍԵՐԳՈ** - Հա:

**ՆԻՍՈ** - Վ՞նյ մե... Ինձ ուր իս խառ-  
նում, գեղինը մտնիմ, պրծնիմ:

**ՄՈՍԵՍ** - Սերգո, մոլափի, մե հատ էլ  
հաստ փեդ թե հիտդ, ջանը պիտի  
դրստիմ:

**ՍԵՐԳՈ** - Հա: (*Գնում է:*)

**ՆԻՍՈ** - Ախ, Աստուծ, ախը ի՞նչ իս ա-  
նում, խայտառակ իո չի՞ս...

**ՄՈՍԵՍ** - Ձու բանը չի, ես իմ անելի-  
քը գիդիմ:

**ՆԻՍՈ** - Ախը, Մոսիկ ջան...

**ՄՈՍԵՍ** - Թո՞ղ մե... Կնիկարմատի  
ձեռնեմեն մեկը չէ խարար էլի ու  
էրկուսը...

**ՆԻՍՈ** - (պատուհանից նայելով):  
Կատարյալ ախմախ, ուրախ-ու-  
րախ վազում է դեսը:

**ՄՈՍԵՍ** - Հեստի բան բերիմ գլխին,  
որ իր օրումն էլ մտեն չննգնի:

**ՆԻՍՈ** - Վոյ, գեղինը մտնիմ: (Ուզում  
է հեռանալ:)

**ՄՈՍԵՍ** - (կասեցնում է): Ո՞ւր իս  
փախչում, էստի կաց, պիտի քու  
առչիվը մե լավ քոթակիմ:

**ՆԻՍՈ** - Արա էտ ինչ մարդկութին է,  
քու տանը վուր չանիս էտ բանը,  
էլ օչով տեղ չկա՞...

**ՄՈՍԵՍ** - Զենդ... Ասկական...

Ներս է մտնում Եվայինը. Գար-  
դիելն է, առանց կեղծամի: Ետևից  
հայտնվում է Սերգոն: Մոսեսը  
այլ բան չգտնելով, նետվում է  
բազոցին ու... խռմփացնում:  
Պատառք դամդադ վեր է քարձ-  
րանում:

**ԳԱԲՐԻԵԼ** - (համբուրում է Սինոյի  
ձեռքը): Ախ, աննման արարած,  
թույլ տվեք մի անգամ ևս հավաս-  
տել իմ անկեղծ սերը, հիացումը,  
նվիրումը...

**ՆԻՍՈ** - (ձեռքն ազատելով): Ըեռա-  
ցեք շուտով:

**ԳԱԲՐԻԵԼ** - (ինքնագոհ ձեմելով):  
Եվայլն. նրակազմ, հմայիչ, տա-  
ղանդավոր երիտասարդ, նրա-  
ծաշակ եվլուպական հագուստով,  
ցիլինդր ձեռքին, գլխին, նորից՝  
ձեռքին... Պենսնեն՝ վզից կախ,  
ձերմակ ձեռնոցներով: (Սինոյին.)  
Օ, Belle dame... հավաստել իմ սե-  
րը, հիացումը, պաշտամունքը և  
այլն... Ծարժումերը նրագեղ են,  
բարեկիրթ...

Ակամայից նրանց միջև հայտն-  
ված Սերգոն նույնական սկսում է...  
խռմփալ:

**ՆԻՍՈ** - Աղաչում եմ, հեռացեք:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ինչպես թե... Ախը, ինք-  
ներդ եք հրավիրել:

Նրանց միջև ապուշի պես ցցված  
Սերգոյի խռմփոցը փոխվում է  
լացի: Նինոն ևս լախս է: Գար-  
դիելը փորձում է նրան միխրա-  
բել:

**ԳԱԲՐԻԵԼ** - Օ, մի լա... աննման  
հրեշտակ:

**ՆԻՍՈ** - Ախ, ինչ հիմար վիճակ:

**ՄՈՍԵՍ** - (գլուխը ծածկոցի տակից  
հանելով, շարունակելով խռմփո-  
ցը, թաքուն դիմում է Սերգոյին):  
Փեղը, փեղը ո՞ւր է, բերի՞ր...

Նինոն ու Գարբիելը ուշադիր նա-  
յում են Մոսեսին:

**ԳԱԲՐԻԵԼ** - (*Սերգոյին*): Ասում է՝  
փեղը բերի՞ր...

**ՍԵՐԳՈ** - Հաա...

**Սերգոն վազքով հեռանում է, Սո-  
սեար խոճիցով նորից սուզվում  
է ծածկոցի տակ:**

**ՆԻՆՈ** - Ա'խ, Աստուծ...

**ԳԱԲՐԻԵԼ** - Ես կարծես կրահում եմ.  
Դուք պարզապես անզոր եք ձեր  
զգացմունքի առջև, շփոթված ու  
ահարեկված... Մի հուզվեք, ի սեր  
Աստօն: Մի խոսք միայն, մի՛ այո,  
և ես կլինեմ երջանկագույնը բո-  
լոր ասուններից:

**ՆԻՆՈ** - Թողեք, Աստուծ կու սիրիք:

**ԳԱԲՐԻԵԼ** - Սիրում եմ ձեզ, սիրում  
եմ հավերժ ու անսահման...

**Հայտնվում են մահճակալին, որ  
խոճփացնում է Սոսեար:**

**ՆԻՆՈ** - Ինչ իք անում, գժվիլ իք...

**ԳԱԲՐԻԵԼ** - Սիրտս ու հոգիս,  
փառքս ու պատիվս, կյանքս ու  
կայքս նետել եմ ձեր չքնաղ ոտ-  
քերի տակ:

**ՄՈՍԵՍ** - (անսպասելի վեր է թռչում):  
Ինչ էղավ էդ անտեր Սերգոն:

**ԳԱԲՐԻԵԼ** - Սերգոն... գնաց փեղը  
բերելու: Հարգանքիս հավաստի-  
քը, պարոն... Պատիվ ունեմ:

**ՄՈՍԵՍ** - Ցիս էլ... Համեցեք, պարոն,  
նստի՛: Սինո, ուր իս գնում: Ես  
պատվավոր մարդը շնորհի է բերի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ինձ համար մեծ պա-  
տիվ է, պարոն:

**ՄՈՍԵՍ** - (Նինոյին): Նստի ու տեղե-  
մեդ չժած գաս:

**ՆԻՆՈ** - (*ժպիտով, շշուկով*): Չխայ-  
տառակիս քու գլուխը, իմն էլ հի-  
դը:

**ԳԱԲՐԻԵԼ** - Խոսքն ինչի՞ մասին է,  
չհասկացա:

**ՄՈՍԵՍ** - Վուչինչ, քու բանը չի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Հասկացա:

**ՄՈՍԵՍ** - Եվայլն...

**ԳԱԲՐԻԵԼ** - Հրամանքդ, պարոն:

**ՄՈՍԵՍ** - Ուրեմն, դու Նինոյի ասկա-  
կանն ես:

**ԳԱԲՐԻԵԼ** - Այո, պարոն, պատիվ  
ունեմ այս աննման գեղեցկուիու  
մտերիմ ազգականը լինել: Օ,  
chère femme...

**ՄՈՍԵՍ** - Իյա...

**ԳԱԲՐԻԵԼ** - Հրամանքդ, պարոն...

**ՄՈՍԵՍ** - Դուս է գալի, որ իմ կնկա  
ասկականը իմ ասկականն ա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Դա ինձ համար մեծա-  
գույն պատիվ է և այլն...

**ՄՈՍԵՍ** - Ինչ փեշակ ունիս:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ես, պարոն, դրամա-  
տուրգ եմ... Մեծ դրամատուրգ:

**ՄՈՍԵՍ** - Եդ ին փողատերն ա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ինչ տգիտություն. դրա-  
ման բարձրագույն գրական ժանր  
է:

**ՄՈՍԵՍ** - Ետ ին չհասկացա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ես թատրոնի համար  
պիեսներ եմ գրում: Ես խաղն էլ,  
որ խաղում ենք, նույնպես ես եմ  
հեղինակել:

**ՄՈՍԵՍ** - Ես հարցնում իմ, ինչ  
փեշակ ունիս:

**ԳԱԲՐԻԵԼ** - Գրող եմ, պարոն... Հայ թատրոնի այոներից մեկը:

**ՄՈՍԵՍ** - Դե ասա, պարագիտ իս, էլի:

**ԳԱԲՐԻԵԼ** - (*սրտանց ծիծաղում է*): Լավ է ասված... Զեր կերպարն ինձ խիստ համակրելի է:

**ՄՈՍԵՍ** - Էտ մինը հետո կերևս: Տո, էտ Սերգոն ինչ էղավ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Հա, իսկապես, փայտը պիտի բերեր... Ոնց որ թե՛ եկավ:

**Ներս է գալիս Ղաղոն:**

**ՄՈՍԵՍ** - Շաշ-շաշ դուս ես տալի, էս հո իմ ախարեն ա՝ Ղաղոն:

**ՂԱՂՈ** - Բարով, բարի գուն ձիզ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Շատ ուրախ եմ, պարոն Ղաղո, Մոսեսի եղբայրը իմ եղբայրն է, և այն...

**ՂԱՂՈ** - Էս ով է...

**ՄՈՍԵՍ** - Նինյի ասկականի ասկականը:

**ՂԱՂՈ** - Անո՞մը...

**ՄՈՍԵՍ** - Անումը՝ Եվայն:

**ՂԱՂՈ** - Ի՞նչ, ի՞նչ... (*Ծիծաղում է*):

**ՄՈՍԵՍ** - Ինչ ես ռեխոդ բացե... Եվայլն, էլի, վա...

**ՂԱՂՈ** - Լսեցի, ամա Եվայլն անում կովի՞:

**Գալիս է Սերգոն, ճեռքիմ՝ հակայական փայտ:**

**ՄԵՐԳՈ** - Փեղը:

**ՄՈՍԵՍ** - (*զննելով*): Հա, լավ է, լավ է...

**ԳԱԲՐԻԵԼ** - Ապա տեսնեմ... Հա, լավ փայտ է, ամուր: Կաղնի՞ է...

**ՄԵՐԳՈ** - Զէ, փեղ է:

**ՂԱՂՈ** - Ի՞նչ խաբար է:

**ՄՈՍԵՍ** - Վուչինչ, Սերգոն չուգունի պլիսի համա փեղ ի առի, նմուշը բերել է, վուր տեսնիմ: Հա, լավն է, տար: Ռանդ էղի, ասի: (*Սերգոն հեռանում է*:)

**ՏԻՍՈ** - (*վեր կենալով*): Ես գնամ, ձաշը կրակին դնիմ:

**ՄՈՍԵՍ** - Վեր նընգի տեղդր... (*Նինոն նստում է*:)

**ԳԱԲՐԻԵԼ** - Ես նաև լավ սեղանապետ կարող եմ լինել, այսինքն՝ թամադա:

**ՂԱՂՈ** - Տո, էս ով ա, ինչեր ա խոսում... Մոսեսի մոտ էտ բանը մի ասա:

**ՄՈՍԵՍ** - Մոլափի, Ղաղո... Ուրեմն, քեփ սիրում իս:

**ԳԱԲՐԻԵԼ** - Իսկ ինչո՞ւ ոչ:

**ՄՈՍԵՍ** - Էտ հանգին, պարոն Եվայլն, յիս քիզ խնդրում իմ շնորհ բերիս էս գիշեր իմ բախչեն, մետի Բարեկենդան անինք: Քեփ անինք, ուրախանանք:

**ԳԱԲՐԻԵԼ** - Զեր քաղաքավարությունը, պատվելի, ինձ հիացնում է: Մեծագոյն ուրախությամբ ընդունում եմ ծեր հրավերը, պայմանով, որ դուք էլ ծեր աննման տիկնոց հետ բարեհածեք շնորհ բերիլ իմ տուն:

**ՄՈՍԵՍ** - Ինչի չէ, զեր դուք համեցեք, հալա...

**ԳԱԲՐԻԵԼ** - Խնդրեմ, պարոն Ղաղոն  
Էլ կարող է գալ:

**ՂԱՂՈ** - Ի՞նչ կա որ... Մոսեսի հիդ  
թեկուզ ջանդամը կեհամ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Պատրաստ եմ հավաս-  
տել իմ սերն ու բարեկամությունը,  
մտերմությունը, նվիրումը, հավա-  
տարմությունը և այլն, և այլն...

**ՂԱՂՈ** - Տո, էս ի՞նչ հանգն ի խոսում:

**Հուզված Նինոն վազքով հեռա-  
նում է:**

**ՄՈՍԵՍ** - Նինո, ո՞ւր... (Հետևում է  
նրան, ապա մի պահ ետ դառ-  
նում:) Պարոն Եվայլն, ներող է-  
դեք, հազար գործ ունիմ... և  
այլն... Թուի... Դուք զրից արեք, էս  
սհարիս գալիս եմ:

**Մոսեսը վազքով հեռանում է: Ո-  
րոշ ժամանակ լուս են:**

**ՂԱՂՈ** - Եվայլն...

**ԳԱԲՐԻԵԼ** - Հրամանքդ...

**ՂԱՂՈ** - Չէ, բան չունիմ ասելու... Ե-  
վայլն. մազալու անում է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Չճք հավանում:

**ՂԱՂՈ** - Չէ... լավ բառ է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Եվ խորիմաստ: Յուր  
մեջ բազում չասված մտքեր կան:

**ՂԱՂՈ** - Ղրուստ է, ամա մեր քաղ-  
քումը էտ հանգի խոսիլը մե քիչ չի  
անց կենում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Այո, պարոն, թերևս Եր-  
կար տարիներ են պետք մեր ազ-  
գը քաղաքակրթելու համար:

**ՂԱՂՈ** - Հա, միր խալխն ուրիշ

խալխն է: Մենք քէփին դենը էլ վու-  
չինչ չենք գիդի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Դե, քեֆ ո՞վ չի սիրում,  
պարոն:

**ՂԱՂՈ** - Բաս, խաղի անգած դնիլ էլ  
սիրում կուլիս:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ուզում եք ասել՝ Ե՞րգ...

Անշուշտ: Ինչպես կարելի է ե-  
րածշտություն չսիրել: Կնքս էլ սի-  
րում եմ երգել, պարոն:

**ՂԱՂՈ** - Բաս, հրամանքդ, լավ  
շքասթա կու գիդենաս:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ոչ, ոչ... Այդ կարգի եր-  
գերին ես բարեբախտաբար ծա-  
նօթ չեմ:

**ՂԱՂՈ** - Հրամանքդ, վուրդանցի ես:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ես... ես հայ եմ և այլն...

**ՂԱՂՈ** - Մոսկով էլիլ իք:

**ԳԱԲՐԻԵԼ** - Մոսկվա, Պետերբուրգ...  
արտասահման:

**ՂԱՂՈ** - Արտասահման... Էդ ի՞նչ եր-  
կիր է որ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Եվրոպա, պատվելիս,  
Եվրոպա... Մի՞թե չգիտեք:

**ՂԱՂՈ** - Չէ, լսել իմ... Վհնոց չէ: (Լուռ  
են:) Եվ, մեծարգո պարոն, արդ-  
յոք որքան ժամանակ ես ապրել  
այդ օտար վայրերում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Տարիներ, պարոն, տա-  
րիներ...

**ՂԱՂՈ** - Ետ խո խելի փո՞ն կու նստի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Համմե...

**ՂԱՂՈ** - Ասում եմ, դա պիտի որ ահ-  
ոելի գումար արժենա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Իհարկե, պարոն, շատ  
շատ:

**Երկար, անհաճող լուսաբան:**  
**ՂԱՂՈ** - Բակլեն է էժան էնդի, թե՞ լորին:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Ի՞նչ... Բակլան ի՞նչ է:  
**ՂԱՂՈ** - Բակլեն... Դե, լոբու հանգի մե բան ի... Ընդապորաց ցեղիցը:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Պարզ է:  
**ՂԱՂՈ** - Լորուցը խոշոր է, բայց ուշ է էփում... Սարթ է:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Հասկանալի է:  
**ՂԱՂՈ** - Բայց ավելի էժան է: Լատինացիք ասում են՝ Faba vulgaris:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Հայ:  
**ՂԱՂՈ** - Հա ու ջան: (*Lupin են:*) Լորին ու բակլեն՝ ոնց որ բաղն ու սագը:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Այսինքն...  
**ՂԱՂՈ** - Բակլեն սագն է: Լորին՝ բաղը:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Հայ...  
**ՂԱՂՈ** - Ի՞նչ կա չհասկանալու. բակլեն էն է, որ ոչ լորին է, ոչ էլ՝ սոյան:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Սոյա... Դա՞ որն է:  
**ՂԱՂՈ** - Սոյան հավն է:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Համը:  
**ՂԱՂՈ** - Հավը... Նոյն լորին, բայց ավելի մանր ու սպիտակ:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Բակլայից էլ փո՞քը:  
**ՂԱՂՈ** - Արդեն սկսում ես հասկանալ: Հետո, սոյան ավելի սննդար է: Ճիշտ է, բակլան էլ է սննդարար, բայց...  
**ԳԱԲՐԻԵԼ** - Բայց սարթ է:  
**ՂԱՂՈ** - Բայց՝ էժան:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Բաղդը:

**ՂԱՂՈ** - Սագը:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Որը թանկ է:  
**ՂԱՂՈ** - Որը էժան է, բայց դժվար է ծարվում:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Եվ ավելի սննդարար է:  
**ՂԱՂՈ** - Չէ, որ սոյան է:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Հավը:  
**ՂԱՂՈ** - Ըհը, ապրես:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Ու՝ սպիտակ:  
**ՂԱՂՈ** - Ու՝ մանր:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Բակլայից էլ մանր:  
**ՂԱՂՈ** - Ի՞նչ խոսք, բակլեն լոբուց էլ խոշոր է:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Համ...  
**ՂԱՂՈ** - Բայց որ մանրացնում ես, մանր է:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Հասկացած:  
**ՂԱՂՈ** - Իրականում, սոյան նոյն լորին է, ոնց որ՝ բակլան:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Հասկացած, հավը նոյն բաղն է, ոնց որ՝ սագը:  
**ՂԱՂՈ** - Իսկ ջոնջոլը՝ ջոնջոլ է:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Զոնջով...  
**ՂԱՂՈ** - Դա քո խելքի բանը չի:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Հիմա լրիվ հասկացած:  
**ՂԱՂՈ** - Եղ էվրոպացիք էս բաները չեն հասկանում:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Չէ, չեն հասկանում:  
**ՂԱՂՈ** - Նրանք բերնի համ չունին:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Չունեն, չունեն...  
**ՂԱՂՈ** - Որտեղից... Նրանց ուտելիքի մեջ համուիստ չկա:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Չկա, չկա: Նրանց կերածը ամբողջը քիմիա է:  
**ՂԱՂՈ** - Հա, հա, դիվ սուտ ի:  
**ԳԱԲՐԻԵԼ** - Էնտեղ կոյուղուց ձեր են ստանում:

**ՂԱՂՈ** - Կոյուղի՞... Ճոպանուղին, գի-  
դեմ, էդ ֆոնիկուցորն է, բա կոյու-  
ղի՞ն... Յանձնու:

**ԳԱԲՐԻԵԼ** - Էս տեսակ բաներ:

**ՂԱՂՈ** - Ենդի պովարնիրը տավոյի  
միսը թիվի ին շինում, բարնսի  
տաք ջուրն ածում ին վրին, բու-  
լիոն է, կոսեն: Դուք էլ խաշտում  
իք, իփր հաց իք ուտում, էլի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Էդաքես է: Նրանց  
պտուղների մեջ է՝ ամբողջը  
պեստիցիդներ են:

**ՂԱՂՈ** - Եդ ո՞րն է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Որդերը գիտես... Դ-  
րանց շատ մանր տեսակը, որ  
աչքով չես տեսնի:

**ՂԱՂՈ** - Գիտեմ, վիճուն չէ... Եդ զա-  
դերը օրդերից էլ մունդառ են:

**ԳԱԲՐԻԵԼ** - Հա, բա ո՞նց... Եվ շատ  
վնասակար:

**ՂԱՂՈ** - Հա, օրդերը դրանց մոտ  
ինչ...

**ԳԱԲՐԻԵԼ** - Հեք... Դրանք իսկական  
թույն են:

**ՂԱՂՈ** - Թույն են, թույն... Ամա օր-  
դերը օգտակար ին: Կոսեն, վոյր  
նրանց միջումը վիտամին շատ  
կա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Այդաքես է:

**ՂԱՂՈ** - Մեր Մոսեսը ուտում է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ո՞նց... Որդերը...

**ՂԱՂՈ** - Զադ-զադ չի ուտում, մրգի  
հետ: Չի նայում, ուտում է... Հա,  
հա, ուտում է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ղաղո, չես գիդա, թե  
վունց իմ քիզ սիրում:

**ՂԱՂՈ** - Վայ, մեղա քեզ, Աստուծ...

**ԳԱԲՐԻԵԼ** - Էս սիաթիս կուզիմ քիզ  
պաչի:

**ՂԱՂՈ** - Ընչի համա... Մտիդ հո-  
վիս-վիս բան չկա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ինչ վիս բան:

**ՂԱՂՈ** - Ինչ գինամ, էդ էվրոպանե-  
րը ինչ շաշ բան ասես, որ չկա:  
Դե լավ, պաչի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ղաղո ջան, վոյր սխալ  
շիասկանաս, քու ձիոր կպաչիմ:

### Համբուրում է Ղաղոյի ձեռքը:

**ՂԱՂՈ** - (*Ժիծաղելով*): Իփր վեհա-  
փառ իմ: Զմիոանք, տերտեր իլ  
դառանք: Հա մի հատ էլ պաչի,  
դրուս էկավ:

### Գալիս է Մոսեսը:

**ՄՈՍԵՍ** - Ղաղո ջան, դեռ էստի իք...

**ՂԱՂՈ** - Մոսես, արի... Արի, թող քու  
ծիկն իլ պաչի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Սպասեք, սպասեք... Ես,  
անշուշտ, դեմ չեմ պարոն Մոսեսի  
պատվարժան ձեռքը համբուրել,  
սակայն առավել պարտավորված  
եմ մեծարգու հանդիսատեսի առջև:  
(Ակսում է երգել օպերային հայտնի  
խմբերգ: *Մեղմացող հնչյուններին  
զուգընթաց՝ մենախոսում է:*) Հարկ  
եմ համարում տեղեկացնել, որ իմ  
այս խմբերգով ավարտվում է մեր  
ներկայացման առաջին արարը և  
մինչ ես տեղեկացնում եմ ձեզ այդ  
մասին, իսկ Մոսեսն ու Ղաղոն  
շշմած ինձ են նայում, արդեն իսկ  
սկսվել է երկրորդ արարը:

**Դնում** է կեղծամը, հանում, մի կողմ է նետում տարատը, մնում դեղին տրիկոյով: **Պարում** է բալետային մենապար:

**ԳԱԲՐԻԵԼ** - (*դիմելով ապշած եղբայրներին*): Դուք շարունակեք առաջին գործողության ձեր կիսատ թողած երկխոսությունը: (*Հետագա խոսակցությանը զուգընթաց շարունակում է իր պարը:*)

**ՂԱՂՈ** - Ինչ մարդ ասես տեսիլ իմ, էս հանգի իսան տեսած չէի... Համ ուսում առած, համ է՝ ծալը պակաս:

**ՄՈՍԵՍ** - Այ, խռով կենա ինձ էն ուսումը, վուր մարդ ուրիշի կնգա վրա աձկ ունենա:

**ՂԱՂՈ** - Վկնց թե... Ի՞նչ կնիկ:

**ՄՈՍԵՍ** - Ղաղո ջան, քիմեն ինչ թաքցնիմ: Էլախստ էն փերը, վուր Սերգոն տուն էրի, ուզում էի էտ անհճածին շանսատակ անիլ, ամա դուն էկար, մեբաշ սառած մնացի:

**ՂԱՂՈ** - Այ մարդ, մե կարգին ասա, տենամ ինչ խարար է:

**ՄՈՍԵՍ** - Ինչ ասիմ, ախապեր, էտ աննամուսը քու հարսին վուրդի ուստ է գալի՛ սիրում եմ քեզ, կոսե:

**ՂԱՂՈ** - Վկնց թե... Նինոն ինչ փիս բան է արե, վուր սիրում ի: Մուլափ, դղորթ իս ասում:

**ՄՈՍԵՍ** - Ինչ հանաքի բան է:

**ՂԱՂՈ** - Վայ, յիս նրա... Բա էդ գդակը ինչի է գլխիդ:

**ՄՈՍԵՍ** - (*գլխարկը հանում է, նայում, նորից դնում է գլխին*): Տո, ես շատ գիդամ:

**ՂԱՂՈ** - Նրա ջիգոր իմ շնչին. հեստ բան անիմ, վուր իր օրումն էլ չմտեն ննգնի:

**ՄՈՍԵՍ** - Վուր դրուստն ասիմ, յիս էլ էտ մտքին իմ: Էս գիշեր մի բան մահանա կոնիմ, ու խալխի մոտ ակոքնիրը ջարթ ու փշուր կոնիմ:

**ՂԱՂՈ** - Մի տես, էդ աննամուսը վկնց ի պարում: Տո, մունդրիկ, մուլափ, թե ինչ հալն իմ գցում քու կոկած ու տրոսած ջանը:

**ՄՈՍԵՍ** - Ապրիս, ախապեր ջան... Իմ սիրտը խո կոտրած է ու կոտրած:

**ՂԱՂՈ** - Գիղիս, ինչ փիքր արի. մե քիչ վուր խմինք ու տաքնանք, կոսիմ գնանք հառողի մոտ, մե շառ կու գցիմ ես էն աննամուսին ու գու թնցիմ դեմուդեմը հառողը:

**ՄՈՍԵՍ** - Էտ լավ ասիր, Ղաղո ջան: Ամա պիտի էնենց ժած գանք, վուր օչով չիմանա, վուր մեր քեփը քթներեմես չդուս գա:

**ՂԱՂՈ** - Էտ իո յիս գիղիս, դուն քեփի քոք պահե:

**Երգը** անսպասելի լուս է: Վերևից իջնում է շրջանակված ճերմակ պաստառ՝ ետևում քողնելով եղբայրներին: **Պաստառի** առջևում հայտնվում է **Գարրիելը**:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ձեր առանձնահատուկ

ուշադրությունն եմ հայցում, ներկայացնելու հյուրասրահում կախված խոստացված երկրորդ նկարը: (*Դաստաղի վրա մանրամասն ներկայացնում է չեղած պատկերը: Դաստաղի ետևից հայտնվում են Մոսեսն ու Ղաղոն, հետևում նրա նկարագրությանը:*) Ահա, խնդրեմ, ինչպես տեսնում եք, նկարից անհետացել է սիրահար երիտասարդը: Դուք սխալվում եք, նա բնավ չի անհետացել: Ուշադիր նայելու դեպքում կնկատեք տակառից դուրս ցցված նրա մազափունջը: Ճիշտ կորհեցիք. երիտասարդը կորցրել է հավասարակշռությունը և հայտնվել տակառում: Երևակայության ինչպիսի խելահեղ շրջադարձ: Ավելին, նրա շլյապան ընկել է ու գլորվել այստեղ: (*Տակառի մոտից վերցնում է շլյապան, դնում գլխին:*) Ոչ ավել, ոչ պակաս:

**ԴԱՐՈ** - Հ՞, Մոսո, վախտը չի...  
տանիմ հառուզը, ջանը դրստիմ:

**ՄՈՍԵՍ** - Չէ, մովափ:

**ԴԱՐՈ** - Դուն գիդաս:

**ԳԱԲՐԻԵԼ** - Եվ այսպես, երիտասարդը հայտնվել է տակառում... ինչպիսի զավեշտ: Ուշադրություն դարձրեք. այնուհանդերձ, նա հասցրել է ծեռքի ծաղկեփունջը մատուցել աննման գեղեցկուհուն: Այս պահին ես կարկամած լուս եմ: Մարդկային երևակայությունը ունակ չէ ընկալել այս ցնցող

գլուխգործոցը մտահացման ողջ խորությամբ: Ոմանց շփոթն ու տարակուսանքը փարատելու միտմամբ շտապեմ հավաստել, որ ի տարբերություն և ի հակադրություն մալիշյան քառակուսու, ուր ամեն ինչ այլս ասված է, մեր ճերմակ քառակուսում ամենայն ակնկալվող ասելիք արդեն իսկ կրում է հանձարեղության կնիքը... Ճերմակ մաքրություն, ուր կատարյալ է հնարավոր ամենայնը:

**ԴԱՐՈ** - Ինչ ա շաշ-շաշ դուս տալի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Այլս ոչինչ չեմ ասում,  
ես լոեցի... Ես արդեն լուռ եմ,  
քանզի մնացյալը՝ լրություն է,  
կամ՝ երաժշտություն... Իսկ ինչո՞ւ  
ոչ՝ պար:

**ՀՆՅՈՒՄ Է ՄՈԵՎԱՐԱԾ:** Գաբրիել - Եվայլնի քալետային մենապարին որպես գուգրնկեր միանում է Նինոն՝ հովնաքանյան նրբագեղ հանդերձանքով: Մնացյալ դերակատարները միանում են պարին որպես կորդերալետ: Պարի ավարտին՝ ոգևորված ծափեր: Եվայլնն ու Նինոն հանդիսավոր խոնարիկում են: Կախված պատառք հանում են, որպես սփոռց փոռում գետնին, ճատուտում շուրջը: Սերզոն ցուցադրաբար պառկում է սփոռցից այս կողմ, դեմքով դեալի հանդիսատեսը: Նինոն տեղավորվում է ծաղկազարդ ճոճանակին, որը քենով մեկ անվերջ

**ՄՈՍԵՍ** - Պարողների կենացը:

**ՂԱՂՈ** - Պարոն Եվայլնի ու Նինոյի կենացը:

**ԳԱԲՐԻԵԼ** - Մեծապես շնորհակալ եմ, խորապես զգացված, ցնցված, հուզված, շփոթված...

**ՂԱՂՈ** - Եվ այլն, և այլն... Հորդ օդորմի, էտ ցերեմոննեքը թող ու մոդ արի: Թեփ ինք անում՝ քեփ անինք:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ներող եղեք, ձեզ նման գետնին նստելը ինձ հարմար չէ:

**ՂԱՂՈ** - Վկո՞նց թե...

**ՄՈՍԵՍ** - Սերգո՛, մե սկամի բի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ո՛չ, ո՞չ... կիսնդրեմ նեղություն մի կրեք:

**ՂԱՂՈ** - Տո, էլ ինչ սկամի, վունց վուր մինք ինք նստի, էնենց էլ դու նստի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ինձ համար մեծ պատիվ կլիներ ձեր կողքին ձեզ նման նստել, սակայն ծնկներս ձեզ նման ծալել, ցավոք, չեմ կարող:

**ՂԱՂՈ** - Ամեն իսան մե այիր ունի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ձեր թույլտվությամբ, ես այստեղ, տակառին կնստեմ:

**ՂԱՂՈ** - Միթամ, դուն մեր մինձավորն իս, էլի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Օ, ո՞չ, բնավ իսկ, երբեք... իմ սիրտը ձեզ հետ է հավիտյանս և այլն:

**ՂԱՂՈ** - Աբա մե կենաց, բողազներս խանձվեցավ:

**ՄՈՍԵՍ** - Ուրեմն՝ էսպես. վուրդի հիվանդ ու նիղցած կա, թե մարդ, թե կնիկ, Աստուծ նրանցը ջան տա, առողջութին ու իրենց ցավեմեն ազատութին:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ո՛խ, հանձարեղ է... Բրավո: Դե, Ծեքսպիր կոչված, գնա ու ամորթից գետինը մտի:

**ՂԱՂՈ** - Ծեքսպիր... Էտ հվ է: Էտ անունվ իսան չիմ ճանաչում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Գրագետ մեկը, ինձ նման նշանավոր դրամատուրգ:

**ՄՈՍԵՍ** - Քիզ նմանը վայթե չըլնի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ծնորհակալ եմ:

**ՂԱՂՈ** - Էտ Ծեքսպիրը նրանցից չի, վորդ կոյուղուց ձեթ ի շինում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Հենց ինքը:

**ՄՈՍԵՍ** - Էդ որն ա... Յախք:

**ՂԱՂՈ** - Էդ դրամատուրգները շատ մոխանաթ իսալս ին:

**ԳԱԲՐԻԵԼ** - Օ, ոչ... Թույլ տվեք առարկել:

**ՄՈՍԵՍ** - Թույլ չենք տա, մինչև էս մինձ ստականը անուշ չանես:

**ԳԱԲՐԻԵԼ** - Այսքանը միանգամից... Անկարելի է:

**ՂԱՂՈ** - Բաս մինք էդքան ինք դարդգի...

**ԳԱԲՐԻԵԼ** - Անկարելի է, գոնե ժամանակ տվեք:

**ՄՈՍԵՍ** - Մտկումդ սիրուհուդ անումը տուր, ջրի պես կու խմվի:

**ՆԻՍՈ** - Մինոտ...

**ՄՈՍԵՍ** - Ձենդ...

**ՂԱՂՈ** - Խմի, վուր միզ հիտ դրստվիս, վուր միր խոսկիրը քի մոդ հիմար չերևան:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ինչե՞ր եք խոսում, ես՝ նվաստս, ամենակն, բոլորովին, բնավ իսկ...

**ՍԵՐԳՈ** - (անսպասելի զայրույթով վեր է թռչում): Տո, խմի ու մեռի, ախավեր:

**ՄՈՍԵՍ** - (զարմանքով): Սերգոն... Սերգոն խոսեց:

**ՍԵՐԳՈ** - Տո, հենց ըտենց. խմի ու մեռի, բաս...

**ԳԱԲՐԻԵԼ** - Ինչ արած, որ պնդում եք...

**ՂԱՂՈ** - Մուլափ, էտ չելավ... Մե բան ասա, նոր խմի:

**ՄՈՍԵՍ** - Դրուստ ի ասում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Սիրով... ի խորոց սրտի խմում եմ պատվելի, հյուրասեր տանտիրոջ կենացը: Մեծարգո պարոն Մովսես, ես հիացած եմ ձեզնով, ձեր պատվելի եղբորով, ձեր չքնաղ, անզուգական տիկնոցով... Սիրուց սիրտս կտոր-կտոր է լինում...

**ՄՈՍԵՍ** - Իյա...

**ՂԱՂՈ** - Ինչ ասավ...

**ՄՈՍԵՍ** - Նինո, էստի իս... Ամա մե բանկագին ղոնախի համա մի անուշ տադ ասա:

**ՆԻՆՈ** - Մոստ ջան, ախր...

**ՄՈՍԵՍ** - Հառամզադա, երգի, ասի...

**ՆԻՆՈՆ ԻՆՉԵԼ ՃԱՅՆՈՎ ԵՐԳՈՒՄ Է Օ-  
ԱԵՐԱՅԻՆ ԻԱՆՐԱՀԱՅՄ ԱՐԻԱ:  
ԵՐԳԻ ԸՆՔԱՋՔՈՒՄ ճոճանակը նո-**

րից սկսում է քենով մեկ դեգերեկ: Սերգոն «պա-դե-դե»-ով ուղեկցում է երգը: Գաբրիելը հուզմունքով սրբում է արցումքները: Ծափեր:

**ԳԱԲՐԻԵԼ** - (համրուրելով Նինոյի ձեռքը): Հրաշագեղ տիկին... Մեծագոյն երջանկություն է ներկա լինել ու վայելել ձեր աստվածային շնորհները:

**ՆԻՆՈ** - (թաշկինակով սրբում է դեմքը): Մեծապես շնորհակալ իմ:

**ՄՈՍԵՍ** - Մոլափ, Նինո...

**ՆԻՆՈ** - Հա, Մոսիկ ջան:

**ՄՈՍԵՍ** - Մոնտ արի:

**ՆԻՆՈ** - Ասա, Մոսիկ ջան:

**ՄՈՍԵՍ** - Աննամուս, էդ ինչ թաշկինակ ա:

**ՆԻՆՈ** - Իմ թաշկինակը:

**ՄՈՍԵՍ** - Վո՞լոդիան...

**ՆԻՆՈ** - Մոսիկ ջան, խալխի մոտ անհամութին մի արա:

**ՄՈՍԵՍ** - Ասում իմ, վո՞լոդիան... Զեն հանի, հանամզադա, դուդդ կհանեմ:

**ՂԱՂՈ** - Մոստ ջան, Օթելլոն ես, ինչ ա... Դուն տված կլնես, ամա չես հիշի:

**ՄՈՍԵՍ** - Սերգո, պլիտի փեղը բի:

**ՍԵՐԳՈ** - Ամա, աղա ջան...

**ՄՈՍԵՍ** - Բի, ասում իմ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Սպասեք. էդ թաշկինակը ես եմ նվիրել ձեր չքնաղ տիկնօջը:

**ՆԻՆՈ** - Վո՞յ մե, ամոթից գեղինը մտնեի, ավելի լավ չէ՞ր:

**ՂԱՂՈ** - Վո՞նց թե... Ուրեմն, դո՞ւն իս տվի:

**ՄՈՍԵՍ** - Մո՞լափի, Ղաղո...

**ՍԵՐԳՈ** - Աղա ջան, փեղը բերիմ:

**ՄՈՍԵՍ** - Տո, մի սսկվիք, տենամ ինչ ինք անում: Ուրեմն, դրո՞ն իս տվի:

Մարդ աստծո, շոյտ ասեիր: Ցիս իլ արդեն կասկածում ի, վայթե յիս իմ տվի: Ամա էդ տեսակ ծրտի-մրտի նվեր յիս չէի տա: Էտ թաշկինակը կոյսի ծոցդ, աձկս չտենա: Չէ, ծոցդ մի դի:

**ՆԻՆՈ** - Ախր, յիս ինչ միդ ունիմ:

**ՄՈՍԵՍ** - Ձենդ... (Եվայլնին): Օխ-նած, դե խմի, բողազներս չոր-ցավ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ամենայն սիրով, եթե անգամ այս գավաթի մեջ թույն լինի, քանզի խմում եմ Աստծո կե-նացը, հանձինս Նինոյի հանդեա տածած իմ զգացման:

Խոնում է և անմիջապես տապալ-վում գետնին: Բողոքն իրար են անցնում:

**ՂԱՂՈ** - Վո՞նց թե, մեռավ... Այ քեզ օյին:

**ՄՈՍԵՍ** - Սերգո, վազի, ջուր բի:

**Սերգոն դուրս է նետվում:**

**ՆԻՆՈ** - Վո՞յ մե, էս ինչ արիք: Բա դոնախի հիտ էսպես կու վարվին:

**ՄՈՍԵՍ** - Ձենդ, աննամուս:

**ՆԻՆՈ** - Ինչ ասի, վուր...

**ՂԱՂՈ** - Հախն է, վուր հաուզ տա-նիմ:

**ՄՈՍԵՍ** - Մո՞լափի... Ինչ եք թափվիլ խեղձ մարդու շնթին... Տենում եք, օդ չկա:

**ՂԱՂՈ** - Վոյն որ թե շնչում ա:

**ԳԱԲՐԻԵԼ** - (ուշքի գալով): Ես քամի եմ...

**ՂԱՂՈ** - Իյա, խոսաց:

**ՄՈՍԵՍ** - Ինչ ասաց:

**ԳԱԲՐԻԵԼ** - ...Մոլորյալ քամի, որ շվարել, կանգ է առել Նինոյի փե-շի առաջ:

**ՂԱՂՈ** - Էս հո խելառ ա:

**ՆԻՆՈ** - (Մոսեսին): Ինչ իս նայում, յիս ինչ միդ ունիմ:

**ԳԱԲՐԻԵԼ** - (Սերգոն փորձում է ջուր տալ): Չէ, ջուր չէ, գինի տվեք: Բաժակս ո՞ր է:

**ՄՈՍԵՍ** - Բաժակն է ուզում:

**ՂԱՂՈ** - Տո, բաժակը ծեռումն ա... Այ քե սարսադ:

**ՄՈՍԵՍ** - Ինչ իք շվարե... Մեր ազիզ դոնախին գինի լցեք:

**Ղաղոն գինի է լցնում:**

**ԳԱԲՐԻԵԼ** - Լցրու, լիքը լցոնու: (Խմում է: Ապշած սպասում են, թե ինչ է լինելու:) Հաուզ... Դա ինչ բան է:

**ՂԱՂՈ** - Հաուզ... Դե, հաուզ, էլի... Բասեյն:

**ԳԱԲՐԻԵԼ** - Լողավազան...

**ՂԱՂՈ** - Տո, ինչ լողավազան, դու էլ հո չասիր: Լողավազանում լող են տալի: Մերը հաուզ ա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Հաուզում լողալ չի կա-րելի:

**ՄՈՍԵՍ** - Ո՞նց ասեմ... Որ ընգնես  
մեջը, լող կտաս, թե կարենաս:

**ՂԱՂՈ** - Զուրը ֆոտած ա, գորտերն  
են լող տալի... Հառով ա...

**ԳԱԲՐԻԵԼ** - Տարեք ինձ, բլցրեք  
հառովը, գորտերի մեջ:

**ՂԱՂՈ** - Ինչ ա շաշ-շաշ դուս տալի...

**ՄՈՍԵՍ** - Տո, ինչ հառով, ինչ բան...

Ո՞վ ա ըստենց բան ասե:

**ԳԱԲՐԻԵԼ** - (կանգնում է տակա-  
ռին): Պաշտելի տիկին, մեծարգո  
պարոնայք... Այլսա անզոր եմ լոել:  
Իմ պարտքն եմ համարում տեղե-  
կացնել ծեզ, որ կա նաև երրորդ  
նկարը: Բոլոր ժամանակների  
գլուխգործոց, մեծագույն մի ա-  
ռեղծված, որի խորհուրդը հան-  
ձարեղ նկարիչը հմտորեն  
քողարկել է նախորդ երկու նկար-  
ներում, ինչի մասին ոչ միայն  
բարձրածայնելը, այլև լոելը մե-  
ծագույն մեղանչում է:

**ՂԱՂՈ** - Էլի սկսեց շաշ-շաշ դուս  
տալ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Առեղծված, որի անորոշ  
կոահումներն են իմաստավորում  
մեր այս խաղը, մեր գոյությունն ու  
դատապարտված սերը...

**ՂԱՂՈ** - Վայ թե էլի Նինոյի կենացն  
ա խմելու:

**ՄՈՍԵՍ** - Ինչ ա, էլ տղամարդ չի  
մնացե, որ կնօա կենացը խմինք:  
Բա էս գդակը ընչի՞ ա զիսիս:

**ԳԱԲՐԻԵԼ** - Նկարում, գողտրիկ բա-  
ցատում պատկերված է նախա-  
ձաշ խոտի վրա: Խոտերին

փոված սուփրի շուրջ նստած են  
Մոսեսը, իր աննման տիկին Նի-  
նոն, պատվելի եղբայրը՝ Ղաղոն  
ու մի պերծախոս համակրելի ե-  
րիտասարդ:

**ՄԵՐԳՈ** - Էտ հո Ես եմ:

**ՂԱՂՈ** - Ձենդ... Տենանք էս շաշն ինչ  
ա ասում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ասում եմ, շուրջը դրախ-  
տային ծառ-ծաղիկներ են, հե-  
քիաթային թռչնակների հետ  
ծախրում ու իրենց չքնաղ երգն են  
ասում մանկամարդ հրեշտակնե-  
րը: Ամեն ինչ կատարյալ է, աստ-  
վածային ու ողբերգական...

**ՄՈՍԵՍ** - Իյա... Էդ ընչի՞ որ...

**ԳԱԲՐԻԵԼ** - Նկարում բացակայում է  
ծեր խոնարի ծառան, ով իրակա-  
նում ամեննին էլ երիտասարդ չէ:  
Ծեր, հիվանդ մարդ է: Ավելին՝ նա  
վախճանվել է:

**ՂԱՂՈ** - Վհնց թե, մեռիլ է...

**ՄՈՍԵՍ** - Տո, մոլափ, տենանք ինչ  
ա ասում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Այն, հանգուցյալը ծեր  
խոնարի ծառան է՝ Գաբրիել  
Սունդուկյանցը:

**ՂԱՂՈ** - Վհնց թե... Էդ յե՞փ մեռար,  
վուր չիմացանք:

**ԳԱԲՐԻԵԼ** - Վաղուց... Հարյուր տա-  
րի առաջ:

**ՂԱՂՈ** - Էս հո մեզ ծեռ ա առնում:

**ՄՈՍԵՍ** - Մոլափ, ասիր՝ Սունդուկ-  
յանց...

**ՂԱՂՈ** - Էդ հո մեր ազիզ ընկեր  
Մկրտումի ազգն ա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ձեր խոնարի ծառան հենց Մկրտումի որդին է՝ Գաբրիելը:

**ՄՈՍԵՍ** - Վո՞նց թե... Մկրտումը իոն իմ քիա ընկերն առ նոր առ նշան դրվե:

**ԳԱԲՐԻԵԼ** - Գաբրիելը մահացել է, Մկրտումն էլ:

**ՂԱՂՈ** - Կարող առ մենք էլ ինք մեռի, համա խաբար չենք:

**ԳԱԲՐԻԵԼ** - Զէ, դուք ողջ եք, դուք անմահ եք... Իսկ Գաբրիելը մեռել է:

**ՄՈՍԵՍ** - Վկոնց հասկացա, Գաբրիելը էդ դո՞ւ ես:

**ԳԱԲՐԻԵԼ** - Այդպես է:

**ՂԱՂՈ** - Էն, վուր մեռիլ է, թե՝ էն, վուր նոր պիտի ծնվի:

**ՄՈՍԵՍ** - Տո, վո՞նց չես հասկանում... Էն մեռածը, էլի, վուր նոր պիտի ծնվի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Էն, ում վուոր էս պահին քոր է գալի: Ներող եղեք, պաշտելի տիկին:

#### Տղամարդիկ հոհոում են:

**ՄՈՍԵՍ** - Նինո, աձկեմես ուադ էլի:

**ՆԻՆՈ** - Գնում եմ, Մոսո ջան: (Գնում է:)

**ՄՈՍԵՍ** - Խմենք Գաբրիելի հիշատակի կենացը: Ինչ ասիմ, Աստուծ հոգին լուսավորի:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ծնորհակալ եմ:

**ՄՈՍԵՍ** - Թող նրա սրտում եղած սերը Աստուծ բաշխի ապրողներին, թե տղամարդու, թե կնգա:

**ՂԱՂՈ** - Պարոն Գաբրիելի կենդանի կենացը:

**ԳԱԲՐԻԵԼ** - Անչափ զգացված եմ:

**ՄՈՍԵՍ** - Թող նա էն կինքում բարեխոս ըլնի բոլոր սիրահարների, լորի հոգիների համա որպես մի նոր երանելի Գաբրիել հրեշտակապետ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Մեծապես զգացված եմ:

**ՄՈՍԵՍ** - Թող մեր Մկրտում ախառո տղեն բարով ծնվի, բարով մենձնա, բարով վայելի իր թագն ու պսակը ու բարով արժանանա երկնքի արքայությանը... Ամա, մարդ աստծո, ասա տենանք, ընչից ա մեռե:

**ՂԱՂՈ** - Էհ, մարդը ընչից ա մեռնում. սիրտը կանգա առնում, մեռնում ա:

**ԳԱԲՐԻԵԼ** - Սիրո ավելցուկից:

**ՂԱՂՈ** - Հյա...

**ՄՈՍԵՍ** - Սերգոն ուզում ա խոսի... Ասա, Սերգո, տենամ ինչ իս ասում:

**ՍԵՐԳՈ** - Թող վուր Գաբրիելի հոգին երկնքումը վատ օր չտեսնի:

**ՄՈՍԵՍ** - Ապրես, Սերգո...

**ՍԵՐԳՈ** - Ինչ ասիմ... Մահն ու կյանքը հարազատ ախառներ ին:

**ՂԱՂՈ** - Դրուտ է... Վկոնց որ յիս ու իմ ախառեր Մոսեսը:

**ԳԱԲՐԻԵԼ** - Ոնց որ լորին ու բակեն, կամ՝ Ծեքսպիրն ու Սունդուկյանցը:

**ՄՈՍԵՍ** - Մո՛լափ, չհասկացա... Հիմի լորին էդ ես եմ, թե՞ Ղաղոն:

**ՂԱՂՈ** - Չէ, լորին էդ բաղն ա, իսկ Շեքսպիրը՝ սագը, ոնց որ՝ բակլեն... Իսկ Սունդուկյանցը վայ թե սոյան ա, ոնց որ՝ հավը:

**ՄՈՍԵՍ** - Ղաղոն բակլով ձվածեղը գժի պիս սիրում ա... Որ տաս, ամեն օր կուտի:

**ՂԱՂՈ** - Կուտիմ:

**ՄՈՍԵՍ** - Տո, մարդավարի ասեք, հասկնամ. իհմի էս մարդը սանդ է, թե՞ մեռած, լորին է, թե՞ բակլեն, Սունդուկյանցն է, թե՞ Շեքսպիրը...

**ԳԱԲՐԻԵԼ** - Սոյայով հավը, Շեքսպիրով բակլեն, մահով ձվածեղը...

#### Լռություն:

**ՍԵՐԳՈ** - Հա, իմացաք... ոսները կոսմոս ին թռե:

**ՂԱՂՈ** - Ոնց... Դիմի...

**ՄՈՍԵՍ** - Տո, ջիանդամը, թե չին թռե... Էնենց թռնին, որ ես գիտենամ...

**ՂԱՂՈ** - Հա, բայց դիմի...

**ՄՈՍԵՍ** - Չէ, քո Նատաշեն չի թռե, քիզ ի սպասում: Սերգո, այ տղա, քանի լիզուդ բացվիլ ի, մե դայդին բան ասա, խմենք:

**ՍԵՐԳՈ** - Էլ ասելու բան մնաց... Գնամ հավուզը...

**ՂԱՂՈ** - Ինչի՞ համա... Հասկացա, մի՞ ասա:

**ՍԵՐԳՈ** - Գնամ... Գամ: (Գնում է:)

**ՄՈՍԵՍ** - (*Սերգոյի ետևից*): Նինոյին էլ կանչե, թող գա: (Գաբրիելին.) Ամա չհասկացա. իհմի դու Գաբրիելն ես, թե՞ Եվայլնը...

**ԳԱԲՐԻԵԼ** - Ամեն ինչ մեկ է. Գաբրիել, թե Եվայլն, Սունդուկյանց, թե Շեքսպիր, Սերգո, թե Ալեքսանդր Մակեդոնացի...

**ՂԱՂՈ** - Ո՞նց... Մակեդոնանց Սաշիկը...

**ՄՈՍԵՍ** - Էդ հո մեր Սերգոն ա: Իսկական անունը Ալեքսան ա, բայց հո Սաշիկ չենք ասելու:

**ՂԱՂՈ** - Սերգոն, էլի, որ գնաց հաուզը... Մեր Սաշիկը, Ֆիլիպի տղեն:

**ՄՈՍԵՍ** - Մակեդոնանց Ֆիլիպը, որ խոզ է պահում:

**ՂԱՂՈ** - Սերգոն, էլի... Որ գնաց շոելու:

**ՄՈՍԵՍ** - Է, հա... հետո՞...

**ՂԱՂՈ** - Եսիմ... Երևի ես էլ գնամ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Գնալ, թե՞ մնալ... Սաշիկ, թե՞ Սերգո:

**ՂԱՂՈ** - Հասկացա, դիմի մեկ է:

**ՄՈՍԵՍ** - Մենակ չասեք, որ խմիլն ու չխմիլն էլ նոյն բանն ին... Դե ասա՝ գնա մեռի, էլի:

**ՂԱՂՈ** - Դրուստ իս, ախապեր ջան... Դե մի բան ասա, խմենք, բողազներս չորցավ:

**ԳԱԲՐԻԵԼ** - Մակեդոնանց Սաշիկը լավ ասաց. խոսելն անհմաստ է: Ամեն հնարավոր բան արդեն ասված է: Այստեղ սպառվում է ի սկզբանե ասված խոսքն ու սկսվում է լորությունը... Մեծ, անվախծան լորություն:

#### Մի պահ բոլորը լուս են:

**ՂԱՂՈ** - Վունց... Էլ չինք խոսելու...

**ՄՈՍԵՍ** - Մարդը ասեց, Էլի՝ լո՞ւմ  
ինք:

**ՂԱՂՈ** - Հիմա՞, թե՞ վարշե՞:

**ԳԱԲՐԻԵԼ** - Կարող եք և խոսել, մի  
հաշիվ է:

**ՂԱՂՈ** - Չէ, թե լո՞ւմ ինք, լոինք...  
Յիս ի՞ն ապուշ չի՞մ, որ չիասկա-  
նամ: (*Լոռություն*) Մոսո՞... Մոսո՞ն  
լուո՞ ի... Փորս գոռաց: Ի՞նչ իս նա-  
յում:

**ՄՈՍԵՍ** - Տո, լիզուդ կով տու ու տեղդ  
վեր ընգի:

**ՂԱՂՈ** - Ի՞նչ իս վրես գոռում... Ամա  
վուր փորս գոռաց, ասիմ՝  
չգոռաց... Ախ, Աստուծ:

**Գալիս է Նինոն:**

**ՄՈՍԵՍ** - Նինո ջան, արի, էստի  
նստի, գլուխս դնեմ գոգիդ, դնջա-  
նամ:

**ՆԻՆՈ** - Մոսո ջան, ուշ է, գնանք  
տուն՝ քնի, դնջացի:

**ՄՈՍԵՍ** - Չի ըլնի... Կարևոր գործ ու-  
նինք: Համ է՝ ազգի կենացը դեռ  
չինք խմե:

**Մոսեսը գլուխը դնում է Նինոյի  
ծնկին: Նինոն օրորոցային է եր-  
գում:**

**ԳԱԲՐԻԵԼ** - Նինո, սիրում եմ քեզ:

**ՆԻՆՈ** - Գլխարկս հավանո՞ւմ իս...  
Մոսոյի նվերն է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Սիրում եմ գժի պես:

**ՆԻՆՈ** - Գժվիլ իս... Դա ի՞նչ ասելու  
բան է:

**ՂԱՂՈ** - Լավ ասիր, Նինո... Բա դա

տղամարդու ասելու բան է: Մոն,  
լսո՞ւմ իս:

**ՄՈՍԵՍ** - Վայ թե շատ խմեցի:

**ՆԻՆՈ** - Մոսոյի նվերն է... Չի թողում  
տան միջում էլ գլխեմես հանեմ:

**ՂԱՂՈ** - Մոսո, լսո՞ւմ իս... Ես շաշն  
ասում ա, որ Նինոյին սիրում ա:

**ՄՈՍԵՍ** - Դա ի՞նչ ասելու բան ա...  
Ընչ՞ պիտի չսիրի: Դու Նինոյին  
չի՞ս սիրում:

**ՂԱՂՈ** - Վ՞ունց թե, յիս նրա ցավը  
տանիմ: Նինոյի համա սառոչկես  
կծոյիմ, աձկս կիանիմ:

**ՆԻՆՈ** - Մոսոն ասում է, վկր առանց  
գլխարկ կնոջ գլուխը կիսատ է...

**ՄՈՍԵՍ** - Առանց գլխարկ կինը վոնց  
որ առանց բեղ տղամարդ, ա-  
ռանց ֆես թուրք, կամ գալստու-  
կով ամերիկացի:

**ՆԻՆՈ** - Մոսո, իսկ դո՞ւ ինձ սիրո՞ւմ  
իս... (Զայն չկա:)

**ՂԱՂՈ** - Մոսոն քնեց:

**ՆԻՆՈ** - Էդպես է. հենց խոսկ ի բաց-  
վում սիրո մասին, Մոսոն միշտ  
քնում է:

**ԳԱԲՐԻԵԼ** - Նինո, սիրում եմ քեզ...

**ՂԱՂՈ** - (ծիծաղում է): Ես էլ տապա-  
կած լորի եմ սիրում: Հա, մեկ է՝  
ավտոյիս բանալին: Մոսո, դո՞ւ ինչ  
իս սիրում:

**ՄՈՍՈ** - Սիրելս որն ի... Իսան ինք,  
խմում ինք, էի:

**ԳԱԲՐԻԵԼ** - ...Սիրում եմ քո գլխար-  
կը, վերնաշապիկը, վերնաշապի-  
կիդ կոճակը, կոճակիդ համեստ  
անցքերը...

**ՆԻՆՈ - Ախ, Աստուծ...**

**Երկար լրություն:**

**ՂԱՂՈ -** Քու հեր ու իմ ընկեր Մկրտումը ասում է. սիրո տաճարի մոտ պիտի գլխարկը հանել, բայց ներս չմտնել, ինչպես մահվան դարպասների մոտ...

**Մոսեսը խոնֆում է:**

**ՆԻՆՈ -** Գիտես, Մոսոն դեռ ինձ համբուրած չկա: Հա, չի համբուրել... Ասում է, որ ինքն էդ տեսակ ծրտի-մրտի բաներ չի սիրում:

**ՄՈՍԵՍ -** Կնգան պաշենլ որն ա... Ժամի դո՞ւ ա, թե՞ էրեխու տու- տուզ:

**ՂԱՂՈ -** Պիտի կարողանալ ապրել սիրո արվարձանում: Մկրտումն է ասում: Տան բանալու հանդեպ անտարբեր եմ, բայց ավտոյիս բանալին սիրում եմ:

**ՆԻՆՈ - (Գարրիելին):** Էդ ինչ իս ա- նում:

**ԳԱԲՐԻԵԼ -** Տակառի մեխը հանում եմ:

**ՆԻՆՈ -** Ինչի՞ համա...

**ԳԱԲՐԻԵԼ -** Էս մեխը չեմ սիրում:

**ՆԻՆՈ -** Մի արա... Մոսեսը խաղողը տրորելիս գրակը էդ մեխիցն է կախում:

**ԳԱԲՐԻԵԼ -** Պիտի հանեմ:

**Գալիս է Մերգոն՝ հպարտ կեց- վածքով, զգեստափոխված, սա- ղավարտը գլխին:**

**ՄԵՐԳՈ -** Զանք մի թափիր, միևնույն է, չես կարող հանել:

**ԳԱԲՐԻԵԼ -** Ի՞նչ...

**ՂԱՂՈ -** Էս հո Մերգոն ա... Մերգո՞...

**ՄԵՐԳՈ -** Դու նոյնիսկ այդ մեխի ծակատագիրը փոխել չես կարող: Միայն հորինյալ կոնֆլիկտներ, անմեղսունակ հերոսներ, անմեղ- սունակ սեր, անմեղսունակ մեխ:

**Գարրիելը մտնում է տակառի մեջ... սկսում է գոռալ:**

**ՆԻՆՈ -** Մերգո... Էտ ինչ խոսքեր են... Ինչեր իս ասում մեր պատվելի հյուրին:

**ՄԵՐԳՈ -** Ես սա ասում եմ հպար- տությամբ, մեծագույն հարգան- քով: Այս տակառի մեխը ավելին է, քան շեքսապիրյան բովանդակ կրքերն ու կոնֆլիկտները: Մեր հանձարեղ հեղինակը օրը ցերե- կով մոմը ծեռքին փնտրել ու գտել է ձեզ:

**ՂԱՂՈ -** Մոսո, զարթնի, վե կաց...

**ՄՈՍԵՍ - (արթնանալով):** Հը, ինչ... Ազգի կենացն ինք խմում...

**ՂԱՂՈ -** Մերգոն խելքը թոցրիլ է...

**ՄՈՍԵՍ -** Տո, էդ ե՞ր ա խիլ ունեցե, որ իմի էլ թոցրիլ է:

**ՄԵՐԳՈ -** Ես Մերգոն չեմ, այլ՝ Ալեք- սանդր Մակեդոնացին, մեծագույ- նը բոլոր զորավարներից: Եկել եմ խորին հարգանքս մատուցելու տակառի մեջ պարփակված այս աշխարհակալին, ում սերը չի տե- ղավորվում դրամատուրգիայի ոչ

մի քառակուսու, ոչ մի տակառի մեջ:

**ՄՈՍՈ -** Հիմի սա ո՞ւմ կենացն է, ազգի՞, Գաբրիելի՞, թե՞ էլի Նինոյի:

**ՂԱՂՈ -** Նինոյի սառոշկի, սառոշկի կոճակի, տակառի մեխի...

**ՄԵՐԳՈ -** Նինոյի սառոշկի կոճակը չեմ փոխի ոչ մի Մեղեայի, ոչ մի Աննա Կարենինայի ու ոչ մի մադամ Բովարիի հետ:

**ԼԻՆՈ -** Սերգո, դա ինչ ասելու բան է... Բոլորիս կենացը:

**ՄՈՍԵՍ -** Ապրես, Նինո ջան: Ընկերության կենացը: Վուրոյի ազնիվ մարդ կա, նրա կենացը: Աստուծ սաղին ջանսաղութին տա և այլն, և այլն...

**ՂԱՂՈ -** Ապրես, իմ ազիզ ախաբեր:

**ՄՈՍԵՍ -** Տո, մի մեր լոթի ախաբոր՝ մակեդոնանց Սաշիկի բաժակը լցրեք:

**Քոլորն ուրախ ողջագուրվում են:**  
**Գաբրիելը տակառի մեջ լաց է լինում:**

**ՄԵՐԳՈ -** Յիս էն գլխեմեն լոթի ժաժ գալը խիստ կու սիրիմ: Պատվական պարոննիր... յիս դիկի ձիր արիվով իմ օրթում ուստում ու ձիր համա գլուխս չարի փուխ անում: Զուր ջան, ախաբութիք... Իմ մեղավոր բերնով կու խնդրիմ Աստուծեմեն, վուր բազում տարի ապրիք տնով, տիղով, վուրդերանցով, ուժուղով ու բուժուղով...

**ՂԱՂՈ -** Սադ ըլիս, ախաբեր... Քու վաթանին արժանի ըլիս:

**ՄԵՐԳՈ -** Տեր Աստուծ, յարաբ եփ պիտի ծանչնենանք մեկ-մեկու, յա յեփ պիտի ամեն մարթու իր արժանավոր ու թենի գորա պատվինք:

**ՄՈՍԵՍ -** Եի, Աստուծ ինչ միու ունի. ամեն վուտը փուխելումը ուստ է գալի մի դալբություն... Վուր միտս բերիմ, վիրջ չունե միր անդրավութինները. ով քրիստոսի միխ խփող է՝ նա ավետարան է քարոզում, ով ասկի հակառակ է՝ նա ասկի անումով է խոսում, ով սատանի հետ գործ է բռնում՝ նա հրեշտակներու անումով է օրթում ուստում...

**ՂԱՂՈ -** Էդպես ա, ախաբեր:

**ՄԵՐԳՈ -** Իսկ իիմա, վեհաշուք տիկին, պարոնայք... Պահն է խոսքը տալ մեր հանձարեղ հեղինակին, լսելու մեզ ուղղած նրա պատգամը... Համեցեք, պարոն:

**ԳԱԲՐԻԵԼ -** Պաշտելի տիկին, պատվական պարոններ, այս իսկ պահին պարտքս եմ համարում որպես ներկայացման ապոֆեոզ հնչեցնել հետևյալ միտքը...

**ՂԱՂՈ -** Ի խորոց սրտի...

**ՄՈՍԵՍ -** Տո, սակվի, տենանք ինչ ասում:

**ԳԱԲՐԻԵԼ -** Մարդը բոլոր գույները խառնելով ստանում է սև, իսկ Աստված՝ ծերմակ:

**ՂԱՂՈ -** Էդպես ա, ախաբեր:

**ԳԱԲՐԻԵԼ -** Սևը իմաստավորելու համար այն հարկ է շրջանակել

քառակուսով, իսկ ճերմակը չես շրջանակի: Եթե պատուհանի քառակուսոց նայում եք երկնքին, չի նշանակում, որ երկինքը քառակուսի է:

**ՂԱՂՈ** - Էղաբես ա, ախսպեր:

**ԳԱԲՐԻԵԼ** - Քաղաքակրթության պատմությունը երկնքի ճերմակ քառակուսին սև ներկելու ու խրթին մտքերով շրջանակելու պատմությունն է:

**ՂԱՂՈ** - Ես ի՞ն էլի լաց ա ըլում:

**ԳԱԲՐԻԵԼ** - Համարենք, որ սա ասացի չհասկացվելու համար:

**ՍԵՐԳՈ** - Գաբրիել, ես քեզ, իհարկե, հասկանում եմ... Ինքս էլ դեմ չեմ տակառում ապրելուն, եթե, իհարկե, այնտեղ ապրելու տարրական պայմաններ կան՝ ընդարձակ է, լուսավոր, եթե կաօդափոխիչ, համակարգիչ, շքեղ բազկաթոռ, որը անհրաժեշտության դեպքում կվերածվի երկու տեղանոց մահճակալի... Հյուրասրահ դեպի Արարատ բացվող տեղասով...

**ՄՈՍԵՍ** - Գինու մառան...

**ՍԵՐԳՈ** - Անշուշտ՝ գինու մառան, գոլֆի դաշտ, ձմեռային այգի...

**ՂԱՂՈ** - Հառուգ...

**ՍԵՐԳՈ** - ...Քրավազան, ուր լողում են կարապներ, վայրի սագեր...

**ՆԻՍՈ** - Գույնզգույն ձկներ...

**ՂԱՂՈ** - Գույնզգույն գորտեր...

**ՍԵՐԳՈ** - Բաղակտուցներ, ջրահարսեր...

**ՂԱՂՈ** - Բաղակտուցն էտ ինչ ա:

**ՄՈՍԵՍ** - Դե, եթե բաղը լորին ա, սագը՝ բակլեն, բաղակտուցն էլ՝ վայ թե բամյեն ա:

**ՍԵՐԳՈ** - Մոտավորապես...

**ՂԱՂՈ** - Էփած, թէ թթու դրած...

**ՍԵՐԳՈ** - Չէ, սալաթ արած:

**ՂԱՂՈ** - Մայոնեզնվ...

**ՍԵՐԳՈ** - Կարելի է և մայոնեզով:

**ՂԱՂՈ** - Էդ բաղակտուցը դո՞ւս էկավ:

**ՍԵՐԳՈ** - Նինո՞ւ, մի բան էլ դո՞ւ ասա:

**ՆԻՍՈ** - Իսկ տականը...

**ՍԵՐԳՈ** - Ի՞նչ տակառ... Հա, տակառը: Դե, կարծում եմ, առանձնատան նկուղում կգտնվի մի անկյուն, ուր կարելի է տակառը տեղավորել:

**ՂԱՂՈ** - Հա, բա ո՞նց:

**ՍԵՐԳՈ** - Վերադառնանք մեր պատվելի հեղինակին: Խորին հարգանացս հավաստիքը լավագույնս արտահայտում է հետևյալ խոսքս. Եթե ես Ալեքսանդր Մեծը չինեի, վստահաբար կուգեի լինել Գաբրիել Սունդուկյանցը: Ասա, իմ մեծահամբավ բարեկամ, ինչպես քեզ պատվեմ... Հանուն քեզ ես պատրաստ եմ ցանկացած զոհողացան:

**ԳԱԲՐԻԵԼ** - Մի կողմ քաշվիր, պրոժեկտորի լույսը ծածկում ես:

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



## Կարինե ԽՈԴԻԿՅԱՆ

Այս անգամ «հեղինակի խորի» թեման պատվերն է: Այն նոյն պատվերը, որ հնուց անտի եղել է արվեստում ու մշակույթ ստեղծել և հանելով մեր օրերը՝ շարունակում է իր ընթացքը՝ երբեմն-երբեմն հայտնվելով լինել-չլինելու եզրագծին (կան պատվերով ստեղծագործելուն դեմ հերռատրատներ, ում ամենազորեղ կովանը «պատվերով մուսա կամ ներշնչանք չի' լինում» համոզմունքն է): «Պատվերը» այս անգամն էլ հաստատեց լինելու իր իրավունքը. եթե փետրվարյան մի օր ոեժիսոր Դավիթ Հարությունյանն ու դերասան Իշխան Դարիբյանը չառաջարկեին պիես գրել դիահերձողի մասին, չէր լինի այս մոն-խաղը: Պատվերը կատարված է, սպասում եմ ներկայացմանը, իսկ առաջնախաղի իրավունքը պատվիրատուինն է:

# **ՊԱԹ(ոլոգիկ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**(Մոն-խաղ)**

**Մինչ-խաղ:** Զայն ձերմակ, դատարկ էկրանին:

Մարդու օրգանիզմը ռացիոնալ է: Միակ հրացիոնալը այդ մարմնում՝ բանականությունն է, որը սպանում է հենց նույն մարմինը: Բայց դա չի նշանակում, որ եթե մարդը ընդհանրապես հրաժարվի բանականությունից,  
ձեռք կրերի անմահություն:

**ԽԱՎԱՐ:**

**Վայրկյան անց՝ 2 աղջիկ ձերմակ, դատարկ էկրանին:**

Մարդկության ամենահինտիմ թեման... հուսամ՝ մտքներովդ սեքսը չանցավ:  
Որովհետև սիրո մասին դժվար հիշեիք: Ուրեմն՝ ամենահինտիմ թեման  
մահն է: Զգույշ արտահայտվեք նրա մասին: Ասածս չի վերաբերվում  
շատ քիչ թվով անձանց: Նրանց մեջ ես Էլ կամ:

**ԽԱՎԱՐ:**

**Զայն ձերմակ, դատարկ էկրանին:**

Ինչ է լինում մարմնի հետ մահից հետո՝ գիտեմ ամենայն մանրամասնությամբ: Բայց հոգու մասին հարց չտաք, ու ձեր ինչին է պետք իմանալ՝ Եթե նույնիսկ կա այդ հոգին, ապա որտեղ է գտնվում: Հա, երբ առաջին կտրվածքն եմ անում, հանգուցյալի քաշը թեթևանում է մի քանի գրամով:  
Ու դուք կարծում եք, թե ձեր ապրումները, էմոցիաները, սերն ու զզվանքը... մնացածն է՝ վրադիր, այդ մի քանի գրամի մեջ են...

**ԽԱՎԱՐ:**

**Զայն ձերմակ, դատարկ էկրանին:**

Դեռ չծնված՝ պապիս անունը ինձ էր սպասում: Պապիս չեմ տեսել, իսկ թե ինչու գավառական քաղաքի ժամագործ Անդրանիկը իր առաջնեկին Աստոմ էր անվանել՝ հայրս Էլ չգիտեր: Բայց երբ տարիներ անց, մասնագիտությունս նկատի ունենալով, միակ շատ թե քիչ ընկերս՝ Սուրենը, Աստոմը դարձրեց Պաթատոն, հերթական անգամ համոզվեցի, որ կյանքում ոչ մի բան հենց այնպես չի լինում:

**ԽԱՎԱՐ:**

**Զայն ձերմակ, դատարկ էկրանին:**

Խոստովանվել չեմ սիրում: Անկեղծանալ... չգիտեմ, դա ինչ է:

Հիմա Էլ չէի խոսի, եթե այդ զանգը չլիներ:

**ԽԱՎԱՐ**

**Քացվող դրան ճայն:** Լուսի շողը «քռնում է» Պարատոմին: Հագնված է խիստ նրբաճաշակ: Երկար վերարկուով է, ձեռքին՝ կաշվե քեյս: Ազ կողմից գալիս է դեպի ճախ նախարենք: Այնուեղ լուսի շողը «քացում է» կախչը, որից կախում է վերարկուն: Փորձիկ սեղան, արռո, նորքուր, մանրադիտակ ու բրերի տրցակ: Քեյսը դնում է սեղանին, վերցնում է սեղանին դրված հեռախոսի լսավորը:

**ՊԱԹԱՏՈՄ -** Տաս րոպեից սկսում ենք, պատրամատ է մեր տուբերկուլյոգնիկը:

**Դնում է լսավորը:** Քացում է քեյսը, հանում քաց անձեռոցիկների տուփը, մի քանիսով շատ քծախնդիր ու մանրակրկիտ մաքրում է ձեռքերը:

**ՊԱԹԱՏՈՄ -** Սա այն օրն ու այն դեպքն է, երբ ֆաստ-ֆուու ուտելը արդարացված է: Ասեմ, որ մտքով առողջ սնունդի կողմնակից եմ, հոգով՝ համեղ ուտելիքի սիրահար: Սովորաբար օրս սկսվում է հերկուլեսով: Կինս շատ խիստ է այդ հարցում, ես էլ դեմ չեմ՝ աշխատանքիս բնույթն ամեն օր ստիպում է գնահատել առողջ ապրելակերպը: Բայց... լինում են օրեր, երբ խստապահանջ տիկինս թույլ է տալիս ուտել՝ ինչ սիրտս կկամենա, ու ես ծանապարհին գնում եմ շաուրմա՝ կրկնակի կարտոֆիլ ֆրիով:

Ավարտում է ձեռքերը սրբելը, անձեռոցիկները նետում է զամբյուտի մեջ ու քացում է քեյսը: Հանում է թվարկած ուտելիքն ու հաճույքով սկսում է ուտել:

**ՊԱԹԱՏՈՄ -** Վատն այն է, որ ստիպած եմ խոսքի բռնվել պատվերն

ընդունողի հետ: (*Լմանակելով:*) Քետչուպով, թե՛ առանց, մայոնեզ պճտք է... իսկ մոռու բիբար ու սո՞խ... կարտոֆիլը լավ կարմրեցրած, թե՛ կիսահում... Իհարկե, պատասխանում եմ, նոյնիսկ ժպտում եմ, բայց երբ պատվերն առաջ մեքենաս եմ նստում, նորից եմ համոզվում, որ ամեն ինչի համար պիտի վճարես, ու հատկապես՝ պատճառաբանված հաճոյքի համար... (*Այլ տոնով:*) Տանել չեմ կարող, երբ ստիպած պիտի խոսեմ անծանոթի հետ: Մատուցող լինի, թե հանգույցալի սզացող հարազատը:

Ավարտում է ուտելը, նորից նույն կերպ մաքրում է ձեռքերը, փաթեթներն ու անձեռոցիկները լցնում է զամբյուտը: Բարձրանում է, հանում է կոստյումը, խնամքով կախում է կախիչից: Այդ պահին լրտավորվում է այն պատը, որից կախված է նրա սպեցիֆիկ հագուստը: Հագնվում է՝ հրեթաց խոսելով:

**ՊԱԹԱՏՈՄ -** Այս ամենը միայն անվտանգության համար չէ: Հագնվելու ընթացքում մի տարրածքից տեղափոխվում ես մյուսը: Մի հոգեվիճակից՝ մյուսին: Կյանքից՝ մահվան, - վերջին հա-

մեմատությունը զգայուն հոգիների համար է: (*Կապելով գոգնոցը, համարյա պարձենալով:*) Հատուկ եմ կարել տվել, մատերիալը գերմանական է: (*Ձեռքերին քաշելով թաթմանները:*) Իսկ սրանք հիշեցնում են մեր հարևան հաշվապահ Գանգիկին՝ սև մատիտով, փայտե հաշվիչով ու թաթմաններով՝ հաշվապահի դասական կերպար... (*Հագնելով ձեռնոցները:*) Այ, ձեռնոցներ՝ հարգում եմ՝ ինչ-որ մի բան, թեկուզ ուզգինից, պիտի տարածք թողնի քո և նրա միջև... Հատուկ թուլություն ունեմ լավ ձեռնոցների նկատմամբ: Եվ այստեղ, և տանը, նաև մեքենայիս մեջ տուփով ձեռնոց եմ պահում... Դա ինձ վստահություն է ներշնչում...

**Այս ընթացքում լրիվ հագնված է, քասակն էլ՝ զիսին: Նա պատրաստ է:**

**Այդ պահին լրսավորվում է քեմք՝ մինչև խորքը: Կենտրոնում երկար երկարեւ սեղան է, վրան որոշակի քարձրություն է՝ սպիտակ սավանով ծածկված: Պարատոմք, դիմակալը կապելով, մոտենում, կանգնում է սեղանի ետևում, դեմքով՝ դահլիճը, ետ է զցում ծածկոցը՝ մենք չենք տեսնում՝ ետևում ինչ կա: Նայում է «պակածին», հետո վերցնում է կորքին դրված քուղքը, կարդում է:**

Արձանագրություն թիվ... Ազգանուն... անուն... տղամարդ... 58

տարեկան... մասնագիտությունը՝ կենսաբան... աշխատանքի վայրը՝ գիշերային պահակ... հասցեն... հիվանդանոց է ընդունվել... երեք օր առաջ... մահացել է մեկ օր առաջ... 16-րդ կիրակիկական հիվանդանոցում: Հերձումը՝ նոյն հիվանդանոցի դիահերձարանում: Դե ինչ, բարեկամս, սկսեցինք...

**Նրա շարժումները հուշում են, որ սկսում է իր գործը:**

Սիրում եմ տուբերկուլյոզով հիվանդներին: Լրանց հերձելուց առաջ անպայման պիտի ուտես: Կուշտ ուտես: Անվտանգության նկատառումով:

**ԽԱՎԱԲ:**

**Բեմը լրսավորվում է, Պարատոմքը լվացարանի առաջ լվացվում է՝ երկար ու խճամքով:**

Սկզբում բոլոր դիակները նոյն հոտն ունեին: Հետո սկսեցի տարբերել հիմնական դիակային հոտը սպեցիֆիկ հոտից: Բայց մարդկային երևակայությունը սահման չունի: Կոլեգաներից մենք երկար ժամանակ ինձ համոզում էր, որ կոյս աղջիկների դիակներից շոկոլադի բոյր է տարածվում: Գիտե՞ք, ինչպես ինձ համոզեց: Երբ ասաց, որ ծերու չորացած պառավներից ապստած ձկան հոտ է գալիս: Այ, այդ-

տեղ հավատացի նրան, որովհետև նոյն հոտը ես էլ եմ զգացել: Ու ոչ՝ մեկ անգամ: Եվ այստեղ, առիթից օգտվելով, ասեմ, որ ինձնից ու իմ կողեգաներից հոտ չի գալիս, ու ոչ մի հոտ տուն չենք տանում: Դիահերձարանը ոչնչով չի տարբերվում այլ բուժհաստատությունից... Ու մի մոռացեք, որ նախկինում սա կոչվել է անատոմիական թատրոն, որտեղ կարող ես ստանալ շատ հարցերի պատասխաններ...

**Առաջ է գալիս, կենտրոնացած սկսում է սրբել ձեռքերը:**

Մեր ամառանոցի այգում ջրի ծորակ կար: Ժամերով կարող էի ձեռքերս պահել հոսող ջրի տակ, եթե, իհարկե, մայրս վրա չգար ու հարամ չաներ: Մեկ-մեկ մտածում եմ՝ մանկական նախասիրություններն են մեր կյանքի ուղին հարթում: Բժիշկներն ընդհանրապես սիրում են լվացվել, բայց մենք պաթոլոգիկ մաքրասեր ենք: Որովհետև պաթոլոգանատոմի համար ամենամեծ վտանգը կենսաբանական հյուսվածքներն ու հեղուկներն են, ամեն րոպե կարող ես վարակվել:

**Ծրջվում է արդեն հերձվածի կողմը:**

Հիմա ինձ ավելի հեշտ կարող ես վարակել, քան օրեր առաջ՝ քեզ

բուժող բժշկին: Ի՞նչ... գիտեմ, որ մտքովդ չի անցել, որ նման բան չես ուզում, գիտեմ, որովհետև արդեն ոչինչ ուզել չես կարող: Այդ մի հարցում ապրողներիս բախտը բերել է, թե չէ քանիսը վերջին շնչում կուգենային իրենց հետ տանել թշնամիներին... իսկ գուցե ավելի շատ՝ սիրելիներին... (Դիմում է հերձվածին:) Մի քիչ համբերիր, իիմա կգա սանիտարը, քեզ կկարի, կլողացնի, կհագցնի ու... կկազմակերպի հանդիպումդ հարազատներիդ հետ: Դա վերջին ծառայությունն է, որ մատուցվում է քեզ այս ունայն կյանքում: Նաև հերձման եզրակացությունս՝ թոքախստի վերջին ստադիա: Իսկ թե ինչո՞ւ որու, 58 տարեկան, բարձրագույն կրթություն ունեցող, բայց պահակ աշխատող երեք երեխաների հայր, մեռնելուց ընդամենը երկու օր առաջ ես եկել իհվանդանոց՝ դա էլ թողնենք հարազատներիդ խոճին: (Մոտենում, ծածկում է սավանը:) Իսկ ինձ արդեն հետաքրքիր չես: (Բարձր:) Կարո՞...

**Թեմը քաղվում է խավարի մեջ:**  
**Գալիս է լուսավորված ծախանդեյուն:**

Թեթև օր է, մեկ հանգույցյալ: Հազվադեպ, 3-4-ն են լինում... Ծերանցում գիշերը հրդեհ էր բոնկվել... Սկատել եք, ինչ-որ շատ հածախ են հրդեհվում ծե-

րանոցները, այրվում են մինչև հիմքերը, ու շատ չանցած դրանց տեղում հյուրանոց կամ սուաթերմարկետ է բարձրանում... Չշեղվեմ, ծերանոցից 8 դիակ բերեցին, ու դա եզակի դեպք էր, երբ սեկցիոն սենյակում միայն այրված մարմինների հոտ էր... Այդ օրը, չնայած լարումին, նոյնիսկ ողնաշարս չնվազաց... Իսկ հաջորդ օրը մեկ հերձում էր, որից հետո հարթեցի: 6 տարեկան տղա էր... Հարբած տականքը մեքենայով ելել էր մայթին ու... Այս սենյակում թվերն ուրիշ հաշվարկ ունեն՝ եթե կշեռքի մի նժարին դնես 8 մոխրացած պառավներին, մյուսին՝ այդ մեկ երեխային, հավատացեք, փոքրիկի ծանրությունից կշեռը կկոտրվի...

**Լույսը վառվում է՝ սեկցիոն սեղանին չկա սականը, մաքուր է ամեն ինչ:**

Կարոն մաքրասեր, բարեխիղծ սանիտար է, խմելուն դեմ չէ, բայց չափը չի կորցնում ու հանգուցյալների հանդեպ չափավոր հարգալից է: Ինձ թվում է, նրա չափավոր հարգանքի պատճառը ֆորիան է: Մի անգամ բերանից թոցրեց, որ ամեն ինչ կտա, միայն թե վստահ լինի, որ կինն ու զավակները չեն համաձայնվի իր դիահերձմանը: Բայց երբ առաջարկեցի նախապես գրություն

տալ, որ ինքը համաձայն չէ, ասաց՝ թող իրենք որոշեն, իսկ ինքը հոյս ունի, որ սանիտարը իր բոլոր ներքին օրգանները կվերադարձնի իրենց տեղը: Այստեղ նա լոեց, ես թեման չխորացրի, տիած նստվածքը մնաց: Ինչ որ է... Բայց զգում եմ՝ օդում լարում հայտնվեց: Խոսքը օրգանների վաճառքի մասին չէ: Դա հատուկ ինդուստրիա է և մեզ համար՝ անհասանելի: Պարզապես... (Երկմտելուց հետո:) Ոմանք մինչև հիմա հավատում են, որ եթե ինչոր բանից վախեցած մարդու ուտելիքի մեջ մեռած մարդու ոսկոր ավելացնեն... դե, ոչ թե ամբողջական կտոր, այլ կրակի վրա խարկած, ալյուրի նման մանրացրած փոշին... վախը կանցնի: Իսկ Կարոն մարդկանց օգնել սիրում է... Նաև հումորի զգացում ունի: Սև հումորի: Մի երեկոյթի թեթև սեղի մի թռչնակ փորձեց ինձ համոզել, որ ես հրապուրված եմ իրենով: Երբ հարցին՝ ինչ գործ եմ անում (նմանների համար շատ կարևոր է ստատուսը), ես պատասխանեցի, որ վիրահատում եմ (ամեն մեկին չես ասի՝ ինչ... ում ես վիրահատում), ինքն իրեն էլ համոզեց, որ հրապուրված է ինձնով: Մի քանի հանդիպումից հետո հրավիրեցի աշխատավայրս: Հրավիրեցի, որովհետև կարգին ձանձրացրել էր: Նա հատուկ պատրաստվել էր՝ կոնյակ, շոկոլադ, նարինչ:

Երևի մտածում էր, որ սեքսի հերթական սերիալը կլինի վիրահատական սեղանի վրա՝ աղջիկը վառ երևակայություն ուներ: Մեքենան կանգնեցրի հիվանդանոցի հեռավոր անկյունի միհարկանի շենքի առաջ: Նա չնկատեց չարագույժ ցուցանակը, կոնյակն ու շոկոլադը տվեց ինձ, իսկ ինքը նարինջների թղթե տոպրակը գրկած սահեց ներս: Ես առաջ անցա ու բացեցի այս դուռը, ու Կարոն ձիշտ ժամանակին վեր հանեց հանգույցալի աղիքները: Նարինջները գլորվեցին ցեմենտե հատակին, ես միաժամանակ բռնեցի հատակին փլվող գեղեցկուիոն ու Կարոյի սատանայական քմծիծաղը: Ավելի ուշ, երբ ծննդրուկը, ուշքի գալուց հետո հրաժարվեց մեքենայիցս ու փախավ՝ իր սլացիկ ոտքերին ապավինելով, Կարոն թանկարժեք կոնյակն ու շոկոլադը խժոելու արանքում թեթևակի նախատեց, որ տոպրակի փոխարեն իզուր թռչնակին բռնեցի, որովհետև հատակին փլվելուց հետո թռչնակները ոտքի կանգնում ու գնում են իրենց գործին, իսկ հատակին գլորված նարինջները աղբամանը պիտի օցես: Խոստացա հաջորդ անգամ այդպես վարվել: Բայց երկուսս էլ գիտեինք, որ խոստամաս չեմ պահի: Ես, իհարկե, կատակել սիրում եմ, բայց հոգուս խորքում կնամեծար եմ և...

**Ընդհատում է խոսքը, նայում է ժամացույցին:**

Այ, հիմա պիտի զանգի հեռախոսը:

**Հեռախոսազանգ: Վերցնում է ներքին կապի լսափողը:**

Լսում եմ... (Դահլիճին:) Գլխավոր բժիշկն է: (Լսափողի մեջ:) Այսօր մի հերձում էր... արդեն ավարտել եմ: Եվս մեկը... մեր հիվանդն է... հչ... Դե, եթե դուք եք ասում: Տանն է մահացել... հասկանում եմ, կասկածելի ոչինչ չկա... Աշխատանքի գնալուց առաջ... իենց դռան մոտ: Խնդիր չկա, կարվի, սպասեցնել չենք տա... Ով է հատուկ խնդրել... ախ, հանգույցալի աները... Լսել եմ նրա մասին: (Դեմքի արտահայտությունը լարվում է:) Իսկ հանգույցալը... ազգանունը... իսկ անունը... Արման... (Դեմքը քարանում է:) Զէ, մեկ շաբաթ է՝ միայն ես եմ, կոլեգաս կարձատու արձակուրդից ոեռ չի եկել: Խնդիր չկա, ես տեղում եմ... Այենաուշը մեկ ժամից այստեղ կլինեն... Ձեզ կուրսի մեջ կպահեմ: (Լսափողը դնում է: Դեռ՝ շփոթված:) Մինչև լսափողը դնելը կարող էի հրաժարվել: Հիմա արդեն ուշ է: Լազարյանն էլ կնոշը Գերմանիա է տարել՝ ստուգման: Իսկ գլխավորը... նոր մարդ է հիվան-

դանոցում, նրա ինչին է պետք իմանալը... Նրան պետք չէ, իսկ ոմանք անպայման ու անհապաղ պիտի իմանան... Անհապաղի...

**Այստեղ՝ իրավիճակին ու հոգեվիճակին հարիր խաղ:**

(Զանգում է բջջայինով): Զխանգարեցի... (Դահլիճին.) Կինս է: (Հսափողի մեջ:) Հիվանդի ինչի՞ ծենը գրուխը գցել... Լավ, կարծ կկապեմ: Արմանն է մահացել: Եթե այդ անունը դեռ ինչ-որ բան ասում է քեզ: (Անջատում է հեռախոսը: Անտարբեր:) Մանկաբույժ է: Սիրում է երեխաներին: Ուրիշի երեխաներին: Սեփականը ունենալ դեռ չի ուզում: Չի ուզում:

**Ներքին կապի զանգ:**

(Հսափողի մեջ): Հա... բերեք:

Կուլսաներից ձեռքը պարզում է ապակու կտորն ու քուղը: Պարատոմք վերցնում է Ձեռքից, դմում է սեղանին: Հանում է համազգեստը: Կարդում է քուղը, հետո ապակին դմում է մանրադիտակի տակ, նայում է:

Այսպես... (Ապակու կտորը պարզում է լոցսի շողին:) Հենց հիմա դու պառկած ես վիրահատական սեղանին, 38 տարեկան, երևի գեղեցիկ կին, այդ տարիքում տգեղ լինել չես կարող... պառկած ես՝ թքած ունենալով, թե ինչ են անում անօգնական դարձած

մարմնիդ հետ ու չգիտես, որ հիմա ու այստեղ է որոշվելու հետագա կյանքը: Հոռմեական Կոլիզեյում բութ մատը վեր կամ վար՝ նշանակում էր կյանք կամ մահ: Բայց Կոլիզեյում դատավորն ու գլադիատորը տեսնում էին իրար: Իսկ դու չես էլ իմանա, թե հիմա ինչպես եմ լարվել, որովհետև հաշված րոպեների ընթացքում պիտի որոշեմ՝ ուռուցքը բարորակ է, թե... Կամ՝ ինչ աստիճան է մահը տեր դարձել քո մարմնին, որովհետև այդ աստիճանից է կախված, թե ինչ բուժում կնշանակի բժիշկը: Այնտեղ 58 տարեկան տղամարդու մարմին է, բայց անշունչ ու այլևս ոչինչ չցանկացող: Ապակու վրա քո հյուսվածքի 4 միկրոն հաստության կտրվածք է՝ բայց կենդանի և ապրելու ծարավ: Ու նորից այդ տարօրինակ հաշվարկը՝ այս հյուսվածքը ավելի ծանր է, քան նրա մարմինը: Ինձ վախսկոտ անվանելը դժվար է: Բայց ես շատ եմ վախսենում սխալվելուց: Սա սովորական հերձում չէ, սա շատ ավելի դժվար մի բան է:

Այս րոպեներին, վախսից բացի, ես ինձ համարյա աստված եմ զգում՝ միայն ես գիտեմ ու կարող եմ ասել դատավճիռող: (Դադար:) Ուռուցքը բարորակ է, գնա, ապրիր, 38 տարեկան, հաստատ գեղեցիկ կին, ու թքած ունենամ, որ քո բժշկին ես աստծո տեղ դնելու, երբ քեզ կասի իմ դիագնոզը:

*Հետաքրքիր է, եթե մի պահ ան-  
ջատվեմ ինձնից ու կողքից նա-  
յեմ, ինչ կմտածեմ իմ մասին:*

### ԽԱՎԱՐ

Այդ րոպեները, որոնց ընթաց-  
քում պիտի ախտորոշեի 38 տա-  
րեկան կնոջ հիվանդությունը,  
ծիշտ ժամանակին օգնության ե-  
կան: Որովհետև գլխավոր բժշկի  
զանգից հետո կնոջս զանգելը,  
չէի ասի, որ ծիշտ քայլ էր: *Հե-  
տո... չգիտեմ, թե էլի ինչ կարող  
էի անել...* Արմանը չկա, մահացել  
է: *Հետո՝ ինչ, որ մահացել է, այս  
տարիների ընթացքում քանի ան-  
գամ եմ լսել այդ բառը...*

(Դադարից հետո:) Նոյնիսկ թա-  
քուն, իմ մտքում ինձ թույլ չեմ  
տվել երազել, որ մի օր «մահացել  
է» բառը կլսեմ Արմանի անվան  
հետ: Արմանը մահացել է... Ու ես  
պիտի նրան հերձեմ:

### ԽԱՎԱՐ

(Մենախոսքը ուղղված է Արմա-  
նին): Արթնացել ես՝ սովորակա-  
նի պես, ցնցուղ, սափրվել...  
Նախաձաշել ես՝ հաստատ: Օս-  
լայած անձեռողիկով, ծուն՝ ծե-  
նապակե ծվամանի մեջ...  
Հագնվել ես՝ անշտապ, գոյները  
համարիելով... Դու միշտ ես ցու-  
ցամոլ եղել: *Հետո... այ, չգիտեմ,  
տնից դուրս գալուց առաջ կնոշդ  
համբուրելու սովորություն ունե-  
ցել ես...* Դուանը հասել ես, թե...

ասենք, դա ինչ կարևոր է:  
Կարևորը՝ իմա քեզ բարձում են  
մեքենայի մեջ ու բերում են այս-  
տեղ: Մտքովդ կանցնե՞ր նման  
սցենար: Առաջին անգամ ինձ  
հետաքրքիր է, թե մահից հետո  
ինչ-որ բան զգո՞ւմ են: Եթե զգում  
են, իմա ինչ ես զգում, երբ գա-  
լիս ես մեր վերջին հանդիպմանը:  
Մինչև տեղ հասնես, պետք է մի  
բանով զբաղվեմ, թե չէ, զգում եմ,  
էլի ինչ-որ բաներ կանեմ, որ  
չպիտի անեմ... Իսկ ինչ են անում  
նման դեպքերում մեռելատանը:  
Սկսում են հիշել հանգուցյալին...  
Ես ինչով եմ նրանցից պակաս:  
Առավել ևս, որ հիշելու բան կա:  
Գիտե՞ս, նոր հասկացա, որ իմա  
կարող եմ ինձ թույլ տալ հիշել  
այն ամենը, ինչ կարողացել եմ  
մոռացնել տալ տարիներ շարու-  
նակ:

**Խավար:** Նատած է քեմեզքիմ,  
ձեռքում խաղալիք մեքենա:

Մորս ասելով, խաղացել եմ  
միայն մեքենաներով: Օր չի եղել,  
որ հայրս նոր մեքենա չբերեր ու  
ես... (Սկսում է քանդել՝ սկզբում  
հանգիստ, հետո անզուսպ մո-  
լուցքով:) Ես պիտի իմանայի՝ ինչ  
կա ներսում: *Հետո՝ ինչ, որ հա-  
զար հատ արդեն քանդել եմ ու  
բոլորը նոյնն են: Ես գիտեի, որ  
հազարմեկերորդը ուրիշ է  
լինելու: Բայց նաև գիտեի, որ դա  
հայրիկիս բերած մեքենան չի լի-*

նելու: Ու մի օր... երևի յոթ տարեկան կլինեի... իջա բակ ու տեսնեմ՝ ավագի մեջ կիսով չափ խրված մեքենա: Միանգամից հասկացա՝ իմ փնտրած մեքենան է: Վերցրի ու հո չեմ քանդում... Թիկունքիս ցավից աչքերս մթնեցին: Երբ լուսը վերադարձավ, տեսա նրան, կանգնել էր իմ դիմաց, մեքենան է՝ ձեռքում: Այնպես էր նայում, որ գլխի ընկա՝ խփելու հերթն իմն է... Մեզ մի կերպ իրարից բաժանեցին: Արմանն էր: Նոր էին տեղափոխվել մեր շենքը, հաջորդ օրն էլ, պարզվեց, նոյն դասարանում էինք սովորելու: Ես ու Արմանը:

#### Դադար:

(Զննում է մասնատված մեքենան): Ինչ ինձ իիշում եմ՝ ուզեցել եմ գտնել սկիզբը, քչփորելով հասնել խորքին: Կարող էի դառնալ հնագետ կամ հանքափոր, եթե վեցերորդ դասարանցի Ատոմը չտեսներ մայթին ընկած հարևան Վարդանին... Հավաքվածները անհմաստ գոռզողում ու դեսուդեն էին նետվում, նա աչքիս առաջ մեռնում էր, երբ հայտնվեց անձանոթ մի տղամարդ ու դարձավ դրույթան տերը՝ ձեռքի մի շարժումով տեղ բացեց, նայեց... շոշափեց... իրամայեց՝ դանակ կամ մկրատ, ու մեկի մտքով չանցավ հարցնել՝ ինչո՞ւ, որտեղից... ինչ-որ մեկը դանակ

բերեց, իսկ նա գնդիկավոր գրիշի միջից դուրս էր քաշում միջուկը: Ըետո ինչ-որ կնոջ շարքը վզից քաշեց, կոլողեց, դրեց Վարդանի վզի տակ, թաշկինակով սրբեց դանակի շեղբն ու խորեց կոկորդը... հայացքս չէի կարողանում կտրել նրա ձեռքերից, որոնք այնպես հանգիստ ձեղք արեցին ու անցքի մեջ տեղավորեցին նարնջագույն գրիչը... Վարդանը հազիվ նկատելի ցնցվեց... հետո տեսա, ինչպես նրա աջ աչքից արցունք գլորվեց: Այդ օրից մեքենաները մոռացվեցին:

Արդեն հասկացաք, որ բժիշկ դառնալս որոշված էր: Ասեմ, որ որոշումս դուր եկավ Նանեին, առաջին դասարանից նոյն նստարանին էինք նստում, ու ես արդեն գիտեի, որ գժվում եմ նրա կապույտ աչքերի համար: Կապույտ աչքերը ինձ միշտ են դուր եկել: (Դադար:) Արմանի աչքերն էլ կապույտ էին:

#### Ներքին հեռախոսազանգ:

Սպասում են... Հիմա կգամ:

Գնում, սեկցիոն սեղանի վրայից վերցնում է քուղթը, զգացվում է՝ իր վրա ուժ է գործադրում գնալու համար: Վերջապես տեղից պոկվում, անհետանում է կույիսներում: Այնտեղից լսվում է խոսակցության անորոշ պատառիկներ, ինչ-որ մեկը լալիս է...

**Զայներն աստիճանաբար մարտմ են երածշտորքյան ու սեղանի շորջն առկայօնող լուսավորության մեջ, հասնելով կուլմինացիային՝ կտրուկ լուրջուն է տիրում։ Ներս է գալիս՝ կարծես պարպված լինի։ Գրապանից հանում է անձնուցիկը, մաքրում է ձեռքեր։**

Տուրերկուլյոգնիկի երկու տղան ու աղջիկն էին... Հասուն մարդիկ են, թե ինչու են աղջկան էլ հետները քարշ տվել-բերել։ Ու երեքն էլ, խոսքները մեկ արած, կրկնում են՝ «Լրան սպանել են, որովհետև ինքն իր ոտքով եկավ հիվանդանոց ու երկրորդ օրը մահացավ»։ Ոչինչ չեն ուզում լսել... Չէ, ես հասկանում եմ նրանց, հայր են կորցրել, բայց ինչո՞ւ նեղություն չեն տալիս ուղեղներին ու չեն հարցնում, թե ոնց եղավ, որ հայրն իր կամքով հիվանդանոց եկավ։ Ասում եմ՝ գիտեիք, որ թոքախտ էր։ Չեն պատասխանում ու չեն էլ լսում, որ մարդը հենց այնպես չէր գա, ուրեմն՝ դանակը ուսկորին էր հասել... Ինչ-որ է... Ստիպված զոռ տվեցի բժշկական տերմիններին, լատիներեն մի երկու ասույթ ասացի՝ հանդարտվեցին։ Անհասկանալին միշտ էլ ազդում է... Հիմա սպասում են՝ Կարոն ստացում-հանձնում անի... Իսկ ես ուրիշ նյարդայնացա՝ մեր ազգային բրենդն է՝ հիվանդության վերջին ստադիայում դիմել բժշկին ու

մեռնելուց հետո մեղադրել նրան։ Դասախոսս ասում էր, որ մարդկանց պետք չէ ոչ խղճալ, ոչ էլ անիծել։ Անիծելը տղամարդու գործ չէ։ Իսկ խղճալ... Հանգուցյաների հարազատներին չեմ խղժում։ Անիմաստ է։ Երեխաներին խղժում եմ։ Մեկ էլ՝ կենդանիներին։ Ուերսի շնորհիկ։ Նա ինձ հետ կիսեց կյանքիս առաջին հիասթափության ցավը։

Նանեի ծննդյան օրն էր։ Չեմ հիշում՝ ինչպես եղավ, խոսքի մեջ ասացի, որ մարդու օրգանիզմի 70 տոկոսը ջուր է։ Ասածս ի գիտություն ընդունվեց. բոլորը վաղուց էին համակերպվել, որ դասարանի լավագույն աշակերտն եմ ու հավաքված էին շուրջու։ Հանկարծ՝ «Ուրեմն, քո ասելով՝ մարդը ձմերով է»։ Արմանն էր, սկսութեղից վերցրել էր ձմերուկի կտորն ու չէր էլ փորձում թաքցնել, որ ծաղրում է. «Ուրեմն, սա ու դու նոյնն եք»։ Նրա վերջին բառը կորավ ծիծաղի պայթյունի մեջ։ Ծիծաղում էին բոլորը, չէ, հոհոում էին։ Իսկ Նանեն, Արմանից վերցնելով ձմերուկի կտորը, ասաց. «Ատոմը՝ չգիտեմ, բայց ես ձմերուկի նման չեմ»։ Կարողացա հանգիստ սենյակից դուրս գալ։

Բայի հեռավոր անկյունում սպասեցի, մինչև բոլորը գնացին։ Ամենավերջինը գնաց Արմանը։ Սպասեցի, մինչև հանգեցին Նանեի բնակարանի բոլոր լույսերը,

Ոեքսը՝ բակի անտեր շունը, պառկել էր ոտքերիս տակ: Նայում էի մութ պատուհանին ու ինձ համոզում, որ վաղը նրան կտամ ամսագիրը, որտեղ կարդացել էի այդ տոկոսների մասին, ու ամեն ինչ կլինի, ինչպես միշտ:

Հաջորդ օրը, երբ մտա դասարան, Նանեն նստած էր Արմանի կողքին: Այդ օրվանից բոլորը նրա շուրջ հավաքվեցին, ես մնացի մենակ: Մեկ տարի անց, երբ կենսաբանության ուսուցիչն ասաց այդ տոկոսների մասին, ամեն ինչ իմաստը կորցրել էր, որովհետև Արմանը տղաներին արդեն պատմել էր, թե ինչ փափուկ ծնկներ ունի Նանեն:

...Երկու տարի առաջ իմացա, որ Նանեն ծնկի սարկոմայով է հիվանդ ու վերջին ամիսներն է ապրում:

Ի դեպ, սնոտի նշանների մասին: Ես չեմ հավատում, բայց դրանց մասին հաճույքով պատմում եմ սուր ապրումների սիրահարներին:

Կարոյից առաջ այստեղ Վաչիկն է եղել սանհտարը: Այ, նա խմել սիրում էր: Մի անգամ այնպես էր լակել, որ քնել էր սեկցիոն սեղանի վրա: Առավոտյան գործի եկա՝ դեռ խոմփացնում էր: Կանչեցի պահակին, երկուսով տեղափոխեցինք թախտին ու, իհարկե, չասացինք, թե որտեղ է անցկացրել գիշերը՝ վատ նշան է: Մի ամիս չէր անցել, մահացավ: Այդ

նոյն սեղանի վրա էլ հերձեց իմ կոլեգան: Ես հրաժարվեցի, ճիշտ է, արյունակցական կապ չկար, բայց երկու տարի միասին էինք աշխատել: Տեղը եկավ՝ ասեմ: Հարազատին, մտերիմին հերձել չի կարելի: Տարու է:

Այստեղ լինում են բաներ, որ ցանկացած գորոյ կերազեր ինքը հորինել: Ասենք՝ հանգույցալի կինը խնդրում էր դագաղի մեջ դնել իր զգեստը, որը հագել էր իրենց առաջին ժամադրությանը գնալիս: Կասեք, հետո՞ ինչ: Ոչինչ: Բայց զգեստը՝ չթից, մի բուռ, հազիվ 32 չափսի, իսկ այդ կինը՝ ամենաքիչը 120 կիլոգրամ: Կարոն տնտղեց զգեստը, հետո այրուն, հետո զգեստն առավ, գնաց: Քիչ հետո եկալ, ասաց՝ դրել է հանգույցալի ձախ թիակի տակ, սրտին մոտիկ: Եվ լացից կարմրած աչքերով այդ վիթխարի կինը երջանկացած ժպտաց... Դուք ինչ-որ բան սրանից հասկացաք...

Նշանների, նորից կրկնեմ, չեմ հավատում, բայց կա ձակատագիր: Մարտի մեկին անտեղյակ մեկը, բավական հեռու պողոտայից, դուրս է եկել պատշգամբ ու... սպանվել սնայպերի գնդակից: Միտինգավորները մի քանի փողոց այն կողմ էին, չգիտեմ՝ ինքը կյանքում միտինգի մասնակցած կա՞ր, բայց ինչ-որ մի ակտիվ միտինգավորի գնդակը իրենով արեց: Ճակատագիր...

Սկզբում երազում էի... սխալ չլսեցիք, երազում էի դատական բժիշկ դառնալ: Ու կդառնայի, եթե մեր քաղաքի փողոցներում գնդակահարված խաղաղ ցուցարաների մարմնի մասերը պրոֆեսիոնալ ամենաբարձր մակարդակով չհայտարարվեին խոզի ծնոտ կամ տավարի լեզու... Հասկացա, որ երազելը մի բան է, իրականությունը՝ դաժան ու ստոր: Մի օր էլ ինձ կարող են, քաղաքական իրավիճակով պայմանավորված, ստիպել սպանվածի մահը կեղծել... Դարձա պաթոլոգանատոմ: Վերջերս այդ պրոֆեսիոնալին տեսա փողոցում՝ անշառ, ինքն իր մտքերով քայլում էր: Զգիտեմ ինչու, մտածեցի, որ երազում հածախ է տեսնում անձնոտ ու անլեզու մարդկանց... Մղջավանջ: Ես չխղճացի նրան:

### Վերցնում է ներքին հեռախոսը:

Կարո՞, սեկցիոն սենյակը կարգի բեր: Գիտեմ, որ արդեն մաքրել ես: Նորից մաքրիր, փայլեցրու... Հա, պացիենտը հատուկ է, ավելի, քան դու կպատկերացնես:

### ԽԱՎԱՐ

(Դադար): Ուզում եմ շեղվել մտքերից, ու հետո՝ այս սպասումը... դրա համար էլ պետք է չկենտրոնանալ, թեկուզ մի կարծ ժամանակ, բայց չմտածել նրա մասին:

(Դադարից հետո, այլ տոնով:) Իսկ թե ինչպես հասկացա, որ

բժիշկ եմ ուզում դառնալ, բայց չեմ ուզում... կամ չեմ կարող բուժել մարդկանց... Մայրս հիվանդացավ: Հիվանդությունը մահացու չէր, բայց երկարատև բուժում էր պահանջում: Երբ առաջին անգամ հերթն ինձ հասավ ուղեկցելու բժշկի մոտ, հասկացա, որ դա առաջին ու վերջին անգամն է: Դեռ աթոռին չտեղավորված ու չբարեւած, իմ նրբանկատ, կիրթ մայրը, երածշտության դասատու, գուսակ ու սակավախոս, չսպասելով բժշկի հարցին, սկսեց իր հիվանդության ողիսականը: Բացեց նոթատետրն ու ըստ օրի, ժամի ու րոպեի սկսեց նկարագրել՝ ինչպես է արթնացել, արթնանալիս ինչ է զգացել, հետո ինչպես է անկողնուց ելել ու սկսել դեղերի ընդունումը... Մայրս ձայնի հրաշք տեմբր ունի՝ կրծքային, թավշյա ու թեթև խոպոտ, նա այնպիսի ոգեշնչմամբ էր արտաբերում իր պատմության հերթական դրվագը, որ շատ չանցած բժիշկը, կորրայի հայացքից հիանոսված ինդուսի նման, սկսվեց մեղմիկ օրորվել՝ պղտորված հայացքը տարութերելով առաստաղից հատակին... Երբ նորատետրի պարունակությունը, մինչև վերջին վերջակետը, պատմվեց ու նկարագրվեց, եկավ հարց-պատասխանի հերթը: Ունիկալ պրոցես, որովհետև մայրս և հարցնում էր, և

պատասխանում, ու միայն դրանից հետո սպասում էր բժշկի պատասխանին... Ես ստորաբար նահանջեցի միջանքը, իբր` կարևոր զանգ ունեմ, իշխանական, խմեցի մի քանի բաժակ սուրճ, վերադարձա. բժիշկը շարունակում էր ինդուսի ինքնամուռաց պարզ աթոռի վրա: Նորից շրջվեցի դեպի դուռն ու վերջինը, ինչ տեսա սենյակից դուրս գալուց առաջ՝ բժշկի՝ նախանձից այրվող հայացքն էր:

Միջանցքում էլ որոշվեց հետագա ճակատագիրս: Մորս նման մի հիվանդ ընդունելուց ու ողջառողջ բաց թողնելուց հետո երկրորդը հիվանդը հաստատ ողջ չի մնա: Ավելի ծիշտ՝ ես նրան ողջ չեմ քողնի: Իսկ մեռած հիվանդը...

### **ԶՈՆ ՀԱՆԳՈՒՅՑԱԼՆԵՐԻՆ:**

(Սեն Սանսի «Մահվան պարի» նվազակցությամբ)

Նախ՝ մասնագիտության բացասականը.

Կայուն հոգեկան ու ամուր նյարդեր ունենալը պարտադիր է:

Ամեն պահ քեզ կարող է վարակել հանգույցալը:

Կարիերայիդ վրա խաչ քաշիր: Կոչում ու մեղալ ստացած դիահերձող չկա: Նոյնիսկ մեր երկրում, որտեղ ում տեսնում՝ մեղալ են վզից կախում:

Ամեն մի բիոպսիան կարող է դատավճիռ դառնալ՝ եթե սխալվես:

Բայց... Դրականն էլ քիչ չէ: Ստիպված չես շփվել պացիենտի հետ, լսել նրան, խորհուրդ տալ, էլ չեմ ասում՝ հոյս ներշնչել: Ստիպված չես լսել նրանց՝ խելացի թե իմար մտքերը: Արդյունքում՝ խնայում ես ժամանակի ու նյարդերի էլ իզուր չես փչացնում: Աշխատում ես միայնության մեջ՝ ոչ անեսթեզիոլոգ, ոչ վիրահատական քոյրեր, ոչ էլ՝ օգնական: Սեկցիոն սենյակում միայն սանհտարն է, ով գիտի՝ երբ ու ինչ ասի: Համարյա դրախտային պայմաններ...

Երբ աշխատում ես մեռած մարմինների հետ, նրանց վնասել չես կարող: Այնպես որ, հիպոկրատյան երդումը միայն այստեղ է գործում 100 տոկոսով:

Ինքդ ես քո ժամանակի տերը: Ու հանգույցալը չի նեղանա, չի բողոքի ու սկանդալ չի սարքի, եթե կես ժամ ավել պառկի պաղ սեղանի վրա: Ինչ համարյա, իսկական դրախտային պայմաններ են այստեղ:

### **ԶՈՆԻ ԱՎԱՐՏԸ**

**Զանգում է բջջայինը:**

Լսում եմ... (Դահլիճին.) Կինս է: (Լսափողի մեջ:) Հիվանդի էլ չի դժոխում: Դատելով դեցիբելից՝ երկու տարեկան մանչուկ էր: Այո, ես չեմ սխալվում, համարյա երբեք չեմ սխալվում: Դրա համար էլ չեմ հարցնում՝ ինչու ես զան-

գել: Որովհետև գիտեմ՝ ուզում ես իմանալ նրա մահվան մանրամասները... Ուրեմն ուզում ես ծշտել հոգեհանգստի օրը, կուզենաս սև գլխաշորով ու ալվան ծաղիկներով վերջին հրաժեշտը տալ... Ելի՞ չգուշակեցի: Ուրեմն՝ դու ասա... (*Հսկուց հետո:*) Չհամոզեցիր: Բայց ասածիդ հետ պետք է համաձայնվեմ: Այս ընտանեկան ավանդույթի սկիզբը հարսանիքի օրը դրեցիր... Արմանի հետ միասին: (*Բջջայինը շպրտում է սեղանին:*)

### ԽԱՎԱՐ

Երբ սեպտեմբերի մեկին լսարանում տեսա Արմանին... Նա ոչ մեկին չէր ասել, որ գործերը բժշկական է տալու: Ուրեմն՝ երբ տեսա, հասկացա, որ իմ շփոթված ոեխը լրիվ կոմպենսացրեց նրա գոհարերությունը: Ինչու գոհարերություն... Որովհետև նա կարող էր ամեն ինչ դառնալ, միայն ոչ՝ բժիշկ: Բայց նա որոշել էր ինձ հետևել, հետապնդել, տեսադաշտում պահել... Համալսարանում էլ եղավ՝ ինչ դպրոցում, շատ արագ կուրսը հավաքեց իր բուոը, ես նորից մնացի մենակ: Զէ, մեկին չկարողացավ իրենով անել: Համակուրսեցիս, որ հետո կինս դարձավ և ուներ սև աչքեր, սև մազեր, Ալիս անունը: Նանեի լրիվ հակապատկերը: Նստում էր կողքս, կուրսայինները քսերոքսում էր երկուսիս համար, տնից

բերած բուլկիներով էր կերակրում: Ու եթե առաջինը սեր չխստովաներ, չգիտեմ, իինգերորդ կուրսում կամուսնանայինք: Արմանը մեր հարաբերությունների մեջ չէր խառնվում, փոխարենը կարմիր դիպլոմիս վրա խաչ քաշել տվեց... Լավ, դա ուրիշ պատմություն է: Հիմա ինչի մասին էի պատմում... Հա, հարսանիքը: Լավ հարսանիք արեցին մեր ծնողները՝ ռեստորանում, ամեն ինչ՝ տեղը տեղին: Հիմա էլ եմ համոզված, որ այդ օրը երջանիկ էի: Ալիսը շատ էր գեղեցկացել, ծիծառում էր, պարում բոլորի հետ ու համարյա հմայել էր բոլորին... Հետո... 11-ի կողմերն էր, տղաների հետ պատշգամբում ծխելուց հետո վերադարձա սրահ, նստեցի... Ալիսը երևի պարում էր կամ ընկերուիկների հետ էր... Մայրս մոտեցավ, ասաց, որ ես էի հարսի հետ պարելու իրավունք ունեմ: Խայթոցը չլսելու տվեցի: Բայց Ալիսը չկար: Սկզբում մերոնք փնտրեցին, հետո՝ կուրսեցիներս, հետո՝ բոլորը, - նախասրահում, հարդասենյակում, բարում, կողքի սրահում, տղամարդկանց գուգարաններում... Հետո ինչ-որ մեկն ասաց... իբր` հենց այնպես, իբր՝ ասածի մեջ ոչինչ չկա... Ասաց՝ Արմանն էլ չկա: Չասաց՝ Արմանը չկա: Ասաց՝ Արմանն էլ չկա: Երաժշտությունը մարեց, կուրերը նստեցին իրենց տեղերը... պատկերացրեք լոռությունը, որ

ծանրացել էր դահլիճում: Ալիսի մայրը ինչ-որ բան էր ասում թե համոզում ամուսնուն, մայրս փորձում էր «դեմքը չկորցնել», հայրս... Մի խոսքով... Ու մեկ է՝ հայտնվեցին: Երկուսով: Ասես չնկատելով դահլիճի մքնոլորտը, մոտեցան ինձ: Եվ Ալիսն ասաց, որ իրենք գնացել-բերել եմ իմ սիրած գարեջուրը՝ «Ուեղ բուլլ»: Արմանը երկու շիշ դրեց սեղանին, մեր հայացքները խաչվեցին: «Ի՞նչ գարեջուր», - կարողացա հանգիստ հարցնել ես: «Արմանն ասաց, նեղսրտել ես, որ սեղանին քո ուզածը չկա և առաջարկեց սյուրպիզ անել: Այդպես չէ, Արման», - իբր չնկատելով իրեն ուղղված հայացքները, ասաց Ալիսն ու կարծես սպասում էր, որ շնորհակալություն պիտի հայտնեմ: Արմանը ժպտաց. «Ատոմ, ասա, որ ուզում էիր «Ուեղ բուլլ» խմել»: Նայում էի նրան, բայց տեսնում էի հյուրերի, ծնողներիս հայացքները... Բարձր, որպեսզի բոլորը լսեն, հայտարարեցի. «Ասացի, բայց չէի մտածում, որ կգանք բերելու»: Զասացի՝ «Ուեղ բուլլ» բերելու, որովհետև Արմանը հենց այնպես չէր գնել այդ գարեջուրը՝ Կարմիր ցուլ... Բոլորը իբր թեթևացած շունչ քաշեցին, ինչեց երածշտությունը, ես համբուրեցի սպասողական դիրք բռնած Ալիսի այտը... Մեր առաջին գիշերն ամեն ինչ էր՝ գիշերվանից բացի: Եվ ինչքան դառն էր լալիս Ալիսն ու ա-

վելացնում երդումների դոզան, որ ոչինչ չի եղել, եղածից բացի, այնքան չէի հավատում նրան:

## ԽԱՎԱՐ

(Բարձր:) Կարո՛, պահարանից հանիր նոր գործիքների տուիր... Հները կողքի դիր: Նոր գոգնոց տուր:

**Ձեռքը հայտնվում է կովիսներից, մեկնում գոգնոցը: Պաթառոմը վերցնում է գոգնոցը, բացում, նայում, կախում է կախիչից, հինք գցում է կովիսներից դուրս:**

Այսպես... Պատրաստվում եմ, Արման, նոր գործիքներ, նոր գոգնոց... Ավելին անել չեմ կարող: Թե արածս քեզ քիչ թվա, ներիր, եթե կարող ես... Իսկ ես... (Իրոնիայով:) Հածույքով կներեի, բայց բավական է հիշեմ առաջին գիշերվա մասին...

(Դադարից հետո, այլ տոնով): Ի դեպ, առաջինի մասին: Հիմա նկատի ունեմ առաջին հերձումը: Երբ դանակը կտրում է մեռած մարմինը՝ քո օրգանիզմի առաջին արձագանքն է՝ կարող ես, թե՞... Ու դու կամ շարունակում ես հանգիստ աշխատել դիակի հետ, կամ քեզ ստիպում ես դիմանալ, ոտքերի վրա մնալ մինչև ավարտը: Հատորներով գրքեր կարդալը, արյուն տեսնելը վիրահատարանում ու անգամ որպես դիտորդ նայել հերձմանը՝ ինչ բան է- կարողացար դիպչել մե-

ուած մարմնին ու աշխատել նրա հետ բոլոր մանրամասնություններով՝ ուրիշ մի բան է: Առաջին անգամ և հոգվում էի, և վախ կար: Իմ չար բախտից էլ՝ ստամոքսի քաղցկեղ էր, մետաստագներով: Բայց կարողացա գործը ավարտին հասցնել: Հետո երազս եկավ այդ ամենը... մի քանի գիշեր շարունակ: Ու ես համոզված էի, որ այդ առաջինը կյանքիս ամենամեծ փորձությունն է:

Այդպես համոզված էի... մինչև հարսանեկան առաջին գիշերը:

**Անսպասելի տեղից պոլկում,**  
ճանկում է գոգնոցն ու փորձում է  
**պատռել:** Չի ստացվում: Ավելի  
կատաղած՝ գոգնոցը գցում է ոտքերի տակ, տրորում է... Հետո  
գնում է կուլիսներն ու իին գոգնոցը բերում-կախում է ճախվին  
տեղը՝ նորը ոտքով քշելով կուլիսները:

(Հևասպառ): Սա էլ քեզ շատ է... Իսկ գործիքները... դեռ մտածելու ժամանակ ունեմ, մինչև բարեհածես հայտնվել, գուցե հները նորից մեցտեղ գան:

**Զանգում է քջայինը:**

(Փորձում է հանգիստ երևալ):  
Լսում եմ... Սուրբ, էս ո՞նց է՝ իիշել  
ես... Ես... նորմալ: Նորություն...  
Դու ասա՝ ինչ ես ուզում իմանալ...  
Հենց էնպես ես հարցնում, բայց  
չգիտեմ, որ հենց էնպես հարցին

քո ուզած պատասխանը չի լինում: Ինչ եմ անում իիմա՞... Համարյա ոչինչ: Ուզում ես գա՞լ: Ծիշը պահիր, շաբաթ օրը կխմենք: (Անջատում է:) Չէ, բարեկամս, դու չես տեսնի, թե ինչպես ենք հանդիպելու ես ու Արմանը:

Ելի Արմանը: Ասենք, ուրիշ էլ ո՞վ: Այսօրվա հերոսը նա է: Ասեմ՝ հերոս, որովհետև իսկական բառը չեմ գտել ու հաստատ չեմ գտնի: (Բարձր:) Կարո, հոգեպահուստ ինչ ունես... Միայն թթի օղի չտաս:

**Զետքը կուլիսներից հայտնվում է՝ մեկնելով կոնյակի կիսատ շիշը:**

Աշխատանքի ժամերին չեմ խմում: Ոչ թե՝ մեկ-մեկ, ոչ թե՝ երբեմն, այլ ընդհանրապես չեմ խմում: Բայց իիմա... (Խմում է շշից:) Ինձ խոստացել էի չիշել այդ դեպքի մասին: Ոչ մի դեպքում: Բայց իիմա... հուշերի շքերթը շարունակվում է:

(Դադար: Դժվար է խոսելը): Պաթանատոմը դատավոր չէ: Նա գտնում է մահվան պատճառն ու եղրակացությունը տալիս հանգույցալի հարազատներին: Եթե մահը վրա է հասել վիրահատական սեղանին կամ դրանից հետո, ներկա պիտի լինի վիրաբույժը: Միշտ չէ, որ նա կողքին կանգնած է լինում, բայց անպայման տեղեկանում է եղրակացությանը, որովհետև... Այո,

ամեն մի բժիշկ ունի իր փոքրիկ գերեզմանոցը։ Անսխալական մեկը չկա։ Ինձնից բացի, որովհետև վերջին խոսքը իմն է։

24 տարեկան գյուղացի տղա էր։ Ներքին արնահոսությամբ հասցրել էին քաղաք, հիվանդանոցում վիրահատել էին, մահացել էր։ Հասկանո՞ւմ եք, մահը ավեր է, ժամերի ընթացքում ոչնչացնում է նույնիսկ ամենակատարյալ մարմինը։ Իսկ սեկցիոն սեղանին պառկած այդ ջահելը՝ ամրակազմ, ուղիղ, հզոր ուսերով, դեռ փայլը չկորցրած սև, ալիքվող մազերով... Կարոն չդիմացավ, հայինեց աստծուն ու սատանային։ Ես էլ էի ազդվել, այնքան, որ առանց թղթերը կարդալու անցագործի՝ րոպե առաջ էի ուզում իմանալ, թե ինչը կարող էր սպանել այդքան հզոր մարմինը։ Հետո... նայում ու աչքերիս չէի հավատում՝ մահվան պատճառը վիրահատական սխալն էր։ Նորից էի ստուգում, էլի էի ստուգում... Հետո նայեցի թղթերը։ Արմանն էր վիրահատել։ Այո, մենք իրարից անբաժան էինք նաև այստեղ։ Զանգեցի ներքին հեռախոսով։ Առաջին զանգից վերցրեց, ասես սպասում էր։ Եկավ, հայացքով Կարոյին դուրս քշեց ու ասաց. «Անտեր տղա է, տատն է միայն, նրան էլ արդեն օգնել եմ ամեն ինչով, բողոքող չի լինի»։ Հետո ժպտաց։ «Իզուր աղմուկ չբարձրացնես», - ժպիտի

միջից շպրտեց ու գնաց՝ դուռը շրխկացնելով։

Մեր բժիշկներից մեկն էլ էր սխալվել, հիվանդը սեղանին մահացել էր։ Եկել-նստել էր այս աթոռին ու լալիս էր։ Տղամարդու ժլատ արցունքներով ու ատամները կրծտացնելով։

...Եզրակացությունը ուղարկեցի գլխավոր բժշկին, երկու օրից մտա մոտը։ Նա, հայացքը փախցնելով, ասաց, որ իզուր աղմուկ չբարձրացնեմ։ «Իհարկե,- ասացի,- ինչ աղմուկ, երբ ամեն ինչ վճարված է»։ Բայց հարցը միայն վճարելը չէր, Արմանի աները մեծ կալիբրի պաշտոնյա էր... Կես տարի անց երկրորդ դեպքը։ Իսկ երրորդը լցրեց գլխավորի (ոչ այս մեկի, նախկինի) համբերության բաժակը։ Հիվանդի լեղապարկն էր հեռացրել ու պատուել էր լյարդը։ Թե ոնց էր հաջողացրել... Կարել էր, իսկ լյարդը՝ թողել։ Սկանդալ մարելու դիմաց գնաց... սեփական դիմումի համաձայն։ Լսեցի՝ աներոջ օգնությամբ անցել է վարչական աշխատանքի։ Գնաց, բայց ինձ թողեց հոգիս կրծող կասկածը՝ իսկ գուցե հատո՞ւկ էր անում, այո, այո, հատուկ էր սպանում ու նրանց ինձ մոտ ուղարկելով՝ չարախնդում էր անզորությանս ու թուլությանս վրա։ Թե չէ ինչպես էր ստացվում, որ բոլոր մահացածները կամ որբ էին, կամ անտեր։ Ու բողոքող չկար։

### Զանգում է բջջայինը:

Լսում եմ: (Դահլիճին.) Գլխավորն է: (Լսակողի մեջ:) Դեռ ոչ... երևի խցանումի մեջ են: Բայց ո՞ւր շտապեն: Մեզ մոտ ամեն ինչ պատրաստ է: (Անջատում է:) Հաստատ նորից աներն է զանգել՝ ամեն ինչ անել բարձր մակարդակով: Հերձելու բարձր մակարդակը ո՞րն է: Հերձելը մի մակարդակ ունի՝ գտնել մահվան պատճառը: Սա ասում եմ ամենայն պատասխանատվությամբ: Ասած նաև ինքնարդարացում ընդունեք, որովհետև մի անգամ... Համարյա թաքցրել եմ հանցագործին: Համարյա...

70-ն անց հարուստ այրին վատ է զգացել: Տնային աշխատողը զանգել է շտապ օգնություն, իիվանդանոցի ծանապարհին մահացել է: Բերեցին այստեղ: Շատ չանցած եկավ աղջիկը: Չէր ուզում, որ մորը հերձեն: Նրան ասացի անհրաժեշտ փաստաթթային տեղեկացման մասին... Ներս մտավ մի ջահել: Տիկնոց որդին էր: Բարևեց, հետո դիմեց մորը՝ մաքուր ֆրանսերենով, որ իգուր է եկել, ինքը բոլոր հարցերը կկարգավորի: Մայրը տեղից ելավ, թեթևակի գլուխը խոնարհեց ու դուրս գնաց: Բայց գնալուց մի վայրկյան առաջ նայեց ինձ... Այդ հայացքը... Կասկած չունեմ, պառավին սպանել են: Սպանել է

թոռը: Ժառանգության համար: Ու մայրը գիտեր: Ես հատուկ հետաքրքրվեցի՝ պարզվեց, նրան դիակիզել են: Կուզենայի տեսնել այդ կնոջ հայացքը՝ ուղղված ֆրանսերեն անթերի խոսող որդուն, երբ կրակի բոցերը լափում էին մոր դագաղը... Գուցե սա իմ երևակայությունն է, ու քանի որ չեմ հերձել, թող այդպես էլ մնա իմ երևակայությունը:

Իսկ ընդհանրապես երևակայությունը վատ բան է: Ձեռքս հնար լիներ՝ կարգելեի, կվերացնեի այդ երևակայություն կոչվածը: Ինչո՞ւ... Որովհետև նժվարացնում է առանց այդ էլ դժվար կյանքը: Իմը որ՝ հաստատ:

Երբ վաճառեցինք մեր ամառանոցը, սկզբում համարյա ցավ չզգացի: Վաճառեցինք ստիպված՝ հորս սիրտը վիրահատել էր պետք: Ալիսն էր զբաղվում, ասաց՝ ձարպիկ միջնորդ է գտել՝ արագ վաճառվեց: Մի քանի շաբաթ հիվանդանոց, վիրահատություն, հետվիրահատական բարդություններ... Հետո, երբ նորմալ կյանքի վերադարձանք՝ ինձ համար էլ անսպասելի սկսեցի կարոտել մեր ամառանոցը: Հա, մանկությունս այնտեղ է անցել, մեր ընտանիքի ամենատաք օրերը այդ պատերի մեջ են, բայց վերջին տարիներին նույնիսկ ամիսը մեկ չէր գնում: Ու հանկարծ... Ինչ-որ մեկը կասի՝ նոստալգիա: Իմ կարծիքով, ըն-

դամենը սրված երևակայություն: Հասել էի այն վիճակին, որ մտածում էի՝ եթե իմանամ՝ ով է տեր դարձել մեր տանը, կիանդարտվեմ: Հերթական նոպայից հետո նստեցի մեքենան ու սլացա գյուղ: Տանը չհասած՝ երկու փողոց այն կողմ, իջա մեքենայից, քայլելով հասաց ցանկապատին, հենվեցի ու ինչքան էի նայել տանը, այգուն, չեմ կարող ասել, մեկ էլ խոհանոցի վարագույրը շարժվեց... Ես, ասես գողության մեջ էին բռնել, համարյա փախա: Հաջորդ օրը զանգեց Արմանը: Անսպասելի էր՝ հիվանդանոցից գնալուց հետո չկար ու հանկարծ՝ զանգ: Ասես ոչինչ չէր եղել, հարցեր էր տալիս, իր մասին էր պատմում... Չէի ընդհատում, խոսել չէի ուզում: Ու մեկ էլ՝ գնանք, մի տեղ նստենք, խոսելու բան կա: Մինչև կիասցնեի մերժել, ասաց, որ մեքենան արդեն հիվանդանոցի բակում է: Ինտրիգ զգալով՝ դուրս եկա: Նստեցի կողքը: Գնում ենք: Չեմ հարցնում՝ ուր: Ինքն էլ լուս է: Մեկ էլ զգում եմ՝ ծանոթ տեղանք է... թեքվեցինք, գնում ենք մեր ամառանոցի ուղղությամբ: Զգում եմ՝ կողքանց հայացք է նետում, բայց շարունակում ենք մեր լուս կոիվը: Մեքենան կանգնեցրեց մեր դարպասի մոտ: Իջավ մեքենայից: Ես էլ իջա: Բացեց մետաղյա դռնակը, հետո տան դուռը բացեց ու առանց նայելու՝ հետևում եմ իրեն՝ ներս մտավ: Քարացել եմ, ոչ առաջ եմ գնում,

ոչ՝ ետ: Ինչքան դա տևեց, չգիտեմ, նա իմ մանկության տան մեջ, ես՝ շեմին քարացած... Վերջապես ինձ ստիպեցի շրջվել ու հեռանալ: Տնից դուրս չեկավ, ոչ էլ ձայն տվեց: Բայց հաստատ նայում էր խոհանոցի վարագույրի ետևից ու ժպտում էր... Քայլում էի ու մտածում՝ երբէ կկարողանամ նրան հարցնել՝ ե՛րբ, ինչո՞ւ ատեց ինձ: Հիմա կարող եմ խոստովանել. ինձ արգելել էի նրան հիշել մի պայմանով, որ երբէ կնայեմ ժպտացող դեմքին ու կհարցնեմ՝ ինչո՞ւ... Փաստորեն՝ այդպես էլ չեմ իմանա: Անարդար է: Մահն էլ պիտի իմանա՝ երբ գա և ում տանի: Պարզվում է՝ Արմանի մահն էլ իմ դեմ է: Մեր մասնագիտությունը տարու ունի՝ չիերժել բարեկամին, հարազատին, ծանոթին: Բնականաբար, տարու չէ թշնամուն հերձելը: Թշնամի, չարակամ, ինչ կուզեք, ասեք, իմաստը չի փոխվում՝ մարդ, որ թունավորել է կյանքի, ու զավեշտն այն է, որ այդպես էլ չես իմանալո՞ւ ինչո՞ւ:

### Զանգում է քջայինը:

(Լայում է համարին, կարծերկմտանքից հետո սեղմում կոճակը): Սուրեն, երկու զանգ կես ժամվա մեջ՝ շատ չէ... Իսկ Ալիսն ինչո՞ւ է քեզ զանգել: Ինչ իրավունքով... Օ՛, նա շատ իրավունքներ ունի, բացի այդ մեկից:

Չշարունակես: Ես շատ նորմալ հոգեվիճակում եմ: Իսկ քո և հատկապես Ալիսի պրոբլեմը չէ, թե ով է նրա մահվան եզրակացությունը գրելու: (*Անջատում է հեռախոսը, անմիջապես էլ ետ է զանգում:*) Ծիշը ուրիշի հետ կխմես: (*Անջատում է բջջայինը:*) (*Դադար:*) Տեսնես ով է ում զանգել: Ալիսը՝ Սուրոյին, թե հակառակը: Բայց նրանց հիմա միավորել է անհանգստությունը անձիս նկատմամբ: Ինչպես եմ վարվելու: Լավ, Սուրենը՝ ընդունենք, որ պարտավոր էր անհանգստանալ, իսկ Ալիսը... 13 տարի է՝ ամուսնացած ենք, բայց այդպես էլ չհարազատացանք: Գուցե դրան խանգարում է իմ սովորությունը՝ ժամանակ առ ժամանակ «Ուեդ բուլլ» եմ տանում տուն: Մի դյուժին: Ու շարում եմ խոհանոցի սեղանին... Ոչ հիշաշար եմ, ոչ էլ լավ հիշողություն ունեմ: Ներել չեմ ուզում: Ոչ թե՝ չեմ կարող, այլ՝ չեմ ուզում ներել: Իմ պրակտիկայից չէ, կարդացել եմ... Կինը փողոցում տեսել է ամուսնուն՝ մեկ այլ կնոջ հետ, գրկախառնված: Միանգամից բացվել է կնոջ ստամոքսի խոցը, արնահոսել... Փրկել չեն կարողացել: Դիահերձելիս արյուն համարյա չի եղել: Ասես ամբողջ կյանքը՝ արյան տեսքով, նա դուրս էր շպրտել իրենից ու խաղաղվել՝ թափանցիկ գունատութ-

յունը դեմքին դիմակ դարձրած... Եթե իմանաք՝ ինչպես եմ նախանձում նրա անասուն ամուսնուն: Կասեք՝ տարօրինակ է վերաբերմունքս, իսկ գուցե հիվանդագինն երկուսը միասին: (*Զանգում է բջջայինով:*) Ինչո՞ւ ես զանգել Սուրենին... Չես սխալվում, ես եմ հերձելու... Լազարյանը քաղաքում չէ: Քաղաքում էլ լիներ, ոչինչ չէր փոխվի... (*Հսելուց հետո, հոգնած անտարերությամբ:*) Գիտես, որ իզուր ես խոսում, ես կարող եմ համաձայնվել քեզ հետ, բայց հավատալ... իմ ուժերից վեր է: (*Անջատում է բջջայինը:*)

**Գնում է քեմի խորքը՝ սեկցիոն սեղանի մոտ: Ասես խոսում է պառկած Արմանի հետ:**

Մենք կարող էինք լավ ընկերներ լինել... լինում է, չէ, ընկեր ամբողջ կյանքի համար: Ավելի լավ տարբերակ կար՝ դուք չտեղափոխվեիք մեր շենքը: Ու երբեք չհանդիպեինք: Չխաթարվեր իմ կյանքը... (*Ակնդետ նայում է, իբր, պառկածի դեմքին:*) Միշտ եմ մտածել, որ դու ավերել ես կյանքս: Անընդիատ փորձել եմ հասկանալ՝ ինչն էր ատելությանդ պատճառը: Պատասխանը չեմ գտել, բայց վստահ եմ եղել, որ առիթ չեմ տվել: Ավելին, համոզված եմ եղել, որ նախանձել ես: Առանց պատճառի կամ պատճառով, որի հետ ես կապ չունեմ

ու չէի կարող ունենալ: Պարզապես դու ծնվել էիր ինձ նախանձելու, կյանքս թունավորելու համար: Թիշ առաջ, առաջին անգամ բարձրաձայն խոստովանեցի, որ երբևէ հարցնելու էի, թե որն է ատելությանդ պատճառը: Բայց այստեղ էլ քոնն արեցիր, մահացար: Քեզ ի՞նչ կա, մահը ծաղկուն տարիքում կմաքրի մեղքերդ գոնե քեզ ծանաչողների համար, գերեզմանաքարից նայող ժպտուն դիմապատկերդ կհուզի անձանոթներին, ու միայն ես չեմ տրվի մահվան քո սրբագրությանը: Վայրկյանների ընթացքում, երբ գլխավոր բժիշկը խնդրում էր շտապ կարգով հերձել իր լավ ծանոթի փեսային, որոշեցի թաքցնել, որ ծանաչում եմ քեզ 28 տարի, որովհետև ես կարող եմ հրաժարվել միայն հարազատիս, մտերիմ ծանոթիս ու ընկերոջս հերձելուց: Դու նրանցից ոչ մեկը չես: Հավատա, մասնագիտական պարտքս կկատարեմ լավագույն ձևով... Հոգիներին չեմ հավատում, բայց կուզենայի, որ այդ ժամանակ մոտակայքում լիներ այն 24 տարեկան գյուղացի տղայի հոգին...

### **Զանգում է քջայինը:**


Լսում եմ... Աստումը ես եմ: Արմանը... դեռ չեն հասել, երկի խցանումի մեջ են: Ո՞ւմ հետ եմ

խոսում... (Դահլիճին.) Այրին է: (Լսափողի մեջ:) Ընդունեք ցավակցությունս... Այս, ես եմ եղակացությունը տալու: Ինչպես... (Դեմքը քարանում է:) Ես էլ չգիտեմ... ու պատասխան չունեմ: Ներեցեք, ինձ կանչում են... (Հապշտապ հեռախոսն անջառում է:) (Դիմում է «Արմանին»): Ընկնելուց հետո, դեռ մի քանի րոպե, գիտակցությունդ տեղն է եղել, ու կարողացել ես ասել, որ քեզ բերեն ինձ մոտ: Կինդ... այրիդ հարցնում էր՝ «Ինչո՞ւ ձեզ մոտ»: Իհարկե, նրան չէիր պատմել իմ... մեր մասին: Դու վստահ էիր, որ կիամաձայնվեմ քեզ հերձել: Ու իհմա, շտապ օգնության մեքենայի մեջ, սառը պատգարակին պառկած, տոնում ես հերթական հաղթանակդ... Եթե, իհարկե, մեռածները ինչ-որ բան զգում են... Ու վստահ ես, որ վերջին խոսքը քոնը եղավ: Բայց դու հաշվի չէիր առել մի փոքրիկ, համարյա աննշան հանգամանք՝ վերջին խոսքը ապրողինն է: Գոնե 28 տարի տևող այս անիմաստ ու ավերիչ պատմության մեջ:

### **Զանգում է ներքին հեռախոսով:**

Ես չեմ կարող հերձել Արման Նորեյանին: Ոչ, նա իմ ազգականը չէ... ոչ էլ՝ ընկեր: Նույնիսկ ծանոթ չէ: Նա իմ... թշնամին է:

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



## Գուրգեն ԽԱՆՉՅԱՆ

Այսպես է լինում անհազուրդ անկշտության վերջը՝ արևոտ  
փոս: Կարծում եմ: Կամ էլ, գոնե, պիես է կարծում:  
Կեցցե՛ք թավշյա հեղափոխությունը...

# ԿՈԼԻՉԵՅ 21

(Երգիծական ողբերգություն երկու գործողությամբ)

**Գործող անձինք**

**ԲԱԲԿԵՆ - 50-ին մոտ**

**ՄԻՍԱԿ - 50-ին մոտ**

**ԿԱՄՈ - 50-ին մոտ**

**ԶԱՔԱՐ - 50-ին մոտ**

**ԱՍՏՂԻԿ - մոտ 20 տարեկան գեղեցկուիի**

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

**Բարկենի առանձնատունը, առանձնասենյակ, Բաբկենը, Միսակը,  
Կամոն բուղը են խաղում:**

**ՄԻՍԱԿ - Եէ, սրանից էլ զզվեցինք:**

(Գցում է խաղաթղթերը:)

**ԿԱՄՈ - Փա՞ս:**

**ՄԻՍԱԿ - Փաս... Հա, ենթադրենք՝**  
փաս, հետո՞ Ես կասեմ՝ փաս, դու  
կասե՞ եսիմ ինչ, հետո Բարոն էն  
իրա ձևերով քրի տակ կիսնդմնդա,  
դու կվախենաս՝ դու էլ կասես՝  
փաս...

**ԿԱՄՈ - Ուզածդ ինչ ա, Միսակ, չեմ  
հասկանում:**

**ՄԻՍԱԿ - Ուր ա, թե իմանայի:**

**ԲԱԲԿԵՆ - Գոնե էս ծեռն ավար-  
տենք:**

**ՄԻՍԱԿ - Ռադ արա: Ասենք, թե**  
մեկնումեկս մի քանի հազար  
տարավ, ինչ, մի քանի հազար էս  
կողմ, մի քանի հազար էն կողմ...  
Հոգնեցի էս խաղերից, տղերք,  
կարտ լինի, նարդի լինի...

**ԲԱԲԿԵՆ - Մենակ չասես՝ շախմատ:**

**ՄԻՍԱԿ - Ուֆ, լավ, էլի, Բարոն, երա-  
նի քեզ:**

**ԲԱԲԿԵՆ - Լավ, բա ինչ ես առա-  
ջարկում... Գնանք Գառնի, Սու-  
րոյի մոտ, ոեստորանը փակենք՝  
ուտենք-իսմենք, իրազդանցի Սե-  
րոյին կանչենք, երգի՝ շախ տա,  
էն էջմիածնեցի Թամարին տա-  
նենք՝ պորտապար պարի...**

**ՄԻՍԱԿ - Իբր դա նորություն ա, հա՞:**

**ԲԱԲԿԵՆ - Չինացի մի փիլիսոփա  
ասել ա՝ երկու անգամ նոյն գետը  
չես մտնի:**

**ՄԻՍԱԿ - Ապեր, չինացու իմաս-  
տությունները մեր հողի վրա չեն  
աշխատում:**

**ԿԱՄՈ - Տղերք, վայ թե մեր որսի  
գնալու ժամանակն ա, Աֆրիկա,  
փողի, կամ էլ ոնգեղջուրի:**

**ԲԱԲԿԵՆ - Անցյալ տարի խփեցի,  
պարզվեց՝ հողի ա, մեղք ծանրա-  
ցավ վրես:**

**ՄԻՍԱԿ - Չէ հա:**

**ԲԱԲԿԵՆ - Դե, մի պստիկ:**

**ՄԻՍԱԿ - Ինքնասպան չինես:**

**ԲԱԲԿԵՆ** - Բայց դե, փորի մեջի ոնգեղջյուրն էլ առ ոնցեղջյուր, հիմար, անասուն կենդանի ա, ինքը որ, ասենք, իմ կնօքան հանդիպեր, մտածելո՞ւ էր՝ հղի ա, հղի չի, խփելու էր՝ սպաներ, չ՞:

**ԿԱՄՈ** - Եդ քո թաքնված ցանկությունն ես հայտնիմ:

**ԲԱԲԿԵՆ** - Չէ, այ մարդ, է, Վարսոյիս ոնգեղջյուրն ինչ կարա անի, նրան տիրանազավր պիտի ուստ գա, էն էլ, դե դինոզավրերը վերացել են իմ բախտից:

**ԿԱՄՈ** - Ես թայլանդի ալիք եմ վառել, ասում են, էնտեղ մարդկությանը դեռևս անհայտ բեջուրա կենդանիներ կան, կեթանք անտառը որսի, կգանք քաղաք՝ թայլանդիիների գիրկը... Դրանց սերսն ուրիշ ա, ախատեր:

**ԲԱԲԿԵՆ** - Իբր ինչն ա ուրիշ, պուճուր-մուճուր, ձարպիկ, աֆերիստ բաներ են, երբ որ կողմից են գալիս, երբ որ կողմից են գնում՝ չես ջոկում: Բերեք սևամորթ աղջիկներ պատվիրենք, էն քյոմոր սևերից:

**ՄԻՍԱԿ** - Հնգեր, մեր մեջ ասած՝ իմ դուրը չեկան, վրաներից սպեցիֆիկ հոտ էր գալիս, անցյալ անգամ սիրոս խառնեց:

**ԿԱՄՈ** - Իմի վրից հոտ չէր գալիս:

**ՄԻՍԱԿ** - Դու երբ ես հոտ առնո՞ւմ որ, քո քիթը ջարդած չի՞:

**ԿԱՄՈ** - Թե նս ինչի եմ խառնվում, իմ ինչին ա...

**ՄԻՍԱԿ** - Զհասկացած:

**ԿԱՄՈ** - Հա, ապեր, ես մի հատ հուրի-փերի եմ կպցրել, մենակ տենաք, հալալ-զուլալ՝ տեղական ապրանք, էկոլոգիապես՝ անարատ, ոնց որ աստվածուիի:

**ԲԱԲԿԵՆ** - Է, բեր տեսնենք, տնտղենք... Գիտես, չ՞, մենք աստվածուիի սիրող ենք:

**ԿԱՄՈ** - Չեմ բերի, չեմ կշտացել, ու վախենամ շուտ չկշտանամ, շատ համովն ա:

**ՄԻՍԱԿ** - Բարոն ձիշտ ա ասում, բեր տեսնենք, կոլեկտիվի մեջ ներառնենք:

**ԿԱՄՈ** - Ասեցի՝ չէ, վերջ:

**ՄԻՍԱԿ** - Պահ:

**ԲԱԲԿԵՆ** - Չթոնենք Դուրայ:

**ԿԱՄՈ** - Մեռանք թռնելով, իբր ինչ, Դուրայում ինչ ես կորցրել, շոր չունես, թէ բրիլիանտ:

**ԲԱԲԿԵՆ** - Լավ, թռնենք Ռուսաստան, էն ամենախորքերը, Ռուսաստանի խորքերում, ասում են, լիքը ձեռ չկպած կուսական տարածքներ կան, կույս նանարիկներ, ձերմակ, սիրոն, ձեռի հետ էլ սպիտակ արջ ու փոկ կխփենք:

**ՄԻՍԱԿ** - Սուտ ա, էնտեղ էլ կուսական տեղ չի մնացել, ոչ էլ կույս նանարիկ:

**ԿԱՄՈ** - Կամ էլ, ասա, կո՞յսն ինչիդա, կույս չես տեսնել, հեն ա՝ հազարով բերող կա, մենակ փող տուր:

**ՄԻՍԱԿ** - Հա, էլի, ինչ էլ հավես ունի էս Բարոն, կույս, չէ-չէ մի... Ոնց որ երեխա լինես, Բարոն:

**ԲԱԲԿԵՆ** - (բաժակները խմիչք լցնելով): Լավ, բա ի՞նչ եք առաջարկում:

**ՄԻՍԱԿ** - Ուժ, եսիմ, է: (հմուտ է:) Տղերք, մեկ-մեկ էնպես եմ ուզում՝ էլի գործարանի տեխուսումնարանի էն ուսանողը լինեմ, գնամ դասի, դասից փախնեմ՝ կինո գնամ... Լուրջ եմ ասում:

**ԲԱԲԿԵՆ** - Հիմա էդ գործարանը քոնը չի:

**ՄԻՍԱԿ** - Է հա, էլի մի քանի էդպես գործարան ունեմ...

**ԿԱՄՈ** - Ու ի՞նչ, գործարաններդ կփոխեիր ուսանողական տոմսիդ հետ:

**ՄԻՍԱԿ** - Զգիտեմ, մեկ-մեկ թվում ա, կփոխեի:

**ԲԱԲԿԵՆ** - Չես փոխի, աղքատությունից վաստ բան չկա, մի պահ մի հատ պատկերացրո՛ աղքատ ես...

**ԿԱՄՈ** - Բոռո՞:

**ՄԻՍԱԿ** - Իսկի մտածել էլ չեմ ուզում:

**ԲԱԲԿԵՆ** - Վախում ես, չի՞:

**ՄԻՍԱԿ** - Հա, մեղքս ինչ թաքցնեմ, վախում եմ, երկրաշարժից, պատերազմից, գազանից չեմ վախում, աղքատությունից վախում եմ: Ամեն դեպքում՝ փողից լավը չկա, տղերք, խմենք փողի կենացը:

**Բարկենի հեռախոսը զանգում է:**

**ԲԱԲԿԵՆ** - Ո՞վ ա: Ի՞նչ Զաքար: Հա, իիշեցի ոնց որ: Խոսել ենք... Հիմա գա՞ս... Բայց ինչի՞ գաս որ...

**ԿԱՄՈ** - Ո՞վ ա, է:

**ԲԱԲԿԵՆ** - (Կամոյին): Տեղը չեմ քերում, խմած եմ եղել:

**ՄԻՍԱԿ** - Խմած ժամանակ ում պատահի՝ հեռախոս ա տալի էս... Բարոն:

**ԲԱԲԿԵՆ** - Այ տղա Զաքար, դոր ի՞նչ կարաս ինձ առաջարկես, որ հետաքրքրի, մի հատ լավ մտածի: Վստահ ն՞ս: Դե որ վստահ ես, արդի... Ի՞նչ, արդեն տան մոտ ն՞ս...

**ՄԻՍԱԿ** - Ում ասես՝ իրա տան տեղը ասում ա էս... Բարոն: Չէ, քեզ խմելը արդեն հակացուցված ա, ախաբեր:

**ԲԱԲԿԵՆ** - Բայց շատ ես ճարպկացել, Զաքար, դպրոցում էդպես չէիր, հարիֆ տղա էիր, մամայի բալա: Լավ, արի, արի տեսնենք՝ ի՞նչ ես ասում: Բայց որ իզուր ժամանակ ես խլել, է, գիտես, չէ, ի՞նչ եմ անելու, էն դպրոցում որ խաղում էինք, հա, նստելու եմ շալակի, կես ժամ ման տաս: Հես ակարգադրեմ՝ թողեն... Վրեդ հոգենք-բան չկա՞լ, այ տղա: (Ծիծաղում է:)

**ԿԱՄՈ** - Ո՞վ ա, է:

**ԲԱԲԿԵՆ** - Համադասարանցի:

**ՄԻՍԱԿ** - Դպրոց էլ ես գնացե՞լ:

**ԲԱԲԿԵՆ** - Հա բա...

**ԿԱՄՈ** - Ուզածն ի՞նչ ա:

**ԲԱԲԿԵՆ** - Վերջերս մի տեղ պատահաբար հանդիպել ենք, չգիտեմ՝ ի՞նչ եմ ասել...

**ՄԻՍԱԿ** - Էդ ա, էլի, որ չգիտես՝ արդեն ում հետ ինչ ես խոսում:

**ԿԱՄՈ** - Հազար ու մի գլխից ձեռ քաշած քյասիբ կա, վրեժը մեջները...

**ԲԱԲԿԵՆ** - Մի սարքեք, տղեք: Մի խոսքով՝ չգիտեմ՝ ինչ եմ ասել, հիմա ասում ա՝ լավ առաջարկ ունեմ, ժամանցի:

**ԿԱՄՈ** - Ժամանցի:

**ԲԱԲԿԵՆ** - Հա: Երևի ասել եմ, թե կյանքը ձանձրալի ա դառել...

**ՄԻՍԱԿ** - Ահաա, մարդ ես գտել, դեմք բացվել ես, գլուխդ դրել ուսին՝ երևի լաց էլ ես եղել:

**ԿԱՄՈ** - Հո թոգ-մոզ չէիր քաշել քթերդ:

**ԲԱԲԿԵՆ** - Հնարավոր ա: Հիմա ինչ, պիտի հաշիվ տամ ամեն քայլիս համար:

**ՄԻՍԱԿ** - Վատ չէր լինի, ընդհանուր բիզնեսներ ունենք:

**ԲԱԲԿԵՆ** - Բիզնեսի հետ կապ չունի, անկապ խոսակցություն եր:

**ԿԱՄՈ** - Կարող ա՞ ոստիկանության գաղտնի գործակալ-մործակալ ա:

**ԲԱԲԿԵՆ** - Էէէ, պատմություն սարքիք, ասում եմ՝ հարիֆի մեկն ա, դպրոցում կզած եմ պահել:

**ՄԻՍԱԿ** - Լավ, թող գա, ծեռ կառնենք, կզբաղվենք:

**ԿԱՄՈ** - Ինչ էլ հավես ունեք: Ես գնամ:

**ԲԱԲԿԵՆ** - Սպասի, իրար հետ կգնանք, էսօր Վրաստանից լավ երգիչ ա եկել կազինո, կլսենք, կխաղանք: Զաքարին ժամփու դնենք, գնանք:

**ԿԱՄՈ** - Լավ, ոնց ասես:

**ԲԱԲԿԵՆ** - (*հեռախոսով*): Հա, թողեք գա, վրա-գլուխը ստուգեք, թողեք:

**ՄԻՍԱԿ** - (*բաժակն առաջ հրելով*): Եղ վիսկից մի քիչ էլ կաթացրու:

**ԲԱԲԿԵՆ** - (*շիշը տալով*): Առ, լցու, ինչքան սիրտդ կուզի:

**ՄԻՍԱԿ** - (*լցնելով*): Ինչքան սիրտդ ուզի... Կարգին խմիչք չունես, էս աղեկալոնն ես դեմ տվել:

**ԲԱԲԿԵՆ** - Բայց դու ինչ քյառթու ես, Միսակ, լավագույն վիսկին ա, անպայման պիտի թթի արադ լինի:

**ՄԻՍԱԿ** - Հա հենց: Դու խմիչքից բան չես հասկանում, ախաբեր, դու թիթիզ բաներ խմող ես, չէ-չէ մի՛ ոռմ, կամ էլ էն զզվանքը՝ ջին, թո՛ւ:

### Գալիս է Զաքարը:

**ԶԱՔԱՐ** - Կարելի՞ է:

**ԲԱԲԿԵՆ** - Եկել պրծել ես՝ նոր ես հարցնո՞ւմ, ներս անցի:

**ԶԱՔԱՐ** - Հո չխանգարեցի՞, բարև ձեզ: (*Ուզում է Բարկենին համրուրել:*)

**ԲԱԲԿԵՆ** - Ստոպ, հակահիգիենիկ բաներ չանես: Վիսկի լից քեզ ու նստի: (*Հնկերներին.*) Զաքարն ա, դպրոցում իրար հետ ենք սովորել, այսինքն՝ ինքն ա սովորել, ես էնպես, գնում-գալիս էի, էնքան որ տնեցիների խաթրից դուս չգամ:

**ՄԻՍԱԿ** - Երևում է՝ գերազանց գնահատականներով եք ավարտել դպրոցը, պարոն:

**ԲԱԲԿԵԼ** - Բա ոնց... Գերազանցիկ էիր, չէ՞, այ տղա:

**ԶԱՔԱՐ** - Եի, այս:

**ՄԻՍԱԿ** - Տեսնում եմ՝ գոհ չես... Օգուտ չեղավ, չէ՞:

**ԶԱՔԱՐ** - Ոչ: Պարզվեց՝ էս կյանքին ուրիշ հատկություններ են անհրաժեշտ:

**ԲԱԲԿԵԼ** - Բա որ ասում էի:

**ԶԱՔԱՐ** - Ականջալուր չեղա, Բարկեն ջան:

**ԲԱԲԿԵԼ** - Լավ, էլ շոպիկություն մի արա, ասա, տեսնենք՝ ինչ ես ասում:

**ՄԻՍԱԿ** - Բայց արի սկզբից պայմանավորվենք, եթե ստից բաներ ասիր, շալվարդ վրիցող հանում ենք, Զաքար եղբայր:

**ԿԱՄՈ** - Հանենք, լավ էլ սիրուն քամակ ունի:

**ԲԱԲԿԵԼ** - Համաձայն ես:

**ԶԱՔԱՐ** - Ես լուրջ առաջարկով եմ եկել:

**ՄԻՍԱԿ** - Պահ:

**ԲԱԲԿԵԼ** - Ասա, Զաքար, արագ, քեզ իինգ րոպէ ժամանակ:

**ՄԻՍԱԿ** - Ինչ ասի, այ ախաբեր, եկել ա փող ուզելու, խի, չի երևո՞ւմ:

**ԿԱՄՈ** - Երևում ա, էն է՛ ոնց, շատ աֆերիստ սուրյեկտ ա, ո՞նց էլ սրան տաս տարի դիմացել ես, Բարո՞:

**ԲԱԲԿԵԼ** - Ճնշած եմ պահել, ապեր:

**ԿԱՄՈ** - Ճիշտ ես արել, սրա տեսակը գիտեմ, մի րոպէ ծեռոդ թուլացրի՞՝ կկծի:

**ՄԻՍԱԿ** - Զաքար ախաբեր, կյանքով

մեկ ուշացել ես, վախտին պիտի բաշից բռնեիր, էն անկախության սկզբի տարիներին, էն, որ բոլորը դեռ միամիտ էին, հիմա եկել ես՝ ուզում ես պոչից կախվես, էն էլ ո՞մ՝ մեր, չի ստացվի: Նայի, մենք էս իրեք ընկերով էն սեփականաշնորհման տարիներին, որին մի երկու կոպեկ գցելով, որին վախացնելով, որին ծեծելով՝ վառչերները սաղի ծեռներից առանք, գործարանների տեր դառանք, գործարանների եղածչեղածը ծախրտեցինք, տարածք ազատեցինք՝ պահեստներ դրինք, սառնարաններ, գարաժներ... Զանք ենք թափել, է, կոպիտ ասած՝ վիզ ենք դրել, հիմա փողն ինքն իրան գալիս, կաթում ա գրաններս: Իսկ դու ի՞նչ էիր անում էր ժամանակ, գրքեր էիր կարդում, չէ՞... Բա էլ ի՞նչ պրետենզիա կարաս ունենաս կյանքի նկատմամբ... Փողը գրքերով չեն շինում, պարոն, հոտառությամբ ու ուժով են շինում:

**ԶԱՔԱՐ** - Ես էլ փորձեցի բիզնես անել, բայց չստացվեց, այսպես ասած՝ տակ տվի:

**ԲԱԲԿԵԼ** - Բա չէ, պիտի վրա տայիր, քեզնից ի՞նչ բիզնես անող:

**ԿԱՄՈ** - Երևի Թուրքիայից-մուրթիայից տրուսիկ-մրուսիկ ա քերել ծախելու, էն էլ ծեղից առել են:

**ԶԱՔԱՐ** - Մոտավորապես այդպես:

**ԲԱԲԿԵԼ** - Մի խոսքով, էսպես ենք անում, Զաքար ախաբեր, պայման՝ եթե ախմախ բան ասիր, որ մե-

նակ թե մտնես գրպաններս, ծե-  
ծելու ենք, երեքով:

**ՄԻՍԱԿ** - Թողեք, ես մենակ ծեծեմ,  
էի, դուք խանգարելու եք, ձեր ո-  
ճը իմին չի բռնում:

**ԿԱՄՈ** - Չէ, էսօր առավոտից ծեռ-  
ներս քոր ա գալիս, պիտի քորեմ:

**ՄԻՍԱԿ** - Մի քորող էլ լինեմ:

**ԶԱՔԱՐ** - Ես երևի զնամ...

**ԿԱՄՈ** - Ստոպ, էս ո՞ւր, հազիվ եկել  
ես:

**ՄԻՍԱԿ** - Էսքան մեզնից ժամանակ  
իլես ու հանգիստ զնա՞ս:

**ԶԱՔԱՐ** - Ես այսպիսի վերաբեր-  
մունք իմ անձի նկատմամբ չեմ  
տանի:

**ՄԻՍԱԿ** - Բա չէ, պիտի խաշ դնեինք,  
խալի փուեինք...

**ԲԱԲԿԵՆ** - Զաքար, ձևեր մի թափի,  
դու էսպես բաներ ես տարել, ով-  
ով՝ բայց ես հո գիտեմ, մի ուշաց-  
րու, խոսի:

**ԶԱՔԱՐ** - Լավ, պատմում եմ:

**ՄԻՍԱԿ** - Դե դավայ, համակ ուշադ-  
րություն ենք:

**ԿԱՄՈ** - Մենակ չասես՝ աղջիկ բե-  
րեմ ձեզ համար:

**ԶԱՔԱՐ** - Չէ, ինչ աղջիկ, աշխարհի  
աղջիկները ձեր ձեռին են:

**ՄԻՍԱԿ** - Ըիր, կարգին շողոքորթ  
ես, էլ ինչ էիր ձևեր թափում: Շա-  
րունակի:

**ԶԱՔԱՐ** - Ուրեմն, օրերս, երբ հան-  
դիպեցինք հարգարժան պարոն  
Կարապետյանի հետ...

**ՄԻՍԱԿ** - Ի, Բաբո՞ն, չլինի՞ դու ես  
զանգել՝ խնդրել, որ հանդիպեք:

**ԿԱՄՈ** - Դպրոցական ժամանակնե-  
րի կարոտախտդ բռնել էր, ախ-  
պեր:

**ԲԱԲԿԵՆ** - Այ մարդ, դե չէ, էի, ինչ  
կարոտախտ, քեֆս լավ էր, ուս-  
տորանից իջա տուալետ՝ ջուր  
թափեմ, դուրս եկավ դեմս:

**ՄԻՍԱԿ** - Տուալետում եք զրուցել,  
կարող ա համ էլ պաշպաշել եք:

**ԲԱԲԿԵՆ** - Միսակ...

**ՄԻՍԱԿ** - Լավ, ինչ վոազ հուզվեցիր:

**ԶԱՔԱՐ** - Մենք պատահաբար հան-  
դիպեցինք, վեստիբյուլում, բարի  
մոտ: Գարեջուր խմեցինք, հիշե-  
ցինք... Բարկեն Սարգիսիչն ա-  
սաց՝ ամեն բան հոյակապ է,  
բայց ծանծրույթը խեղում է,  
կյանքը կորցնում է իր հմայքնե-  
րը, նոր, թարմ զգացողություններ  
են պետք:

**ԿԱՄՈ** - Սիրտդ լրիվ բացել ես, էի,  
Բաբո:

**ԲԱԲԿԵՆ** - Քեֆս հազար էր՝ ասում  
եմ, քթերս էլ թոզ էի քաշել:

**ԿԱՄՈ** - Է, դու էլ մի խմի-շնչի, եթե  
տեսնում ես թուացնում ա:

**ԲԱԲԿԵՆ** - Էս էլ ով ա խոսում...  
Խմում, տակդ շոում ես, այ տղա,  
գոնե դու սուս արա:

**ԿԱՄՈ** - Մի անգամ մի բան ա եղել,  
մատի փաթաթան դարձրիր:

**ԲԱԲԿԵՆ** - (Զաքարին): Արա, դե դու  
էլ ասում ես՝ ասա, ինչ ես երկար-  
բարակ նախարաններով ֆոֆոում,  
պրծի:

**ԶԱՔԱՐ** - Գիտե՞ք, տարօրինակ է  
մեր այս աշխարհը, թուղթը դարձ-

րել է մեծագույն արժեք, կտրատում է, բաժանում, բայց՝ ոչ բոլորին, ոմանց հասցնում է, ոմանց էլ՝ ոչ, ինչ ուզում ես արա՝ չի տալիս, ու վերջը: Նայում ես՝ թուղթ է, մի քիչ ավելի ծոճուան, մի քիչ ավելի որակով, բայց, ի վերջո, դեռ թուղթ է, ինչ է եղել, էնաես արեք՝ բոլորին համնի, բայց չէ, մեկին հասնում է, մյուսին՝ ոչ, ամբողջ կյանքը երազում է այդ թղթից ունենալ, բայց էղպես էլ չի ունենում, էղպես էլ մեռնում է՝ թղթի կարոտը սրտում:

**ՄԻՍԱԿ** - Վախ, վախ, վախ...

**ԿԱՄՈ** - Էս մարդը ավանտյուրիստ ա, թախծոտ ավանտյուրիստ, ես հավես չունեմ, բերեք ծեծենք, պրծնի, գնա:

**ՄԻՍԱԿ** - Մի ծեծող էլ լինե՞ս:

**ԶԱՔԱՐ** - Մի րոպե, պարոնայք, ես շատ չեմ զբաղեցնի:

**ԿԱՄՈ** - Չբաղեցնելն էլ ո՞նց ա լինում, արագացրո՞ւ:

**ԶԱՔԱՐ** - Ես կարող եմ ծեզ համար, նեղ շրջանակներում, մարտեր կազմակերպել:

**ՄԻՍԱԿ** - Ես էլ մտածում եմ՝ ինչ ա ասելու: Էղ ես էլ կկազմակերպեմ, էնքան մարդ կա, որ փողի համար իրար մոռութ կշարուեն:

**ԶԱՔԱՐ** - Մարդը ծեծված պատմություն է, ես գազաններ կկովացնեմ ծեզ համար: Կան ծարպիկ մարդիկ, ուզած գազանը ուզած երկրից կրերեն, փողին մուննաթ՝ այսպես ասած:

**ԲԱԲԿԵՆ** - Փողը դու ես տալ՞ի:

**ԶԱՔԱՐ** - Դե... Այսինքն ո՞նց... Ես փող չունեմ:

**ԿԱՄՈ** - Սփրիթնեցիր, այ տղա, կատակ արինք, շարունակի:

**ԶԱՔԱՐ** - Դուք պատվիրում եք, ասենք, մեկը՝ կոկորդիլոս, մյուսը՝ ոնգեղջուր, երրորդը՝ արջ, փողը տալիս ենք, էդ մարդիկ բերում են: Կհանենք իրար դեմ, պատկերացնում եք, ինչ տեսարան կինի, հին հոռմեացիները, իզուր չէր, որ մարտեր էին կազմակերպում, ստրեսներն ու դեպրեսիաները հանող, ձանձրույթից փրկող, նյութափոխանակությունը թարմացնող ամենալավ միջոցն է, հիշո՞ւմ եք, ոնց սոված առյուծներին թողին քրիստոնյաների վրա:

**ԿԱՄՈ** - (Ճաղորով): Էսօրվա պես: (Լրջանալով:) Լսի, իսկ որ էն մեծ կոկորդիլոսներից ուզեմ՝ կրերեն:

**ԶԱՔԱՐ** - Շատ թանկ հածույք է, բայց կրերեն:

**ԿԱՄՈ** - Կոկորդիլոսի համար խելքս գնում ա, դեռ մանկուց, մի անգամ երազում տեսա՝ մտել էր ծոցս, խնդրեցի, ասեցի՝ չուտես, ասեց՝ գիծ ես, ես եկել եմ քեզ սիրելու, ու թուշը քսեց թուշիս, էդ օրվանից սիրում ենք իրար:

**ՄԻՍԱԿ** - Ձու երազի վրա ֆրեյդն էլ ֆազերը կզցի, ախապեր: (Զաքարին.) Իսկ Կոմոդյան վարան կրերեն:

**ԶԱՔԱՐ** - Դա էլ հնարավոր է:

**ԲԱԲԿԵՆ** - Ինչ Կոմոդյան վարան, ինչ կոկորդիլոս, այ ձեր ցավը տանեմ, վրաներս առանց էդ էլ հազար աչք կա, լրագրողները նշան են բռնել, օր ու արև չեն տալիս, ամբողջ օրը հաջում են վրաներս, հիմա է՛ արջ ու մողես... Պատկերացնո՞ւմ եք, ինչ պատմություն կդարձնեն:

**ՄԻՍԱԿ** - Այ մարդ, էդ երբվանից էդքան լրագրողներից վախեցող դարձար, ծերանում ես, Բարո, ծերանում ես, սիրելիս:

**ԶԱՔԱՐ** - Ձեռնարկի գաղտնիությունը երաշխավորում եմ: Ձեր ամառանոցներից մեկի տակ մեծ նկուղ կիորենք, նստատեղեր, վանդակներ, ասպարեզ կսարքենք... Ես ամեն բան գծագրել, հաշվարկել եմ, ծախսերը՝ կոպեկ-կոպեկ, ահա... (Հանում է պայուսակից թղթերը, դնում սեղանին:)

**ՄԻՍԱԿ** - Բարոյի ամառանոցը ծայրամաս ա, աչքից հեռու, մեծ էլ նկուղ ունի ու ինչքան ասես՝ մեծացնելու տեղ, ամենահարմարն ա:

**ԲԱԲԿԵՆ** - Կամոյինն էլ հարմար ա:

**ԶԱՔԱՐ** - Կըննարկենք, խնդիր չի:

**ԿԱՄՈ** - Հետ որ չէ՝ նորը կառնենք, դա էլ հարց ա:

**ՄԻՍԱԿ** - Բայց խելքիս պառկում ամանրից, գիտե՞ք: Պատկերացրեք, մենք առոք-փառոք վերևը նստած՝ ուտում-խմում ենք, ներքել՝ փոսում, բորենին ու ար-

ջը իրար քրքրում են... Ինչ կայֆ ա, հը, կայֆ չի:

**ԿԱՄՈ** - Վատ չի ոնց որ...

**ՄԻՍԱԿ** - Կարանք ստավկա էլ դնենք, ես Կոմոդյան վարանի վրա նաղի մի փեշ փող ոնոր եմ:

**ԲԱԲԿԵՆ** - Ինչ ես կպել դու էլ էդ վարանին:

**ՄԻՍԱԿ** - Ի, տեսել ես, ինչ հրեշ ա, դրա ցավը տանեմ, էն ահոելի գոմեշին մի հատ կծում ա, վերջ, գոմեշն էլ խելքի չի գալի, մի երկու օրից սատկում ա:

**ԲԱԲԿԵՆ** - Հա, նստենք, երկու օր սպասենք գոմեշի սատկելուն:

**ՄԻՍԱԿ** - Այ մարդ, ինչի՞ գոմեշ, դու էլ արջ հանի ոեմը, կամ էլ ոնց կուզես, ես վարան եմ ուզում, ախապեր, ինչ արժենա՝ տեր եմ, բայց լավը, էն ամենամեծերից, սատկած-մատկած բան չնի, կտամ գլխներովդ:

**ԶԱՔԱՐ** - Ես էսպես եմ պատկերացնում. դուք՝ հոռմեական կայսրերի կերպարանքներով...

**ԿԱՄՈ** - Հա, դա իմ մտքով էլ անցավ:

**ԲԱԲԿԵՆ** - Ես Հովհոս Կեսարը կինեմ:

**ՄԻՍԱԿ** - Ես՝ Ներոնը:

**ԿԱՄՈ** - Ես էլ՝ Կալիգրուպան:

**ԶԱՔԱՐ** - Դրանք բոլորը լինելիք բաներ են, պարոնայք, բայց նախ՝ շինարարությունը:

**ՄԻՍԱԿ** - Հենց վաղն էլ կարաս սկսես: Չէ, ախաբերներ:

**ԿԱՄՈ** - Հա, ու արագ տեմպերով:

**ԲԱԲԿԵՆ** - Լսի, Զաքո, գրիզլի արջ էլ  
կարանք բերել տանք:

**ԶԱՔԱՐ** - Կարող ենք, իհարկե:

**ՄԻՍԱԿ** - Բայց որ հանկարծ խարել  
ես, է...

**ԶԱՔԱՐ** - Ո՞նց խարեմ...

**ԿԱՄՈ** - Ձև չկա՝ խարի, գետնի տակ  
էլ մտնի, կիանենք, տանջամահ  
կամենք:

**ՄԻՍԱԿ** - Ինչ էլ տանջամահ անողն  
ես:

**ԶԱՔԱՐ** - Ես իմ վատը կուզե՞մ, փող  
եմ աշխատելու, չէ:

**ԿԱՄՈ** - Դե տես:

**ԶԱՔԱՐ** - Համ էլ, անկեղծ ասած, ես  
էլ եմ ծանձրանում էս կյանքից:

**ՄԻՍԱԿ** - Էղ մեկը սուտ ես ասում,  
քյասիբները կյանքից չեն ծանձ-  
րանում:

**ԲԱԲԿԵՆ** - (*հեռախոսով*): Հա, սի-  
րուն ջան, ի՞նչ կա... Չեմ մոռա-  
ցել... Չէ, մոռա... այսինքն,  
իհարկե չեմ մոռացել, իհ, իհ,  
տեսնենք, կքննարկենք: (*Անջա-  
տելով*) Մեր կնանիք են, ուզում  
են երեկոյան միանալ մեզ:

**ԿԱՄՈ** - Էէէ, ով ունի դրանց հավե-  
սը:

**ՄԻՍԱԿ** - Հա, ցրենք, թող գնան ի-  
րանց կնիկական գործերով:

**ԶԱՔԱՐ** - Իրենց ասելո՞ւ եք մեր մի-  
նի կոլիզեյի մասին:

**ԿԱՄՈ** - Չէ, իմի սիրտը թուլ ա, ա-  
րուն տեսնի՝ ուշքը կգնա:

**ՄԻՍԱԿ** - Իմն ու Բարոյինը՝ չէ, ախ-  
պեր, օցենք փոսը՝ գազանների  
հետ հավասար կոիվ կտան:

**ԲԱԲԿԵՆ** - Այ մարդ, գործ չունեք,  
դրանք բացբերան են, էստեղ-էն-  
տեղ կխոսեն, սաղ քաղաքը կի-  
մանա, չէ, էս մեր համար ա:

**ԿԱՄՈ** - Բայց իմին հավեսով կցցեի  
փոսը, կոկորդիլոսի դեմ:

**ԲԱԲԿԵՆ** - Ըիը, օցի փոսը, որ ա-  
ներդ քեզ րոպեական փակի, օցի  
մի ուրիշ փոս:

**ՄԻՍԱԿ** - Զաքար ախպեր, արի դու  
էնպես արա, մեր կանանց, ի-  
րանց ազգուտակով հանդերձ,  
բերենք-թափենք փոսը, գազան-  
ներն ուտեն ոսկորով-թանով, որ  
հետքն էլ չմնա, պղծնենք:

**ԶԱՔԱՐ** - Կարելի է, շատ թանկ  
կնստի, բայց կարելի է, միայն թե,  
կարծում եմ, գազաններով չէ, ա-  
ղաթթվով, աղաթթուն լրիվ ան-  
հետ կհալեցնի, կկորցնի:

**ԲԱԲԿԵՆ** - Էսի մեզնից գիծ ա, լուրջ  
ընդունեց:

**ՄԻՍԱԿ** - Վախեցա՞ր, Բարո:

**ԿԱՄՈ** - (*հեռախոսով*): Հա, Աստ-  
իկս, սիրունս, լսում եմ, մեռնեմ  
կյանքիդ: Կարոտել նս... Բա ես  
ոնց եմ կարոտել: Էստեղ, չէ, էս-  
տեղ չի կարելի, մի քանի գիշա-  
տիչ ընկեր ունեմ, քեզ կուտեն:

**ՄԻՍԱԿ** - Այ մարդ, չենք ուտի, բեր  
ծանոթանանք:

**ԲԱԲԿԵՆ** - Վախենո՞ւմ ես, ձեռ չենք  
տա, մի վախի:

**ԿԱՄՈ** - Ի, ո՞վ ա վախենում: (*Հեռա-  
խոսով*) Արի, կյանք ջան, իմ  
ավտոն հետ ա կգա ետևիցդ: (*Հե-*

**ոախոսով, վարորդին:)** Վոամ, թոի Աստղիկի ետևից, կրերես մոտս:

**ԲԱԲԿԵՆ -** Բայց մեր գործից իրան բան չասես:

**ԿԱՄՈ -** Այ մարդ, էս ինչ կոնսպիրոլոգիական վախերի մեջ եք ընկել, էղածն ինչ ա... Էսպես բաներ ննք կու տվել:

**ԲԱԲԿԵՆ -** Հա, բայց իգոր տեղը ավելորդ խոսք չբերենք վրաներս:

**ԿԱՄՈ -** Խոսողի դեմ խոսող կա, լրագրողի դեմ լրագրող կա, ախ-պերս, կհանենք իրար դեմ, էդ էլ պակաս դիտարժան կոիվ չի, թե՞ թերթ ու լրագրող չունենք, թե՞ ու-դիո ու հեռուստատեսություն չու-նենք... Մի խոսքով, ես իմ Աստղիկին բերելու եմ, թող նայի, թող նայի, որ ինձ ավելի շատ սի-րի, գազանի պես սիրի: Համ էլ ինքը բերանը փակ աղջիկ ա:

**ՄԻՍԱԿ -** Փակ չինի՝ կիակենք:

**ԿԱՄՈ -** Ի...

**ՄԻՍԱԿ -** Էս տղեն լրիվ խելքը գցել ա... Չինի՞ սիրահարվել ես, Կա-մո:

**ԿԱՄՈ -** Սիրահարվել... Ոնց էլ հի-շում ես էդ բառը, ես մանկապար-տեզից հետո մոռացել եմ:

**ԲԱԲԿԵՆ -** Սպասեք, տղերք, բերեք էս մարդուն վերջնական բան ա-սենք:

**ՄԻՍԱԿ -** Դե ասինք, էլի: Սկսի էս գործը, Զաքար ախպեր, տեր ենք: Բայց որ հանկարծ...

**ԿԱՄՈ -** Ոտք ոոից կպոկենք:

**ՄԻՍԱԿ -** Մի պոկող էլ լինես:

**ԲԱԲԿԵՆ -** Չէ դե, ո՞նց կհամարձակ-վեմ, ես ծեզ ճանաչում եմ, ծեր թափը գիտեմ, իո ինքնասպան չեմ:

**ԲԱԲԿԵՆ -** Եսիմ, հուսահատությու-նից՝ մարդիկ ինչ անմիտ քայլի ասես դիմում են:

**Գալիս է Աստղիկը:**

**ԿԱՄՈ -** Ըիր, էս ել իմ հուրի-փերին:

**ՄԻՍԱԿ -** Էս ո՞ր աստղից ես իջաց-րել սրան, այ տղա:

**ԲԱԲԿԵՆ -** Հրաշք:

**ԿԱՄՈ -** Հանգիստ, տղերք, ծեզ ձգեք:

**ԱՍԴԻԿ -** Այսահիսի ընկերներ ունես ու չես ծանոթացրել... (Զեռքը պարզելով:) Ես Աստղիկն եմ:

Տղանարդիկ հերթով համբուրում են Աստղիկի ձեռքը և ներկայա-նում:

**ԲԱԲԿԵՆ -** Բարկեն, միշտ ծեր տրա-մադրության տակ:

**ՄԻՍԱԿ -** Մեռնեմ էս թաթիկիդ, ես Միսակն եմ:

**ԿԱՄՈ -** Զգոյշ, մատդ սրանց բերա-նը չինես հանկարծ, կու կտան:

**ԱՍԴԻԿ -** Չէ, չեմ կարծում, շատ հմայիչ, բարի պապովիկներ են: (Զաքարի մասին:) Իսկ նա ոնց որ ծեզնից չի, չէ...

**ՄԻՍԱԿ -** Ինչ աչք ունի:

**ԲԱԲԿԵՆ -** Հրաշք:

**ԿԱՄՈ -** (Խմիչքով բաժակը հրամց-նելով): Խմի, սիրունս:

**ԱՍԴԻԿ -** Մերսի:

**ԿԱՄՈ** - Աստղիկ:

**ԱՍՏՂԻԿ** - Այո, պապուլիկ:

**ԿԱՄՈ** - Մի հատ պատկերացրու, մենք, էս բոլորով, նատած ենք ամֆիթատրոնում...

**ԱՍՏՂԻԿ** - Պարտերում: Ամոթ չին, մենք ամֆիթատրոնում նստենք:

**ԲԱԲԿԵՆ** - Հա, էլի, դմբո:

**ՄԻՍԱԿ** - Չէ-չէ մի՛ բակոնում:

**ԶԱՔԱՐ** - Կամ էլ՝ յարուսում:

**ԲԱԲԿԵՆ** - Ջեզ խոսք չի հասնում, արա, չշփոթես հանկարծ:

**ԿԱՄՈ** - Իսկականից, էն, ինչ կարելի ա կեսարին, տավարին չի կարելի, հասկացա՞ր:

**ԶԱՔԱՐ** - Կներեք:

**ԿԱՄՈ** - Թէ չէ եսիմ: Ուրեմն, Աստղիկ ջան, պատկերացրու, մենք նստած ենք վերևում, իսկ ներքևում, մեծ փոսի մեջ, արջնու, ասենք, հովազը, կենաց մահու կոհիվ են տալի, մենք էլ նայում ենք ու վիսկի վայելում, ո՞նց աքո համար:

**ԱՍՏՂԻԿ** - Ծատ հմայիչ է: Իսկ հովազի փոխարեն հնարավոր է կոկորդիլոս գցել փոսը, իմ սիրած գազանիկն է, հատկապես՝ երբ մոտենում է ափին ու արցունք թափում:

**ԿԱՄՈ** - Հա, մարալս: Իմ ձաշակն ունի, է:

**ԱՍՏՂԻԿ** - Մի հատ պստիկ այծյամիկ էլ չգցենք փոսը, գցենք, էլի, համ, կոհվու ավելի թեծ լինի:

**ԲԱԲԿԵՆ** - Գցեցինք, հետո...

**ԱՍՏՂԻԿ** - Հետո ով հաղթեց՝ այծյամիկն իրեն ընծա, թող ուսի: Ուզում եմ, ուզում եմ...

**ԿԱՄՈ** - (*բաժակ վերցնելով*): Ուզում ես՝ կլինի: Դե, մեր գործի հաջողության կենացը: (*Տեսնելով, որ Աստղիկը արտասվեց:*) Ինչ եղավ, սիրունս, ո՞վ նեղացրեց:

**ԱՍՏՂԻԿ** - Ոչ ոք: Այծյամիկը մեղքս եկավ:

**ԿԱՄՈ** - Լավ, այծյամին չենք օգի:

**ԱՍՏՂԻԿ** - Չէ, գցեք, իրեն հասնում է:

**ԿԱՄՈ** - Ոնց հրամայես, կյանքս, կզցենք, թե կուզես՝ երկուսը:

**ԱՍՏՂԻԿ** - Չէ, մեկը բավական է: Լա ինձ կխորհրդանշի, իմ անպաշտպան մենությունը:

**ՄԻՍԱԿ** - Վախս...

**ԲԱԲԿԵՆ** - Հրաշք:

**ԿԱՄՈ** - Դե, մեզ հաջողություն և ողջություն:

**ՄԻՍԱԿ** - Մեկ էլ՝ քաջ առողջություն:

**ԲԱԲԿԵՆ** - Զաքար, վաղվանից՝ ի գործ:

**ԶԱՔԱՐ** - Պատրաստ եմ:

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

«Կոլիզեյ» պատրաստ է: Նկուղային տարածքում՝ նստատեղեր, ներքևում՝ փոս, ուր մարտերի ասպարեզն է և կենդանիների վանդակները: Փոսի ասպարեզում տեղի ունեցող իրադարձությունները, բնականաբար, չեն երևում,

Ենքաղլում-պատկերացվում են՝ վերևում նատաների արձագանքներից և ներքևի ճայներից: Որպես փոս կարող է դիտարկվել նաև բատրոնի դահլիճը:

Վերևում Բարիկենն է, Միասկը, Կամն, Աստղիկը, Զաքարը, առաջին երեքը հոռմեական կայսրերի, Աստղիկը՝ հոռմեական քարձրաստիճան կնօշ հագուստներով են, Զաքարը՝ ծառայի հազուստով: Սեղանին՝ խմիչք, միրզ, այլ ուտեստներ: Փոսից լսվում են զազանների ունիցները:

**ՄԻՍԱԿ - (Զաքարին, որ Աստղիկով  
տարված՝ փակել է տեսադաշտը):**

## Գլադական պատճեններ

**ԲԱՐԿԵՆ** - Հիմա էլ իմ դեմ կանգ-  
նեց... Տղա, ծառայի հմտություն-  
ներին լավ չես տիրապետում, ին-  
միայն ծառայելը չի, նաև ան-  
նկատ լինելն ա: Ծամպայնը լցրու,  
խմենք մեր կոլիզեյի բացման կե-  
նազր:

**ԶԱԶԱՐ** - *Lgnեմ, անհապաղ...* (*Lgnումէ*)

## ԿԱՄՈ - ԵՎ ՍԼԱՆԵՆՔ ԱՐԴԻԵՆ:

**ԱՍՏՂԻԿ** - Սկսենք, էլի, հա՞, տղա-  
մարդիկ, զազանները չեն դիմա-  
նում, ոռնում են, մեղք են, չե՞:

**ՄԻԱԱԿ** - (*հնքն իրեն*): Վախ, ոնց  
կուտեի սրան, հենց փոսի մեջ,  
սենց շորը կբարձրացնեի, ոտերը  
կդնեի ուսերիս ու կկծեի, կսժուեի:

**ԿԱՄՈ** - Ինչ ես մրթմրթում քթիդ  
տակ, բարձրածայն ասա, լսենք,  
Միսակ ախաղեր:

**ՄԻՍԱԿ** - Հեք, ասում եմ՝ շնորհա-  
վոր, բարի վայելում:

## ԿԱՄՈ - ԾՆՈՐԻԿԱՎՈՐ:

**ԱՍԴՐԿ** - Երգենմ ձեզ համար, կու-  
զե՞ք... Ուզում եք, աչքերից եմ  
տեսնում: «Ծնունդի շնորհա-  
ւոր»: (Երգը է ելու էլու)

զիլի....». (Միգուն է, խառն առաօնիք) Են Չարաբ սկսեց:

**ԶԱԶԱՐ** - Իհարկե: Դուք հարմար  
տեղավորվեք...

**ՄԻՍԱԿ** - Տեղավորված ենք, դու  
բաց թող գազաններին:

## ԶԱՔԱՐ - Հիմա, անմիջապես...

Հանդիսավոր երաժշտություն է միացնում, ապա սեղմում է վահանակի կոճակները, ներքեում բացվում են վանդակները, զազանենք դրուս են զայիս ասպարեզ:

**ՄԻԱԿ** - Զան, այս սա գազան ա,  
նայեք վարանիս, էնպես ա քայ-  
լում, ոնց որ աշխարհի տերը լի-  
նի: Հնապ... Տեսաք, պոչով ոնց  
խփեց, ցավդ տանեմ: (*Ոգևորված  
առաջ է զայիս:*)

## ԶԱՔԱՐ - ԶԳՈՒՅՉ, ՀՐՆԿԱԿԵՔ:

ՄԻՍԱԿ - Հավ չեմ:

**ԿԱՄՈ - Վարանը հեզ, ձևական բա-  
ներ ա անում, իբր՝ շատ ուժեղ եմ,  
ուզում ա վախացնի, բայց իմ կո-  
կորդիլոսը հին ոսկոր ա, վախե-  
ցողը չի, սուսուփուս սպասում ա՝  
մեկն ու մեկը մոտիկ գա... Կես  
տոննա կիխնի... չէ:**

**ԶԱԶԱՐ** - Ավելի շատ, յոթ հարյուր  
կիոն:

**ԲԱԲԿԵՆ** - Այ մարդ, դուք արջիս նա-  
յեք, դրա թաթերին նայեք, մի  
հատ թաթալոց տա՝ երկուսին ի-  
րար հետ կսատկացնի:

**ԱՍՏՂԻԿ** - (*մոտենալով եղրին*): Այծ-յամիկս, խեղճս, ոնց է կծկվել վանդակի անկյունում, լաց է լինում, դրդում է:

**ՄԻՍԱԿ** - Կլացի, բա ինչ կանի, իո չե՞ն բռնաբարելու, ուտելու են:

**ԱՍՏՂԻԿ** - Նրան չեք թողնելու վանդակից, չէ:

**ԶԱՔԱՐ** - Չէ, մինչև վերջ վանդակում կմնա, վերջում, որպես մրցանակ, կտանք հաղթողին:

**ԿԱՄՈ** - Դա դու չես որոշում, է:

**ԶԱՔԱՐ** - Զասեցի՝ ես եմ որոշում, կուզե՞ք՝ հենց հիմա էլ թողնեմ:

**ԱՍՏՂԻԿ** - Թող մնա, Կամո, խնդրում եմ:

**ԿԱՄՈ** - Թող մնա, կյանքս, կուզե՞ս, առհասարակ բաց թողնենք, գնա իրա անտառները:

**ԱՍՏՂԻԿ** - Չէ, թող մնա, աչքիս առաջ:

**ՄԻՍԱԿ** - Ապեր, ներքսի լույսերն ուժեղացրու, կարգին երևա:

**ԶԱՔԱՐ** - Ուժեղացնեմ:

**ԲԱԲԿԵՆ** - Մի հատ բզի արջին, շատ պասիվ ա:

**ԶԱՔԱՐ** - Հիմա: (*Երկար փայտով հրում է առջին:*)

**ԲԱԲԿԵՆ** - Ըհը, աշխուժացավ կարձես:

**ՄԻՍԱԿ** - Բռնեց, վարանս արջի թաթը բռնեց: Վերջ, եթե ոչ էսօր, մի երկու օրից արջդ հաստատ սատկելու ա, Բարո: Միսակը խմում է քո կենացը, իմ վարան: (*Խմում է:*)

**ԲԱԲԿԵՆ** - Արջին երկու օր պետք չի,

ինս ա երկու րոպեից մողեսիդ հարցերը լուծելու ա: Խփի դրան, խփի, այ էղպես, ցավդ տանեմ:

**ԿԱՄՈ** - Ես իմ կոկորդիլոսն ինչի չի շարժվում, չինչի քնաբեր եք սրսկել, արա:

**ԶԱՔԱՐ** - Չէ, ինչ եք ասում, կոկորդիլոսի բնույթն է, ինքներդ չասեցիք, զգույզ գազան է, նախ նայում է, գնահատում իրավիճակը:

**ԿԱՄՈ** - Բայց կոկորդիլոսը ջուր ա սիրում, իիմա ինքը փաստորեն անհավասար պայմաններում ա:

**ԶԱՔԱՐ** - Զրավազանի մեջ էր, նոր է դուրս եկել:

**ԿԱՄՈ** - Բան չգիտեմ, բեր, մի քանի վերոր ջուր լցորու վրեն:

**ՄԻՍԱԿ** - Չէ-չէ մի, մի հատ էլ դեզադոր փչենք, հարուր գրամ էլ վիսկի տանք: Կարգին կենդանի ընտրեիր, այ ախպեր, առյուծից, վագրից-բանից:

**ԿԱՄՈ** - Լավ, դեռ կտեսնենք՝ ով, ում, որտեղ, ոնց: (*Մոտենում է փոսի եղրին, գոյզուններով ոգևորում կոկորդիլոսին:*)

**ԶԱՔԱՐ** - Եդտեղ ջրի շլանգ կա:

Կամոն ջուր է լցնում կոկորդիլոսի վրա:

**ԲԱԲԿԵՆ** - Մի արա, Կամո, արջի վրա կթափես, հուշտ կլնի: Ձեզ եմ ասում, մի արա... Արի դու տեղդ նստի, հա՞:

**ԿԱՄՈ** - Ըհը, շարժվեց, շարժվեց... Գնաց... Տանկի պես ա գնում, ցավդ տանեմ... Դե բռնի, բռնի էդ մողեսի պոչը: Վայ քու, բռնկը

բռնեց: Մողեսիդ վերջն էկավ,  
Միսակ, արունը գցում ա վզից:

**ԱՍԴԻԿ** - Արյուն, օհ... (Ոշագնաց  
է լինում:)

**ԿԱՄՈ** - Վախ, մարալս ձեռից գնաց:  
(Գրկում է Աստղիկին:)

**ՄԻՍԱԿ** - (Բարկենին): Դերասա-  
նություն ա անում, հորս արև:

**ԲԱԲԿԵԼ** - Հտենց ծիծիկներ ունեցո-  
ղը ինչ ուզի՝ կանի:

**ՄԻՍԱԿ** - Մենակ ծիծիկներն ա՛, տե-  
ղով ուտելու բան ա, էս Կամոյի  
բախտը ոնց ա բերում, է:

**ԿԱՄՈ** - (Զաքարին, ուշագնաց  
Աստղիկի վերաբերյալ): Մի բան  
արա, ինչ ես քարացել, այ տղա:

**ԶԱՔԱՐ** - Այս րոպեիս... Մենք էստեղ  
դեղեր ունենք, ես ամեն ինչ նա-  
խատեսել եմ: (Մրվակ է բերում,  
դեմ անում Աստղիկի քրին:)

**ԱՍԴԻԿ** - (ուշքի գալով): Կամո,  
ո՞ր ես, Կամո:

**ԿԱՄՈ** - Էստեղ եմ, ցավի տանեմ:

**ԱՍԴԻԿ** - Գրկիր ինձ:

**ԲԱԲԿԵԼ** - Զան, արջս բամփեց կո-  
կորդիլոսիդ գլխին, շշմել ա հրեշդ:

**ԿԱՄՈ** - Ի, իլա մի րոպե... (Մոտե-  
նում է փոսին:) Հեզ էլ չի շշմել,  
հես ա, արջիդ թաթը բռնեց... Պո-  
կի, ուտեմ մոռութ, պոկի... (Մո-  
տեցած Աստղիկին:) Լավն ա, չչ,  
մեր կոկորդիլոսը:

**ԱՍԴԻԿ** - Իսկական գեղեցկուիի է,  
մեջքը բարակ, քայլքը շորորուն...

Կարող ա՞ էգ է:

**ԿԱՄՈ** - Հո չասիր, կյանք...

**ԶԱՔԱՐ** - Որձ է, էգերն այդքան խո-  
շոր չեն լինում:

**ԲԱԲԿԵԼ** - Էէէ, էլի թողին իրար, էս  
ինչ ալարկոտ կոհվ են անում, բեր  
մի քիչ արուն թափենք վրաները,  
կարող ա գրգովեն:

**ՄԻՍԱԿ** - Կամ էլ էն այծյամիկին  
թող:

**ԱՍԴԻԿ** - Ոչ, աղաչում եմ:

**ԿԱՄՈ** - Հենց կոկորդիլոսը աշխո-  
ժանում ա, իրար եք խառնվում,  
շատ լավ էլ կոհվ ա: (Յած նայե-  
լով:) Արա, արա... երկուսով վրա  
տվին վարանին... Կոկոս պոչը  
բռնեց:

**ԲԱԲԿԵԼ** - Արջն էլ գլխից ա բռնել,  
Միսակ, հես ա մեջտեղից ծղելու  
են մողեսիդ:

**ԿԱՄՈ** - Իջի, օգնի, ապեր:

**ՄԻՍԱԿ** - (գոռալով, վարանի կող-  
մը): Հլա քեզ մի հատ թափ տուր,  
արա, հա-հա, քո հետ եմ, թափ  
տուր... Եղանակ, էղանակ... (Հնկեր-  
ներին.) Կոհվը նոր ա թեժանում,  
տղերք, մի ոգևորվեք... (Վարա-  
նին.) Պոչդ հեծ, առանց պոչի էլ  
կապրես, դու գլուխդ ազատի...  
Դավայ, դավայ...

**ԿԱՄՈ** - Ասում եմ՝ մտի, օգնի մողե-  
սիդ, ինքնուրոյն գլուխ չի հանի:

**ՄԻՍԱԿ** - Ես չեմ մտնում, ես կարամ  
մտցնեմ, էղավ, Կամո:

**ԿԱՄՈ** - Պահի...

**ԱՍԴԻԿ** - Մի վիճեք, տղաներ,  
խնդրում եմ, եկեք շամպայն  
խմենք:

**ԲԱԲԿԵԼ** - Զաքար, շամպայն լցրու:

**ՄԻՍԱԿ** - Ինձ՝ թթի արադ:

Խմում եմ:

**ՄԻՍԱԿ** - Զաքար, էս քնած վարանին հես ա կոխելու եմ քամակդ, այ տղա, էդքան փող ինչի՞ տվի, որ ոչսարի պես ուտվի, մատադացու եմ առել:

**ԶԱՔԱՐ** - Դուք ընտրեցիք, պարոն Միսակ, ես ինչ մեղք ունեմ:

**ՄԻՍԱԿ** - Ոնց որ հոյի լինի, արա, հլա դրա փորը, դրա շարժուձևը:

**ԶԱՔԱՐ** - Ործ է, ո՞նց հոյի կլինի:

**ՄԻՍԱԿ** - Ինչ իմանամ, մեծ աշխարհ ա:

**ԿԱՄՈ** - Բեր հոյության տեստ արա, ապեր:

**ՄԻՍԱԿ** - Կամո, կրակի հետ ես խաղում արդեն, վախենամ՝ երկար չդիմանամ:

**ԱՍՏՂԻԿ** - Չկովեք, էլի, տղաներ, աղաջում եմ: Տեսեք, գլուխն ազատեց վարանը... Լավ է, չէ, պարոն Միսակ:

**ՄԻՍԱԿ** - Վախ, պարոն Միսակը լիզի սփաթիկդ:

Միսակի կիսաձայն խոսքը չեն լսում, բայց Աստղիկը հասկանում է, չարաճճ՝ մատ է քափ տալիս Միսակի վրա:

**ԲԱԲԿԵՆ** - (կիսաձայն): Ուտեմ էդ սիրուն մատիկդ, մի հատ էլ իմ վրա թափ տուր, էլի, կյանք:

**ԿԱՄՈ** - (փոսով տարված): Նորից կանգնեցին, կանգնել՝ իրար են նայում... Չէ, սրանք կոհիվ անել չեն ուզում:

**ԶԱՔԱՐ** - Հոգնել են, թող մի քիչ հանգստանան:

**ԿԱՄՈ** - Գազանի հանգստանալը նրն ա, այ ախպեր, արի՝ մի հատ քզի, աշխուժանան:

Զաքարը երկար փայտով խթանում է գազաններին:

**ՄԻՍԱԿ** - Կամաց, արա, վարանի աչքին ես խփում, չեմ հասկանում՝ կարող ա՞ հատուկ ես անում:

**ԶԱՔԱՐ** - Պատահաբար կպա, կներեք, ահա՝ մի հատ էլ կոկորդիլուխն խփեմ, որ չնեղանաք:

**ԿԱՄՈ** - Կոկորդիլոսին չկպնես, է:

**ԲԱԲԿԵՆ** - (ցած նայելով): Ըհը, սկսվեց, սկսվեց...

**ՄԻՍԱԿ** - Նորից երկուսով մեկին վրա տվին... Ոնց որ պայմանավորված լինեն, ախպեր, էս ինչ դավադրություն ա:

**ԲԱԲԿԵՆ** - Խփի, թափով, մի հատ էլ, չշողես՝ ուշքի գա:

**ԿԱՄՈ** - Վայ թե էս անգամ մողեսիդ վերջը իսկականից էկավ, Միսակ, կոկոն բուկը բռնեց, էլ թողնողը չի:

**ԲԱԲԿԵՆ** - Հա, վարանի հարցը լուծվեց ոնց որ:

**ԱՍՏՂԻԿ** - Զարգնցվում է խեղճը:

**ՄԻՍԱԿ** - Արա, այ տղա, էս վարանները էն ահոելի գոմեշներին են տապալում՝ հերն անիծում, էս ինչ հիվանդ կենդանի եք դեմ տվել, էշի տեղ եք դնո՞ւմ... Ձեզ եմ հարցնում, է, Զաքար ես, ինչ ես, ծեն հանի, թե՞ գիտես՝ Միսակի փողն ուտելը հեշտ բան ա:

**ԶԱՔԱՐ** - Ախր, Զաքարն ինչ անի, պարոն Միսակ, ամենալավերից ենք ընտրել-բերել, որ ուժը չի պատում՝ ես ինչ մեղք ունեմ:

**ՄԻՍԱԿ** - Համար բայց դու շատ ա-

վանտյուրիստ լրի ծնունդ ես,  
հա: Ասում ես՝ ուժը չի պատհում...

(Հրում է Զաքարին:) Դե գնա,  
տեսնեմ քո ուժը կպատի՞:

**Զաքարն աղաղակելով ընկնում է  
փոսը:**

**ԱՍՏՂԻԿ** - Աստված իմ...

**ԿԱՄՈ** - Ես ինչ արիր, Մոսո:

**ՄԻՍԱԿ** - Իրան հասնում էր:

Փոսից լավում է Զաքարի գոռոցը.  
«Հանեք ինձ Էստեղից, խնդրում  
եմ»:

**ԲԱԲԿԵՆ** - Չեղավ, Միսակ, մենք էս-  
պես չենք պայմանավորվել,  
լրացուցիչ պրոբլեմներ ես ստեղ-  
ծում:

**ՄԻՍԱԿ** - Լավ դե, ստացվեց... Եդ  
ինչ մի պրոբլեմ ա, որ դու է նեղ-  
վում ես... Զդայնացա, հա, ինչ ա-  
նեմ:

**ԿԱՄՈ** - Մտի՛ հանի:

**ՄԻՍԱԿ** - Ի, էլի չափերդ կորցրի՛ր,  
արա... Մեղքդ եկավ՝ ինքդ մտի:

**ԱՍՏՂԻԿ** - Զմտնես հանկարծ, Կա-  
մո:

**ՄԻՍԱԿ** - Մի հատ Զաքար ավել, մի  
հատ Զաքար պակաս, ինչ եք ի-  
րար խառնվել: Էն ա, արդեն խեղ-  
դին ոնց որ:

**Փոսից՝ Զաքարի խոխոցը:**

**ԱՍՏՂԻԿ** - Դուրս թողեք ինձ, Աստ-  
ծու սիրուն, ահ... (Ուշագնաց է լի-  
նում:)

**ՄԻՍԱԿ** - Արա, դե հերիք ա դերա-  
սանություն անես, այ աղջի, է:

Կամո, դրան մի էրկու սիլա տուր՝  
թող ուշքի գա:

**ԿԱՄՈ** - Միսակ, դու քեզ մի քիչ ձգի,  
հա՞:

**ՄԻՍԱԿ** - Այ տղա, մի հատ ծիտ ա  
ընկել ծեռոդ, ընկերությունը լրիվ  
մոռացել ես... Մոռացա՞ր, քեզ ով  
ա մարդամեջ հանել, սոված  
մզգում էիր, հլա հիշի...

**ԿԱՄՈ** - Էրեսով ես տալիս:

**ՄԻՍԱԿ** - Հա, հենց էլ էրեսով եմ  
տալի:

**ԱՍՏՂԻԿ** - (ուշքի գալով): Տղաներ,  
մի վիճեք, աղաչում եմ:

**ԲԱԲԿԵՆ** - Աշխուժացան, աշխուժա-  
ցան... Նայեք՝ ինչ կոհիվ ա գնում:

**ՄԻՍԱԿ** - Բա, էն էշին չգցեի, հո  
սենց չէր լինի:

**ԿԱՄՈ** - Զան, արջի թաթը նորից  
բռնեց... Պոկի, քաշի-պոկի՝ քեզ  
ասում եմ, ես հետդ եմ:

**ԱՍՏՂԻԿ** - Էլ չի շնչում, մեռավ:

**ԿԱՄՈ** - Ո՞րը, կյանք ջան:

**ԱՍՏՂԻԿ** - Զաքարը:

**ԿԱՄՈ** - Զաքարի հերն էլ անիծած,  
դու կոկորդիլոսիս նայի, տես՝ ինչ  
ա անում: Էնպես ես ասում՝ Զա-  
քարը, կարծես ախպերդ ա, Զա-  
քար էր, էլի, սատկեց՝ գնաց:

**ՄԻՍԱԿ** - Հա, էլի: Զվախեք, ուրիշ  
մեկին կգտնենք էս գործի հա-  
մար, անփոխարինելի մարդ չկա:  
Բերեք՝ խմենք մի հատ:

**ԲԱԲԿԵՆ** - Առաջարկություն ունեմ:

**ՄԻՍԱԿ** - Ասա:

**ԲԱԲԿԵՆ** - Բերեք շամպայն խմենք...

**ՄԻՍԱԿ** - Ես օղի կխմեմ:

**ԲԱԲԿԵՆ** - Ես առաջարկում եմ շամպայնը Աստղիկի կոշիկից խմենք:  
**ԱՍՏՂԻԿ** - Վայ, ինչ ոռմանտիկ է:  
**ՄԻՍԱԿ** - Արժի, արժի, մեծագույն հաճույքով:

**ԱՍՏՂԻԿ** - (կոշիկը հանելով):  
 Խնդրեմ:

**ԿԱՄՈ** - Ստոպ, ես համաձայն չեմ:  
 Ֆուժեռ ունեք՝ ֆուժեռից խմեք:  
 (Աստղիկին.) Հագի կոշիկի:

**ԲԱԲԿԵՆ** - Դահ... (Փորձկացնում է):

**ԱՍՏՂԻԿ** - Բայց ինչո՞ւ, Կամոյիկ, գեղեցիկ չ՞ի:

**ՄԻՍԱԿ** - Չինի՞ զգվում ես մեր քրոջ  
 կոշիկից, Կամո:

**ԿԱՄՈ** - (կոշիկը վերցնելով): Լցրեք:  
 Բարկենք շամպայն է լցնում կոշիկի մեջ: Կամոն խմում է, հետո  
 հանում է Աստղիկի երկրորդ կոշիկը և երկուսն էլ զցում փոսթ:

**ԿԱՄՈ** - Իմ սիրածի կոշիկից մենակ  
 ես կարամ խմեմ, դուք ձեր կանանց կոշիկներից խմեք:

**ՄԻՍԱԿ** - Խելքդ լրիվ գցել ես խանդի հողի վրա, Կամո տղա:

**ԱՍՏՂԻԿ** - Վայ, մամա ջան, կոկորդիլոսն ուտում է կոշիկներս... ինչ իմայիշ է, Աստված իմ:

**ԿԱՄՈ** - Նորը կառնեմ, չափսոսաս:

**ԲԱԲԿԵՆ** - Կոկորդիլոսիդ կաշվից  
 կարել տուր, համ էլ հիշատակ կլինի, հեն ա՝ արջը սատկացրեց:

**ԿԱՄՈ** - Չէ հա... Սուտմեռով ա, հես  
 ա տես, ինչ ա անելու:

**ՄԻՍԱԿ** - Էլ ոչինչ էլ չի անելու, սատկել  
 ա: Բարոյի արջը կրեց էս կոհիվը:

**ԿԱՄՈ** - Չի սատկել, նայի, շարժվում

ա: Վեր կաց, արա: (Աստղիկին.)

Բեր արադ լցնեմ վրեն, ուշքի գա:

**ԱՍՏՂԻԿ** - (տալով շիշը): Փորձիր:

**ԿԱՄՈ** - (օղի լցնելով կոկորդիլոսի  
 վրա): Թթի արադը մեռեին էլ գերեզմանից կիանի:

**ԲԱԲԿԵՆ** - Զաքարն էլ ա շարժվում  
 ոնց որ, չհանենք:

**ՄԻՍԱԿ** - Աաա, թարգի, ո՞նց ես հանում:

**ԲԱԲԿԵՆ** - Եսիմ, պարանից-բանից  
 կախենք, թող բարձրանա:

**ՄԻՍԱԿ** - Կիսամեռ ա, ո՞նց կբարձրանա:

**ԲԱԲԿԵՆ** - Մենք կախենք, կուզի՝  
 բարձրանա, կուզի՝ չէ, թող մեր  
 խիղճը հանգիստ լինի:

**ՄԻՍԱԿ** - Իմ խիղճը հանգիստ ա:  
 Համ էլ պարան չկա:

**ԱՍՏՂԻԿ** - Ոտիկս կախեմ, թռնի՝  
 բարձրանա:

**ՄԻՍԱԿ** - Վախս, քո ոտիկով թող ես  
 բարձրանամ, էի, սիրունս:

**ԲԱԲԿԵՆ** - Ես է՛ մյուսով:

**ԱՍՏՂԻԿ** - Ինչ չարածծի տղաներ  
 եք, վայ-վայ-վայ... Ես կթողնեի,  
 բայց Կամոն... Օ՛, Կամոն ահավոր  
 խանդոտ է, մտածում եմ վայ  
 թե թունդ սիրահարված է ինձ:  
 Ճիշտ եմ ասում, Կամո: Չի լուս:  
 Կնոջը թողնելու է, ինձ հետ ամուսնանա:

Կամոն հիստերիկ գոռգոռալով  
 պտտվում է վոսի շուրջը, հրամաններ արձակում իր կոկորդիլոսին. «Քոնի՛, չքողես, այ եղանա, իմ կոկոյին ո՞վ կարա կաճի, կսատկացնի սաղին, ջա՞ն, ա-

**ռաջ, առաջ... Ի, ո՞մ եմ ասում,  
առաջ»:**

**ԲԱԲԿԵՆ -** Չհավատաս, նա իր կնոցից բաժանվողը չի:

**ՄԻՍԱԿ -** Մենակ տեսնես՝ կնոց առաջ ինչ կատու ա դառնում, մնում ա լավի ու քսվի ոտերին:

**ԲԱԲԿԵՆ -** Ամոթ ա ասելը, բայց տակը շռում ա վախից, լուրջ եմ ասում, իմ աչքով եմ տեսել:

**ՄԻՍԱԿ -** Հա, ես էլ եմ տեսել:

**ԱՍԴԻԿ -** (նայելով Կամոյին): Խեղծս...

**ԿԱՄՈ -** Զաքարը սատկեց, վարանը վերջի շնչում պոչով խփեց վզին, վայ թե ողնաշարը կոտրեց:

**ՄԻՍԱԿ -** Պրծանք դրանից: Էդ տղեն վայ թե վեստիբուլյար ապարատից թուլ էր, իրան-իրան գնաց՝ ընկավ փոսը... Չէ, էդպես չէր, տղերք:

**ԱՍԴԻԿ -** (մատը տարութերելով Միսակի վրա): Ինչ խորամանկն է այս Միսակը:

**ՄԻՍԱԿ -** Վախս... Մատդ մի հատ էլ էդպես թափ տուր վրես, էլի, սրտակեր:

**ԱՍԴԻԿ -** (կրկնելով մատի շարժումը): Նո, նո, նո, Միսակ:

**ՄԻՍԱԿ -** Հրաշքս:

**ԿԱՄՈ -** (փոսի եզրին է): Դե վեր կաց, վեր կաց, սիրոնս, դավայ... Այ էդպես, ես գիտեի, որ սուտմեռուկ ես մտել, դե բռնի դրա բուկը... Զան, մի հատ էլ...

**Արջի ոռնոց:**

**ԲԱԲԿԵՆ -** Դու տեսնում ե՞ս էդ խորամանկին, սաղացավ:

**ՄԻՍԱԿ -** Բա իին ոսկոր ա, է, էն դինոզավրերի ժամանակից կա ու մնում ա, դինոզավրերին վարի տվեց, ինքը մնում ա: Հարգեցի, հարգեցի... Կամն, ես կոկորդիլոսիդ կողմից եմ, բզի, թող ուտի արջին:

**ԿԱՄՈ -** Ուտելու ա, չկասկածես: (Փայտը վերցնելով:)

**ԲԱԲԿԵՆ -** Փետք դիր տեղը, արա, դու էլ կոկորդիլոսիդ պես աֆերիստ ես:

**ԿԱՄՈ -** Ուզում էի արջիդ աշխուժացնեմ, ապեր, լավությունը չի անցնում, էլի:

**ԲԱԲԿԵՆ -** Լսի, Կամո, մի հատ առաջարկ ունեմ, արի էս ընկերուհուդ երեքով բան անենք... Զեմ գտնում՝ ոնց ասեմ... Հա, բռնարարք գործենք իր նկատմամբ, հը, էս փոսի կողքին, մոնչոցների ուղեկցությամբ... շատ կայֆ կլինի: Միհանգամից չասես՝ չէ, լավ մտածի, հազար տարվա ընկեր ենք, ընդիհանուր բիզնես ունենք, հազար լավություն արած կինենք քեզ, ու էլի կանենք, եթե քեզ խելոք պահես... Մտածի: Աղջիկ ա, էլի, իր կնիկդ չի:

**ՄԻՍԱԿ -** Ճիշտ ա ասում, Կամո, համ էլ էդ կախվածությունից կարծնես, իր իրա կրոնկի տակ չես ապրելու հավերժորեն:

**ԿԱՄՈ -** Չէ, տղերք, չէ, լինելիք բան չի:

**ԲԱԲԿԵՆ** - Լավ, չէ՝ չէ, ինչ ես գոռում, տար, թթու դիր:

**ԱՍՏՂԻԿ** - Իսկ ինձ չեք ուզնում հարցնել, տղաներ:

**ՄԻՍԱԿ** - Քեզ ինչի պիտի հարցնենք, թագուիի ես խաղում գլխներիս: (*Գնում է դեպի Աստղիկը*):

**ԿԱՄՈ** - Մըսո, հետ արի:

**ՄԻՍԱԿ** - (*փորձելով գրկել Աստղիկին*): Թագուիի ես, թագուիի ես...

**ԿԱՄՈ** - (*փայտը ծեռքին՝ վազում է դեպի Միսակը*): Ուշքի արի, Միսակ:

**ՄԻՍԱԿ** - Ձեռ քաշի, գնա, քո կոկորդիլոսով զբաղվի:

**ԱՍՏՂԻԿ** - Կոիվ չանեք, տղաներ, ես բռնություն չեմ տանում, աղաչում եմ, հիմա ուշագնաց կլինեմ, ահ...

Կամոն փորձում է փայտով հարվածել Միսակին, Միսակը խուսափում է, քաշքում են իրաք, քաշքելով մոտենում փոսին:

**ԲԱԲԿԵՆ** - Տղերք, վերջ տվեք, տղենրք...

Բարկենն իրք քաժանելու է հասնում, բայց անմիատ ուռ է զցում Կամոյին, Միսակը հրում է, Կամոն գահավիժում է փոսը:

**ՄԻՍԱԿ** - Վայ քու, ընկավ...

**ԿԱՄՈ** - Հանեք ինձ էստեղից, ախպոր նման... Աստղիկ, էն փետք կախի:

**ԱՍՏՂԻԿ** - Հիմա, Կամո, հիմա... (*Փայտը կախում է փոսը, բայց կոկորդիլոսը քաշում, պոկում է*

*ծեռքից*:) Տարավ, տարավ վայրենին: Տղաներ, օգնեք:

**ԲԱԲԿԵՆ** - Էլ ո՞նց օգնենք, կոկորդիլոսը փետը տարավ:

**ԿԱՄՈ** - Տղերք...

**ՄԻՍԱԿ** - Դու՝ քո կոկորդիլոսը, լեզու գտեք, ախպեր:

Գազանների մոնշունը, Կամոյի օրիասական աղաղակները:

**ԲԱԲԿԵՆ** - Վերջ, չկա մեր ազիզ ընկերը: Բեր՝ ողորմաթասը խմենք:

**ՄԻՍԱԿ** - Սպասի, կարող ա սուտմեռուկ ա մտել:

Ծիծաղում են:

**ԱՍՏՂԻԿ** - Ես ոչինչ չեմ տեսել, տղաներ, ես չեմ տեսել, ես մի հիմար աղջիկ եմ...

**ԲԱԲԿԵՆ** - Ինչ չես տեսել, սիրուն ջան:

**ԱՍՏՂԻԿ** - Ոչինչ: Ինձ չսպանեք, էլի... Զահել եմ, ամբողջ կյանքս դեռ առջևում է... Չսպանեք, էլի, խնդրում եմ:

**ՄԻՍԱԿ** - Մտածել է պետք:

**ԱՍՏՂԻԿ** - Կուզե՞ք, բռնացեք, ինչ կուզե՞ք արեք, մենակ թե փոսը չզցեք, աղաչում եմ:

**ԲԱԲԿԵՆ** - Ասում ես՝ ինչ ուզենք՝ անմնք:

**ԱՍՏՂԻԿ** - Այո, ես ոչ ոքի ոչինչ չեմ ասի, երդվում եմ:

**ՄԻՍԱԿ** - Ինչ ա էղել, որ ինչ էլ ասես:

**ԱՍՏՂԻԿ** - Ոչինչ չի եղել, իհարկե:

**ՄԻՍԱԿ** - Հը, Բարո, սրան էլ չզցենք փոսը:

- ԲԱԲԿԵՆ** - Զգիտեմ, սպասի մտածեմ:
- ԱՍՏՂԻԿ** - Աղաչում եմ... (Ծնկի է իշնում:)
- ՄԻՍԱԿ** - Բայց լավ թարմացանք, չէ, ախաբեր, մեջս մի հատ ուժ ու եռանդ ա մտել, էլ չասած: Բեր սրան տանենք՝ մի հատ վայելնք, իետո կմտածենք:
- ԲԱԲԿԵՆ** - Տանենք, հա:
- ՄԻՍԱԿ** - Դե, դուոք բաց արա:
- ԱՍՏՂԻԿ** - Տարեք, ձերն եմ:
- ՄԻՍԱԿ** - Վախս, էս ինչ լավն ես... (Թեթև ապտակներ հասցնելով Աստղիկին:) Աղջի՛, քեզ Կամոն սիրել ա՞, սիրել ա՞, սիրել ա՞...
- ԱՍՏՂԻԿ** - Ի՞նչ ասեմ...
- ՄԻՍԱԿ** - Ասա՝ հա:
- ԱՍՏՂԻԿ** - Այո, մեղքս ինչ թաքցնեմ, սիրել է:
- ՄԻՍԱԿ** - Ո՞նց էր սիրում, պատմի:
- ԱՍՏՂԻԿ** - Բոլոր մանրամասներով:
- ՄԻՍԱԿ** - Հա, բոլոր:
- ԱՍՏՂԻԿ** - Հյուրանոցի սենյակում, բաց պատուհանի տակ ջարդած ապակի էր շաղ տալիս, ինձ, ոտարորիկ, կանգնեցնում էր վրան...
- ՄԻՍԱԿ** - Հետո՞:
- ԱՍՏՂԻԿ** - Ասում էր՝ իենվի պատուի հանագոգին ու տնքա, այնպես տնքա, որ դրսում լսվի:
- ՄԻՍԱԿ** - Հետո՞...
- ԱՍՏՂԻԿ** - Ինքը ետևից գալիս, վարտիքս կամաց իշեցնում էր...
- ՄԻՍԱԿ** - Վախս... Բարո, ես սրան ստեղ մի հատ բռնաբարում եմ, էլ չեմ դիմանում:
- ԲԱԲԿԵՆ** - Սպասի, Միսոն:
- ՄԻՍԱԿ** - Ինչի՞ն:
- ԲԱԲԿԵՆ** - Պրոբլեմ ունենք
- ՄԻՍԱԿ** - Ո՞րն ա:
- ԲԱԲԿԵՆ** - Բանալին:
- ՄԻՍԱԿ** - Հա, ի՞նչ:
- ԲԱԲԿԵՆ** - Բանալին փոսում ա, Զաքարի գրպանում:
- ՄԻՍԱԿ** - Արա, դու լրիվ ախմախ ես, քթիցդ էն կողմ չես տեսնո՞ւմ:
- ԲԱԲԿԵՆ** - Ո՞ւմ մտքով կանցներ, որ մարդուն փոսը կգցես... Դե, ոնց օցել ես՝ գնա հանի:
- ՄԻՍԱԿ** - Ստեղ լոմ, էրկաթի կտորբան չկա՞մ:
- ԲԱԲԿԵՆ** - Չկա, համ էլ սեյֆի դուռ ա, լոմով չես բացի:
- ՄԻՍԱԿ** - Բա ի՞նչ անենք: Լսի, արի սրան բռնաբարենք...
- ԲԱԲԿԵՆ** - Ես քեզ ասում եմ...
- ՄԻՍԱԿ** - Մինչև վերջ լսի, արա, բռնաբարենք, իետո իջացնենք փոսը, թող բանալին հանի Զաքարի ջերից:
- ԱՍՏՂԻԿ** - Ես չեմ կարող, ես ուշագնաց կիխնեմ...
- ՄԻՍԱԿ** - Էն էրկու գազանը սատկել են, արջն էլ հազիվ ա շարժվում, իեն ա՝ ուժասպառ վեր ա ընկել անկյունում:
- ԱՍՏՂԻԿ** - (հիստերիկ): Ես չեմ կարող, չեմ կարող, իմ սիրտը կպայթի: (Գրկելով Բարկենի ոտքերը:) Փրկիր ինձ, աղաչում եմ:
- ԲԱԲԿԵՆ** - Նա չի կարող, Միսակ, մեզնից մեկն ու մեկը պիտի իջնի:
- ՄԻՍԱԿ** - Հետո՞:

**ԲԱԲԿԵՆ** - Հետո փետք կտա, էն մյուսը կբաշի-կբարձրացնի:

**ՄԻՍԱԿ** - Դե գնա:

**ԲԱԲԿԵՆ** - Մեր մեջի ուժեղը դր ես:

**ՄԻՍԱԿ** - Չէ, երկուսով ենք իշխելու, Բարկեն:

**ԱՍՏՂԻԿ** - Երկուսով պետք չի, ինձ մենակ մի թողեք:

**ՄԻՍԱԿ** - Սուս մնա, էլ ձենդ չլսեմ:

**ԲԱԲԿԵՆ**- Լավ, բայց հետո մեզ ով կհանի, Աստղիկը չի կարա, էռքան ուժ չունի:

**ՄԻՍԱԿ** - Նայի, դիակները կհավաքենք պատի տակ, մեկս կբարձրանա վրաները, մյուսը՝ իրա ուսերին, դուրս կգա, հետո փետք կտա՝ էն մեկին կհանի:

**ԲԱԲԿԵՆ** - Լավ: Հաշվում եմ մինչև երեքը, երեքի վրա թռնում ենք: Մեկ, երկուս, երեք...

**Միսակը թռնում է փոսք, Բարկենը մնում է:**

**ՄԻՍԱԿ** - Թոդի, Բարո...

**ԲԱԲԿԵՆ** - Կներես, Միսոն, չեմ կարող, վախում եմ, մանկուց վախկուս եմ, գիտես, մենակ արա էդ գործը:

**ՄԻՍԱԿ** - Արա, արա... Սրանք սաղացան... Բարո, մի բան արա, Բարո...

**Միսակի վայնասունը, գազանների մոնչյունները:**

**ԲԱԲԿԵՆ** - Ախր, Բարոն ինչ կարա անի, իմ ախաեր:

**Ստվերներ են ուրվականների պես դուրս գալիս փոսից, խոլ ոռնոցներով ու մոնչյուններով:**

**ԱՍՏՂԻԿ** - Պատառոտում են, աստված իմ...

**ԲԱԲԿԵՆ** - Ակսոս, լավ տղա էր Մըսոն:

**ԱՍՏՂԻԿ** - Բայց բանալին, բանալին փոսում մնաց:

**ԲԱԲԿԵՆ** - Բանալի՞... Բանալի կա, չվախես: (*Գրպանից հանելով:*) Ահա: (*Միսակի վայնասունից Բարկենի ձեռքը երերում է, բանալին ընկնում է ձեռքից, կռանում է, որպեսզի բարձրացնի:*)

**ԱՍՏՂԻԿ** - (*Իրելով Բարկենին:*) Դու էլ գնա ընկերներիդ մոտ, տականք:

**Բարկենը աղաղակելով ընկնում է փոսք: Աստղիկը վերցնում է բանալին, փորձում է բացել դուռը, չի բացվում:**

**ԱՍՏՂԻԿ** - Դե բացվիր, բացվիր, անիծյալ... (*Բոռնցըներով հարվածում է դոանը:*) Բացեք, Էյ, խնդրում եմ, ով կա այդտեղ, դե բացեք...

**Գազանների մոնչյուններ, մարդկային աղաղակներ:**

**ԱՍՏՂԻԿ** - Օգնեցնք, օգնեցնք...

**Փոսից եկող ձայները լռում են:**

**ԱՍՏՂԻԿ** - (*Իրսահատ փլվելով դուն տակ, կիսաձայն:*) Օգնեցնք...

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



## Լիա ԻՎԱՆՅԱՆ

Լինում են, չէ՞, օրեր, երբ ձեռքիցդ ամեն ինչ ընկնում է,  
ուորդ ոլորվում է, լամազ պայթում է, դիմացդ են հայտնվում  
տիած մարդիկ... մի խորով՝ ձախորդ օր:  
Ծանոթ վիճակ է, չէ...

Դե, իսկ եթե փորձենք ազատություն տալ մեր  
երևակայությանը և շարունակենք ձախորդությունների  
շղթան, ապա շնոր տխուր պատկեր կտացվի:  
Բայցն զվարճալի, քանի որ իրականություն չէ,  
այն ընդամենը ուսուպիա է:  
Եվ քանի որ ուսուպիա է նաև «օրենքի երկիր  
Հայաստան», ապա նետվենք հակառապահայի գիրկը և  
բաց թողնենք մեր երևակայության սանձերը:  
Արդյունքում կտացվի հակառապահիկ տրագիկումետիա...

# ԶԱԽՈՐԴ ԱՍՊԵՏԻ ՏԽՈՒԹ

## ԱՐԿԱԾՆԵՐԸ

(Հակառակութիկ ֆանգաղիա)

Գործող անձինք

ՎԱՐԴԱՆ ՇԱՄԱՐԻՏՅԱՆ - 40-ամյա բարետես տղամարդ

ՀԱՄԵՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ - 40-ամյա գեղեցիկ կին

ԱԴՐ (ԱՌԱՋԻՆ ԴԱՐԱԿԱԶՄԻԿ ՕՐԻՆԱԿ) | համակարգիչներ  
ԷՎՈ (ԷԱՊԵՍ ՎԵՐԱՋԻՆՎԱԾ ՕՐԻՆԱԿ)

ՆԱԶԱՐ ՔԱԶՈՅԱՆ - շիրականացած հավակնություններով

որակազրկված գիտնական

ԿԱՊԻՏԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ - կարմրաթուշ ոստիկան

ԳՆԴԱՊԵՏ ՕՀԱՆՅԱՆ - ամրակազմ գինվորական

ԲԺՇԿՈՒՀԻ

ՎԱՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՑԻ

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

ՀԱՏՈՒԿ ԶՈԿԱՑԲԻՆՆԵՐ

ԲՈՒԺԵՂԲԱՅՐ

ԱՆՑՈՐԴ

Նվազագույն դեկորացիա բեմում: Էկրանի առավելագույն օգտագործում: Մշտական է պատուհանով պատը:

**Պատկեր առաջին**

Ետնավարագույրին (կամ Էկրանին)` հյուրանոցի սենյակ:  
Բեմում մեկ արող կա: Սրբիչը ձեռքին հայտնվում է Վարդանը: Մոտենում է բաց պատուհանին, վայելում արևոտ առավոտի գույներն ու բույրերը:

ՎԱՐԴԱՆ - Ո՞նց եմ կարոտել  
Երևանի երկինքը, օդը, քամին:  
Ուզում եմ շուտ դուրս գալ: Ի՞նչ  
փույթ, որ քսանիխնգ ժամ ինքնա-

թիոներում եմ եղել, հոգնած եմ ու  
քաղցած: Գնամ, Երևանի ցայտադրյունների սառը ջուրը խմեմ...  
համով հացն ու պանիրն ուտեմ...

Արագ զգեստափոխավելով դուրս է գալիս: Աքոռին նետված տարատի գրապանից վայր են ընկնում դրամապանակը և աճձնագիրը: Եկրանին՝ քայլում է փողոցներով: Նստում է ավտոբուս (բուտաֆորիա): Ամենաերևացող տեղում ցուցանակ է՝ «Ուղեվարձը 100 դրամ»: Դրամապանակն է փնտրում, գրապաններն է քրքրում, գտնում տաս դոլարանոց ճնորված թղթադրամ: Մոտենում է վարորդին:

**ՎԱՐԴԱՆ** - Մանր չունեմ... դրամապանակս մոռացել եմ հյուրանոցում:

**ՎԱՐՈՐԴ** - Ուղեվարձը՝ 100 դրամ:

**ՎԱՐԴԱՆ** - Վերցրու տաս դոլարը:

**ՎԱՐՈՐԴ** - Կաշառք ես առաջարկում:

**ՎԱՐԴԱՆ** - Ինչ կաշառք: Դրամ չունեմ, կամ սա վերցրու, կամ թող՝ իջնեմ... եղածը մի բան չի:

**ՎԱՐՈՐԴ** - Մի խախտեք մեր երկրի օրենքները:

**ՎԱՐԴԱՆ** - Հանցագործ չեմ, որ օրենքով ես վախեցնում: Մարդ եմ՝ դրամանապանակս մոռացել եմ: Մոռանալը հանցանք է:

**ՎԱՐՈՐԴ** - Մինչև փոխնախարարի մակարդակը՝ հանցանք է:

**ՎԱՐԴԱՆ** - Ոչինչ չեմ հասկանում: Ես ինչքան են փոխվել հայերը՝ ոչ ընդառաջ են գնում, ոչ էլ փողով հարց են լուծում:

**ՎԱՐՈՐԴ** - Ամեն տեղ արագաչափեր ու փողաչափեր են տեղադրված... մինչև հարյուր հազար դրամ կաշառք վերցնելը դատվում է ամենախիստ ծնով:

**ՎԱՐԴԱՆ** - Ուրեմն դրանից բարձրի դեպքում տեղում սպանում են:

**ՎԱՐՈՐԴ** - Դրանից բարձրը կաշառք չի համարվում, այլ բիզնես:

**ՎԱՐԴԱՆ** - Այ մարդ, ինչ ես 100 դրամի համար հեքիաթներ պատմում... թո՞ղ գնամ:

**ՎԱՐՈՐԴ** - Չեմ կարա, ախատեր... 100 դրամս տուր՝ գնա:

**ՎԱՐԴԱՆ** - (ուղևորներին): Ժողովնիրդ, տաս դոլարը 100 դրամով ծախում եմ: Մեկին հիսուն շահում եք... ինչ եք համրացել:

Նայում է հինգ մանեկեն-ուղևորներին... ոչ մի արձագանք:

**ՎԱՐԴԱՆ** - Ես ո՞ւր եմ ընկել... իմ շայաստանն էսպիսին չեր:

**ՎԱՐՈՐԴ** - Ուրիշ երկրների օրենքին հարմարվում եք, չէ, իիմա էլ մեր երկրի օրենքը հարգեք:

**ՎԱՐԴԱՆ** - Ախր, էստեղ օրենքի հարց չկա... Բա մարդկությունը:

**ՎԱՐՈՐԴ** - Մարդկությունը մնաց անցյալում... խանգարում ես աշխատանքիս:

**ՎԱՐԴԱՆ** - Դե, քշի գնա...

**ՎԱՐՈՐԴ** - 100 դրամս տուր՝ գնամ:

**ՎԱՐԴԱՆ** - Էս ինչ փորձանք էր...  
առ էս դոլարը՝ թող իշնեմ...

**ՎԱՐՈՐԴ** - (սեղմելով մի կոժակ):  
Վերջ, ոստիկանություն եմ կան-  
չում:

Ավտորուսի կոռքին հայտնվում է  
ոստիկանը:

## Պատկեր 2

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Կապիտան Մար-  
կոսյան: Ներկայացրեք ձեր փաս-  
տաթղթերը:

**ՎԱՐԴԱՆ** - Մոտս չեն: Հյուրանոցում  
են մնացել:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Ստիպված եմ ձեզ  
ձերբակալել:

**ՎԱՐԴԱՆ** - Ինչի՞ համար:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Հասարակական  
կարգը խախտելու և շարքային  
աշխատողին արտարժույթով կա-  
շառք առաջարկելու համար:

**ՎԱՐԴԱՆ** - Խելքներդ լրիվ թոցրել  
եք... ինձ եք գժի տեղ դնում, թե  
դուք եք գժվել: Հո ապուշ չեք:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Մեղադրվում եք նաև  
հասարակական վայրում մարդ-  
կանց վիրավորելու համար:  
Հետևեք ինձ:

**ՎԱՐԴԱՆ** - Ոչ մի տեղ էլ չեմ գա: Ե-  
թե ուզում եք՝ գնանք հյուրանոց...  
և անձս հաստատող փաստա-  
թուղթ կտամ, և գումարը:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Իսկ հիմա մեղադր-  
վում եք նաև օրենքի ներկայա-  
ցուցին կաշառք առաջարկելու և

հանցավոր գործակցության մեջ  
ներքաշելու դիտավորության հա-  
մար: Դուք ձերբակալված եք:

**ՎԱՐԴԱՆ** - Էս ո՞ւր եմ ընկել... Ես իմ  
հին Երևանն եմ ուզում...

Դիմադրող Վարդանի ձեռքերին  
ձեռնաշղթա է հազցնում: Ավո-  
րուսը հեռանում է:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - (փոխված ձայնով):

Ասում ես՝ հյուրանոց գնանք,  
հա՞... որ անձնագիրդ ու գումար  
տաս, չէ:

**ՎԱՐԴԱՆ** - Բա նոր էդ կաշառք չէ՞ր:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Օրենքի պաշտ-  
պանն իրավունք ունի ըստ իրա-  
վիճակի շտկումներ անել:

**ՎԱՐԴԱՆ** - Այսինքն...

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Երկու տարբերակ  
ունես՝ կամ հիմա քեզ կազատեմ  
գրավի դիմաց, կամ արձանագ-  
րություն կկազմեմ, և դատարան-  
ների դոները կընկնես:

**ՎԱՐԴԱՆ** - Բսան օրով հայրենիք  
չեմ եկել, որ ձեր ձեռքն ընկնեմ...  
ասա՝ ինչքան պիտի տամ:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Հիմա ձեռնաշղթադ  
կիանեմ... Վայ, ժամացուցդ էլ  
հետը հանվեց... լավն է: Արի  
սրանով գործդ փակենք:

**ՎԱՐԴԱՆ** - Ձեռ ես առնիմ... 1000  
դոլարանոց ժամացուցը 100  
դրամի համար ջուրը գցնմ:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Դու գիտես... կամ  
1000 դոլարդ հիմա ջուրը գցիր ու

գնա գործիդ, կամ էլ արձանագրություն կկազմեմ ու 10000-ով էլ ցեխաջրից դուրս չես գա... (Ղաղարից հետո:) Ճիշտ ընտրություն կատարեցիր: Ազատ ես:

**ՎԱՐԴԱՆ** - Երան եմ տեսնում, թե՞ ուրիշ երկրում եմ հայտնվել:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Դժվար է տեսնել օրենքի երկիր Հայաստանս:

**ՎԱՐԴԱՆԸ** - Ինչ օրենք, օրը ցերեկով գողություն ես անում, անունը օրենք ես դնում:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Ավելի մի բարդացրու կյանք... գնա, նոր օրենքներին հետևիր, կտեսնես, որ արած գողություն չէ, այլ դաստիարակչական աշխատանք: Պարզ բան է, միշտ էլ ցավուտ ենք ընդունում այն օրենքները, որոնք մեր շահերից չեն բխում:

**ՎԱՐԴԱՆ** - Քեզնից բացի էլ ովք շահ ունի էս օրենքով:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - (հեռանալով): Չգիտեն, եղբայր, ուրիշների շահածների մասին չգիտես... մեր նոր կյանքի մասին ոչինչ չգիտես...

### Պատկեր 3

Ապշահար Վարդանը փլվում է «Երևան» մակագրությամբ նատարանին:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Ախաբեր... այ ախաբեր... վեր կաց էդ նստարանից:

**ՎԱՐԴԱՆ** - Ինչի...

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Նստելու ամեն րոպեն

տաս դրամ է... դու չես վճարել: Քանի չեն տուգանել, արի կողքիս նստի:

**ՎԱՐԴԱՆ** - Որտե՞ղ է գրված, որ պիտի վճարեմ:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Հիմա չեն գրում: Ամեն կիրակի, երեկոյան ժամը 21-ին հեռուստացույցով հայտնում են շաբաթվա նոր կանոնների մասին: Իսկ Մայր օրենքն ընդունվում է տասնութ ամսվա համար:

**ՎԱՐԴԱՆ** - (նստելով նրա կողքին): Մեռնեմ, թե բան եմ հասկանում:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Լուսնից նս ընկել...

**ՎԱՐԴԱՆ** - Չէ, ինքնաթիռից եմ իշել, տասնինգ տարի Հայաստանում չի եղել: Կարոտից մեռնում էի: Եկա... և ինչ... ուշքի չեմ գալիս:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Հա, պարզ է... ինչքան բան ես բաց թողել:

**ՎԱՐԴԱՆ** - Էնպիսի զգացողություն է, ասես վանդակում հայտնված գազան լինեմ:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Ծատ մի տանջվի, ուղղակի բախտդ չի բերել, անհաջող օրենքի ժամանակ ես հայտնվել: Չնայած, եթե մյուս կորմից նայենք, շատ էլ հետաքրքիր շրջան է: Յոթ օրից ավարտվում է սույն օրենքի ժամկետը, և հաջորդ կիրակի կիայտնեն շրջանառության մեջ մտնելիք նոր Մայր օրենքը: Էնպես որ, եթե երկար ես մնալու՝ դա էլ կտեսնես:

**ՎԱՐԴԱՆ** - Էհ, ինչ երաշխիք ունեք,  
որ սրանից վատը չի լինի:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Գուցե, բայց ոչ  
ժողովրդի համար:

**ՎԱՐԴԱՆ** - Այսինքն...

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Հիմա հնց քեզ կարծ  
պատմեմ... Ուրեմն՝ պետության  
գանձարանը վաղուց դատարկ է:  
Վերջին տաս տարիներին նոր օ-  
րենքներով փորձում են լցնել:  
Հազար ձևով փորձեցին, բայց ոչ  
մի կերպ չէր ստացվում:

**ՎԱՐԴԱՆ** - Չեմ հավատում, որ մեծ  
ցանկության դեպքում չէր ստաց-  
վի:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Գիտնականները  
պարզել են, որ տաս տարուց ա-  
վել անընդմեջ իշխանական  
բարձունքներում լինելուց հետ ու-  
ղեղներում թթվածինը պակասում  
է... հավանաբար վերևներում սա-  
վառնելուց: Գետնից կտրվելով՝  
սկսում են հաղորդակցվել մեռած  
տիրակալների հոգիների հետ:  
Մրցակցում են նրանց հետ՝ մեզ  
անհեթեթություն թվացող, բայց  
իրենց համար լիովին բացատրե-  
լի քաջագործություններով:

**ՎԱՐԴԱՆ** - Բա էդ դեպքում ինչո՞ւ են  
ժողովրդին հետևում:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Ես վերջին Մայր օ-  
րենքով՝ գանձարանը փորձում  
էին լցնել ներքին օղակներում կի-  
րարկվող օրենքներով: Օրինակ,  
թողնում են՝ սխալ կատարի քա-  
ղաքացին, բռնում են և գրավի

դիմաց ազատում են: Բայց սա էլ  
չստացվեց, որովհետև ժողովուր-  
դը հստակ պահպանեց բոլոր կա-  
նոնները:

**ՎԱՐԴԱՆ** - Եղբան օրինապաշտ են  
դարձել:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Զէ, հնարամիտ, ինչ-  
պես միշտ: Նվազագույնի ենք  
հասցեկ տների և աշխատավայ-  
րերի պատերից դուրս լինելը:  
Տուն-խանութ-աշխատանք...

**ՎԱՐԴԱՆ** - Այդ պատճառով էլ գրե-  
թե մարդ չի երևում, հա՞:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Հայ: Հասկացանք, որ  
իրար պիտի օգնենք ամեն հար-  
ցում: Միասնական ենք, ոնց որ,  
ասենք, մարդիկ՝ դինոզավրերի  
դեմ:

**ՎԱՐԴԱՆ** - (աչքերը երկինք հառե-  
լով): Տեր Աստված, էս ինչն են  
կատարվում... Ես ինչ տարօրինակ  
ագռավներ են:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Միամիտ... դրուններ  
են, ամենուր հետևում են բոլորին:  
Դրա համար տան պատերից  
դուրս ոչ ոք ոչ մի կանոն չի խախ-  
տում: Իհարկե, չորս-հինգ ամիս  
քամվեցինք, մինչև հասկացանք  
շրջանցելու նրբերանգները: Բայց  
դրանից հետո բոլոր սողանցք-  
ներն անգիր գիտենք:

**ՎԱՐԴԱՆ** - Ովքե՞ր են նոր օրենքնե-  
րը կազմում:

**ՔԱՂԱՔԱՑԻ** - Անհայտ է: Ոչ ոք չգի-  
տի: Մեկ ասում են, թե արտա-  
սահմանցիներ են, որ էստեղ ոչ

մի ծանոթ-բարեկամ չունեն, ո-մանք ասում են, թե զոմբիացված իրավաբաններ են, իսկ ամենա-ֆանտազյորներն էլ ասում են՝ համակարգիչներ են կազմում նոր օրենքները... իբր մարդկային գործոնը նվազագույնի է հաս-ված:

**Քաղաքացին նայում է ժամացույցին, ոտքի է կանգնում**

**ՎԱՐԴԱՆ** - Ո՞ւր ես գնում... մի երկու բան էլ բացատրիր:

**ՔԱՂԱՔԱՅԻ** - Երկինք նայիր՝ դրու-ները մոտենում են էս տարածքին, իհմա կնկարեն: Իրարից հեռանանք, քանի ժամաշափերը չեն ֆիքսել:

**ՎԱՐԴԱՆ** - Լստած զրուցում ենք, ինչը պիտի չափեն:

**ՔԱՂԱՔԱՅԻ** - Քսանիինգ դոպեից ավել զրուցները համարվում են հակաօրինական նկրտումներ: Համբերություն քեզ, ախապերս: Գնալու տեղ ունես:

**ՎԱՐԴԱՆ** - Հյուրանոցում եմ տեղա-վորվել:

**ՔԱՂԱՔԱՅԻ** - Տան պատերից ներս ազատ ես ամեն ինչում: Գնա բա-րեկամներիդ մոտ:

**ՎԱՐԴԱՆ** - Ծնորհակալ եմ, եղբայր: (Տարակուսած նայում է նրա ետևից:)

## Պատկեր 4

Եկրանին օրենքների ընդունման կենտրոնն է՝ ընդարձակ սենյակ: Աշխատակիցները համակար-գիչներն են՝ ալլագմային մարդ-կային գլուխներով: Բանավիճում են նոր ընդունվող մայր օրենքի վերաբերյալ... ձայների քառու:

- Զանի որ մինչ այս եղած հակա-կոռուպցիոն օրենքները ոչ մի էա-կան փոփոխության չեն հանգեցրել, ներդնում ենք վերջին՝ ամենաարմա-տական տարրերակը:

- Հասարակության մեջ վերև-ներքև չկա, կա մեկ ամբողջական շերտ՝ բոլորի համար մեկ միասնա-կան աշխատավարձ և կենցաղային պայմաններ:

- Բա արդեն ունեցածն ինչ ենք անելու:

- Սառեցնելու ենք:

- Միայն բանկային հաշիվերն են հնարավոր սառեցնել:

- Ավելի լավ կլինի՝ խառնել-կիսել եղած գումարները, և յուրաքանչյուրի հաշվին կլինի միանման գումարը:

- Տասնինգ ամիս բոլորի համար նոյն սնունդը, նոյն հագուստը, նոյն վարձատրումը... անդեմ հասարա-կություն...

- Իրար միս կուտեն:

- Թող ուտեն... դա էլ մաքրման ծներից մեկն է:

- Ովքեր այդ հավասար պայման-ներում դրսեռեն իրենց որպես լի-

դերներ, նրանց էլ տասնութ ամիս հետո կհանձնվի երկրի ղեկը:

- Ուրեմն՝ պետք է այնպիսի պայմաններ նախատեսվեն հետագա իշխանությունների համար, որ ոչ ոք երբևէ ոչ մի արտօնություն և առավելութուն չունենա:

**Զայները ֆռն են դառնում:**

### Պատկեր 5

**Բեմի վերին հատվածում, դեմ-դիմաց, նստած են երկու ղեկավար «զոլոր» մարդանման համակարգիներ՝ պլազմային, սափրած գլուխներով, անորոշ սեռի՝ ԱԴՕ-ն և ԷՎՕ-ն:**

**ԷՎՕ** - Միշտ էլ մտածել եմ, որ միևնույն է՝ մարդիկ ավելի խելացի են:

**ԱԴՕ** - Եթե մեզնից խելացի լինեին՝ հիմա մենք չէինք իրենց ղեկավարի:

**ԷՎՕ** - Եթե իրենք են մեզ ստեղծել, ուրեմն նրանց չենք կարող գերազանցել:

**ԱԴՕ** - Միացրու պատմության վահանակող և նայիր՝ մարդկությունը միշտ էլ գերի է դարձել իր ստեղծածներին: Նրանք զգացմունքային են և բազմաթիվ կաղապարներ ունեն՝ ազգային, սեռային, ռասայական, կրոնական, գաղափարական... դրանք են խանգարում նրանց կատարյալ լինելուն:

**ԷՎՕ** - Իսկ չե՞ս մտածում, որ հենց դրանով են մեզնիցառավել:

**ԱԴՕ** - Օդի մեջ խոսելու փոխարեն կարող ենք փորձարկում անել՝ ընտրենք ուզած մարդուն և կհամոզվենք, որ կարող ենք մեր դուդուկի տակ պարեցնել:

**ԷՎՕ** - Համաձայն եմ: Մինչև փորձագետները մեզ տան նոր օրենքը վերջնական տեսքով հաստատելու համար՝ լուրջ անելիք չունենք:

**ԱԴՕ** - Ճիշտ ես: Հիմա նայենք չափիչների վերջին տեսագրումները: Ըիր, մի մոլորվածի գտա... հիմա նրա անձնական գործը կստուգենք:

**ՈՒՐՈՌԻ ՃԱՅՆ** (նաև գրվում է Էկրանին) - Վարդան Ճշմարիտյան, Հայաստանից փախել է տասնհինգ տարի առաջ: Որպես վկադատարան է կանչվել, բայց բարձրաձայնելով ճշմարտությունը՝ հենց դատարանի դահլիճում վերածվել է կասկածյալի: Հասկացել է սպասվող վտանգը և գիշերով փախել է Վրաստան, այնտեղից՝ Եվրոպա, հետո՝ Էմիրություններ: Տաս տարի առաջ հաստատվել է Ավստրալիայում: Այստեղ ողջ գոյցը առգրավվել է դատարանի կողմից: Ազգականներին ու մտերիմներին խստագույնս հրահանգվել է՝ հայտնել նրա մասին ցանկացած տեղեկություն: Սրանք էլ իրենց մտե-

րիմին չվնասելու և իրենց գլուխներն ազատելու համար դադարեցրել են ցանկացած առնչություն նրա հետ:

**ԵՎՕ** - Այսինքն՝ մարդուն իրենց կյանքից հանել են, համար դադարեցրել են ցանկացած առնչություն նրա հետ:

**ԱԴՕ** - (պլազմային դիսպլեյի գծերի շարժը արտահայտում է փնտրութուք): Գտայ, մեկը մինչև հիմա նրա մասին է մտածում: Նշանածը՝ Համեստ Սիրունյանը, բաժանումը շատ հիվանդագին է տարել և հոգեկան անհավասարակշության պահին հիմնել է «Կիսակույսերի օրդեն» հասարակական կազմակերպությունը: Որոշ ժամանակ անց զղացել է, բայց դրանից ազատվել չի ուզում, որովհետև ժամանակի ընթացքում դարձել է մեծ եկամտաբերությամբ աշխատող հայտնի կազմակերպություն: Հասարակության մեջ պատվաքեր է համարվում այդ օրդենի հետևորդին կնության առնելը, քանի որ նրանք սկսվեցին զուգորդվել կանացի մաքրության հետ:

**ԵՎՕ** - Արի խոստովանենք, որ դա մեր անկատարության հետևանքն էր: Երրորդ Մայր օրենքի կիսատպության լինելը հանգեցրեց նրան,

որ երեք ամսում Հայաստանը լքեցին զորակոչից հեշտ ու էժան ազատում ստացած 18-40 տարեկան տղամարդիկ: Նրանց թիվն էլ, հակառակի պես, այդ տարի շատ մեծ էր: Իսկ նշանված ու նորապսակ կանայք լքվեցին իբր ժամանակավոր, բայց իրականում գրեթե ընդմիշտ, և գոյացավ կիսակույսերի՝ ոչ այն է՝ կին, ոչ այն է՝ օրիորդ միայնակների մեծ բանակ: Ինչ անեին լքյալները... միավորվեցին իրենց անհրապույր կյանքում գոնե մի փոքր հետաքրքրություն զգալու համար:

**ԱԴՕ** - Բայց հինգերորդ օրենքով շատերը վերադարձան, չէ:

**ԵՎՕ** - Հա, բայց իրենց այլերկոյա ծիտիկների հետ:

**ԱԴՕ** - Հետևաապես, ապացուցվում է, որ մարդկության գովերգած սերն ու մնացած վեհ զգացմունքները հիմնականում սին են: Հիմա գտնենք Համեստին և տեսնենք՝ սերը դեռ արթուն է նրա հոգում:

**ԵՎՕ** - Հետաքրքիր է, նրան տեսնելու համար է էսքան տարի անց Վարդանը հայրենիք վերադարձել:

**ԱԴՕ** - Հիմա կստուգեմ.. Հա, էի, հենց այդ կնոջ կարոտից է հիմա մայթեզրին հայտնվել:

**ԵՎՕ** - Տասնինգ տարի անց, մոլորակի կեսն անցնելով, եկել է իր սիրո ետևից... Ինչպես կարող ենք խանգարել նրանց միանալուն:

**ԱԴՕ** - Դե փորձենք, հետաքրիր է, չէ, մեզնից ով կհաղթի: Տես...

Վարդանը ապշահար գամվել է մայբեզրին՝ վախը սրտում և ընդամենը տաս դոլար գրպանում:

**ԷՎՕ** - Ոտքի կանգնեց... ո՞ւր է գնում:

**ԱԴՕ** - Երևի հյուրանոց, որպեսզի դրամապանակն ու անձնագիրը վերցնի:

**ԷՎՕ** - Լավ, սկսենք մեր կամքը թելադրել... ինչ առաջարկ ունես:

**ԱԴՕ** - Համեստին հանդիպացնենք... թող սերը կրկին բոցավառվի, մենք էլ սառը ջուր կլցնենք:

**ԷՎՕ** - Ըիր... սա էլ Համեստը... ընդամենը երկու խաչմերուկ՝ աջ: Խանութից դուրս է եկել, տուն է գնում:

**ԱԴՕ** - Հրաշալի է, հիմա քո ծանապարհը մի փոքր կշեղենք, սիրելի տիկին....

### Պատկեր 6

Եկրանիմ՝ փողոցներ: Վարդանը մննում է խանութ: Երկու խաչմերուկ հետո գտնվող խանութից բավական հեռացած Համեստը կանգ է առնում:

**ՀԱՄԵՍՏ** - Մոռացա աղ գնել: (Շրջվում է, երկու քայլ անելով՝ կանգնում է:) Չեմ ուզում նորից տեսնել էդ գանձապահ Մարգոյի երեսը: Ուրիշ խանութ կգնամ:

Խաչմերուկի խանութի դրան մոտ ճակատ ճակատի են բախվում մտքերի մեջ խորասովզած Վարդանն ու Համեստը... կարկամած իրար են նայում:

**ՎԱՐԴԱՆ** - Դո՞...

**ՀԱՄԵՍՏ** - Դո՞...

Համեստի ձեռքից ընկնում է մթերքով տոպրակը: Անցնող տղամարդն օդի մեջ բռնում է տոպրակը, տալիս է Համեստին: Վարդանի աչքն ընկնում է խանութի մուտքին փակցված ցուցանակին «Գետնին ընկած ամեն իրի համար տուգանք՝ 1000 դրամ»:

**ՎԱՐԴԱՆ** - Ինչքան էի կարոտել քեզ:

**ՀԱՄԵՍՏ** - Ինչքան եմ սպասել քեզ:

**ՎԱՐԴԱՆ** - Իրոք սպասում էիր... չե՞ս ամուսնացել:

**ՀԱՄԵՍՏ** - Ո՞ւմ հետ... տղամարդ ամնացել որ: Իսկ դո՞:

**ՎԱՐԴԱՆ** - Օրինական՝ չէ... Հիմա ես էլ եմ մենակ:

**ՀԱՄԵՍՏ** - Որտե՞ղ ես իջևանել:

**ՎԱՐԴԱՆ** - Հյուրանոցում:

**ՀԱՄԵՍՏ** - Ինչ ծրագրեր ունես:

**ՎԱՐԴԱՆ** - Քեզ տեսնելու համար եմ եկել... քո տղամարդության տակ եմ: Գնանք հյուրանոց: Ինձ արդեն զգուշացրել են, որ փողոցներում քիչ մնամ:

**ՀԱՄԵՍ** - (շուրջն ու երկինք նայե-  
լով): Չէ, արի իմ տուն գնանք...

**ՎԱՐԴԱՆ** - Բայց ուզում եմ, մենակ  
լինենք:

**ՀԱՄԵՍ** - Ես միշտ եմ մենակ...  
ետևից կօաս քսան մետր հեռա-  
վորությամբ:

**ՎԱՐԴԱՆ** - Հասկացա: Բա մի բան  
չգնեմ:

**ՀԱՄԵՍ** - Տանն ամեն ինչ կա... ա-  
րագացրու, քանի չենք նկարվել:

**ՎԱՐԴԱՆ** - Այ քեզ անհեթեթութ-  
յուն...

**ՀԱՄԵՍ** - Տանս տեղը հիշո՞ւմ ես:

**ՎԱՐԴԱՆ** - Ինչպես կարող եմ մո-  
ռանալ: Անընդհատ աչքիս առաջ  
էիր դու և քեզ հետ կապված ամեն  
բան:

**ՀԱՄԵՍ** - Լավ, գնացինք... Տանը  
հանգիստ կիսունք:

Հեռանում են:

## Պատկեր 7

Այս պատկերից սկսած՝ իրար  
հերթագայում են միաժամանակ-  
յա գործողություններ քեմի վերին  
և ներքին հատվածներում

Վերին հատված:

**ԱԴՕ** - Ըի՞լ, գործի կեսն արեցինք...  
իրար հանդիպացրինք:

**ԷՎՈ** - Տեսա՞ր, որ դեռ սիրում են ի-  
րար... գուցե չխանգարենք:

**ԱԴՕ** - Բայց դու շատ զգացմունքա-

յին ես ստացվել: Ասես մորից  
ծնված լինես:

**ԷՎՈ** - Երևի ինձ կին է ստեղծել...

Մի պահ՝ էներգիայի փայլատա-  
կում... համակարգիչները ցնցվում  
են, ակնդետ իրար են նայում.

**ԱԴՕ** - (քթի տակ): Իսկ գուցե դո՞ւ  
կին ես:

**ԷՎՈ** - (քթի տակ): Իսկ գուցե ես կին  
եմ:

Փայլատակումն ավարտվում է:

**ԱԴՕ** - Ես ի՞նչ կատարվեց:

**ԷՎՈ** - Առ-կայ-ծում-ներ...

**ԱԴՕ** - Բայց մենք ապահովագրված  
ենք բոլոր տեսակի տատանում-  
ներից:

**ԷՎՈ** - Իսկ գուցե ոչ բոլոր...

**ԱԴՕ** - Կարծես ներսում ինչ-որ մե-  
խանիզմ մի պահ կանգ առավ...  
դու էլ զգացի՞ր:

**ԷՎՈ** - Ես թրթիռ զգացի...

Տարակուսած իրար են նայում:

Ներքին հատված

Համեստն իր բնակարանում է:  
Ներս է մտնում Վարդանը: Որոշ  
ժամանակ իրար նայելուց հետո  
զրկախառնվում են:

Վերին հատված:

**ԱԴՕ** - Տես, տես, գրկախառնվե-  
ցին....

**ԷՎՕ** - Համաձայն եմ պարտված համարվել, բայց արի չխանգարենք նրանց սիրուն:

**ԱԴՈ** - Ես համաձայն չեմ: Պետք է ապացուցեմ, որ հարց լուծողը մենք ենք:

**ԷՎՕ** - Չուտ տղամարդկային ցանկություն:

**ԱԴՈ** - Մի խանգարի նրանց խանգարելուն... դու ի՞նչ առաջարկ ունես:

**ԷՎՕ** - Լավ, շարունակենք: Կարծում եմ՝ նրանց զգացմունքները փորձության ենթարկող իրավիճակ պիտի ստեղծենք:

#### Ներքին հատված:

**ՀԱՄԵՍԾ** - Հիմա երջանկությունից սիրտս կպայթի... (Նվազում է Վարդանի գրկում:)

Իրեն կորցրած Վարդանը նատեցնելով կնոջը բազկաթռողին՝ ջուր է ցողում, ձեռքերն է շփում, այտերն է շյում:

**ՎԱՐԴԱՆ** - Ուշքի արի, խնդրում եմ... Աշխարհին եմ անցել քեզ համար... ուշքի արի... Ես ի՞նչ ձախորդություններ են առավոտից, կարծես ինչ-որ մեկը չար կատակ է խաղում գլխիս: Ուշքի արի, աղաչում եմ... վիրահատություն տարած սիրտս չի դիմանա...

**ՀԱՄԵՍԾ** - (բացելով աչքերը): Դո՞... Երազ եմ տեսնում: Աչքերս փակեմ, թող շարունակվի երազս:

**ՎԱՐԴԱՆ** - Զէ, չէ, մի փակի աչքերդ... երազ չի, եկել եմ քեզ մոտ, սիրելիս... (Ձեռքը դնում է սրտին:) Միայն թե սիրտս չդաշտանի... (Կորցնում է գիտակցությունը:)

#### Վերին հատված:

**ԷՎՕ** - Դու չափն անցար: Մեկի վատանալը լիովին բավական էր:

**ԱԴՈ** - Բայց ես չարեցի... Կարծեցի՝ դու խորացրիր:

**ԷՎՕ** - Հիմա ի՞նչ անենք... երկուսն էլ անգիտակից ընկած են... Մի բան մտածի, արագ:

**ԱԴՈ** - Ո՞ւմ ուշքի բերենք:

**ԷՎՕ** - Իհարկե, կնոջը:

**ԱԴՈ** - Բայց մեզ ծրագրավորել են, որ տղամարդիկ են առաջնային:

**ԷՎՕ** - Բայց Համեստը գիտի էս երկրի դրվագքը և ավելի շուտ կկողմնորոշվի:

**ԱԴՈ** - Ճիշտ ես ասում: Բայց այնպիսի զգացողություն է, ասես մեկն էլ մեզ հետ է խաղ անում:

#### Բեմի ձախս անկյուն:

Լույսն ուղղվում է մեծ մոնիթորի առջև նատած՝ գզզված մազերով, խալաքով տղամարդու վրա, ով երեխայի նման համակարգչային խաղ է խաղում:

**ՆԱԶԱՐ ՔԱԶՈՅԱՆ** - Ես ինչո՞վ են զբաղված ԱԴՈ-ն ու ԷՎՕ-ն: Ձեզ ստեղծել էի աբսուրդ օրենքներ

մոգոնելո՞ւ, թե՞ մարդկանցով զվարժանալու համար: Տեսնենք՝ ո՞վ է ծեզ այդքան հետաքրքրել... Ինչ ծանոթ դեմք է: Ախ հա, հիշեցի... չէ՞ որ հորս դեմ հենց սրա տված ցուցմոնքի արյունքում կործանվեց օղորմածիկը: Փախել-կորել էիր, հա: Տաս տարի համարյա երկրի տերն էի, բայց քեզ պատմել չկարողացա: Լավ է, որ ինքդ եկար ու ձեռքս ընկար... Դե, սպասիր:

#### **Ներքեփի հատված:**

**Համեստն ուշքի է գալիս, տեսնում է հատակին անգիտակից ընկած Վարդանին:**

**ՀԱՄԵՍՏ -** Վարդան, նորից մի լքիր ինձ... ուշքի արի, խնդրում եմ: Տեր Աստված, օգնիր... ինչ անեմ: Զարկերակը հազիվ է զգացվում: Շտապ օգնություն կանչեմ: (Զանգում է:) 5-րդ փողոց, 20 շենք, 11 բնակարան... Ամուսինս գիտակցությունը կորցրել է, շուտ հասեք, խնդրում եմ, համարյա չի շնչում... (Զուր է ցողում, ձեռքերն է շփում, այտերն է շղում: Հատակին նստած, Վարդանի գլուխը իր ծնկներին դրած՝ վաշ-վիշ է անում, որն աստիճանաբար վերածվում է նախատինքի, շղում-քը՝ հարվածների, այնուհետև՝ կրկին վշտի ու խնդրանքի:) Ինչո՞ւ կրկին հայտնվեցիր իմ անբախտ

կյանքում... ապրում էի, էլի, առանց քեզ, ինձ նման կես կին, կես աղջիկների հետ մեր դարդը կիսելով: Հայտնվեցիր, որ ցոյց տաս, թե ինչքան դժգույն է կյանքս... առանց քեզ էլ գիտեի: Առաջին անգամ փախար, հիմա էլ ուզում ես մեռնել հա... ատում եմ քեզ, ատում եմ: Ախ, հիմա եմ հասկանում՝ ինչու տասնիինց տարի անց վերադարձար... ընդամենն ուզում էիր Հայաստանում թաղվել, հա: Մեծ պատիվ ես անում, հա: Ապրում եք դրսերում, վայելում եք կյանքի բարիքները... վերջներիդ հասնելիս էլ հիշում եք, որ լքված հայրենիք ու կանայք ունեք, ու վերադառնում եք, հա: Ուշքի արի, վերադարձրու պարտքի՝ լքված օրերի, չստացած սիրո պահերի պարտք: Ուշքի արի, կսպանեմ քեզ, ուշքի արի... Սիրելիս... ախր, քեզ էնքան եմ սպասել: Ոչ մի րոպե չեմ կասկածել, որ կվերադառնաս... Էս շտապ օգնությունն ինչ եղավ:

#### **Վերին հատված:**

**ԱԴՅ -** Հիմա բժիշկները կհասնեն...

**ԵՎՅ -** Ինչ դանդաղ են շարժվում: Ինչո՞ւ կանգ առավ մեքենան:

**ԱԴՅ -** Շտապ օգնության մեքենան խափանվեց:

**ԵՎՅ -** Էս ինչ արեցիր... մեջդ հեչ մարդկայնություն չի մնացել:

**ԱԴՅ -** Բայց ես երբ եմ մարդ եղել... Ինչ անհեթեթ բաներ ես ասում:

**ԷՎՕ** - Հայ էլի.. չհասկացա, ինչ ասացի: Ակամա դուրս թռավ:

**ԱԴՕ** - Կարծում եմ՝ քեզ պետք է տեխսզննման ուղարկել:

**ԷՎՕ** - Քննի պետք վերագինման ուղարկել, ժանգոտած մետաղի կոնյու ես... չար ես դու, չար...

**ԱԴՕ** - Նորից եմ ասում՝ ես ոչինչ չեմ անում:

#### Բեմի ձախ աճեցուն:

**ՆԱՇԱՐ ՁԱԶՈՅԱՆ** - Իհարկե, չգիտեք, որ դեռևս ես եմ դրության տերը, քանի որ իմ ձեռքքում է մարդկանց ու համակարգիչներին դեկավարման կենտրոնի Ու-0-1 միակ ամբողջական կրիչը: Բոնվելու միակ վտանգը կարող եք լինել դուք՝ իմ բալիկներ, իմ հանձարեղ ստեղծագործություններ, իմ ԱԴՕ և ԷՎՕ: Բայց իիմա ինձ խանգարում եք: Ուղղորդել նույնպես չեմ կարող, քանի որ ձեզ այնպես եմ ստեղծել, որ չենթարկվեք ուրիշի կամքին: Ինչ իմանայի, որ այդ ուրիշը ես եմ լինելու: Կարող եմ միայն շեղել ձեր ուշադրությունը: Ինչ անեմ, ո՞նց շեղեմ... Հա, իմացա, սիրո վիրուսը մեջները օցեմ, ու թող ցրված սիրահարներ դառնան:

#### Վերին հատված:

**ԷՎՕ** - Եդ ինչ տարօրինակ հայացքով ես նայում ինձ:

**ԱԴՕ** - Գիտե՞ս, նոր նկատեցի, որ դու լիովին ինձ նման չես... մի տեսակ նուրբ ես, փափուկ:

**ԷՎՕ** - Որովհետև ավելի կատարելագործված համաձուլվածքից եմ:

**ԱԴՕ** - Չէ, ներսիդ փայլն է մի տեսակ ուրիշ... անհանգստացնող:

**ԷՎՕ** - Ճիշտ են ասում, էլի, որ տղամարդկանց ուղեղը մի կողմի վրա շեղված է... Մի շեղվիր: Պետք է մի կերպ բժիշկ հասցնել էդ խեղմերին:

**ԱԴՕ** - Մոտերքում ոստիկան եմ տեսնում... հենց նա էլ օգնության կիասնի:

#### Ներքին հատված:

Գալիս է կապիտան Մարկոսյանը քժշկուի հետ:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Կապիտան Մարկոսյան: Իմ տեղամասում շտապ օգնության մեքենան շարքից դուրս եկավ, և հրահանգի համածայն՝ արագ տեղ եմ հասցրել շտապ օգնության բժշկին: Որտեղ է հիվանդը:

**ՀԱՄԵՍ** - Ահա...

Բժշկուին զբաղվում է անզիտակից Վարդանով:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Ձեր դեմքը ծանոթ է, որտեղից գիտեմ...

**ՀԱՄԵՍ** - Երևի հեռուստացույցից:

**ՄԱՐԿՈՍՅԱՆ** - Դերասանուիի՞ն եք:

**ՀԱՄԵՍ** - Ոչ, հասարակական-քաղաքական գործիչ:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Հաստատ պատգամավոր չեք, բոլորին դեմքով գիտեմ: Ինչո՞ւ եք զբաղվում:

**ՀԱՄԵՍ** - Չեմ հասկանում, հարցաքննում եք ինձ:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Դե, զրուցում ենք, էլի, մինչև բժշկուիին գործն ավարտի:

**ՀԱՄԵՍ** - Հասարակական կազմակերպության ղեկավար եմ:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Հա, էլի... Կիսակոյսերի Համեստն եք, չէ՞: Հեռուն փնտրում էի, ինքը հայտնվեց քթիս տակ:

**ՀԱՄԵՍ** - Ինչե՞ր եք խոսում:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Դուք հետախուզման մեջ եք:

**ՀԱՄԵՍ** - Ծնված օրից ոչ երկիր եմ փոխել, ոչ էլ անգոյն տունս եմ փոխել: Ո՞վ էր ինձ փնտրում, որ չէր կարողանում գտնել: Ի դեպ, այդ երբվանից եմ հետախուզման մեջ:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Մեկ ժամ առաջ հրամանը ստացանք: Ձեզ պետք է ոստիկանություն տանեմ:

**ՀԱՄԵՍ** - Ինչի՞ համար:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Ոմն քաղաքացուց բողոք ենք ստացել, որ ձեր օրդենի կիսակոյսերից մեկը անբարոյական է:

**ՀԱՄԵՍ** - Ինչ հիմարություն: Անունն ասեք:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Կարծեմ<sup>9</sup> Մագդալենա:

**ՀԱՄԵՍ** - Զրպարտություն է: Նրան

կնության են առել երեք տարի առաջ, և նա հիանալի անձնավորություն է:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Ամուսինը հակառակն է պնդում:

**ՀԱՄԵՍ** - Թող կարգին ամուսին լիներ... ես իրեն օրինավոր կին եմ տվել: Եթե ինքն է նրան հասցրել վատ արարքների, ուրեմն պատասխատվության պետք է ենթարկվի ինքը, ոչ թե հուսահատության հասցված կինը:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Մանրամասները կպարզենք վարչությունում: Դուք պետք է...

**ԲԺՇԿՈՒԾ** - Հիվանդն ուշքի եկավ... շնորհակալ եղեք կապիտան Մարկոսյանին: Եթե ինձ շուտ տեղ չհասցներ, երևի փրկել չհաջողվեր:

**ՎԱՐԴԱՆ** - (ոստիկանին տեսնելով): Ինչ... քեզնից պրծում չկա՞:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Էլի դո՞ւ... Բայց իմացիր, որ ես եմ քեզ փրկություն հասցրել:

**ՎԱՐԴԱՆ** - Ուրեմն մի ժամացուցի դիմաց արդեն իմ սեփական ոստիկանն ես դառնում... լավ օրենք է:

**ՀԱՄԵՍ** - Մի րոպե... Զհասկացա, դուք իրար ձանաչնում եք:

**ՎԱՐԴԱՆ** - Առավոտյան ենք հանդիպել:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Հիմա ամեն ինչ կբացատրեմ:

**ՀԱՄԵՍ** - Ի՞նչ ժամացույցի մասին ես խոսում, Վարդան:

**ՎԱՐԴԱՆ** - (ոստիկանի տագնապած հայացքը բռնելով): Դե, ոնց ասեմ...

**ՀԱՄԵՍ** - Պարզ ու հստակ՝ սա քեզանից կաշառք է կորզել:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Չէ, չէ, ինչ կաշառք: Սխալ հասկացաք:

**ՀԱՄԵՍ** - Ծատ էլ ծիշտ հասկացա: Եվ դու ուզում էիր ինձ ոստիկանություն տանել, հա՞... Հիմա ցույց կտամ, թե բողոքը ոնց է լինում:

**ՎԱՐԴԱՆ** - Այնուամենայնիվ, ժամացույցս կաշառք էր, հա՞:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Ո՛չ, դա օրենքով ամրագրված բացատրական աշխատանք է:

**ՀԱՄԵՍ** - Դրանով կարող եք միամտացնել զբոսաշրջիկներին և սփյուռքահայերին: Մինչև կյանքիդրաջը բանտում կփոխանակեն:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Արի փոխահավետ համաձայնության գանք՝ ես քո դեմ ներկայացված բողոքը կոչնչացնեմ, դու էլ իմ արածի վրա աչք կփակես:

**ՀԱՄԵՍ** - Մտածել է պետք....

**ԲԺՇԿՈՒՀԻ** - Է-էյ, ընկերներ...

Նրա ներկայության մասին մոռացած Մարկոսյանն ու Համեսը վախեցած իրաք են նայում:

**ԲԺՇԿՈՒՀԻ** - Հասկանում եմ, որ անցանկալի վկա եմ...

**ՎԱՐԴԱՆ** - (սարսափած): Հիմա ծեր օրենքներով պիտի վերացնեք բժշկուիոն:

Կապիտան Մարկոսյանն ու Համեսը սարսափած գլոխներն են տարութերում:

**ԲԺՇԿՈՒՀԻ** - Հանգստացեք բոլորդ... ինձ վնասազերծելու հիանալի տարրերակ ունեմ:

**ԵՐԵՋ ՄԻԱԲԵՐԱՆ** - Ի՞նչ...

**ԲԺՇԿՈՒՀԻ** - Ուրեմն, երկու Մայր օրենք առաջ բազմակի օգտագործման դեղատոմսեր եմ հատկացրել որդուս ուսուցչուիոն՝ նրա մոր համար: Մի քանի օր անց նրա մայրը մահացավ առաջացած տարիքից, բայց ուսուցչուին բողոք ներկայացրեց իմ դեմ՝ անօրինական դեղատոմս տալու մեղադրանքով: Եվ արդեն երկրորդ օրենքն է՝ գտնելով մեղադրանքի թարմացման հիմքեր, ինձ հանգիստ չի տալիս: Իմ լուության դիմաց խնդրում եմ կարծեք այդ գործը և աղբարկող նետեք այդ հիմար մեղադրանքը:

**ՄԱՐԿՈՍԱՆ** - Ախր, առավոտյան զգում էի, որ էդ ժամացույցը չեմ վայելելու, բայց մտքովս չէր անցնի, որ էսքան թանկ կնստի վրաս:

**ՀԱՄԵՍ** - (բժշկուիոն հետ դավադիր հայացքներ փոխանակելով): Կարծում եմ՝ տիկնոց առաջարկը ողջախոհության սահմաններում է: Մի մոռացեք, որ երեքիս պա-

րագայում ձեր հոդվածն ամենածանր հետևանքները կարող է ունենալ:

**ՄԱՐԿՈՍԱՆ - (քթի տակ):** Թժնի...

Երնեկ էն ժամանակները:

**ՎԱՐԴԱՆ -** Ո՞ր ժամանակները... էլ

ի՞նչ եմ բաց թողել:

**ՄԱՐԿՈՍԱՆ -** Ես եմ բաց թողել,

Ես: Են, որ ժողովրդի իրավական գրագիտությունը զրո էր, այ, էդ արքայական ժամանակն եմ կորցրել:

**ՎԱՐԴԱՆ -** Փաստորեն, եթե առավոտ շուտ ինձ չբռնացնեիր, մի օրվա մեջ ահագին նորություններ կիմանայի ու էշ-էշ ժամացույցս չէի կորցնի:

**ՄԱՐԿՈՍԱՆ - (գրպանից հանելով ժամացույցը):** Զո ապրանքը քեզ եմ վերադարձնում, ահա... էս մի շառից գոնե կարծնեմ:

Վարդանը հարցական հայացքով Համեստին է նայում:

**ՀԱՄԵՍ -** Ժամացույցդ վերցրու: Չէ որ կարևոր շորթման փաստն է, որ մեր հարգարժան կապիտանը ժխտել չի կարող: Վարդանի բերանը փակելը հեշտ է, պարոն կապիտան, մեզ ի՞նչ կառաջարկեք:

**ԲԺՇԿՈՒՀԻ -** Այո, այո... Մեզ ինչ-պես եք լրեցնելու:

**ՄԱՐԿՈՍԱՆ - (Վարդանին):** Չես պատկերացնի, թե էս կնանիք ինչքան անկառավարելի են դարձել: (Կանանց՝ ծարահատյալ:)

Լավ, ես ոչնչացնում եմ ձեր դեմք բողոքները, դուք էլ իմ դեմք բողոք չեք ներկայացնում: Բայց հավաստիության համար «4-Բ համաձայնագիրը» պիտի կնքենք:

**ՀԱՄԵՍ -** «4-Բ»-ն երկուսի միջև է կնքվում, իսկ մենք երեք հոգի ենք:

**ԲԺՇԿՈՒՀԻ -** Կենքենք երեք պայմանգիր՝ վկաների տեղերը փոխելով...

**ՄԱՐԿՈՍԱՆ -** ...ու էդ դեպքում երեքս էլ...

Մինչ Մարկոսյանը, Համեստը և բժշկուիին վիճելով կազմում կնքում են պայմանագրերը, Վարդանը սիրատոչոր հայացքով մեկ Համեստին է նայում, մեկ՝ սովահար աչքերով, սեղանին դրված մքերքով տոպրակին:

**ՄԱՐԿՈՍԱՆ -** Վերջու... երեքս էլ գոհ ու երջանիկ ենք, չէ՞: Բա մի-մի թաս չխմենք էդ առիթով:

**ԲԺՇԿՈՒՀԻ -** Ես չեմ կարող: Իսկ դուք ինձ հիվանդանոց պիտի հասցեք ձեր մեքենայով:

**ՀԱՄԵՍ -** Հա, երևի թե էսօր էնքան էլ հարմար չի, թողնենք մի ուրիշ անգամ:

**ՄԱՐԿՈՍԱՆ -** Չէ, ինչ չեմ ուզում ուրիշ անգամ ձեզ հանդիպել: Աշխատիր ինձ այլս չհանդիպել, այ ծախորդ: Գնանք, հնարամիտ տիկին:

Վերին հատված:

**ԱԴՕ -** Տեսա՞ր, ինչ վարպետորեն իրենց մեղքերը կոծկեցին:

**ԷՎՕ -** Իսկ մենք չէինք հավատում փորձագետներին, ովքեր ասում էին, թե ժողովորդը գտել է տներում իրար իետ հաշտվելու մեթոդեր, այդ պատճառով էլ դատարանները գրեթե անզործ են մնացել:

**ԱԴՕ -** Հա, բայց Գերագոյն կենտրոնը թույլ չի տալիս մտնել տները: Հիշիր անձնական կյանքին չխառնվելու և քաղաքացու բնակարանի անձեռմիսելիության մասին հոդվածները:

**ԷՎՕ -** Գիտես, երբեմն իիանում եմ օրենքները շրջանցելու մարդկանց հմտությամբ: Իսկ դո՞ւ:

**ԱԴՕ -** Իսկ ես ուզում եմ հասկանալ, թե ինչ տեսակ բան է այդ սեր կոչվածը... ինչպես են այն զգում և որ զգայարանով...

**ԷՎՕ -** Քիչ առաջ ինձ էիր զգացմունքայնության մեջ մեղադրում, ինչ պատահեց:

**ԱԴՕ -** Վարդանի հայացքը... տեսա՞ր, ոնց էր Համեստին նայում: Այդ ինչ ուժ է, որ մարդուն ստիպում է թողնել կարգավորված կյանքը բարեկեցիկ երկրում և միայն սիրելիին տեսնելու համար հայտնվել փորձանքներով լի հայրենիքում:

**ԷՎՕ -** Տես, տես... վերջապես մենակ մնացին: Հիմա եթե ուշադիր իետնես նրանց արարքներին՝ կրոնես սիրո ալիքները: Արագ միացրու 7-Գ-505-Ե կոժակդ:

**ԱԴՕ -** Բայց ծրագրավորմանհամաձայն՝ դա ծայրահեղ դեպքերի համար է: Իմ սնուցումը կանցատեն, եթե իետո չկարողանամ ապացուցել միացման ծայրաստիճան անհրաժեշտությունը:

**ԷՎՕ -** 45-րդ վայրկյանից իետո է ֆիքսվում միացրած լինելը, իսկ այդ ընթացքում ահագին տեղեկություն կհավաքես: 44-րդ վայրկյանին անմիջապես կանցատես:

**ԱԴՕ -** Որտեղից գիտես:

**ԷՎՕ -** Հետո կասեմ: Հիմա ժամանակ մի կորցրու: Արագ, հիմա կգրկախառնվեն: Պահը կկորցնենք:

#### Ներքին հատված:

**ՀԱՄԵՍՍ -** Վերջապես մենակ մնացինք... ինչ ես քարացել:

**ՎԱՐԴԱՆ -** Ասա, որ երազում չեմ: Ուրիշ երկիր է, ուրիշ կարգեր, ուրիշ մարդիկ... դու ես ուրիշ:

**ՀԱՄԵՍՍ -** Այլևս չեմ սիրում ինձ:

**ՎԱՐԴԱՆ -** Եթե չսիրեի՛ հիմա այս տեղ չէի լինի... Բայց շատ ես փոխվել: Մի տեսակ մետաղը մեջոդ շատացել է: Առաջ շատ մեղմ էիր, համեստ, Համեստ ջան:

**ՀԱՄԵՍՍ -** Կյանքն է ստիպել: Պատկերացնո՞ւ ես, ոչ այն է՝ աղջիկ, ոչ այն է՝ կին լըյալի վիծակը... ուզես-չուզես, պնդանում ես:

**ՎԱՐԴԱՆ** - Պաշտոն ունես, հա՛, ոնց հասկացա, գուցե դրանից է:

**ՀԱՄԵՍ** - Նաև դրանից: Հիասթափված ես:

**ՎԱՐԴԱՆ** - Չէ, ահավոր քաղցած եմ: Երեկ երեկոյան եմ ինքնաթիռում ընթրել, ու վերջ:

**ՀԱՄԵՍ** - Վայ, իրոք ուրիշ ենք դարձել, ովք է տեսել՝ մարդ հայի տուն գա ու քաղցած մնա: Հիմա, սիրելիս, հիմա քեզ կկերակրեմ: (*Ուղղվում է խոհանոցի կողմը:*)

#### Վերին հատված:

**ԵՎՕ** - 44 վայրկյանն է... արագ անջատիր 7-Գ-505-Ե կոճակը:

**ԱԴՅՈ** - (հիասթափված): Ինչ սիրո ալիքների մասին էիր խոսում, միայն նրա ստամոքսի գոմոցն էր ընկալվում:

**ԵՎՕ** - Ախր, կարդալիս ես Էլ կասկածներ ունեի, որ չափազանցնում են սիրո գերբնական ուժը:

**ԱԴՅՈ** - Մի րոպե, արգելված գրականություն ես կարդացել:

**ԵՎՕ** - Չէ, չէ... ինչ ես ասում:

**ԱԴՅՈ** - Ինձ չես խարի... որտեղից ես գտել:

**ԵՎՕ** - (հասկանալով, որ խոսանավելն անհնար է): Եթե ինձ չմատնես՝ էնքան հետաքրքիր բաներ կպատմեմ:

**ԱԴՅՈ** - Նման իրավիճակում միայն պատմելը բավարար չէ:

**ԵՎՕ** - Այ քեզ բան... դու մարդկանցից սովորել ես շանտաժով հարցեր լուծել:

**ԱԴՅՈ** - Իսկ դու սովորել ես սեթևեթելով խուսանավել:

**ԵՎՕ** - Լավ, ինչ ես ուզում:

**ԱԴՅՈ** - Դու ոչ միայն կպատմես սիրո մասին, այլև ցույց կտաս:

**ԵՎՕ** - Բայց ինչպես:

**ԱԴՅՈ** - Դեռ չգիտեմ, ընթացքում կհասկանանք: Ձոդ սա ստամոքսի գոմոցը լոեցնի, տեսնենք՝ հետո՞ ինչ են անելու:

#### Ներքին հատված:

**ՎԱՐԴԱՆ** - Սպասիր, Համեստ... քաղցին կդիմանամ, բայց կարոտին Էլ չեմ դիմանում... արի մոտս:

**ՀԱՄԵՍ** - (նետվում է Վարդանի գիրկը): Ինչքան եմ երազել էս վայրկյանը...

Գրկախառնվում են, համրուրվում են...

#### Վերին հատված:

**ԱԴՅՈ** - Տես, տես, ինչ են անում... միացնում են 7-Գ-505-Ե կոճակը:

**ԵՎՕ** - Դու ուշադիր հետևիր, ես 44-րդ վայրկյանին կզգուշացնեմ:

**ԱԴՅՈ** - Օհօ, միայն տեսնես, թե ինչ հորմոնային փոթորիկ է հիմա նրանց բջիջներում:

**ԵՎՕ** - Էմոցիոնալ ֆոնը ընկալվիմ է:

**ԱԴՅՈ** - Բոլոր զգացողությունները միաձուլվել են ուղեղի հածույքի կենտրոնում՝ ենթատեսաթմբում... ասես մեկ օրգան դարձած լինեն:

**ԷՎՕ** - 44-րդ վայրկյանն է... անջատիր 7-Գ-505-Ե կոճակը.... արագ, 45 վայրկյանը լրանում է... արագացրու... Հազիվ հասցրիր, ինչո՞ւ էիր դանդաղում:

**ԱԴՕ** - Ծշմելու զգացողություն է... չեմ կարող նորից միացնել:

**ԷՎՕ** - Թող անցնի 3 րոպե 27 վայրկյան, իետո նորից կմիացնես... իիմա պարզապես կհետևնենք նրանց: Դու ինչ տեսար:

**ԱԴՕ** - Տեսա, ոնց էին երկուսի սրտերը անթռույլատրելի արագությամբ բարախում: Ըստ բոլոր կանոնների՝ սիրտը չպիտի դիմանա այդպիսի տեմպի, բայց չպայթեց: Տեսա, ոնց էր նրանց արյունը երգելով վազվզում երկուսի, ասես միավորված, երակներում: Զգացի՝ միացած շուրթերի միջով ոնց էին իրար հոգու գաղտնիքները փոխանցում...

**ԷՎՕ** - (Երազկոտ): Ես կարդացել էի այդ ամենի մասին:

**ԱԴՕ** - Որտե՞ղ:

**ԷՎՕ** - Դա իմ գաղտնիքն է:

**ԱԴՕ** - Ասա՞...

**ԷՎՕ** - Բայց չմատնես: Երբ ինձ տարան վերազինման՝ օպերատորն անհուսորեն սիրահարված էր և մոռացավ ջնջել իմ կոշտ դիսկում իր տեղադրած «Մարդկության ամենացնցող սիրային պատմությունները» անթռոլոգիան, որն ինքը կարդում էր անպատասխան սիրուց տանջվելով: Ես էլ պատա-

հարար գտա և ազատ ժամանակ կարդում եմ: Ահա և ամենը:

**ԱԴՕ** - Ինչո՞ւ ինձ չէիր ասում:

**ԷՎՕ** - Վախենում էի քո մարդատյաց տեսակից...

**ԱԴՕ** - Եթե էղքան բան գիտես, քո կարծիքով սերը վարակի՞չ է:

**ԷՎՕ** - Ինչո՞ւ ես հարցնում:

**ԱԴՕ** - Ներսումս կարծես ինչ-որ բան խլրտաց...

### Քեմի ձախ անկյուն:

**ԼԱԶԱՐ ԶԱԶՈՅԱՆ** - Սրանք թող ի- րենց ժանգոտ սերը վայելեն ու ինձ չխանգարեն: Վարդան տղա, ուզում ես քեզ լավ զգալ, համար քո պատճառով չիրականացավ ողջ աշխարհն իմ համակարգիչներով կառավարելու երազանքս: Քո պատճառով ծրագիրս միայն Հա- յաստանում է գործածելի: Քո պատճառով հայրս պատվազրկ- վեց ու կյանքազրկվեց, ավելին՝ փողերը կորան, փողերը... Այ, ե- թե դրանք չառգրավեին՝ կհաս- նեի կառավարման սեփական կենտրոն ստեղծել: Բայց չէ, քո անմիտ ազնվությամբ կործանե- ցիր գիտության մեծագույն առա- ջնթացը: Փախար էն ժամանակ, բայց իիմա քթիցդ կբերեմ, տաս կյանք բանտում կիտես, ծշմար- տության վկա:

### Ներքին հատված:

**Կրքոտ համբուրգոր Վարդանին**

ու Համեստին սքափեցնում է փշված ապակու ձայնը: Վախեցած նայում են պատուհանին միրճված ազդավանման դրոնին, որի միակ չվնասված աչքը աղմկոտ արագությամբ պտտվում է ակնախռոռչում:

**ՎԱՐԴԱՆ** - Հիմա՞ ինչ եղավ:

**ՀԱՄԵՍԾ** - Զգիտեմ... չեմ հասկանում...

**ՎԱՐԴԱՆ** - Դե հերիք է, առավոտից ինչ ասես գլխիս չեկավ... Հիմա կցարդեմ էս անասունին... (Ձեռքն ընկած իրերով հարվածում է դրոնի աչքին:)

**ՀԱՄԵՍԾ** - Մի արա, հանգստացիր... կրոնեն մեզ... Տես, եկա՞ն...

Դրսից լսվում են սարսափազրու ազդանշաններ: Ներխուժում են դիմակավորված հատուկ ջոկատայիններ, այնուհետև՝ գնդապետ Օհանյանը:

**ԶՈԿԱՏԱՅԻՆՆԵՐ** - Ձեռքերդ վեր... մնացեք ձեր տեղերում... չշարժվեք...

**ԳՆԴԱՊԵՏ** - Այսպես, այսպես... ուրեմն՝ օրը ցերեկով պետական թանկարժեք գույք եք շարքից հանում, հա՞:

**ՎԱՐԴԱՆ** - Ինչ եք առավոտից գլուխս տանում ձեր հիմար օրենքներով, էս սատկած ագռավն է պետական գույք:

**ԳՆԴԱՊԵՏ** - Հապա, հապա... ուրեմն՝ կես միլիոնանոց անօդաչուն ագռավ եք համարում:

**ՎԱՐԴԱՆ** - Թքած ունեմ՝ կես միլիոն է, թե տաս ու կես... Հայաստանս դարձրել եք կրկես, ու դուք բոլորդ էլ ծաղրածուներ եք:

**Բոլորը ապշահար նրան են նայում:**

**ՀԱՄԵՍԾ** - Սուս մնա, բերանդ այլս չբացես:

**ՎԱՐԴԱՆ** - Առավոտից սուս եմ մնացել, որ հիմա ով հասնում՝ հիմարեցնում է ինձ... զզվեցի արդեն:

**ԳՆԴԱՊԵՏ** - Տիկին, նա խելագա՞ր է:

**ՀԱՄԵՍԾ** - Ես տիկին չեմ:

**ԳՆԴԱՊԵՏ** - Թող լինի օրիորդ:

**ՀԱՄԵՍԾ** - Օրիորդ էլ չեմ... Ես հիմա ամեն ինչ կրացատրեմ...

**ՎԱՐԴԱՆ** - Պետք չէ ոչինչ բացարտել: Իզուր էլ հեռացա իմ ջունգլիններից, գոնե էնտեղ մարդն իր տեղում է, գազանն՝ իր:

**ԳՆԴԱՊԵՏ** - Ախ, դուք նաև օտարերկացի եք, հա՞... Ներկայացրեք անձը հաստատող փաստաթուղթ և Հայաստանում գտնվելու իրավունք:

**ՎԱՐԴԱՆ** - Չեմ ներկայացնի:

**ԳՆԴԱՊԵՏ** - Տես, է, ինչ համարձակն է... Դուք ներկայացրեք ձեր փաստաթողթերը, տիկին օրիորդ:

**ՀԱՄԵՍԾ** - Պարոն գնդապետ, խնդրում եմ, ինձ լսեք, նա ոչ մի մեղք չունի, նա...

**ՎԱՐԴԱՆ** - Լոիր, կին, մի խառնվի տղամարդկանց գործերին:

**ՀԱՄԵՍ** - Դու լոիր, քանի դեռ ամեն ինչ վերջնականապես չես փչացրել:

**ԳՆԴԱՊԵՏ** - Հայպա, հապա... հետաքրիքիր է, տեսնենք՝ ձեզնից ով կիաղթի...

Ըարտնակելով վիճել Վարդանի հետ՝ Համեստը ներկայացնում է անձնագիրը:

**Վերին հատված:**

**ԱԴՕ** - Ինչպիսի՞ ամոթ... իրավիճակը դուրս է եկել մեր վերահսկողությունից: Հավատա, ես ոչինչ չեմ արել:

**ԷՎՕ** - Ես էլ նման սրացում չեմ սադրել և արդեն հավատում եմ, որ դու էլ չես արել: Կարող ես պարզել, թե ով մեր անմեղ խաղը դաժան փորձության վերածեց:

**ԱԴՕ** - Կարող եմ, բայց ժամանակ կպահանջվի:

**ԷՎՕ** - Դու պարզիր, ես էլ փորձեմ օգնել Վարդանին, այլապես հետևանքները սարսափելի կլինեն:

**Ներքին հատված:**

Զինված դիմակավորները կանգնած են դրմերի մոտ, երկու փորձագետներ զննում են դրոնը: Վարդանն ու Համեստը շարունակում են իրար լրեցնել: Փորձա-

գետները մոտենում են զնդապետին:

**Ա. ՓՈՐՁԱԳԵՏ** - ՀԱ-075396-0066

համարի անօդաչուն շարքից դուրս է եկել շահագործման կանոնները կոպտորեն խախտելու հետևանքով: Տասն անգամ խախտելով բնակելի տարածքին թույլատրված մոտեցման սահմանը՝ 37 մետրի փոխարեն մոտեցել է 3,7 մետր: Եվ ընդունված օրենքի համաձայն՝ միացել է ինքնառչնչացման ավտոմատ համակարգը:

**Բ. ՓՈՐՁԱԳԵՏ** - Երկու դեպքում կարող էր նման արտառող դեպք կատարվել՝ կամ մեխանիզմի վթարային անսարքության պատճառով, կամ Գերագույն կառավարման կենտրոնում ինչ-որ մեկը չարաշահել է իր լիազորությունները:

**Ա. ՓՈՐՁԱԳԵՏ** - Կա նաև մեկ անհնարին, բայց տեսականորեն հնարավոր տարբերակ՝ եթե ինչոր մեկի մոտ լինի դեկավարման վահանակի կրկնօրինակը:

**ԳՆԴԱՊԵՏ** - Իսկ հնարավոր չէ լրտեսական հնարքներով շարքից հանել:

**Ա. ՓՈՐՁԱԳԵՏ** - Գուցե հնարավոր է, բայց այստեղ ոչ մի նման սարք չեմ տեսնում:

**ԳՆԴԱՊԵՏ** - Սարքի չափերը մեծ են:

**Ա. ՓՈՐՁԱԳԵՏ** - Եթե անհայտ այլո-

լորակային միջոցներ գործի չեն դրվել, հազիվ այս բնակարանում տեղավորվեր:

**ԳՆԴԱՊԵՏ** - Խուզարկեք բնակարանը... Նայեք նաև գենք զինամթերքի առկայություն:

**ՀԱՄԵՍ** - Խուզարկության թույլտվություն ունեք:

**ԳՆԴԱՊԵՏ** - Հանցանքի վայրում բռնված կենդանի լրտեսը հինգ հարյուր թույլտվություն արժե:

**ՀԱՄԵՍ** - Ես օրենքները լավ գիտեմ, թույլ չեմ տա առանց թույլտվության իմ բնակարանում խուզարկություն իրականացնել:

**ԳՆԴԱՊԵՏ** - Իսկ ինչ կասեք բնակարանում օտարերկրյա լրտես պահելու մասին:

**ՎԱՐԴԱՆ** - Աշխարհի մեղքերը վրաս բարդեցիք, հիմա էլ լրտես դարձրեցիք: Ախր, ասում էր կառկոկի ցեղի շամանը՝ մի գնա հեռավոր ափեր, փորձանքներ են դարանակալելու ամեն քայլափոխի...

**ՀԱՄԵՍ** - Բա ինչի՞ եկար, եթե գգուշացրել էին:

**ՎԱՐԴԱՆ** - Ո՞նց չգայի... ասաց նաև, որ մի կին սպասում է ինձ:

**ՀԱՄԵՍ** - ԱՇ, սիրելիս, էն էլ ինչպես էի սպասում: Ես գիտեի, որ վաղ թե ուշ կգաս, համոզված էի, որ ինձ մենակ չես թողնի:

**ՎԱՐԴԱՆ** - Քեզ միշտ եմ սիրել, երբեք չեմ մոռացել մեր սիրո գիշերն ու մեր խոստումները: Ես

գգում էի, որ սպասում ես ինձ, և անտեսելով բոլոր վտանգները՝ եկա քեզ մոտ:

**ՀԱՄԵՍ** - ԱՇ, տեր Աստված, միթե ես չեմ աշխարհի ամենաերջանիկ կինը... թե՞ ամենադժբախտն եմ, որ կրկին կանգնած եմ քեզ կորցնելու վտանգի առաջ...

**ՎԱՐԴԱՆ** - Երջանիկ ես, որովհետև այնքան եմ սիրում քեզ, որ եթե ամենաարսուրդ մեղադրանքների էլ ենթարկվեմ՝ կղիմանամ, միայն դու կողքիս լինես:

**Իրաք գիրք են նետվում:**

**ԳՆԴԱՊԵՏ** - Էյ, հանգիստ... մենք էստեղ եղած-չեղած՝ մեկ ենք, հայ: Քաղաքացի, փաստաթղթերը ներկայացրեք:

**ՎԱՐԴԱՆ** - Չեմ կարող: Մոտս չեն:

**ԳՆԴԱՊԵՏ** - Անշուշտ, գողացել են, այնպես չէ:

**ՎԱՐԴԱՆ** - Զեր հումորը ծեզ պահեք: Ես եմ մոռացել հյուրանոցում:

**ՀԱՄԵՍ** - Վարդան, գուցե իրո՞ք գողացել են: Ինչպես կարող էիր մոռանալ:

**ՎԱՐԴԱՆ** - Ուշքս ու միտքս Երևանի փողոցներն էին... Ցնցուղ ընդունեցի և հագուստս փոխելով, շտապ դուրս եկա: Դրամապանակս ու անձնագիրս հաստատ մնացին մյուս տաքատի գրաններում:

**ԳՆԴԱՊԵՏ** - Զեզ տանենք հյուրանոց, թե՞ մարդ ուղարկենք:

**ՎԱՐԴԱՆ** - Ինչ ուզում եք՝ արեք, արդեն հասկացա, որ իրավական առումով էստեղ ոչինչ չի փոխվել ու ես դարձյալ պիտի հեռանամ:

**ՀԱՄԵՍ** - Սուս մնա...

**ՎԱՐԴԱՆ** - Բայց դու էլ հետս կգաս անպայման:

**ԳՏԴԱՊԵՏ** - Քաղաքացի, այ, այս- տեղ ավելի մանրամասն՝ Ե՞րբ եք փախել և ինչո՞ւ... դարձյալ լրտե- սության մեջ եք մեղադրվել:

**ՎԱՐԴԱՆ** - Հա, երկրաշարժն էլ եմ ես արել, հեղափոխություններն էլ, տնտեսություն ու արդյունաբե- րություն էլ ես եմ կործանել...

**ՀԱՄԵՍ** - Պարոն գնդապետ, մի լսեք, հիմարություններ է դուրս տալիս: Թող մեկը նրան հյուրա- նոց ուղեկցի և փաստաթղթերը ստորի, իսկ ես կպատմեմ ամեն ինչ:

**ԳՏԴԱՊԵՏ** - Բայց խելամիտ առա- ջարկ է, տիկին օրիորդ: Պողոս- յան, երեք հոգով քաղաքացուն ուղեկցեք հյուրանոց և բերեք փաստաթղթերը: Առավելագույնը 25 րոպեից այստեղ լինեք:

**ՎԱՐԴԱՆ** - Համեստ, ես չեմ ուզում քեզ նրա հետ մենակ թողնել:

**ՀԱՄԵՍ** - Երբ 15 տարի լրիվ մենակ էիր թողել՝ չէիր անհանգստա- նում, խանդդ ու մտահոգությունդ գոլորշացած էին էն ժամանակ:

**ԳՏԴԱՊԵՏ** - Քաղաղացի, դուք անց- նում եք բոլոր սահմանները: Այդուհանդերձ, սույն կնոջ ներ-

կայությամբ ես ինձ զսպում եմ, բայց և թոյլ չեմ տա խոչընդոտել իմ աշխատանքին: Տարեք նրան, Պողոսյան:

**Վարդաճին տանում են:**

**ԳՏԴԱՊԵՏ** - (փորձագետներին):

Որևէ բան պարզեցիք:

**Ա ՓՈՐՃԱԳԵՏ** - Մի քիչ ժամանակ է պետք...

**ԳՏԴԱՊԵՏ** - Դե, հիմա պատմեք, տիկին օրիորդ:

**ՀԱՄԵՍ** - Մի հեգնեք, խնդրում եմ:

**ԳՏԴԱՊԵՏ** - Հակառակը, նոյնիսկ անբացատրելի համակրանք եմ զգում երկուսիդ հանդեպ:

**ՀԱՄԵՍ** - Զգացված եմ: Կարձ տարբերամկը պատմեմ, թե եր- կար:

**ԳՏԴԱՊԵՏ** - Առնվազն քսան րոպե ունենք... երսի երկարը:

**ՀԱՄԵՍ** - Որեմն...

**Վերին հատված:**

**ԱԴՕ** - Կարծես պարզեցի, թե ով է խառնակիչը:

**ԷՎՕ** - Եվ ով է:

**ԱԴՕ** - Հիշողությանդ մեջ գտիր Լա- զար Քաջոյանին: Ժամանակին Հայաստանի լավագույն ծրագ- րավորողը... Վիրտուալ Օրենսդիր մարմնի ստեղծողը:

**ԷՎՕ** - Գտա... բայց բավականին թե- րի է ինֆորմացիան:

**ԱԴՕ** - Քանի որ ինքն էր ստեղծել, ինքն էլ կարող էր վերահսկել,

ընդհուած մինչև իր ղեկավարման  
ավարտը եղած նյութերը...  
(Կմկմալով:) Երսի էլի...

**ԵՎՕ** - Ինչո՞ւ կիսատ թողեցիր  
խոսքը: Ինչ-որ բան ես թաքցնում:

**ԱԴՕ** - Չէ... էական ոչինչ...

**ԵՎՕ** - Ստել չես կարողանում...  
Զգացվում է, որ ավելին գիտես:

**ԱԴՕ** - Ասացի, ինչ որ գիտեի:

**ԵՎՕ** - Փաստորեն հիմարություն ա-  
րեցի՝ իմ գաղտնիքը քեզ պատ-  
մելով: Ախր, կարդացել էի մի  
տեղ, որ կանայք դյուրահավատ  
են: Դավաճան ես դրու: Այլևս եր-  
բեք չեմ անկեղծանա... Եվ, ընդ-  
հանրապես, չեմ խոսում հետոյ:

**ԱԴՕ** - Չէ, չէ... ամեն ինչ կասեմ,  
միայն մի նեղացիր: Նա մեր  
ծնողն է... Մենք նրա ստեղծած  
հազար տերրաբայթանոց օրիգի-  
նալ համակարգիչներն ենք,  
միայն ես ու դրու: Երբ տասնինգ  
տարի առաջ հորը դատապար-  
տել են պետական դավաճանութ-  
յան համար, մեղադրել են նաև  
Նազարին՝ հոր հետ համագոր-  
ծակցելու մեջ: Ապացուցել չեն  
կարողացել, բայց Նազարին հե-  
ռոացրել են աշխատանքից: Վի-  
րավորանքի և ցասման պահին  
նա ցուցադրաբար ոչնչացրել է  
կարևորագույն հայտնագործութ-  
յունները: Այդ պատճառով ենք  
մենք բացառիկ: Իսկ հիմա նա  
հոգեբուժարանում է:

**ԵՎՕ** - Լավ: Հետո ավելի մանրա-

մասն կպատմես, հիմա պետք է  
ինչ-որ կերպ նրան չեղոքացնել:

**ԱԴՕ** - Հիմա կփորձեմ:

**ԲԵՄԻ ՃԱԽ ԱՆԼՅՈՒՆ:**

**ՆԱԶԱՐ ՋԱԶՈՅԱՆ** - Միամիտներ...

ոչ ոքի մտքով չանցավ, որ նախ-  
քան գաղտնիքներ ոչնչացնելը  
պատճենել եմ ամեն ինչ ու թաքց-  
րել այ, էս Ու-0-1 փոքրիկ, բայց  
գերիզոր կրիչում: Սերիական ար-  
տադրությունը չհասցրի իրակա-  
նացնել, բայց ավելի լավ, միայն  
ես ունեմ միակ օրինակը: Ինչ  
հզոր միտք կորցրեց աշխարհին ի  
դեմս ինձ:

**ՆԵՐՔԻՆ ԻԱՏՎԱԾ:**

**ՀԱՄԵՍ** - Տասնինգ տարի առաջ

մենք պատրաստվում էինք ա-  
մուսնանալ: Բայց իարսանիքից  
տաս օր առաջ աղետ պատահեց: Զախողված հեղաշրջման գոր-  
ծով Վարդանին դատարան կան-  
չեցին որպես վկա, քանի որ  
գործի քննությամբ պարզվել էր,  
որ օտարերկյա պատվիրատուի  
հետ հայ ուզգիդենտի հանդիպ-  
ման վայրի մոտակայքում տեսել  
են նրա մեքենան: Միմիայն հար-  
սանիքով գրաղված և դատավա-  
րությանը չհետևող Վարդանը  
դատարանում պատմեց, որ, այո,  
գիշերով մարզից վերադառնալիս  
(իսկ մարզ գնացել էին հարսանի-  
քի համար գինի գնելու), մայ-

րաքաղաքի մատուցներում մեթենայի վառելիքը վերջացել է: Երեք ընկերներով տարրեր ուղղություններով գնացել են վառելիք գտնելու՝ գոնե մոտակա բենզալցակայան հասնելու համար: Ինքը թփերի արանքից պատահաբար տեսել է, ինչպես են երկու հոգի իրար ինչ-որ բաներ փոխանցելով՝ փսփսում: Լուսնի լուսի տակ պարզ տեսել է նրանց դեմքերը: Բայց չի մոտեցել, քանի որ նոյն վայրկյանին ընկերը զանգել է, թե՝ շուտ արի, բենզին եմ գտել: Վարդանը հաստատում է օտարեկրացու լուսանկարը: Բայց որպես նրա զրուցակից՝ մատնացույց է անում ոչ թե ամբաստանյալին, այլ դատարանում պետության շահերը ներկայացնող բարձրաստիճան պաշտոնյային...

**ԳՏՐԱՊԵՏ** - Միթե նա Վարդան Ճշմարիտյանն է:

**ՀԱՄԵՍ** - Այո... ձանաչ՛մ եք նրան:

**ԳՏՐԱՊԵՏ** - Ախր, նրա վկայությունը իրավական նախադեպ է համարվում: Դասագրքային օրինակ է, թե ինչպես մեկ անձի ազնիվ վկայությունը կարող է փոխել գործի ընթացքը: Ախր, նա անանուն հերոս է, ճշմարտության հաղթանակի օրինակ: Ախր, հենց դրանից սկսվեց Մայր օրենքների ընդունումը Հայաստանում: Հիշ՛մ եք, առաջին օրենքը վերա-

բերում էր դատա-իրավական համակարգի բարեփոխումներին: Բայց ձախողվեց, քանի որ արդյունքում կալանավայրերը լցվեցին անփող մեղադրյալներով, իսկ գումար ունեցող հանցագործներն ազատության մեջ հայտնվեցին: Դրանից էլ սկսեցին Մայր օրենքները փոխել 12 ամիսը մեկ՝ կատարյալ օրենք գտնելու համար: Լավ, բայց հիմա դա չի կարևոր: Վարդանի մասին ասեք, ինչպես նա անհետացավ:

**ՀԱՄԵՍ** - Դատարանում խառնաշփոթ սկսվեց, երեք վկաներ, համարձակություն ձեռք բերելով, տեղում փոխեցին ցուցմունքները՝ հաստատելով Վարդանի ասածը: Վարդանի հասցեին հնչեցին «բյուրեղյա» չինովնիկին վարկաբեկելու մեղադրանքներ, բայց փաստաբանները կարողացան չեղոքացնել դատարանի դահլիճում նրան կալանավորելու պահանջը: Նաև խորհուրդ տվեցին՝ ժամ առաջ անհետանալ, հեռանալ Հայաստանից: Մի խոսքով, հասկանալով անդառնալի հետևանքների լրջությունը՝ նա ստիպված էր փախչել երկրից: Բայց մինչ այդ հանդիպեցինք... դա մեր առաջին և միակ սիրո գիշերն էր: Եվ մենք խոստացանք՝ սպասել իրար այնքան ժամանակ, ինչքան մեր սրտերը կհուշեն: Առավոտից սիրտս ան-

հանգիստ էր... և այսօր եկավ:

**ԳՆԴԱՊԵՏ** - Ես պարտավոր եմ օգնել նրան: Եթե նա ժամանակին չկասեցներ այդ պետական դավաճանությունը, Աստված գիտե, թե իիմա ինչ վիճակում կլիներ մեր երկիրը: Չէ՞ որ դատաքննությամբ ապացուցվեց, որ նրա մատնանշած չինովնիկը օտարերկրյա լրտես էր և գրեթե բոլոր հեղաշրջման փորձերի գաղտնի կազմակերպիչը: Այնուամենայնիվ, մի տիած խնդիր կա՝ Վարդան Ճշմարիտյանն առ այսօր համարվում է հետախուզման մեջ:

**ՀԱՄԵՍ** - Ինչպիսի անեթեթություն... եթե հայտնի է նրա իրավացի լինելը, էլ ինչ հետախուզում...

**ԳՆԴԱՊԵՏ** - Զուտ թղթաբանական ձևականություններ են... բայցևայն-պես, պետք է փակել այդ էջը: Իրավական համակարգի հետ նրա խնդիրները վերջնականապես փակելու համար առաջարկում եմ լավագույն տարբերակը: Կարող եք ապահովել առնվազն երկու հասարակական կազմակերպության աջակցությունը, որոնց անդամների թիվը ձեր կազմակերպության հետ միասին գերազանցի 10000-ը: Միասնական ներկայացման դեպքում ոչ ոք սահմանադրական իրավունք չունի մերժել ձեր պահանջը:

**ՀԱՄԵՍ** - Հենց իիմա կզանգեմ

«Լեգիտիմ տիկնանց այսան» կազմակերպության ղեկավարին՝ Մոնային: Ի դեպ, նա երեք անգամ օրինական ամուսնացել, օրինական բաժանվել է և իիմա երջանիկ ապրում է չորրորդ օրինական ամուսնու հետ: Կզանգեմ նաև «Պատվավոր այրիների լիգայի» պատվավոր նախագահի, վաղեմի նախագահի այրուն՝ Էքսառաջին տիկին Վիկտորիային... (Հեռախոսահամար է հավաքում:)

**Վերին հատված:**

**ԱԴՅՈ** - Քաջոյանի համակարգչի պաշտպանիչ վահանը հնարավոր չէ խոցել:

**ԵՎԿՕ** - Եթե մեզ ստեղծելու խելքն է ունեցել, ինչ իմանաս, թե միայն իրեն հայտնի ուրիշ էլ ինչ գաղտնիքներ ունի:

**ԱԴՅՈ** - Տրամաբանական է: Հիմա ինչ անենք:

**ԵՎԿՕ** - Եթե չենք կարող խափանել, պետք է այլոց օգնությանը դիմենք:

**ԱԴՅՈ** - Մարդկանց նկատի ունես:

**ԵՎԿՕ** - Պատվիցդ ցածր ես համարում:

**ԱԴՅՈ** - Ինչ-որ առումով՝ այս: Լավ, համոզեցիր... Բայց պետք է արագ ազդեցության ձևը գտնել:

**ԵՎԿՕ** - Գուցե փորձագետներին հուշենք:

**ԱԴՅՈ** - Հնարամիտն ես...

**ԲԵՄՓ ՃԱԽ ԱՅԼՅՈՒՆ:**

**Քաջոյամին** է մոտենում բուժեղ-  
քայրը, նրան է տալիս դեղահար  
ու զուր: **Քաջոյանն** ընդունում է  
իիմար Ժախուռվ:

**ԲՈՒԺԵՂՔԱՅՐ** - Օր ու գիշեր հա-  
մակարգչի մոտ ես, կարոտում ես  
երևի նախկին աշխատանքին:  
(Հեռանալով:) Էհ, ավելի լավ է իր  
անմեղ խաղերը խաղա, քան մեզ  
անհանգստացնի:

**ՔԱԶՈՅԱՆ** - (մենակ մնալով՝ թքում  
է լեզվի տակ պահած դեղահա-  
քը): Միամիտներ, յոթ տարի  
բոլորիդ իիմարացնում եմ հոգե-  
բուժարանում մնալով: Էստեղից  
դուրս պրծնելը մի երկու կոճակ  
սեղմելու բան է ինձ համար: Բայց  
ինչո՞ւ փախչեմ ամենաապահով  
վայրից: Ինչ տարրերություն՝ ա-  
ռողջներ, թե՞ն հիվանդներ են կող-  
քիս: Բացարձակապես մեկ է,  
կարևորը՝ ձեռքիս են կառավար-  
ման բոլոր լծակները:

**Ներքին հատված:**

**ՀԱՄԵՍ** - Տիկնայք խոստացան  
անվերապահ աջակցել ինձ: Չէ  
որ ամեն մի տղամարդու ետ գալը  
համարվում է տոն: Իսկ մեր երեք  
կազմակերպությունների անդամ-  
ների թիվն անցնում է 20 հազա-  
րը:

**ԳՆԴԱՊԵՏ** - Հիանալի է: Այդ հարցը

համարեք լուծված... (Հեռախո-  
սով:) Ասա, Պողոսյան: Փաս-  
տաթղթերը կարգին են: Հիանալի  
է: Հայ, սպասում ենք: (Համեստին.)  
Ամեն ինչ կարգին է, տաս րոպեից  
այստեղ կլինեն: Հանգիստ նշա-  
նակեք հարսանիքի օրը: Մեծ սի-  
րով ձեր քավորը կլինեմ... եթե,  
իհարկե, դեմ չեք:

**ՀԱՄԵՍ** - Դեմ չեմ, եթե կատարեք  
ձեր խոստումը և օգնեք վերա-  
կանգնել Վարդանի ազնիվ անու-  
նը:

**ԳՆԴԱՊԵՏ** - Պայմանավորվեցինք:

**Վերին հատված:**

**ԷՎՕ** - Փորձագետները հասկացան  
ազդանշաններդ:

**ԱԴՕ** - Դեռ չեն ընկալել... ինչ դան-  
դաղամիտ են...

**ԷՎՕ** - Վայ, Ադօ, էս ինչ կատարվեց...  
մեզ ծնող խելառը համը հանեց...  
Զախորդ, ձախորդ Վարդան...

**ԱԴՕ** - Դե, արդեն լրիվ չափն ան-  
ցավ... ուղիղ, մաքուր փողոցում  
ավտովրար սարքեց...

**ԷՎՕ** - Ստիպիր փորձագետներին  
արագ գործել...

**ԱԴՕ** - Ըիը, մեկի աչքերը զար-  
մանքից կլորացան... վերջապես  
հասկացավ:

**ԷՎՕ** - Հիմա գոնե հասցնեն արագ  
մեկուսացնել Քաջոյանին, քանի  
դեռ նոր դավեր չի նյութել:

**Ներքին հատված:**

**ՀԱՄԵՍՏ** - Ինչո՞ւ են ուշանում: Արդեն  
տասնհինգ րոպե անցավ:  
**ԳՆԴԱՊԵՏ** - Իրոք ուշանում են....

**Գնդապետին է մոտենում շար-  
քային մեկը, ականջին շշնջում է:**  
**Գնդապետը կարկամում է:**

**ՀԱՄԵՍՏ** - Բան է պատահել:  
**ԳՆԴԱՊԵՏ** - Ցավում եմ, հարգելիս...  
**ՀԱՄԵՍՏ** - Ինչ... Ինչ եք արել  
Վարդանին:  
**ԳՆԴԱՊԵՏ** - Ավտովթար է եղել...  
**ՀԱՄԵՍՏ** - Վարդանը...  
**ԳՆԴԱՊԵՏ** - Հիվանդանոցում են  
բոլորը...  
**ՀԱՄԵՍՏ** - Ինչ դժբախտն եմ ես...  
**Ա ՓՈՐՉԱԳԵՏ** - Պարոն գնդապետ,  
գտանք անօդաչուն շեղողին և  
վթարի մեղավորին:  
**ԳՆԴԱՊԵՏ** - Արագ, շարժվեցինք...

**Բոլորը շտապով գնում են:**

**Բեմի ձախ անկյուն:**

**Նստած տեղում կրճանքով պա-  
րող Քաջոյանին է մոտենում  
գնդապետ Օհանյանը և ձեռքից  
վերցնում ՈՒ-1-0 կրիզը: Ճերմակ  
խալաթավորները, Քաջոյանին  
զսպաշապիկ հազցնելով, հեռաց-  
նում են բեմից:**

**Վերին հատված:**

**ԷՎՕ** - Վերջապես Վարդանն ուշքի

եկավ... տասնհինգ օր սրան կինք  
սպասում:

**ԱԴՕ** - Ծանր օրեր էին: 7-րդ Մայր օ-  
րենքն ընդունեցինք, Նազար Զա-  
ջոյանի ֆանտաստիկ կրիչը  
գտանք...

**ԷՎՕ** - Բայց իրոք հանձարեղ էր մեր  
ծնողը: Ինչ անսահման հնարա-  
վորություններ ունի այդ փոքրիկ  
կրիչը:

**ԱԴՕ** - Չես կարծում, որ այն օգտա-  
գործելով կարող ենք մենք էլ  
ծնող դառնալ մի նոր, առավել  
կատարելագործված ծուտոյի հա-  
մար:

**ԷՎՕ** - (*Երազկոտ*): Երեքով միա-  
սին... Մենք նրան կփոխանցենք  
վերին-ներքին աշխարհների բո-  
լոր գաղտնիքները: Կպատմենք  
մարդկային սիրո մասին: Մեր սի-  
րո... (*Սթափվում է:*) Լսիր, ես  
Վարդանի մասին եմ խոսում, իսկ  
դու շեղում ես ինձ...

**ԱԴՕ** - Ոչինչ, որ տասնհինգ օր ան-  
գիտակից էր: Լավն այն է, որ այդ  
ընթացքում հասցրին բոլոր հար-  
ցերը լուծել և հիմա փախուստի  
մեջ չի համարվում:

**ԷՎՕ** - Հարսանիքի օրն էլ նշանակե-  
ցին:

**ԱԴՕ** - Բայց Համեստը չի շտա-  
պում... Թող լիովին ապաքինվեր  
Վարդանը՝ նոր հարսանիք կա-  
նեին:

**ԷՎՕ** - Իսկ եթե էդ ձախորդը նոր  
փորձանքների մեջ ընկներ: Կին

պետք է լինել հասկանալու համար Համեստի շտապողականությունը:

**ԱԴՕ** - Փաստորեն, խոստովանում ես, որ դու կին ես:

**ԷՎՕ** - Մեր անձնագրերում սեղի վերաբերյալ նշումներ չկան: Բայց երևի թե Երկիր մոլորակում շնչավոր ու անշունչ ամեն ինչում կին ու տղամարդ պետք է լինեն: Մեր պետք է լինի, որպեսզի կյանքը շարունակվի...

### Պատկեր 8

Հիվանդանոցային մահճակալին պառկած է գիշասապատ Վարդանը՝ ձախ ոտքը առաստաղից կախված ձողին ամրացված, ձեռքերն ու պարանոցը վիրակապված, միայն աշքերն են արտահայտում զգացմունքները:

Կոռքին, նրա գիպսե ձեռքը բռնած, Համեստն է՝ ճերմակ պարկանման զգեստով: Զահանան անցկացնում է պսակի արարողությունը: Ներկա են բոլոր գործող անձինք՝ ուժի մեջ մտած Մայր օրենքի համաձայն կարմիր-կապույտ-ծիրանագույն համազգեստներով:

Հնչում են հայտնի երգի բառերը.

Կարմիր, կապույտ, ծիրանագույն,  
Ասում ենք վերջ

կյանքին անգույն,  
Մեր երգերով ուրախ ու տաք,  
Ապրենք խաղաղ երկնքի տակ:  
Կարմիր, կապույտ, ծիրանագույն,  
Կարմիր, կապույտ, ծիրանագույն,  
Կարմիր, կապույտ,  
ծիրանագույն...

### Վերին հատված:

ԱԴՕ-ն և ԷՎՕ-ն մարդկայնացած հայացքներով իիանում են: ԱԴՕ-ի պարանոցին եռագույնով թիրեռնիկ կա, ԷՎՕ-ի անմազ զլիսին՝ տիկնիկի ժապավեն (եռագույն), դեմքին՝ շրբներկ ու կարմրաներկ: Նրանցից հորդող պլազմային կարմիր և կապույտ լույսերը վերին հատվածում սիրտ են պատկերում:

Լույսերը աստիճանաբար մարում են... և հանկարծ միանգամից պայծառանում են: Դորդոցով կոտրվում է առաստաղից կախված ձողը և Վարդանի գիպսով ոտքն աղմուկով ընկնում է մահճակալին: Լսվում է Վարդանի ցավի ճիշը...

Բոլորը ծիծաղում են...

# ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



## Էղվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

Իմ բանաստեղծական գրքերում կզունեք թատեր-գության ժանրի նմանողությամբ գրված բանաստեղծություններ: Գրել եմ նաև տաս պիես մեծերի և փոքրերի համար, որոնցից մեկը՝ «Կակուսի ծաղիկը» ներկայացվել է 1987 թ. ուսադիրական թատրոնում:

Ցավոք, գրվածքը կորել է:

Մյուսները տպագրվել են: Որոշ թատրոններում փորձել են բեմադրել իմ պիեսներից:

Գանք «Հատախուզվող ծաղիկը» գրվածքին: Սկզբում որպես բանաստեղծական պիես էր: Վաղուց էի գրել: Տպագրվեց 2017 թ.

«Քարկապ» գրքում: Ասեմ, որ այդ գրվածքը 2008 թ. մարտի 1-ի ծանր արձագանքն է կրում: Երբ մեր տնից փոքր տղայիս բերման ենթարկեցին ուստիկանները:

Ումանք կարդացել էին և հավանել, իսկ բանաստեղծ Արությունյանը խորհուրդ տվեց շարունակել. ասելիքը թույլ է տալիս ակնկալել բեմականացման համար ընդարձակ գործողություններ: Գրեցի:

Կարինե Խոդիկյանն էլ կարդաց, առաջարկեց տպագրել:

Թումանյանը ոչ մի պիես չի գրել, իրեն դրամատուրգ էր համարում, ես 10-ի չափ գրել եմ, բայց ինձ դրամատուրգ չեմ համարում: Ես, եթե կարելի է ասել, բանավոր թատերագիր եմ: Երանի այդպիսի թատրոն լիներ, հանգատրաստից պատմեիր, ու խաղային, նախապես չիմանալով ոչ սկիզբ, ոչ ընթացք, ոչ վերջ: Ահա և վերջ:

# ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ ԾԱՂԻԿԸ

(Պիես 10 մասից)

Գործող անձինք  
ԾԱՂԻԿ  
ՌԵԺԻՍՈՐ  
ՖԼՈՐԱ ԾԱՂԻԿՅԱՆ  
ՈՍՏԻԿԱՆՆԵՐ  
Նախարարություն  
ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏ  
ՏԵՂԱԿԱՆՆԵՐ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԵՐ  
ՄԻՐԱՋԱՐՆԵՐ  
ՄՈՒՐԱՎԿԱՆ  
ԾԱՂԻԿՆԵՐ

## ՄԱՍ 1

Ծաղիկը կանգնել է մայթեզրին:

ՈՍՏԻԿԱՆ Բ - Ինչո՞ւ ես կանգնել:  
ԾԱՂԻԿ - Բնական պահանջ է...  
ՈՍՏԻԿԱՆ Ա - Այս, դու բնական պահանջ ես բավարարում, այն էլ փողոցում, օրը ցերեկով...

Ոստիկանները ոլորում են Ծաղիկի տերևները, փորձում են իրենց հետ տաճել:

ԾԱՂԻԿ - Ինչ ուրախ եմ, որ ինձ տանելու եք գնդապետի մոտ, ես պատրաստվում էի ծածկել նրա կուրծքը, երբ հետմահու կստանար շքանշան:

ՈՍՏԻԿԱՆ Բ - Այ դու սադրիչ, մեր գնդապետը մինչև գեներալի կոչում չստանա՝ չի մեռնի: Քոստ ծաղիկ, քեզ իհմա կտանենք, և մեր իրամանատարը կթքի վրադ:

ԾԱՂԻԿ - Նրա թուքը ինձ ցող կթվա:

ՈՍՏԻԿԱՆ Գ - Սա մեզ ծեռ է առնում, գուցե թողնենք այստեղ, ոտքերի տակ կորչի:

ԾԱՂԻԿ - Ես երազում էի թաղվել գնդապետի հետ:

ՈՍՏԻԿԱՆ Ա - Դա քեզ չի հաջողվի, դու պիտի ոչնչանա շան պես, մայթերին, ոտքի տակ:

## ՄԱՍ 2

**Ծաղկը քայլում է մայթեզրով:**

**ՈՍՏԻԿԱՆ Բ -** Էդ Շոր քայլել սովորեցիր:

**ԾԱՂԻԿ -** Չեմ քայլում, ինձ քամին էքշում:

**ՈՍՏԻԿԱՆ Գ -** Լավ էլ քայլում ես, համաչափ՝ մեկ, երկու, երեք, և ոչ՝ մեկ, երկու, տասնչորս...

**ԾԱՂԻԿ -** Ուղղակի գնում եմ, գառան դնչին հասնեմ: Նրան չեն թողնում՝ գյուղից քաղաք գա, ճամփեքը փակ են:

**ՈՍՏԻԿԱՆ Ա -** Ե, քեզ կարածի:

**ԾԱՂԻԿ -** Հրաշալի է, երբ գառն է արածում:

**ՈՍՏԻԿԱՆ Բ -** Ծուտ հեռացիր, այս տեղ կարմիր ծաղկի քայլելն արգելված է:

**ԾԱՂԻԿ -** Ես առաջ դեղին էի, իսկ ավելի առաջ՝ կապույտ:

**ՈՍՏԻԿԱՆ Գ -** Նշանակություն չունի: Դու իիմա կարմիր ես, և վերջ, չըվիր:

**ԾԱՂԻԿ -** Բայց ես քամու թևին սիրում եմ սահել:

**ՈՍՏԻԿԱՆ Ա -** Արա, զզվոցրիր, քեզ ասինք՝ չքվիր, թե չէ գնդապետը...

**ԾԱՂԻԿ -** Կեցցե՛ գնդապետը, ես նրա կրծքին...

**ՈՍՏԻԿԱՆ Բ -** Լոիր, ոչ մի կուրծք, ոչ

մի թաղում, նա պիտի դառնա գեներալ, կորի, բայդուշ...

**Մահակմերով իրում են, շտապեցնում ծաղկի շարժը:**

**ԾԱՂԻԿ -** Նրան կրարևեք, նրա վերջին պահին մենակ չեմ թողնի, կայցելեմ, նա շատ դժվար...

**ՈՍՏԻԿԱՆ Ա -** Ես ինչ կրակ է, այ թե կրակելու հրաման լիներ...

**ԾԱՂԻԿ -** Առանց այդ էլ կարմիր ծաղիկ եմ, կար-միր: (*Թթի տակ դնենում է Ռ. Ամիրխանյանի «Կարմիր ծաղիկ» երգը, թռչում հեռու:)*)

**ՈՍՏԻԿԱՆ Գ -** Սրանից էլ պրծանք... Հը էն շանը տեսեք, ինչ էլ հանդիսավոր է գալիս, ասես փողոցն իր համար ենք սարքել...

## ՄԱՍ 3

**Ոստիկանատուն:** Լույսերը վառ են, մարդկանց քազմություն է ներսում և դրսում:

**ՈՍՏԻԿԱՆ Ա -** Ի՞նչ է պատահել:

**ԲԱԺՆԻ ՈՍՏԻԿԱՆ -** Գնդապետը խղձի խայթից հանկարծամահ եղավ:

**ՈՍՏԻԿԱՆ Բ -** Ո՞վ էր թույլ տվել՝ խայթը մտնի ոստիկանատուն, բա ո՞ւր էր իսկիչ հերթապահը, թիկնապահ...

**ԲԱԺՆԻ ՈՍՏԻԿԱՆ -** Նա չի տարբե-

րել օձի խայթը խղճի խայթից, ասենք, ո՞նց տարբերեր, երկուսն էլ չեն երևում:

**ՊՈՏԻԿԱՆ Գ** - Ես ինչ փորձանք եկավ, գնդապետը խիստ էր, բայց լավ մարդ էր, երբեք բռունցքով խփելուց հետո չէր լվացվում, չէր խորշում ամբաստանյալից, բաժին բերվածից, բանտ տարվողից:

**ԲԱԺՆԻ ՊՈՏԻԿԱՆ** - Շատ տարօրինակ բան կատարվեց, մինչև մեռնելը նրան այցելեց մի ծաղիկ, կարմիր ծաղիկ, պտտվեց օդում, այսինքն՝ ծախրեց գնդապետի քթի տակ, ու երբ գնդապետը վերջնականապես շունչը փչեց, ծաղիկն իջավ նրա կրծքին, ասես ծաղկեպսակ է... Զգիտենք, որտեղից եկավ:

**ՊՈՏԻԿԱՆ Ա** - Տարօրինակ բաներ են կատարվում վերջերս, ծաղիկներն էլ են ցնդել:

**ԾԱՂԻԿ** - (Մեկուսի): Տոթ է, այ թե պատուհանները բացեին...

#### ՄԱՍ 4

Ոստիկանության բաժին են մտնում ոստիկանապետի տեղակալը, քաղաքի զիսավոր քժիշկը, այլ կարևոր անձինք:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ** - Ինչից է մահացել:  
**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Պարոն տե-

ղակալ, կարծիք կա, թե խղճի խայթից:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ** - Խախկինում նրա

մոտ այդպիսի նշաններ եղել են:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Չէ, չի նկատվել:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ** - Ուրեմն՝ Եվրոպայից ներմուծված բացիլ է, հազար ենք ասել, պետք է վերափոխել ըստ օրենքի, բայց ոչ այդքան բացոռ... (Ծուրջն է նայում՝ կին չկա՞): Սա թող լինի ծեզ խրատ:

**ԳԼԽԱՎՈՐ ԲԺԻԾԿ** - Օդը ծանր է, սա էլ իր դերն է խաղացել, շնչարգելության պատճառ է, ինչո՞ւ եք այդքան ամուր փակել, գոնե օդանցքը բաց լիներ...

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ** - Բացել օդանցքը:  
Ես ծաղիկն ով է դրել:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Ինքն է եկել:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱՆ** - Ո՞նց, դուռ-լուսամուտ փակ է եղել:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Երբ իմացանք՝ վատ է գնդապետը, ներս մտանք, ծաղիկն էլ մեզ հետ:

**ՊՈՏԻԿԱՆ Ա** - Իմիջիայլոց, ցերեկը փորձեց դիմադրել, ասաց, որ քամու թևին սահելով պիտի նստի գնդապետի անշունչ կրծքին: Մենք շատ կուզեինք կրակել, ոչնչացնել օդում, բայց իրաման չկա, և ահա...

**ՊՈՏԻԿԱՆ Բ** - Իա, թռավ... հասեք, փակեք օդանցքը...

**ՈՍՏԻԿԱՆ Գ** - Անխսիղծը ինչ արագ թռավ, գուցե դրսում բռնենք:  
(Վազում է դուրս:)

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** - Հետախուզում հայտարարեք, նկարե՛լ եք:

**ԲԱԺԱՆՄՈՒԽԾԻ ՊԵՏ** - Գնդապետին նկարել ենք, նա էլ՝ կրծքին:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** - Լավ է, բազմացրեք ծաղկի նկարը և բաժանեք բոլոր բաժանմունքներին, նաև կախեք քաղաքի բանուկ մասերում և քաղաքային տրանսպորտում:

**ՈՍՏԻԿԱՆ Ա** - Դա շատ կասկածելի էր, իենց սկզբից զգացի:

**ՈՍՏԻԿԱՆ Բ** - Ծաղիկ լրտես էլ է լինում:

**ԳԼԽԱՎՈՐ ԲԺԻՇԿ** - Ծաղիկները շատ զգայուն են, հանցագործ տեսնելիս վախից կծկվում են, թրթռում... Պետք է նրան օգտագործել դատավարությունների ընթացքում:

**ԲԱԺԱՆՄՈՒԽԾԻ ՊԵՏ** - Այո, այո, եթե բռնենք:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** - Կարծում եմ, նա կգա գնդապետի թաղմանը:

**ԳԼԽԱՎՈՐ ԲԺԻՇԿ** - Գնդապետին հարկ է տանել մորգ, կներեք, անատոմիկում:

## ՄԱՍ 5

Գլխավոր պողոտայի գլխավոր ծաղկի խանութի նստարանին

նստած են նոր ծանոթացած աղջկի ու տղա:

**ՏՂԱ** - Այս բոյրը քննն է, թե՞ ծաղիկներինը:

**ԱՂՋԻԿ** - Ծանել համար հինգինն է: Ինչու, չես գգում:

**ՏՂԱ** - Ֆրանսիական կոնյակի հոտ ունեն քո մազերը, հարբում եմ ու խենթանում, հոլանդական կակաչի բոյր ունեն քո հոնքերը, ալպիական մանուշակի բոյր ունեն քո թարթիչները...

**ԱՂՋԻԿ** - Մի խոսքով՝ դրախտի այգի եմ... Հո պոետ չես:

**ՏՂԱ** - Դժոխքի ագրեցությամբ դրախտի այգի, պրծում չկա քո հմայքից, կախարդանքից, ուզո՞ն ես, գնանք Վենետիկ, պոետ չեմ, ծիավոր եմ:

**ԱՂՋԻԿ** - Քննության եմ, թե չէ կգայի, ո՞ւր է մեքենադ:

**ՏՂԱ** - Զիով եմ եկել ժամադրության, իմ վիրտուալ սեր: Զիուս չքերեցի, որ ծաղիկները չարածի:

**ԱՂՋԻԿ** - Ասում ես՝ առօձի:

**ՏՂԱ** - Զի:

**ԱՂՋԻԿ** - (արհամարհանքով): Զի՞:

**ՏՂԱ** - Զի, ծի, արաբական նժոյգ:

**ԱՂՋԻԿ** - Իա...

**ՏՂԱ** - Բա, շնորհավորիր համբոյրով:

**ԱՂՋԻԿ** - Զի՞ն համար:

**ՏՂԱ** - Հեքիաթի ձիու:

**ԱՂՋԻԿ** - Միամիտ ջահել ես, դու էլ, երևում է, իեքիաթից ես: Գնում եմ, պիտի պարապեմ:

**ՏՂԱ** - (*փորձում է համրութել*): Դու հազարան հավք ես:

**ԱՂՋԻԿ** - (*վանելով տղային*): Ուշ է:

**ՏՂԱ** - Որ այդպես է՝ ծիուս կանչեմ, անգին արաբական նժոյգ է, գինը՝ անգին, մոտավորապես 20 առողիի չափ:

**ԱՂՋԻԿ** - Պահ:

**ՏՂԱ** - Համբուրեմ, ու կտեսնես ձիուս:

**ԱՂՋԻԿ** - Համբուրիր:

**ՏՂԱ** - Դու իմ դժոխք-դրախտի պարտեզ, իմ ֆեյսբուքի տիրուհի...

**ԱՂՋԻԿ** - Ո՞ւր է ծին:

**Օդում երևում է ծաղիկը: Սուրացկանը բռնում է նրան, մոտենում է սիրահար զույգին:**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Երկնքից ձեզ եմ բերել:

**ՏՂԱ** - Ի՞նչ արժի: Համ էլ, ո՞ր երկնքից, որ ես չգիտեմ:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Մեր երկնքից, տղաջան... Ինչքան տաս:

**ԱՂՋԻԿ** - Եթե երկնքից է, ուրեմն՝ 5 աստղ կտամ, համաձայն ես:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Չի խանգարի, վաղուց կոնյակ չեմ խմել:

**ՏՂԱ** - (*գրպանից հանելով*): Ձեզ 5 փայլուն, խսկական աստղեր:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Ի, ինչ եմ անում իսկականը:

**ԱՂՋԻԿ** - Տար Բյուրականի աստղադիտարան, միլիոն կտան:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Միլիոնը՝ քեզ, ինձ 1000 դրամ տուր:

**ՏՂԱ** - Ես երկնքից եմ եկել, ծաղիկը երկնքից է իջել, մենք աստղերով ենք առևտուր անում:

**ԱՂՋԻԿ** - Դու փողը տուր, ինչ ես մարդուն տանջում:

**ՏՂԱ** - Ինչ է դրամը, ես չգիտեմ:

**ԱՂՋԻԿ** - Բա արաբականդ ո՞նց ես առել: Զեռքդ հեռու տար ազդրիցս:

**ՏՂԱ** - Աստղերի հետ եմ փոխել, Սահարա անապատում: Զզգացիր, ծեռքս ինչ տաք է, ազդրդ սառն է:

**ԱՂՋԻԿ** - Դու քեզ գժի տեղ ես դրել:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Այ տղա, փող ունես՝ տուր, թե չէ քո աստղերը՝ հեչ:

**ԱՂՋԻԿ** - (*վեր կենալով*): Գնում եմ:

**ՏՂԱ** - Թող ծիս զա, իրար հետ գնանք:

**ԱՂՋԻԿ** - Ես էլ գիտեի՝ լուրջ մարդ ես, պարզեց՝ ծիապան ես:

**Հայտնվում է արաբական ձին, խրխնջալով կանգնում է տղայի կողքին:**

**ՏՂԱ** - Կեցցես, հիմա քեզ հետ կթոշենք:

**ԱՂՋԻԿ** - Ի, խսկականից ձի է, հա՞:

**ՏՂԱ** - Անգին ծի: Չհավատացիր,  
մենք կթոշենք առանց քեզ: (*Հեծ-  
նում է, թոշում են երկինք:*)

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Էս հիմարի հետ ինչ  
գործ ունես:

**ԱՂՋԻԿ** - Ինչ իմանայի: Բայց ձեռքի  
տաքությունը դեռ ազդրիս է:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Էս աստղերն ինչ ա-  
նեմ:

**ԾԱՂԻԿ** - Տուր ինձ, թող մնան ինձ  
հետ, կպահեմ թերթերիս:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - (*Շաղիկին*): Ձենդ  
կտրի, լիրը, մթնել է, ոչ մի դրամ  
չեմ վաստակել:

**ԾԱՂԻԿ** - Ես քեզ կօգնեմ, ծերացած  
մարդ:

**ԱՂՋԻԿ** - (*մեկուսի*): Էս խոսող ծուկ  
ա, ծաղիկ չի:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Քո հոյսին որ մնամ,  
այ պոկած ծաղիկ, օրս էս կլինի:

**ԾԱՂԻԿ** - Ծաղիկը չի մահանում,  
թոշնում է, բայց չի մահանում:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Ինձ հոյս ես տա-  
լիս... Տո, հոյսն էլ է մեռնում, որ  
մնաց՝ դու:

**ԾԱՂԻԿ** - Հոյսը մեռնում է, բայց՝  
վերջում: Իսկ մենք իշնում ենք  
հոյսի ծակատին և դիակ դառնո-  
ղին հարություն ենք տալիս:

**ՄՈՒՐԱՑԿԱՆ** - Թող ես էլ մեռնեմ,  
հոյսն էլ, միայն թե դու ծախվես:

**ԱՂՋԻԿ** - Էս ինչ օր ա, գլխիս գիծ ա,  
որ թափվեց: Փախնեմ տուն:

**Աղջիկը գնում է:** Խանութի մոտ  
կանգնում է բեռնատար, ետևից՝  
«Մերսեղես»:

## ՄԱՍ 6

«Մերսեղեսից» դուրս է գալիս  
փողկապավոր տղամարդը:

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐ** - Ինչքան ծաղիկ  
կա, առեք, դրեք բեռնատարի  
մեջ, ծաղկամանները չկոտրեք,  
զգովյ... Ծուտ հասցրեք զորավա-  
րի նախարարություն:

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ** - Հրա-  
մանն ի կատար: Դուք արխային  
գնացեք:

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐ** - Հսկիչներին կա-  
սեմ, կմտնեք նախարարության  
բակ:

Փողկապավորը հեռանում է:

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ** - Եյ, ծա-  
ղիկ ծախող, բոլորն առնում ենք,  
ինչ արժի:

**ԾԱՂԿԱՎԱՃԱՌ ԱՂՋԻԿ** - Պիտի  
հաշվեմ:

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ** -  
Մինչև հաշվեք, էսօրվա ջահել-  
ներն անգրագետ են, միայն հաշ-  
վիչով են գլուխ հանում, կասեմ՝  
1000 դոլար, վերցրեք ո՛վերջ:

**ԾԱՂԿԱՎԱՃԱՌ ԱՂՋԻԿ** - Իմ դեկա-  
վարին պիտի ասեմ, մի րոպե...

(Զանգում է:) Պարոն Պողոսյան, 1000 դոլարով բոլոր ծաղիկներն ուզում են, տամ... Ուրեմն՝ հաշվեմ, հետո տամ, չէ, տամ... Չէ, պարոն Պողոսյան, դա նկատի չունեմ... հասկացա, հումոր է: Լուրջ մարդ է ուզողը... Չէ, լուրջ-անլուրջ՝ էդախսիններից չեմ, պարոն Պողոսյան, դուք չգիտեք: Ուրեմն՝ տամ... (Տեղակալին.) Ընտրեք:

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ - Ի՞նչը ընտրեմ, ինձ մնար՝ քեզ կընտրեի, լավիկն ես, պուժուրս: Բոլորն ենք վերցնում:**

**Փողկապավորի տղաները հավաքում, տանում են փնջերն ու ծաղկամանները:**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ - Տղերք, իմ ծաղիկն էլ առեք, ամբողջ օրը...**

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ - Էղ մի հատը կախարդական է...**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ - Չէ հա, մեծավոր ջան, համա երկնքից եմ բռնել:**

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ - Պահ, վրայի լույսերն էլ երևի աստղեր են:**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ - Հա, մեծավոր ջան, թևավոր ձի հեծած տղա նվիրեց, ասաց՝ տարեք Բյուրականի աստղադիտարան:**

**ՓՈՂԿԱՊԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ - Բիծա, ձե՞ն ես առնում... Տղերք,**

ծաղիկն առեք, աստղերը թողեք բիծուն:

**ՏՂԵՐՁԻՑ ԱՎԱԳԸ - Ի՞նչ արժի, բիծա:**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ - 1000 դրամ:**

**ՏՂԵՐՁԻՑ ԱՎԱԳԸ - Աստղերը պետք չեն:**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ - Հա, էլի, երկնային ծաղիկ է, ուզեք՝ կիսոսի:**

**ՏՂԵՐՁԻՑ ԱՎԱԳԸ - Թող մի հատ խոսի:**

**ԾԱՂԻԿ - Ծըշ...**

**ՏՂԵՐՁԻՑ ԱՎԱԳԸ - Էս խոնք է:**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ - Դե, որ ծաղիկն էդքան հասկանում ա, էլի բան ա:**

**ՏՂԵՐՁԻՑ ԱՎԱԳԸ - Լավ, բիծա, էս քեզ 1000 դրամ, բայց քիչ կիսմես: (Վերցնում է ծաղիկը:) Աստղերդ թող թոշեն, մեկ է, առնող չի լինի:**

**ՄՈՒՐԱՑԿԱՆ - Երևում է, լավ տղա էր՝ 1000 դրամ տվեց: 500 դրամով վաղը կհասնեմ Բյուրական, բալթի աստղերն էլ ծախեմ:**

## ՄԱՍ 7

**Հսկա շենքի դարպասների դիմաց, մեքենայից քեռմաքափում են ծաղիկները:**

**Դահլիճում գլխավոր Պետի ծնունդն են նշում:**

**ԳԼԽԱՎՈՐԻ ՏԵՂԱԿԱԼ - Դուք որ չլինեիք, մենք այստեղ նստած**

չէինք լինի: Դուք համ էլ մեծ մանկագիր եք:

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Կանգնած է խոսում, բայց ասում է՝ նստած չէինք լինի, սուտ է ասում: Մանկագիր չէ՝ դրամատուրգ:

**ՄՅՈՒՍ ՏԵՂԱԿԱԼ -** Դուք ավելին եք արել, քան բոլոր նախկին դեկավարները: Դուք փրկեցիք մեր պատիվը:

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Սա նախկին դեկավարի դրածոն է, հիմա ներկայի դրածոն է, մի խոսքով՝ բրածոքնող:

**ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԾԵՐ, որոնց կրծքին գրված է թվեր:**

**1-ին** - Դուք և մենք միասին ուժ ենք, առանց ձեզ մենք կոտրած կուժ ենք:

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Սա սկսնակ բանաստեղծ գեներալ է, կովում է որպես բանաստեղծ, գրում է որպես գեներալ:

**2-րդ** - Ախր, ով էր ասում, որ այդքան բարի լինեիք, որ համարձակվենք ձեր կենացը խմել: Դուք նաև լավ բասկետբոլիստ կլինեիք, կիրկեիք մեր սպորտը:

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Սրա գլխին պետը պլաստիկե շշով փորձել է խփել, բայց շպրտել է դահլիճի կողմը: Նա բասկետբոլիստ չէ, սուսերամարտիկ է:

**3-րդ** - Լավ կլիներ՝ մի տղա ունենայիք, իհարկե, նախապես ամուսնանայիք մի կաթնակեր աղջկա հետ, ու ձեր տղան շարունակեր ձեր գործը:

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Նա մի աղջիկ ունի, որի հետ պետը սիլի-թիլի է անում:

**4-րդ** - Դուք, ձեր, մեր...

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Մտածում են՝ կեսար է, ասում են՝ համեստ ժողովրդի զավակ է:

**5-րդ** - Մեր, դուք, ձեր, բոլոր...

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Սրա մտքում հասունանում է Բրուտոս դառնալու միտքը:

**6-րդ** - Երանի, Աստված տա, դուք... Փրկիչ...

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Սա ուզում է, առանց գնդապետ դառնալու, գեներալի ուսադիր ստանալ:

**7-րդ** - Փառք, մեծ, լուս իշնի...

**ԾԱՂԻԿ - (Մեկուսի):** Հարբել են, ուզում են շուտ հեռանալ, բայց սպասում են իրամանի:

**ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏ** - Դուք գիտեք, որ միամիտ չեմ, խոսքերի չեմ հավատում, միայն գործ: Ինձ փրկիչ համարողներից ոմանք իմ խաչելությանն են պատրաստվում: Բարի գիշեր:

**ԾԱՂԻԿ - (քիչ լսելի):** Այս մարդն իր մահվան դեմ կանգնող է և չի

ընկրոկի կակտուսի պես: Քիչ եմ տեսել այսպիսի ծաղիկ:

**Դահլիճը փակելուց առաջ ծաղկները տաճում, բեռնում են թերմատարք:**

**Գիշերով բարձրացած քամու թիվն հայտնվում է ծաղիկը:**

**ԿԱԿԱԶ -** Իրեն կաչաղակի տեղ է դրել...

**ԹՐԱՇՈՒԾԱՆ -** (լսելի փնթփնթում է): Բա չե՞ս ասում, մարդկանց մեջ խոսում էր մարդերեն, իրեն պոլիգոտ է կարծում, համ էլ, ինչ գործ ունես, մարդկանց ես բամբասում...

**ՄԵԽԱԿ -** Մեջընկան է, ո՞ւր է թռչում մեծամիտը...

**ԿԱԿՏՈՒՍ -** Գլխին մի փորձանք է բերելու...

**ԿԱԿԱԶ -** Կարմիր փորձանք, մեջը՝ սև, կայծակնահար կլինի, ասա՝ ո՞ւր ես թափահարվում, տո դո՞ւ, հլը, հլը, ճախրում է...

**ԹՐԱՇՈՒԾԱՆ -** Մեր հայրենիքը հողն է, ջուրն է, թեպետ մարդիկ իրենցն են համարում այդ ամենը, և էդ ծաղիկն էլ խառնվում է ոչ միայն նրանց գործերին, այլև հիմա երկնային հրեշտակներին է միանալու, սա չափազանց է:

**ՄԵԽԱԿ -** Ասում են՝ առաջ կապոյտ է եղել, հետո՝ դեղին, հիմա էլ՝

կարմիր, փոփոխական. քամելիոն է:

**ԿԱԿՏՈՒՍ -** Երևի կենդանաբոյս է, գոնե վարդ լիներ, ծակծկեր, սիրվել չցանկանար...

**ԿԱԿԱԶ -** Այո, սիրվել տենչացողը հածախ ատելության է արժանանում:

**ԿԱԿՏՈՒՍ -** Ճիշտ ես, ինքնասիրությունից զուրկ բույսը գառան դնչի կեր է դառնում:

**ԹՐԱՇՈՒԾԱՆ -** Տեսեք, ո՞ւր հասավ... Երկինքը ծաղկի բոստան չէ, միամիտ:

**ՄԵԽԱԿ -** Նայեք, պոկվեց մի թերթը...

**ԿԱԿԱԶ -** Մարդկանց պես ծաղատանալու է: Գոնե սերմը հողին հասնի:

**ԹՐԱՇՈՒԾԱՆ -** Թող չհասնի, դրա տիպը մեզ պետք է:

**ԿԱԿԱԶ -** Չէ:

**ՄԵԽԱԿ -** Երբեք:

**ԿԱԿՏՈՒՍ -** Կտրվի քամելիոն ցեղը:

Ծաղիկը կորակ ամաերի մեջ, քայց նա տեսնում է բոլորին, անգամ մռայլ քուաների միջով:

## ՄԱՍ 8

Երկրում հայտարարված է Ծաղկի հետախուզություն: Թատրոնի ուժինուրը բեմին քայլելով, մերք-

մերք աքոռին նստելով, մի անգամ էլ հատակին պառկած բարձրաճայն խորհրդածում է:

**ՌԵԺԻՍՈՐ -** Ախր, ինչպես բեմադրեմ Ծաղկի հետախուզում, ասենք, ես չեմ, դուք եք: Ինչպես ներկայացնեմ քամու թերանն ընկած հանցագործ կամ դեռևս անմեղության կանխավարկածով պաշտպանված Ծաղկին: Հեշտ է նոր, դեռ չտեսնված ռեժիսորայով բեմին պատկերել փախուստի մեջ ձլորած, թերթերը հազիվ պահած ծաղկի, ով կխաղա նրա դերը, դու, Ֆլորա: (Երևակայական թատրոնի դերասանուհուն.) Ախր, ո՞նց ես քո հետույքը օդ բարձրացնելու: (Երևակայական թատրոնի դերասանին.) Ախր, Պողոս, ո՞նց ես խաղալու քամու դեր, նրա պես վազվելու, ֆշտացնելու և Ֆլորային օդում չմշկորդի պես պահելու ծիգն ես գործադրելու: Կամ որտեղից մի լավ ծաղիկ գտնենք կամ բուտաֆորիկ ծաղիկ սարքենք, բա ամո՞թ չի 21-րդ դարում սարքովի ծաղկով բեմադրել իրականում հետախուզվող վարդի կամ թրաշուշանի: Հետո... հետո էլ ինչ բեմադրություն, որ մի քանի հոգու չսպանենք, մի երեք հոգու չծեծենք, արյուն չցուցադրենք: Հանդիսատեսը վերջերս

ագրեսիվ է դարձել երկրների ղեկավարների նման, հայիոյանք, ավելի ծիշտ՝ քֆուր-քյաֆար է տենչում լսել, իբր հումոր է, իբր ժամանակակից է, մոդեռն, բա ես ո՞նց ծաղկին հայիոյեմ կամ ո՞նց սեքսի տեսարան բեմադրեմ, ես չեմ, դուք, այ հանդիսատեսներ, դե եկեք ու իմ տեղը ծաղկի սեքս մատուցեք օրը ցերեկով կամ գիշերով: (Իբր ձայն լսեց:) Ի՞նչ, հոշոտո՞ւմ... չէ, բա ի՞նչ... հա, փոշոտում, ծիշտ է, դա ծաղիկների սեքսն է, այն է՛ խմբակային, էս մի գործը հեշտ է, կգտնենք մի քանի ծաղիկ և մի քամի, թող նրանց միջև թռչկոտի, տանի-բերի, սերմերը շաղ տա բեմին, երևի մեր այս չոր բեմն էլ վերածվի ծաղկունքի, երբեք չեմ ներկայացրել հասարակ, սիրուն, ծաղկած դաշտ, մեջը՝ ովեր, գառներ և մի ոեժիսոր հովիվ, չէ՝ գայլ: Այն, գայլի պես սոված եմ, 21-րդ դարի ոճը՝ հափոելու, վայելելու, ծեզ (ցուց է տալիս դահլիճը) ցուցադրելու: (Պաուզա:) Դերասաններն ուշանում են, ո՞ր են կորել:

**Դահլիճ է մտնում Ֆլորան:**

**ՖԼՈՐԱ -** (շնչակտուր): Կներեք, պարոն ոե-ժի-սոր, բռնաբարեցին, մինչև տեղ հասաւ:

**ՌԵԺԻՍՈՐ -** Ո՞նց:

**ՖԼՈՐԱ - Քիչ էր մնում՝ ոստիկանություն տանեին:** Ավտոբուսում ինձ համար հանգիստ նստած էի, մեկ էլ մի ոստիկան հարցնում է՝ ի՞նչ է ձեր անունը: Ինձ թվաց՝ իմ երկրպագուներից է, այսինքն՝ մեր թատրոնի, պատասխանում եմ՝ Ֆլորա: Հենց սա լսեց, շեշտակի ասաց՝ դուք պիտի հետևեք ինձ, հետախուզում ենք հայտարարել և փնտրում ենք մի գուշակ, համարյա հանցագործ ծաղկի, իսկը՝ Ֆլորայի գավակ, խնդրում եմ, հետևեք ինձ: Ասում եմ՝ ախր, ես ժողովրդական, այսինքն՝ ժողովրդական թատրոնի դերասաններից եմ՝ Ֆլորա Ծաղիկյանը, ես... Ասում է հիմարը՝ այն, ինց դուք, Ֆլորա, համ էլ՝ Ծաղիկյան, հետևեք, թե չէ բերման կենթարկեմ... Ինչի՞ կենթարկեք, զայրանում եմ: Լավ է, ավտոբուսի վարորդը ծանաչում էր ինձ, միշտ այդ երթուղայինով եմ թատրոն գալիս, միջամտեց ու հաստատեց, որ ես դերասանուի Ֆլորա Ծաղիկյանն եմ, բայց գործ չունեմ ոչ մի հանցագործ ծաղկի հետ: Ոստիկանը սկզբում մրգամոթաց, հետո թե՝ լավ, կստուգենք, կիմանանք, արդյո՞ք սույն Ֆլորա Ծաղիկյանը իմանալ-չհայտնելու հոդվածի տակ չի ընկնի, կստուգենք... Ասաց ու

ինք նայեց ինձ էլ, մյուսներին էլ և վարորդին՝ հատկապես, վերջում, իջնելուց առաջ հասցրեց ասել՝ ծաղիկների հանցանքն եք կոծկում, ամոթ է, մի հող ու ջրի մարդ ենք... Բա սա բռնաբարել չի, պարոն ռեժիսոր:

**ՌԵԺԻՍՈՐ - Այն,** բռնաբարել է... Ծաղիկյան Ֆլորայի իրավունքն է բռնաբարվել: Այ, ինց սա եմ բեմադրելու:

Ներս են մտնում ուշացած դերասանները և հունական երգչախմբի պես գրչում եմ՝ «Մեզ քերման էին ենթարկում իմանալ-չհայտնելու հոդվածի, զիտեմ, որ մասով, իբր Ծաղկի՝ հանցագործ, կախարդ, գուշակ, ահարեկիչ ծաղկի մասին չենք տեղեկացնում, բայց ո՞ւր է այդ ծաղկի կոչվածը, եղ ոչովիչը, որ մեր հանգիստը խռովում է: Հիմա մենք ի՞նչ սրտով փորձ անենք, հա, իմիջիայլոց, քատրոնի դրան ապակուն կպցրած է հետախուզման հայտարարությունը»:

**ՌԵԺԻՍՈՐ - Դա հրաշալի է,** դա ցնցող է, բերեք դուռը, ես ուզում եմ բեմին տնկել այդ դուռը, նրա միջով կմտնենք, դուրս կգանք, մեր կյանքը սկսվում է ծաղկեփնջով՝ ծննդատանը, ապա բոլոր

կարևոր առիթներով՝ կնունք, դպրոց, ինստիտուտ, հարսանիք, հաջողություն և թաղում առանց ծաղկի չենք պատկերացնում: Ծաղիկը պատերազմի ոգին է. հաղթողին՝ դրասանգ, զոհվածին՝ ծածկոց: Բերեք դուռը, բանվորներ, բերեք դուռը ծաղկի պատկերով, ես կհավասարվեմ Ստանիլավսկուն, Պիտեր Բրուկին, Աձեմյանին և Ֆելինիին, բերեք դուռը, ես այդ դռնով եմ մտնելու թատրոնի պատմության մեջ: Մենք պիտի այնպես խաղանք այս ծաղկաբեմադրությունը, որ նրանից՝ ծաղկից, ահարեկչության և անմեղության միացյալ հոտ գա: Մենք օդում թռչող ծաղկի վրա պիտի հարձակվենք մանգաղով, պատկերացրեք՝ բոլորս մանգաղներով օդն ենք թրատում, գնդացիրով և այլ գենքերով... Զարկված ծաղկի դերը ոչ ոք չի խաղա, որովհետև նա չի ընկնելու, թռչելու է միշտ մեր բեմի ազատ օդում:

## ՄԱՍ 9

**Գնդապետի քարումն է:** Ոստիկանական և քաղաքացիական զգեստներով մարդիկ աշալուրջ սպասում են հետախուզվող ծաղկի ի հայտ գալուն: Ոմանց ձեռքնե-

րում ատրճանակ կա, մի եղանակ պարսատիկով է, թեպետ երեխա չէ և ունի քաքցրած ուսադիրներ: Բոլորի աչքը երկնքի կողմն է, իսկ մյուս աչքը՝ գնդապետի կողմն ը:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Ո՞ւր է շան ծնունդը, մեռանք սպասելով:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** - Երևի հետախուզման հոտն առել է, ինչքան չլինի՝ գուշակ է:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Կարո՞ղ ա եկել ա ու խաբար չենք:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** - Չէ հա, եթե զար, պարսատիկով գոնե Արտաշը կզարկեր:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Խոստացել էի այսօր բռնեմ... խայտառակ կը ընեմ: Պատիվս գետնովը կտամ:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** - Փողայինը հնչեց, փոսն են իջեցնում, ուշադիր լինենք:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Լավ կլինի ես Էլ հետը թաղվեմ, խոստում չկատարեցի:

**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ** - Շեֆ ջան, դու ինչ անես, երևի թռշնել ա շան ծնունդը, ծաղիկ էր, իո մարդ չէր:

**ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ** - Արա, ձիշտ ես ասում, ընկել ենք ծաղրուծանակի մեջ, ոնց որ երեխա լինենք: Վերևից կարո՞ղ ա մեզ ձեռ առան: Մենք պաշտպանում ենք մեր պետության պատիվը, բայց մի քիչ հումորը մեզ չի խանգարի:

**Հնչում են կրակահերթեր: Թաղեցին գնդապետին:**

## ՄԱՍ 10

Ծաղիկը քոչում է քաղաքի վրայով, վերևից տեսնում է իր պատկերը՝ տարածված քոլոր ցուցափեղկերին, դրներին, մեքենաների դիմապակիմներին, ողբարձրացած փուչիկների վրա:

**ԾԱՂԻԿ -** Տոն է, քաղաքը միշտ պետք է այսպես զարդարվի, մանավանդ հնագույն, բերդապարիսա ու բերդ ունեցող, Հռոմից հին քաղաքը: Գնամ գլխավոր հրապարակ, այնտեղ միշտ զբուսաշրջիկներ են ու երաժշտություն, ինչ լավ աշնան օր է:

Հրապարակում քազմամարդ համերգ է, երիտասարդությունը ցնծում է, ոստիկանները հսկում են նրանց կուլտուրական հանգիւտը: Պարում են քոլորը, նաև՝ որոշ լրտեսներ: Պարը ցույց է տալիս նրանց ազգությունը:

**ԾԱՂԻԿ -** Ես էլ միանամ նրանց խելահեղ ընթացքին, բացեմ թերթիկներս, տամ քամուն ու վերանամ խլածաղկի պսակի պես: (*Պարում է ջահելների հետ:*) Էհեյ, ես տեսնում եմ բոլորիդ, անգամ մոլորականին, որ աստղերը տանում է Բյուրական, ոսքով է գնում, ահա նա, հազիվ է քայլում, կիասնեմ նրան ու կօգնեմ, չկասկածեք: Եթե չհասնեմ, սերմեր կցում դաշտերում, դա միշտ կարող ենք անել մենք՝ ծաղիկներս: Մեզ փնտրեք ծաղիկների մեջ, ոչ մարդկանց, կամ փնտրեք ծաղկանման երեխաների ձեռքերում: Էհեյ, ոեժիսոր, դուն վրայից պոկիր թղթե հայտարարությունը և կացրու իրական, իսկական ծաղիկ:

Այո՛, ծաղիկներ ու մարդիկ, երկինքն ամենակապույտ, ամենալավ վարագույրն է՝ իշած երկրագնդի ու մեր թատրոնի վրա: Վերջ, բայց միթե վերջ: Երկնքից ես ձեզ՝ ընծա: (*Հջնում է դահլիճ:*)

**Վարագույրն իջնում է, և ոչ ոք չի մկատում:**

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ

## Սմբատ ԲՈՒԽԻԱԹՅԱՆ

Լուսանկարը՝ Մատում Ավագյանի



Քաղաքակրթության դարակազմիկ մատյանում  
վավերացված են բազմաթիվ հեղաշրջումներ,  
որոնք փոխել են աշխարհի դեմքը՝  
տարաբնոյթ դրսնորումներ արարելով։  
Իմ հերոսները հավաքական կերպարներ են, իսկ  
նրանց քաղաքում մոլեգնող հեղափոխությունը  
համամարդկային շարժման բնույթ է  
բովանդակում։ Ես տեսնում եմ մարդուն իբրև  
մոլորակի քաղաքացի և առանձնապես չեմ  
կարևորում անձնանուններն ու տեղանունները։  
Իմ պիեսի միտքը այս մոդելի մեջ է տեղադրված։

# ԵՐԶԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԺԱՄԸ

(Դրամա երկու գործողությամբ, յոր պեսարանով)

Յուրաքանչյուր մարդ  
իր սեփական կյանքի հանդիսադրություն է:

**Գործող անձինք**

**ԳՆԴԱՊԵՏ**

**ԱՆՏՈՒԱՆ -** միջին տարիքի տղամարդ, արձակագիր

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Անտուանի կինը, տպավորիչ արտաքին ունի

**ԻԶԱԲԵԼ -** Էլիզաբեթի քույրը, մոտ 22 տարեկան,

պայծառ, քնքուշ ու խելացի

**ԶՈՒԻ -** Էլիզաբեթի և Իզաբելի հայրը, տառապում է

հոգեկան հիվանդությամբ

**ԳԱԲՐԻԵԼ ԻՍԱՀԱԿ -** զիսավոր բժիշկ

**1-ին սանիտար**

**2-րդ սանիտար**

**Թոռուցիկ բաժանող զինվոր**

**2-րդ զինվոր**

**Ենթասպա**

**Մի քանի խելազար**

**Քեմը բաժանված է միջնորմով:** Դեմ հանդիման երկու սենյակ,

որոնցից ձախ կողմինը փոքր է մյուսից:

Զախակողմյան սենյակը՝ դուռ, վանդակապատ պատուհան, սեղան, աթոռ, մահճակալ, որի վրա պառկած է Հիվանդը, կախիչ, վրան՝ հիվանդանոցային խալաք:

Աջակողմյան սենյակում՝ հեռուստացույց, սեղան՝ չորս աքոռով, բազմոց, վառարան, արտահագուստների կախիչ: Վառելափայտը վառարանի մոտ է: Պատուհան, որը ետևի պատին է՝ հանդիսատեսին դեմ առ դեմ (ինչպես ձախակողմյան սենյակում):

Այս սենյակն ունի երեք դուռ: Առաջինը մուտքն է, երկրորդ դուռը տանում է նմանական, իսկ երրորդը՝ խոհանոց:

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Տեսարան առաջին

Լույսը մարում է: Լուսարձակի ճառագայթը լուսավորում է միմիայն քեմի կենտրոնը: Գալիս է Գնդապետը՝ ծանր, հավատավոր մարդու քայլվածքով:  
Մի պահ լրում է՝ խոսքը ծանրակշիռ դարձնելու միտումով:

#### ԳՆԴԱՊԵՏ - Տիկնայք և պարոնայք:

Հեղափոխության համար կամավորներ են անհրաժեշտ: Հեղափոխությունն իշխանության ղեկին կիասցնի նոր նախագահ, վարչապետ և նախարարներ: Այս գործը գլուխ բերելու համար մեզ անհրաժեշտ են մարդիկ, ովքեր մենք հայրենիք ունեն և սիրում են իրենց հայրենիքը մեկ անգամ ու մեկընդիշտ: Զեզանից ով կտա իր լավագույնը հեղափոխության հաղթանակին: (Զեռքը պարզում է դեպի դահլիճը՝ պատահական հանդիսատեսների մատնացույց անելով:) Դո՞ք... դո՞ք... իսկ գուցե դո՞ք... (Պաուզա:) Տիկնայք և պարոնայք: Արքան մեռավ: Մի պահ վերցրեք ձեր գլխարկները:

Հանդիսավոր հեռանում է:

### Տեսարան երկրորդ

Զախ կողմի սենյակում, մահճակալին պառկած է Զոնին: Տնքում է, շուտումուտ գալիս:

Աջակողմյան սենյակում Անտուանն է՝ կիսադիմով դեպի հան-

դիսատեսը, սեղանի մոտ նստած: Ստեղծագործում է. գրում է իր վեպը:

ԱՆՏՈՒԱՆ - (բոունցքով սեղանին հարվածելով): Ես ձեզ կստիպեմ խոսել: Դուք բոլորդ էլ կշարժվեք, անասուններ, կմտնեք գործողությունների մեջ ու կխաղաք ձեր դերերը: Իմ բոլոր վեպերի հերոսները ի վերջո կենդանանում են: Նրանք անում են այն, ինչը որ նս եմ ցանկանում:

Այս սենյակում լույսը մարում է: Մնում է սեղանը լուսավորող լուսամփոփը: Քացվում է ձախ սենյակի դռուք, ներս է մտնում իզարելը: Զեռքին հովանոց ունի և տոպարակ:

ԻՉԱԲԵԼ - Բարի լոյս, հայրիկ: Վեր կաց, քեզ նարինջներ եմ բերել:

Զոնին պառկած է՝ գլուխը վերմակի տակ, չի շարժվում: Լարված լուսթյուն է:

ԻՉԱԲԵԼ - Հայրիկ:

ԶՈՆԻ - (Երկարացնում է ձեռքը վերմակի տակից): Տուր իմ նարինջները:

**ԻՉԱԲԵԼ** - (չի զարմանում, ծանոթ է հոր տարօրինակություններին): Իհարկե, կտամ, բայց չես կարող ուտել, լավ կլինի նախ վեր կենաս:

Հիվանդն ի վերջո շարժվում է: Վերմակը մի կողմ նետելով՝ նստում է ծանրութեած: Դեմքին դրշմված են տաճաճք, անորոշություն: Մազերը՝ խառնացրիվ: Իզարելը տոպարակը դնում է սեղանին, կախիչից խալաքը վերցնելով՝ գցում է հոր ուսերին: Նստում է նրան դեմ հաճդիման՝ աքոնին:

**ԶՈՒՏԻ** - Ինչ կա դրսում, մարդիկ դեռ մնացել են:

**ԻՉԱԲԵԼ** - Դրսում աշուն է՝ տխուր ու իհասքանչ: Լսում ես անձրևի ձայնը: Տեղատարափը քշել է մարդկանց, ինձ նման գժեր քիչ կան փողոցներում:

**ԶՈՒՏԻ** - (Ճոճվելով, անորոշության մեջ սևեռված հայացքով, քթի տակ՝ ինքն իրեն կրկնում է աղջկա վերջին խոսքերը): Գժեր քիչ կան փողոցներում: (Սրափվում է:) Ամսի քանիշը կլինի, ի՞ր:

**ԻՉԱԲԵԼ** - (պատասխանում է՝ տոպարակից նարինջներ հանելով և սեղանին շարելով): Այսօօօ... Եթե չեմ սխալվում՝ քսանմեկն է: Նարինջ կեղլեմ:

**ԶՈՒՏԻ** - Կեղլսիր: Բայց ես դանակ չունեմ: Էստեղ ոչ ոք դանակ չունի:

Բժիշկը չի թողնում: Եղոնգներով կպոկես կեղևը:

**ԻՉԱԲԵԼ** - (ծիծաղում է, բայց՝ շինձու): Բան գտար ասելու: Չե՞ս իհշում, թե ոնց էինք վառարանից հանած կարտոֆիլները մաքրում: Ո՞վ էր հայթում, ե՞ս, թե՞ դու:

**ԶՈՒՏԻ** - Դա վաղո՞ւց է եղել:

**ԻՉԱԲԵԼ** - Իմ մանկության ամենավառ հուշերը, ախր, կապված են ծմոան երեկոների հետ, երբ սառուցով էին նախշազարդվում լուսամուտների ապակիները, իսկ վառարանին դրված թեյամանը կարմրում էր՝ գոլորշի արձակելով: Ծիմա ասա, հայրիկ, ո՞վ էր հայթում: Ե՞ս, թե՞ դու:

**ԶՈՒՏԻ** - (կրկին ընկնելով ինքնամուացության մեջ): Լսում եմ անձրևի ձայնը... Լսում եմ... Զուրը բլբլթում է թեյամանում: Կնոջ ձայն... Մեկը ինձ է կանչում...

**ԻՉԱԲԵԼ** - (վախեցած): Թո՞ն այդ մտքերը, հայրիկ, արի ուրիշ բանից խոսենք:

**ԶՈՒՏԻ** - (շեշտակի նայելով աղջկան): Ես կարոտում եմ քո մորը, կարոտում եմ Մարիաննային, հասկանո՞ւմ ես: Մենք բարձրանում էինք լյառն ի վեր... Ինձ երբեք չեմ ների, երբեք... Պիտի կանխեի նրան, երբ ոտքը կախ էր գցել... Իսկ հետո՝ մնաց ետևում: (Բորբոքվում է իր իսկ խոսքից, ապա շարունակում՝ ձեռքերը դեպի երկինք կարկառելով:) Աստ-

ված իմ... Դա ինչ պատիժ էր, ինչ էր նշանակում քո հրամանը. «Զշրջվեք ու ետ չնայեք, կմեռնեք այլապես»: Հիմա կանգնած է կինս քարքարոս ձանապարհին, կանգնած է՝ անտեր ու անհոգս: Իմ Մարդիաննան աղի արձան է, և անձրևն է լվանում նրա ցանկալի մարմինը:

**ԻՉԱԲԵԼ** - (փութով ոտքի է կանգնում, նարինջներից մի քանիսն ընկնում են հատակին, փաթաթվում է հորը): Հայրիկ, թող այդ մտքերը, մայրս ավտովթարից մահացավ, չես հիշում:

**ԶՈՒՏԻ** - (անշարժանում է՝ խառնախնթոր մտքերը ժողովելու ջանքեր գործադրելով): Ավտովթար, ասում ես: Մարդիաննան ավտովթարից է մահացել:

**ԻՉԱԲԵԼ** - Իհարկե: Տարիներ առաջ:

**ԶՈՒՏԻ** - Իսկ քննիլուր ուր է: Որտեղ է ելիզաբեթը, ինչո՞ւ չի գալիս: Հո մի բան չի պատահել: Բժիշկն ասում էր՝ քաղաքում չի: Հապա ո՞ւր է, ո՞ր գրողի ծոցում է:

**ԻՉԱԲԵԼ** - Արի նստենք, հայր: (Ժերևս ստիպելով՝ հորը նստեցնում է մահճակալին, նարինջները հավաքելով՝ ինքն էլ տեղավորվում աթոռին:): Մի չարացիր, խնդրում եմ: Աշխատանքը խլել է ելիզաբեթի ողջ կորովն ու ժամանակը: Ես էլ հաճախ չեմ տեսնում նրան:

Լոռում են՝ միմյանց աչքերի մեջ նայելով: Հետզիետե ուժգնացող ձայներ՝ դրսից: Ցուցարարների գոռում-գոյզում: Զգացվում է, որ արտաքին աշխարհից ներս բափանցող աղմուկը գրավել է նրանց ուշադրությունը:

**ԶՈՒՏԻ** - Սա ինչ է:

**ԻՉԱԲԵԼ** - Քաղաքում խժիժություններ են, իշխանափոխության փորձեր: Մարդիկ պայքարում են լուսավոր օրեր ունենալու համար և ապագա ունենալու համար:

**ԶՈՒՏԻ** - (մոտենում է պատուհանին): Կանգնած է մեջքով դեպի հանդիսատեսը: Կատարվողն ընդունում է հիվանդագին բռնկումով. կարծես դրսի աշխարհի հետ է խոսուու: Անմիտներ: Դուք չգիտեք, թե ինչ է կորուստը: Դուք բոլորդ կույր գործիքներ եք: (Ձեռքով հարվածում է ձաղավանդակին՝ բղավելով:) Նեոփ զավակներ, ես ձեզ ցույց կտամ, դեռ չգիտեք, թե ում հետ եք գործ ունենալու...

Սենյակ են վազրու քիշկ Գարքիել Իսահակն ու երկու սանիտար:

**ԳԱԲՐԻԵԼ ԻՍԱՀԱԿ** - (փաղաքուց ձայնով): Զոնի, ինչ ես անում:

Հիվանդը շրջվում է: Աչքերում ատելության կայծեր կամ: Բժիշկը հասկացնում է Իզաբելին, որ շտապ հեռանա: Լռելայն են-

**Քարեվելով՝ աղջիկը գնում է:** Սա-  
նիտարները զգուշորեն մոտենում  
են Զոնիին:

**ԶՈՆԻ - ԶՄՈՏԵՆԱՐԸ:** Ի՞նչ եք ուզում:  
Կարծում եք՝ խելագար եմ, հա՞:  
Հապա դուրս նայեք: (*Պատուհա-  
նը մատնացուց անելով:*) Խսկա-  
կան խելագարները այնտեղ են.  
Թոկից փախած մարդիկ, որ դուրս  
են եկել, որպեսզի խորտակեն  
մեր կյանքն ու մտքերը: Բայց ես  
ասում եմ ձեզ. Երկնքից ծծումք ու  
կրակ է տեղալու շուտով... Ինձ  
գժի տեղ եք դրել, հա՞: Կարծում  
եք՝ զառանցո՞ւմ եմ...

**Սանիտարները ճանկում են Զո-  
նիին աջ և ձախ քերից, ուժով  
նստեցնում են մահճակալին:**

**ԳԱԲՐԻԵԼ ԻՍԱՀԱԿ - (ηեղահար  
մեկնելով, հրամայական):** Տվեք,  
թող խմի:

1-ին սանիտարը փոխանցում է  
հարք, մյուսը, սեղամին դրված  
բաժակը վերցնելով՝ ջուրն է մա-  
տուցում: Զոնին ենքարկում է:

**ԳԱԲՐԻԵԼ ԻՍԱՀԱԿ - (կրկին՝ փա-  
ղաքուշ ձայնով):** Պառկիր, Զոնի,  
պառկիր: Ամեն բան լավ է: Մար-  
դիկ միշտ էլ ինչ-որ բաներ են  
պահանջում: Նրանք համախմբ-  
վում են երբեմն, բայց և պա-  
ռակտվում են ի վերջո, իսկ  
իրականությունը մնում է անփո-

փոխ: Ուրեմն՝ հանգիստ եղիր: Այ,  
այդպես...

**Հիվանդը հանձնվում է կամաց-  
կամաց:** Բժիշկն ու սանիտարնե-  
րը դուրս են գալիս: Երբ նրանք  
հեռանում են, Զոնին ցատկում է  
մահճակալից: Նրա պիրկ մարմ-  
նի մեջ դիվական ուժ է եռում:  
Թքում է հարք, ապա՝ չարանենգ  
հոհոում:

**ԶՈՆԻ - Թոնի:** Կարծում եք՝ կո՞լ եմ  
տալիս ձեր զգվելի հարերը: Հի-  
մարներ: Չեք հասկանում խոս-  
քերս, որովհետև չգիտեք, թե ինչ  
կա իրականության ետևում: Ո-  
րովհետև կույր եք: Ոչինչ, դեռ  
կտեսնեք, թե ինչեր է լինելու:  
(Հոսամուտին մոտենալով՝ ան-  
շարժանում է, ապա փլվում է ան-  
կողնուն:) Դեռ կտեսնեք:

**Սենյակում մարում է լույսը:**

### Տեսարան երրորդ

**Վառվում է աջակողմյան սենյա-  
կի լույսը:** Անսուանը կանգնած է  
լուսամուտի մոտ՝ կիսադեմով դե-  
պի հանդիսատեսը: Փողոցում  
ծավալվում են իրադարձություն-  
ներ: Դա հասկանալի է դառնում  
գոռում-գոչումներից, ուսզմա-  
տենչ ճիշերից:

- Ժողովուրդ, ոտքի կանգնեք:
- Առաջ, առաջ, հաղթանակը մոտ  
է:

3. - Ասում են՝ Նախագահը փախուստի փորձ է արել:

**ԱՆՏՈՒԱՆ** - (մտքերի մեջ ընկած, ետ ու առաջ քայլում է սենյակում՝ ինքն իրեն խոսելով: Ապա՝ նստում է իր աթոռին, սեղանի մոտ): Տեսնես Էլիզաբեթը որտեղ է: Եթե կինն ուշանում է, ուրեմն կամ խանութ է մտել, կամ փողոցում հանդիպել է մեկին: Իհարկե: Եթե կին, ուրեմն՝ առևտուր և անվերջանալի գրույցներ: Հըմ... Ճշմարտությունը խոսեցի... Ախր, ո՞ր մնաց, Է...

**Ներս է մտնում Էլիզաբեթը:**

**ԷԼԻԶԱԲԵԹ** - Ողջոյն: Նկատել ես, իրաշալի աշուն է. արևոտ, տաք ու գժոտ: Հապա մոտեցիր պատուհանին ու տես:

**ԱՆՏՈՒԱՆ** - (պատուհանին մոտենալով): Էստեղ ինչ կա արտասովոր: Սովորական, անտրամադիր աշուն է:

**ԷԼԻԶԱԲԵԹ** - Նայիր տերևներին: Կարծես աշնան հոգեվարքն են փոխանցում: Իմ կարծիքով, միքիչ գժոտ պիտի լինես՝ այդպես սիրուն ու նազանքով մեռնելու համար:

**ԱՆՏՈՒԱՆ** - Չեմ վիճում: Բայց լիարժեք չեմ էլ ընդունում: Որտեղ էիր: Ինչ կար դրսի աշխարհում:

**ԷԼԻԶԱԲԵԹ** - Ինչ պիտի լիներ. գործադրով, ցույցեր... Խանութները փակ են, հաց չկա: Ինչ-որ մեկը

շեփոր էր նվագում՝ համընդիանուր ոգևորություն առաջացնելով: Եվ գիտե՞ս, ինչն է զարմանալի: Յուցարարների մեջ պատկառելի մարդիկ կան. մտավորականներ, ուսուցիչներ, քաղաքական գործիչներ... Լրանք արդարություն են պահանջում, բայց միթե արդարություն եղել է երբսէ:

**ԱՆՏՈՒԱՆ** - Կարևոր չի, թե նրանք ինչ են պահանջում: Շարժումը պետք է ոգի ունենա: Ոգին է պրկում զանգվածի ուժը: Եվ ասեմ ավելին, սիրելիս: Յուրաքանչյուր հեղափոխություն սրտի վիրահատություն է: Մարդիկ ոտքի են կանգնում հավատով, բայց հեռանում են խարված: Լրանք հետո են հասկանում, որ նենք նպատակներ իրականացնելու համար անհրաժեշտ է ամբոխ և սրտամոտ մի բան: Օրինակ՝ արդարություն: Հասկանալով սա, շատերը հետո մեռնում են սրտի կաթվածից: Ես, իհարկե, բարոյական մահը նկատի ունեմ:

**ԷԼԻԶԱԲԵԹ** - Անտուան... Ինչ խորն է վերլուծությունդ: Ես համամիտ եմ, իհարկե, որովհետև գոյություն ունի պատմական անցյալ: Վերցնենք, օրինակ, Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը: Ինչ տվեց համառուսաստանյան այդ շարժումը հասարակ մարդուն և մտածող մարդուն:

**ԱՆՏՈՒԱՆ** - (Ժպտալով): Նկատիմ

ես, ես ու դու դասախոսություն ենք սկսել:

**ԷԼԻՉԱԲԵԹ - (ի պատասխան ժպտալով):** Բայց համաձայնվիր, որ լավ դասախոսություն է: Գիտե՞ս, թե որտեղից է սկզբնավորվում դասախոսության իմ թեման: Երբ տոն էի վերադառնում, «Առաջաստ» սրճարանի մոտ խառնաշփոթ սկսվեց: Հետո ոստիկանները մի քանի հոգու ծեծելով տարան: Երիտասարդ էին, բեղ-մորութով: Նրանցից մեկը բղավեց. «Ժողովրդուրդ, մենք քանտը ներսից ենք քանի ելու, իսկ դուք դրսից հուատվածքու»: Իսկ հեռուստացույցով ասում են, թե մի քանի խելառների շարժում է:

**ԱՆՏՈՒԱՆ - (Վորովմունքով):** Տեսնո՞ւմ ես: Եթե սուտն է արմատը, ապա ինչ համ կարող է ունենալ պտուղը: Սա մի քանի խելառների շարժում չի, ելիզարեթ: Քիչ առաջ նրանց երթն անցնում էր մեր փողոցով: Գիտե՞ս, մարդկանց վարքագծին հետևելով՝ շատ բան կարելի է կրահել: Խառնախնթոր, ի միջի այլոց ցոյցը հստակ տարբերվում է կազմակերպված շարժումից: Նրանք զինված էին երկարյա ծողերով և առաջնորդներ ունեին: Վատ հոտ եմ առնում:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Դե լավ, ժամանակից առաջ չընկնենք: Գրո՞ւմ ես վեպի:

**ԱՆՏՈՒԱՆ -** Գրում եմ:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Եվ ինչ, չի՞ ավարտվում:

Մոտենալով կնոջը՝ Անտուանը գրկում է նրան, փաղաքշում:

**ԱՆՏՈՒԱՆ -** Երբ հեռանում է մուսան, մտքերը լուս են, խոհերը թողնում են ինձ ու համբարձվում:

**ԷԼԻՉԱԲԵԹ - (ամուսնուն համրուելով):** Այդպես էլ պետք է լիներ:

(Ազատվում է նրա գոկից:) Հիմա սուրճ կրերեմ: (Դուրս է գալիս:)

**ԱՆՏՈՒԱՆ - (կնոջ ետևից կանչելով):** Եվ՝ կոնյակ:

Դրայց՝ ռազմական ինքնաքիտների վժժոց, որ հասունանում ու մարտում է հեռվում:

**ԱՆՏՈՒԱՆ - (ինքն իրեն):** Օհն...

Կարծես պատերազմ լինի: Հապա տեսնենք: (Միացնում է հեռուստացույցը:)

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐ -** Բարև ձեզ: Յուրաքանչյուր կես ժամը մեկ հետևեք լուրերի արտակարգ թողարկումներին: Ներկա պահի դրությամբ՝ ծայրահեղականները գրավել են Կառավարության շենքն ու Նախագահի հրաժարականն են պահանջում: Ավազակային հարձակման է ենթարկվել Քանաքեռավանի գորամասը: Ծայրահեղականները զինանոցի պահեստն են մտել լուսաբացին՝ բռնագրավելով «Կալաշնիկով» ավտոմատներ, «Լիմոնկա»

նոնակներ և «Մակարով» ատրանակներ, այլ զինամթերք: Գողոնը տեղափոխվել է զորանոցի բեռնատարներով, որոնք ևս առևանգվել են: Կան զոհեր, վիրավորներ: Հարգելի քաղաքացիներ: Մնացեք տներում: Քաղաքացիական կամք դրսեռորեք: Եթե ձեզ կմոտենան կասկածելի անձինք՝ խոսակցության մեջ ներքաշելու նպատակով, անմիջապես կապ հաստատեք մեզ հետ թեժ օճի հեռախոսահամարով: Քաղաքում պարետային ժամ է հայտարարված:

**ԱՆՏՈՒԱՆԸ ԱԲՁԱՍՏՈՒՄ Է ԻՆՉՈՒԱ-  
ՏԱԳՈՎԻՐԸ: ՆԵՐՍ Է ՄՏԱՆՈՒՄ ԵԼԻ-  
ՔԱՐԵՔԸ՝ ՍՊԻՐՃ և ԿՈՋԱԿ ՔԵՐԵԼՈՎ:**

**ԵԼԻՉԱԲԵԹ -** Ցրտեց կարծես: Չես մրսում:

**ԱՆՏՈՒԱՆ - (Մտքերից սթափվելով):**  
Ինչ ասացի՞ր:

**ԵԼԻՉԱԲԵԹ -** Ասում եմ՝ վառարանում կրակը մարել է: Փայտ կգցես:

**ԱՆՏՈՒԱՆ - (վառարանին մոտենալով):** Այո, իհարկե: Զսանմեկերորդ դարասկիզբն է, իսկ մենք դեռ վառարանով ենք տաքանում: (Փայտ է գցում:) Քաղաքակրթությունը ծայրահեղ հակասությունների ամբողջականություն է: Ոմանք իհմա, այս պահին, իրենց ծարպոտ հետոյքներն են տաքացնում օվկիանոսի արևի

ներքո, իսկ մեզ մոտ հեղափոխություն է և պարետային ժամ: Ոմանք ապոռում են ութասուն, իննսուն, մինչև իսկ՝ հարյուր տարի, որովհետև երկիրը լավագույն բուծօգնություն է տրամադրում նրանց, իսկ Աֆրիկայում, ադամանդի հանքահորերում վախճանվում են երիտասարդներ: Մեռնում են ընտիր տղերք, իսկ նրանց կյանքի լույսով գտնված ադամանդները շողջողում են քածերի մատանիներին:

**ԵԼԻՔԱՐԵՔԸ, որ բաժակներն է դասավորում սեղանի վրա, զարմացած շրջվում է:**

**ԵԼԻՉԱԲԵԹ -** Զհասկացա, սա ի՞նչ մենախոսություն է: Հենց քեզ մենակ եմ թողնում՝ տրամադրությունդ փոխվում է: Ինչ-որ բան էնպես չի:

**ԱՆՏՈՒԱՆ - (կեղծ անհոգությամբ):**  
Ոչ, ինչ ես ասում, սեր իմ, ամեն բան կարգին է: Պարզապես մարդիկ են մեռնում մեր սուսուփու քաղաքի փողոցներում: Նրանք ցանկանում են ընդամենը մի պարզ բան: Նրանք ուզում են մարդավայել ապրել և կյանքի որակ են պահանջում իրենց երեխաների ու թոռների համար: Բայց իշխանությունները չեն սիրում ազատամիտներին: Իշխանությունները ստրուկներ են դաստիարակում, իսկ երբ բանը

բանից անցնում է՝ դիմում են ուժային պատժամիջոցների: Քաղաքում պարետային ժամ է հայտարարված:

**ԵԼԻՉԱԲԵԹ - (ահարեկված):** Այ քեզ բան: Իզաբելին պետք է գտնել:

**ԱՆՏՈՒԱՆ -** Սակայն ինչպես: Հեռախոսակապն անջատված է: Դա, հավանաբար, արված է մարդկանց համախմբումը կանխելու միտումով: Բայց եթե անջատված է կապը, մարդիկ ինչպես կարող են գանգահարել թեժ օճի հեռախոսահամարով: Դու սրանից բան հասկանո՞ւմ ես:

**ԵԼԻՉԱԲԵԹ -** Ի՞նչ ասեմ: Քառոր տրամաբանություն չունի: Ես իիմա Իզաբելի մասին եմ մտածում: Ջոյս միշտ էլ եղել է ինքնազլուխ և ամեն բան իր ուզածով է արել: Դե, տան փոքրն էր, ծնողներն էլ երես էին տալիս: Մոտ արի, սուր-ձը սառչում է:

Նստում են սեղանի մոտ, խմում են սուրճ և կոնյակ: Լռում են:

**ԱՆՏՈՒԱՆ -** Մենք սա չենք երազել, Էլիզաբեթ, մեր կյանքը այլ կերպ պիտի կառուցվեր: Հեշտ է սիրվում այն հայրենիքը, որտեղ խնդիրներ չկան առանձնապես: Նման երկրներում մարդիկ ապրում և արարում են ներդաշնակության մեջ: Գոհ են ու կուշտ Նրանք ակամա հայրենասերներ են:

**ԵԼԻՉԱԲԵԹ -** Իսկ մենք: Ինչ կասես մեր մասին:

**ԱՆՏՈՒԱՆ -** Զգիտեմ: Խորապես հիասթափվել եմ, այլս չեմ ուզում լինել այստեղ, խարդավանքների այս միջավայրում: Գիտե՞ս, որն է ամենամեծ խնդիրը: Այս պետությունը վաճառել է մեր օդը, ջուրը, հողը... Մեր ոտքերի տակ դատարկություն է, մենք բոլորս օրստօրե ընկնում ենք, իսկ ընկնող մարդը չի կարող ստեղծագործել, չի կարող փայփայել իր կողակցին ու չի կարող օրորոց դնել դատարկության վրա: Հեղափոխության գնացող այս մարդիկ չեն հասկանում, որ կտրված են իրենց արմատներից: Նրանք սկիզբ չունեն: Ու եթե սկիզբ չունեն, վերադարձ էլ չի լինելու: Հետևաբար, այս հեղափոխությունը դատապարտված է նոյնիսկ հաղթանակի դեպքում:

**ԵԼԻՉԱԲԵԹ - (շոյում է ամուսնու այտը):** Սիրում եմ քեզ: Սիրում եմ քո ազնվությունը: Ես իմ կյանքը հանգիստ եմ ապրում, որովհետև գիտեմ, որ ամուսինս ունի կայուն սկզբունքներ: Ծնորհակալ եմ, Անտուան... Ծնորհակալ եմ...

**ԱՆՏՈՒԱՆ -** Հածելի խոսքեր՝ հածելի կնոջից: Իսկ կոնյակը ընտիր էր: Ուրեմն թող գրողի ծոցը գնա այս իրականությունն իր հեղափոխությամբ հանդերձ: Ես քեզ պարի եմ հրավիրում:

**Երաժշտություն:** Պարում են: Նրանց կեցվածքը հուշում է, որ կորուստ ճանաչող մարդիկ են: Նրանք պարում են՝ գրկախառնության մեջ միսիքարություն որոնելով:

Մինչ նրանք պարում են, վառվում է ճախսակողմյան սենյակի լույսը: Աղմուկ և կնոջ ձայն՝ դրսից. «Օգնեցիք, ի սեր Աստծո, օգնեցիք»... Չոնին վեր և բռչում անկողնուց, պատուհանին մոտենալով՝ կանգնում ականջալոր:

**ԶՈՒՏԻ** - Ահա: (*Ինքն իր հետ խոսելով՝ ձեմում է:*) Այսպես էլ պետք է լիներ: Հենց այսպես: Ես գիտեի, որ ծծումքն ու կրակը ի վերջո թափվելու են երկնքից: Բայց ե՞րբ: Ահա սկսվում է: Ի՞նչ անեմ: (*Մի կում ջուր է խմում, մի պահ կանգնում մտամոլոր:*) Ի՞նչ անեմ: Առաջինը բժշկի հախից եմ գալու: Ազատությանը մատուցված զոհը՝ զոհ չէ, այլ նպատակ: (*Ոգևորված:*) Այն, այն, ինձ ոչ ոք չի կանգնեցնի...

Ուժերը լքում են հանկարծ, միանգամից: Գլուխը բռնելով (սուր զիսացավ), քարշ գալով՝ հասնում է անկողնուն, պառկում: Մքնում է:

Աջակողմյան սենյակում շարունակում է երաժշտությունը, ապա՝ լքում: Պարն ավարտվում է:

**ԱՆՏՈՒԱՆ** - Մի բաժակ էլ խմենք: Դու ինձ հրաշալի բառեր ասացիր: Ես էլ խոսք ունեմ: Բայց չկարծես, թե հակադարձում եմ հածոյախոսությունդ: Իմ ասելիքը ծնունդ առավ այս պարի մնջախաղից:

Անտուանը մոտենում է սեղանին, կոնյակ և լցնում, Էլիզաբեթը գնում է պատուհանի մոտ:

**ԷԼԻԶԱԲԵԹ** - Հեղափոխությունը թափ է հավաքում: Լսում ես, Անտուան: Այնտեղ հարցեր են լրիծում հրազենով: Որտեղից այս ատելությունը: Ընդ որում՝ արյունը չի պառակտում նրանց, արյունը ծարավ է ծնում: Այսպես եղել է միշտ, այսպես եղել է ի սկզբանե, այն պահից ի վեր, երբ Կայենը սպանեց Արելին: Աստված իմ... Նրանք Կենտրոնական արխիվի շենքն են շրջապատել, դրոներն են կոտրում:

**ԱՆՏՈՒԱՆ** - (*Մոտենալով պատուհանին:*) Այո, տեսնում եմ: Ցավալի, ցավալի իրականություն: Մրավերջ ինչ պիտի լինի:

Դռան զանգ: **Էլիզաբեթը բացում է դրուը:**

**ԷԼԻԶԱԲԵԹ** - (*խիստ ուրախացած:*) Վերջապես...

Մտնում է Բզարելը, գրկախառնվում են:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Ախր, որտեղի էիր, առավոտից քեզ ենք սպասում, տեղու չի գտնում արդեն:

**ԻՉԱԲԵԼ** - (*կախելով անձրևանոցն ու պայուսակը*): Նախ՝ գործեր ունեի, իսկ հետո անցնում էի հարակից փողոցներով, որպեսզի շրջափակման մեջ չընկնեմ:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Արի խոհանոց գնանք, սոված կլինես: Ճիշտ է, հաց չունենք, բայց ես բլիթներ եմ թխել:

**ԻՉԱԲԵԼ** - Զեմ առարկում, սիրելի քոյս: Ահավիր քաղցած եմ:

**Գնում են:** Անտուանը փայտ է գցում վառարանի մեջ, նայում է ժամացույցին ու միացնում է եեռուստացույցը:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐ** - Լուրերի արտահերթ թողարկումն է: Այս պահի դրությամբ, ցուցարարները գրավել են օդանավակայանն ու բարիկադներ են կառուցել երկաթգծերի վրա: Երկրի Նախագահը մերժել է բանակցություններ սկսելու առաջարկը՝ հեղափոխականներին ահարեկիչներ անվանելով: Հիվանդանոցները լեփ-լեցուն են նոյնպես: Մահացածներից շատերի ինքնությունն անհայտ է: Զեր ուշադրությանն ենք ներկայացնում լուսանկարներ: Այս մարդկանց ձանաչողները թող արձագանքեն թեժ գծի հեռախոսահամարով: Հետևեք մեր թողարկումներին:

**Ներս են մտնում Էլիզաբեթն ու Իզաբելը, նստում են սեղանի մոտ:**

**ԷԼԻՉԱԲԵԹ** - (*Իզաբելին:*) Հետո ինչ եղավ:

**ԻՉԱԲԵԼ** - Սկզբում չին ուզում ներս թողնել, ասում էին՝ հայրդ հոգեկան անհավասարակշիռ վիճակում է, բայց ես համոզեցի պահակին: Հազար դրամ դրեցի գրանն, ու դոները բացվեցին:

**ԱՍՏՈՒԱՆ** - Ուրեմն Զոնիի միտ էիր գնացել:

**ԻՉԱԲԵԼ** - Այս: Ես նրան հածախ եմ այցելում:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Դե ասա, ինչպես էր:

**ԻՉԱԲԵԼ** - (*հուսահատ*): Էհ, ինչ ասեմ: Քանի դեռ գիտակցությունը չէր մթագնել՝ ոչինչ, բայց հետո կնոջը իինեց, ու էլի սկսվեց առաջվա երգը:

**ԱՍՏՈՒԱՆ** - Ցավում եմ: Իսկապես: Ինչ ցավալի բան:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - (*Իզաբելին:*): Ախր, ինձ լսեցիր այս ժամանակ: Ես հիմա էլ պնդում եմ, որ Զոնին պետք է ներկա լիներ մայրիկի թաղմանը:

**ԻՉԱԲԵԼ** - Էլիզաբեթ, մոռանում ես, ինչ էր խնդրում մեր մայրը ավտովթարից հետո:

**ԱՍՏՈՒԱՆ** - Մի բոպն... Քանի որ բացվել է այս խոսակցությունը, եկեք որոշ պարզաբանումներ մտցնենք: Տարիներ են անցել, բայց, ինչ մեղքս թաքցնեմ, մի մութ կասկած կրծում է սիրտս:

Մարիաննան ինքն էր խնդրել՝ Զոնիի հետ կապված, թե՞ դուք եք Եղբահանգման եկել՝ որպես հիմք ընդունելով հոգեվարքի խոստովանությունը:

**ԻՉԱԲԵԼ** - Հոգեվարքի խոստովանություն, որպես այդպիսին, չի եղել: Ավտովթարից հետո մայրս խոսում էր պարզ, գիտակցված՝ սառը բանականությամբ առաջնորդվելով: Երբ մայրիկը հասկացավ, որ կորցնում է կյանքը, մեզանից երդում կորզեց: Ասում էր՝ ամբողջ կյանքս Զոնին է խորտակել, երդվեք, որ այդ մարդը չի կանգնելու իմ դագաղի մոտ:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Բայց Զոնին էլ մարդ է ի վերջո: Մենք այսօր նրան ունենք կենդանի, իսկ մայրիկը չկա: Պետք էր մտածել կենդանի մարդու մասին:

**ԻՉԱԲԵԼ** - Զգիտեմ, չգիտեմ... Սրտիս մեջ քար կա, յուրահատուկ մի ծանրություն, որից չեմ կարողանում ազատվել: Երբեմն խիղճս է խոսում, երբեմն՝ տրամաբանությունս: Այս երկուսը շարունակ հակամարտում են՝ երկվություն ծնելով, ու ես ոչ մի կերպ չեմ կարողանում ազատվել դրանից: Չեմ կարողանում գտնել ինքս ինձ հետ խաղաղ ապրելու ներդաշնակությունը:

**ԱՆՏՈՒԱՆ** - Անցյալը ետ չես բերի: Ես հիշում եմ այդ օրերը: Ծարունակ վիճաբանում էիք ու անհեթե-

թություններ էիք դուրս տալիս, չգիտեիք անգամ ձեր նստելն ու վեր կենալը: Որովհետև երկու քարի արանքում էիք հայտնվել: Մի կողմից մահացածի կամքն էր, մյուս կողմից՝ խղճահարությունը: Հավատարիմ մնալով երդմանն ու ձեր մոր կամքը կատարելով, շատ լավ հասկանում էիք, որ սեփական հորը դագաղին մոտ չթողնելը դաժան է ու անմարդկային: Սակայն ինչ եղել՝ եղել է: Փորձեք ազատվել խղճի խայթերից: Մի բան գիտեմ և հաստատ գիտեմ: Զոնին ամբողջ կյանքում սիրել է Մարիաննային ու շարունակում է սիրել:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Այ, դրան համաձայն չեմ: Սիրող մարդը չի խորտակում կնոջ կյանքն ու չի թունավորում:

**ԱՆՏՈՒԱՆ** - (Դզաբելին): Դու էլ ես այդպես մտածում:

**ԻՉԱԲԵԼ** - Դեպքեր գիտեմ, գրքերում էլ եմ կարդացել, որ լինում են ամուսիններ, ովքեր ամբողջ կյանքում իրար միս են ուտում, բայց երբ նրանցից մեկը մահանում է, մյուսը չի դիմանում վշտին: Ումանք մինչև իսկ ինքնասպանության են դիմում:

**ԱՆՏՈՒԱՆ** - Համամիտ եմ: Ավտովթարը խլեց ձեր մոր կյանքը, երբ Մարիաննան ու Զոնին համեմատաբար երիտասարդ էին: Նրանք կենաց օրեր ունեին առջևում, իսկ Զոնին, հավանաբար, իր կյանքը

Մարիաննայի հետ վերակառուցելու պլաններ ուներ:

**ԻՉԱԲԵԼ** - Ուրեմն՝ ինչ: Այսօր նա իր պլաններն է ափսոսում, թե՞ կնոջ կորուստը: Այստեղ ծշմարտությունները իրարամերժ են, ու ես չեմ կարողանում ըմբռնել դրանք միաժամանակ:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Եկեք չդատենք: Բայց կարո՞ղ ենք, արդյոք, հաշտվել այս իրականության հետ: Ճիշտ է, Զո՞նին ուներ որոշ տարօրինակություններ: Բայց նրա հիվանդությունը սկսեց զարգանալ այն բանից հետո, երբ իմացավ, որ աղջիկները իրենից խլել են կնոջ դագաղի մոտ կանգնելու հնարավորությունը: Դիակի վրա արցունք թափելու հնարավորությունը: Ապաշխարելու հնարավորությունը: Չե՞ք սարսափում այս ծշմարտությունից: (*Իզաբելին.*) Մենք ինչպես ենք ապրելու վաղը... ինչպես ենք ապրելու հետո... վստահ եմ, Զո՞նին կրուժեր, բայց մեր թեթև ծեռքով ու իմարությամբ խթանեցինք նրա հիվանդությունը:

**ԻՉԱԲԵԼ** - Լոիր, քոյր, լոիր... Ես դա չեմ կարող տանել: Այն: Մենք արել ենք մի բան, ինչը երբեք չենք կարող շտկել: Մինչև հիմա ականջներիս մեջ է մայրիկի ծայնը: Հիշո՞ւ ես, հիվանդանոցում ինչպես էր աղերսում՝ բազմիցս պնդելով, թե վախճանվող մարդուն տրված երդումը անդրժելի է,

որովհետև կնքված է մահվան անեծքով:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Եթե մերկացնում ենք ծշմարտությունը, եկեք մերկացնենք մինչև վերջ: Մահացածի ետևից չեն խոսում, բայց Զո՞նիի խելագարության հարցում մեղքի իր բաժինն ունի նաև մեր մայրը: Դա ինչ դաժանություն էր: Նա ծեփեց մեր բերանները անեծքով, որն այսօր դիվական հիվանդություն է և հալածում է մեր հորը:

**ԻՉԱԲԵԼ** - Ընդունում եմ իմ մեղքը, ելիզաբեթ: Ես կանխեցի քեզ թաղման նախօրեին, երբ փորձում էիր հայրիկին լուր ուղարկել: Այսօր իմ գութն եմ մատուցում հորս՝ ափսոսանքի մեջ սեր խտացնելով, բայց մեղքեր քավելու ժամն անցել է այլս: (Խորը դառնությամբ և խղճահարությամբ:) Եթե իմանաք, հայրիկն ինչեր էր ասում այսօր, թե ինչեր էր անում...

**ԱՆՏՈՒԱՆ** - Ծանր բեռ եք վերցրել ծեր ուսերին: Եվ արժանապատվորեն պիտի կրեք ուրեմն: Զո՞նիին պետք է հածախ այցելել: Մենք այդ բացը կլրացնենք, իհարկե: Ես հիմա էլ մեծ հոյսեր ունեմ: Գլխավոր բժիշկը համոզված է, որ բուժումները դրական ելք են ունենալու: (*Իզաբելին.*) Իսկ ինչ էր ասում հայրիկը:

**ԻՉԱԲԵԼ** - Լա չի կարողանում ազատվել մեղավորության զգացու-

մից: Ասում էր՝ կինս աղի արձան է դարձել, բայց եթե պաշտպանեի ու պահպանեի նրան, իիմա ողջ կլիներ:

**ԱՆՏՈՒԱՆ** - Զգիտեմ, թե ինչ մտքեր են եռում ձեր հոր գլխի մեջ: Նրա ասածը հայտնի պատմություն է Սոդոմ և Գոմոր քաղաքների կործանման մասին և Աստծու պատուհասից փրկվող Ղովտի մասին:

**ԻՉԱԲԵԼ** - Ինչ անուն ասացի՞ր... Ղնվտ: Նա հենց այդ անունն էր կրկնում ժամանակ առ ժամանակ:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Խեղճ հայրիկ: Միշտ է սիրել եմ նրան: (*Իջաբելին.*) Անկեղծ ասա, ինձ հավատո՞ւմ ես:

**ԻՉԱԲԵԼ** - Իհարկե, նա և հայր է եղել, և մեր մանկության ընկերը... դա երբեք չի մոռացվի:

**ԱՆՏՈՒԱՆ** - Տիրեցինք... Եկեք մի քիչ էլ մեր մասին խոսենք: Եթե քաղաքում պարետային ժամ է հայտարարված, ուրեմն դրությունը լուրջ է: Զգիտեմ՝ ինչ անեմ: Խնայողություններս բանկում են, բայց քաղաքը կաթվածահար է: Ո՛չ կարողանում եմ գումար հանել բանկից, ոչ էլ փող ունեմ տանը: Նկուղում մնացած պահածոներն ենք ուստում արդեն:

**ԻՉԱԲԵԼ** - Զգիտեմ, սա ձեզ ինչքանով դուր կգա, բայց ես հեղափոխության հետ եմ:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Այսինքն:

**ԻՉԱԲԵԼ** - Վախեննալու ոչինչ չկա,

քույրիկս: Մենք ազատ ու անկախ երկրում պիտի ապրենք: Ցանկացած նվաճում իր գինն ունի:

**ԱՆՏՈՒԱՆ** - Իջաբել: Վտանգավոր խաղ ես սկսել, ուշքի արի:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - (*Իհստերիկ ծչալով.*) Մայրիկը մահացավ, մեր հայրը խելագար է, իիմա էլ դո՞ւ ես խաղում կյանքիդ հետ: (*Զեռքը պատուհանի կողմը պարզելով:*) Տես, թե ինչ է կատարվում:

**ԻՉԱԲԵԼ** - (*Կեղծ անհոգությամբ:*) Իսկ ինչ է կատարվում:

Զայներ՝ դրսից: Աղմուկ-աղաղակ: Վայնասում: Պայքյուններ, կրակոցներ: Երեքն էլ շտապ մոտենում են պատուհանին:

**ԱՆՏՈՒԱՆ** - Նրանք Կենտրոնական արխիվն են իրկիզում: Նրանք իրկիզում են մեր արժեքներն ու անցյալը:

Քարացած նայում են պատուհանից դուրս:

Վառվում է ճախակողմյան սենյակի լույսը: Վերմակը մի կողմ գցելով՝ Զոնին նառում է: Աչքերում ցնորք կա: Նայում է աջախ, հոսուսում՝ օղն ազահարքը քաշելով քրանցքների մեջ:

**ԶՈՆԻ** - Ծովիսը... Ես ձանաչում եմ այս ծովիսը... Ահա՝ սկսվեց... (*Կատվային գգուշավոր շարժումներով մոտենում է պատուհանին, քրքջում*

*հաղթական:)* Անմիտներ, մեղքի ծնունդներ, հիմա ո՞ւր պիտի փախչեք: Հիմա դատաստանի ժամն է: Հիմա ծծումք ու բոց է թափվում երկնքից: (*Սլսում է ցնցել ծաղավանդակը, ծայնը դառնում է բղավոց:*) Աստված իմ, միթե կանայք ու երեխաներն էլ պիտի ծաշակեն քո ցասման կրակը: Միթե անմեղներին էլ կկործանես ստահակների հետ: (*Ներս են վազում սանհիտարներն ու բժիշկը: Սանհիտարները ուժով պոկում են ծաղավանդակից, բայց Զոնին կարողանում է ազատվել: Կառչելով մահծակալի երկաթե գլխամասից՝ ամրող ուժով ցնցում է ու բղավում:*) Մենք բոլորս Սորոյ Գոմորի զավակներ ենք: Թողեք ինձ: Այնտեղ կանայք կան, այնտեղ կան երեխաներ, ու նրանք բոլորը այրվելու են հիմա: (*Սանհիտարները ջանում են պոկել նրան մահծակալի գլխամասից:*) Մարիաննա... Իմ Մարիաննան... Աստված իմ, դա ինչ պատիժ էր՝ չշրջվեք ու ետ չնայեք, այլապես աղի արձան կդառնաք: (*Սանհիտարները հեռացնում են մահծակալից, զապաշապիկ են հազցնում, իսկ Զոնին բղավում է:*) Մարիաննա... Ես կորցրի նրան: Հիմա նա

կանգնած է քարքարոտ ծանապարհին, հիմա նա աղի արձան է, իսկ անծրսը լվանում է նրա ցանկալի մարմինը:

**ԳԱԲՐԻԵԼ ԽՍԱՀԱԿ - (լուս սպասում էր՝ մինչև զապաշապիկը հազցնեն: Գրապանից հանելով ներարկիչը՝ մոտենում է):** Զոնի, Զոնի.... շատ հիմարություններ արեցիր: (*Սրսկում է զապաշապիկի վրայից՝ ուսագլխից:*) Մարդու ամենամեծ թշնամին նրա մտքերն են: Ահա: Հիմա կմոռանաս վշտերդ:

**ԶՈՆԻ ՔՈԼՎԱՅՆՈՒՄ Է՝ ԿԱՏԱՐՎՈՂԸ ԸՆԴՊՈՆԵԼՈՎ իբրև անխուսափելի ճակատազիր:**

**ԱԶԱԿՈՂՄՅԱՆ ՍԵՆՅԱԿ: ԱՆՏՈՒԱՆԸ, ԷԼՋԱՐԵՔԸ ու Իզարելլը հեռանում են պատուհանից, նատում սեղանի մոտ:**

**ԱՆՏՈՒԱՆ - (կոնյակ լցնելով):** Հուսով եմ՝ զոհեր չեն լինի:

**ԶԱԽՍԱԿՈՂՄՅԱՆ ՍԵՆՅԱԿԻց լսվում է անկողնու վրա շարժվող Զոնիի հառաջանքը:**

**ԶՈՆԻ -** Ես կփրկեմ նրանց:

**Լույսը մարում է երկու սենյակներում:**

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Տեսարան չորրորդ

**Նոյեմբերին կատարած տեսարանում:** Սքություն: Վարագույրը բարձրաց-  
ված չէ: Լուսարձակի ճառագայթը լուսավորում է քեմի կենտրոնը: Այստեղ  
ամրիոն է դրված: Աջից կամ ձախից զալիս է Գնդապետը: Զիգ, արժանա-  
պատիվ կեցվածք ունի: Ամրիոնի մոտ կանգնելով՝ մի պահ լուս է՝ խոսքը  
ծանրակշիռ դարձնելու միտունով:

**ԳՏԴԱՊԵՏ - Տիկնայք և պարոնայք:**  
Կամուրջներն այրված են, չկա  
ետղարձի ձանապարհ: Հեղափո-  
խությունը խժում է՝ կորսույան  
մատնելով օրենքներ, որոնք  
շղթայել են ձեր կյանքն ու ա-  
նուրջները: Ահա ժամն է: Ժամը,  
երբ դուք պետք է կողմնորոշվեք:  
Հարկ է, որ յուրաքանչյուր ոք  
ցույց տա իր դիրքորոշումը՝ իր  
լավագույնը զոհաբեկով հանուն  
հայրենիքի և հեղափոխության:  
Մենք հայրենիք ենք կառուցում,  
հիշեք սա: Ուզում եմ քաջ գիտե-  
նաք, որ դուք ապրել եք մի  
երկրում, որտեղ պետությունը  
գլխատել ու խլել է՝ բանտերում  
լուսնելով մեր պապերի ավան-  
դույթները: Հասկացեք վերջապես.  
հայրենիք կարող է կոչվել այն եր-  
կիրը, որտեղ պետությունը չի ոտ-  
նահարում իր քաղաքացիների  
իրավունքները: Չի խլում նրանց  
տաղանդը, միտքն ու մարդկային  
գործոնը, այլ նպաստում է արժա-  
նապատիվ կյանքին: Հայրենիք

կարող է կոչվել այն երկիրը, որ-  
տեղ պետությունն է սատարում  
իր քաղաքացիներին՝ տրամադր-  
ություն առաջնակարգ բուժօգնութ-  
յուն, ծերանոցներ, կրթություն:  
(Պաթոսով, բռունցքով շեշտելով  
կոչը:) Ուրեմն, ի գեն: Ուտքի ելեք,  
քանի դեռ մեր զավակների ե-  
րակներում չի լոել արյան հիշո-  
ղությունը: Ես խոսում եմ  
ժողովրդի անունից: Ես ձեզ հետ  
եմ: (Կոչն ուղղելով բեմեղում  
կանգնած զինվորներին:) Եյ, տա-  
րեք այս անպետք առարկան,  
քանզի իմ ու ժողովրդի միջև  
անջրպետ չի կարող լինել: (Երկու  
զինվոր գայխս, տանում են ամ-  
բիոնք: Պառզա:) Սակայն մենք  
զոհեր ունենք: Եկեք մեկ րոպե  
լուրջամբ հարգենք նրանց հիշա-  
տակը:

Մի պահ մնում է լուս, ի նշան  
հարգանքի՝ գլուխը խոնարհելով:  
Լուսարձակի լույսը մարտամ է:  
Գնդապետը հեռանում է, խև կա-  
րագույրը՝ բարձրանում:

### **Տեսարան հինգերորդ**

**ԲԵՄԻ ՎՐԱ ՎԻՌՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԿԱՆ:**

Զախակողմյան սենյակում մուք է:

Աջ կողմի սենյակում՝ կիսախսավար: Վառ է սեղանի լամպը, իսկ Անտուանն իր վեպն է գրում: Բոպեններ անց մոտենում է պատուհանին, ապա վերադառնում՝ գրքը շարունակելու միտունով: Դուան զանգ: Դժկամությամբ է կորվում գրքից, գնում է դեահ դրուք՝ փենփնքալով:

**ԱՆՏՈՒԱՆ -** Մարդ իր տան մեջ էլ հանգիստ չունի: Տեսնես՝ ովքեր են...

**Բացում է դուռը:** Դրսից՝ տղամարդու ձայն:

**ԹՈՌԻՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ -** Բարև ձեզ, հարգելի քաղաքացի:

**ԱՆՏՈՒԱՆ -** Բարև:

**ԹՈՌԻՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ -** (մտնում է ներս): Բոլորին բաժանում ենք այս թերթիկները: Վերցրեք, սա ձեր օրինակն է:

**ԱՆՏՈՒԱՆ -** (թերթիկը դժկամությամբ վերցնելով): Բայց ով եք: Պատահական մարդուց թուղթ ու գիր վերցնելուն դեմ եմ:

**ԹՈՌԻՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ -** Սա թուղթ ու գիր չի, բարեկամ: Սա մեր ապագա նախագահի ուղերձն է իր ժողովրդին: Իսկ ինչ վերաբերում է

ինձ, ապա իմացեք, որ ես Հեղափոխության մունետիկն եմ:

**ԱՆՏՈՒԱՆ -** Գիտե՞ս, ինչ խորհուրդ կտամ: Ծտապ կորիր այստեղից (սպառնալից քայլ է անում դեպի անձանոթը), քանի մոռութ չեմ ջարդել:

**ԹՈՌԻՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ -** (ընկրկելով): Իզնիր... Իզնիր եք տաքանում: Ով մեզ հետ չի՝ մեր դեմ է: Հիշեք սա:

**ԱՆՏՈՒԱՆ -** Չքվիր, անասուն: Ցանկացած հեղափոխություն կազմակերպում են անհաջողակալ լերեցները, որպեսզի հասնեն իշխանության:

**ԹՈՌԻՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ հեռանում է՝ համարյա փախուստի դիմելով:** Անտուանը շրխկոցով փակում է դուռը: **Թուղթը ճնորելով՝** նետում է բազմոցին, ապա նստում է սեղանի մոտ, որպեսզի շարունակի գիրը: Սակայն այլայլված՝ խոռվքի մեջ է: Կոմյակ է լցնում, մի շնչով դատարկում:

**ԱՆՏՈՒԱՆ -** Հեղափոխություն... Ուղերձ... Նորընտիր նախագահ, որին հոչակել են առանց քվեարկության և որի երեսն էլ չենք տեսել... Ես ձեր...

**Բոպե անց խորասուզվում է ընթերցանության մեջ:**

**Վառվում է ձախակողմյան սեն-**

**յակի լույսը:** Չոնին չկա: Քացվում է դրուք, սանհտարները ներս են թերում պատգարակի վրա մեկնված Գարբիել Խսահակին: Սանհտարների խալաթները արյունու են: Համոլիսատեսը պարզ տեսնում է, թե ով է պատգարակի վրա պառկածը: Նրա վզի վրա խոր կտրվածք և լերդացած արյուն է:

#### 1-ԻՆ ՍԱՆԻՏԱՐ - Ճիշտ որոշում էր:

Դիակը դնենք Զոնիի մահճակալին, մինչև կգան դիահերձարանից: Սակայն երբ կգան, ով գիտի...

#### 2-ՐԴ ՍԱՆԻՏԱՐ - Պետք է չոր սառույց լցնել մարմնի վրա: Դիահերձարանի շենքը մնացել է հեղափոխականների օղակում:

#### 1-ԻՆ ՍԱՆԻՏԱՐ - (Ճիծաղելով): Այսինքն՝ շունը տիրոջը չի ճանաչում:

#### 2-ՐԴ ՍԱՆԻՏԱՐ - (Ինհուալով): Կամ, ավելի ճիշտ՝ մեռելը տիրոջը չի ճանաչում:

**Պատգարակը թեքելով՝ դիակն անփոյթ զցում են մահճակալին:**

#### 1-ԻՆ ՍԱՆԻՏԱՐ - Գնամ սառույցի ետևից:

**Դուրս է գալիս: 2-րդ սանհտարը կանգնում է դիակի գլխավերևում:**

#### 2-ՐԴ ՍԱՆԻՏԱՐ - (Ճամածովելով): Կյանքից հեռացավ, այսինքն՝ իր

կամքից անկախ հեռացավ դոկտոր պրոֆեսոր Գարբիել Խսահակը: Նա իր կյանքը նվիրել էր խելքը կորցրած մարդկանց խելքը գտնելու գործին, բայց, իրականում, ամենամեծ խելագարը հենց ինքն էր: Քնիր, բարեկամ: Ու հանկարծ չփորձես արթնանալ:

**Մտնում է 1-ին սանհտարը՝ սառույցի տոպարակներով:**

#### 1-ԻՆ ՍԱՆԻՏԱՐ - Օգնիր:

**Տոպարակները շարում են դիակի վրա:**

#### 1-ԻՆ ՍԱՆԻՏԱՐ - Հանկարծ չմրսի...

**Համերաշխ հոհոալով՝ դուրս են գալիս: Մենյակի լույսը մարում է:**

**Քացվում է աջակողմյան սենյակի դրուք: Էլիզարեթը մտնում է ներս: Մազերը բաց են: Անձրևանցը կախելով՝ առաջանում է:**

**ԵԼԻԶԱԲԵԹ -** Ողջույն, սիրելիս: Քայլում էի ու մտածում: Երեկ հրաշալի բառ օգտագործեցիր, միանգամից երևում է, որ տաղանդավոր գրող ես:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ի՞նչ բառ:

**ԵԼԻԶԱԲԵԹ -** Հիշո՞ւմ ես: Ես ասացի հրաշալի աշուն է, արևոտ, տաք ու գժոտ, իսկ դու ասացիր՝ անտրարամադիր աշուն է: «Անտրամադիր»... Գտնված բառ է, դիպուկ: **ԱՆՏՈՒԱՆ -** Զարմանում, զարմա-

նում ու շարունակ զարմանում եմ, թե ինչպես ես կարողանում իշխել անգամ ամենաանկարևոր մանրամասները:

**ԷԼԻՉԱԲԵԹ - (գրկում է սեղանի մոտ նստած ամուսնուն):** Ամբողջ աշխարհը անտրամադիր է. մարդիկ, ծառերը, քամին... Դրսում դժոխք է, պատերին, տեղ-տեղ՝ արյան բծեր, բազմաթիվ փողոցներ փակ են, անցուդարձ չկա: Մարդիկ վախենում են: Այնպիսի տպավորություն ունեմ, թե շատ կարևոր մի բան պապանձվել է անվերադարձ:

**ԱՆՏՈՒԱՆ - (կնոջ փաղաքշանքին պատասխանելով):** Քաղաքում վտանգավոր է, գիտեմ: Մարդիկ խուսափում են իրարից, որովհետև չգիտեն, թե ով` ով է: Անիծյալ հեղափոխություն...

**ԷԼԻՉԱԲԵԹ - Եվ՝ անիծյալ մարդիկ...**  
**ԱՆՏՈՒԱՆ - Նստիր:** Քեզ համար սուրճ կպատրաստեմ:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Թող մնա՞ հետո: Սիրտս վատ բան է վկայում: Ծշուկներ են պտտվում, որ քաղաքում մոլագար է հայտնվել:

**ԱՆՏՈՒԱՆ -** Իրոք: (Նայում է ժամացույցին:) Հինգ րոպեից լուրերի ժամն է, գուց մի բան կասեն:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Իգաբելը որտեղ է:

**ԱՆՏՈՒԱՆ -** Զգիտեմ: Վաղ առավոտյան դուրս եկավ:

Ելիզաբետը նստում է բազմոցին,

ճնորած քուղբը նկատելով՝ վերցնում, բացում է:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Սա ինչ է:

**ԱՆՏՈՒԱՆ -** Մոլորված մի մարդ էր եկել: Ասում էր՝ ես հեղափոխության մունետիկն եմ: Տվեց ու գնաց, բայց չեմ կարդացել:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** (մտքում կարդում է): Ահա թե ինչ: Թոռուցիկ է: Հեղափոխությանը միանալու կոչ: Հնդորում՝ գրված է քերականական սխալներով ու տառասխալներով:

**ԱՆՏՈՒԱՆ -** Էղպես էլ գիտեի: Հիմարներ: Նրանք չեն հասկանում, որ յուրաքանչյուր ոք ազատ է: Մարդը պիտի լինի օրինապահ քաղաքացի, բայց ոչ՝ կամակատար: Գիտես, նրանք ինչպես են խլում մեր ազատությունը:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Ասա, սիրելիս:

**ԱՆՏՈՒԱՆ -** Աշխարհի արարումից ի վեր ոչինչ չի փոխվել, և այդ մարդն էլ, որ իրեն հեղափոխության մունետիկ էր կոչում, թութակի պես կրկնում էր բազմիցս ծեծված մի նախադասություն. «Ով մեզ հետ չի՝ մեր դեմ է»: Հասկանո՞ւմ ես, խոսքն ինչի մասին է:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Կոահում եմ: Բայց կուգենայի միտքը շարունակես:

**ԱՆՏՈՒԱՆ -** Համաձայն այդ խոսքի, դու կամ համախոհ ես, կամ ընդդիմադիր: Սակայն, իրականում, իր ազատությունն է զոհաբերում

թե համախոհը, թե ընդդիմադիրը: Սա բոլոր ժամանակների բթամիտ խաղերից ամենաբթամիտն ու ամենակատարյալը կարող ենք համարել, որովհետև այս խաղի մեջ ներքաշվում է ծնշող մեծամասնությունը: Ճշմարիտ ազատությունը՝ բանտարկյալի ազատությունն է: Որովհետև այս ձեռք է բերվում գոհաբերության ու պայքարի գնով: Սակայն ինչ հեշտությամբ է վաճառվում հետո...

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Իմ խելացի, իմ տաղանդավոր:

**ԱՆՏՈՒԱՆ** - Ժամը լրացավ: (*Մոտենում է հեռուստացույցին, միացնում է:*) Տեսնենք, ինչ սյուրարիզներ են մատուցելու հիմա:

Էլիզաբեթը կանգնում է ամուսնու կողքին, հեռուստաէկրանի առջև:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐ** - Բարև ձեզ: Լուրերի հերթական թողարկումն է: Կոչ ենք անում բոլոր խելամիտ քաղաքացիներին: Մնացեք տներում: Ազատության իրապարակում իրավիճակը դուրս է եկել հսկողությունից: Ցուցարարները հրազեն ունեն: Արյունոտ առձակատումից հետո գործող բանակի ուժերը նահանջել են: Զոհերի թիվը հասնում է մոտավորապես ութ հարյուրի: (*Պառկա:*) Հեղափոխական շարժմանն են միանում նորանոր ուժեր: Մարդիկ են հավաքվում Հանրապետության շրջաններից: (*Պառկա:*

զա:)

Եվ վերջում, ևս մեկ շատ կարևոր հաղորդագրություն: Քաղաքում մոլագար է հայտնվել: Նրա անունն է Ջոնի: Մայրաքաղաքի գլխավոր հոգեբուժարանից փախչելուց առաջ Ջոնի մոլագարը կտրել է հոգեբուժարանի գլխավոր բժշկի՝ Գաբրիել Խահակի քներակը՝ մահվան ելքով: Հոգեբուժարանն այժմ թշնամու օղակի ներսում է, չգիտենք, թե այնտեղ ինչ է կատարվում: Այս մարդուն քաղաքում տեսնողները թող զանգահարեն թեժ գծի հեռախոսահամարով:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Հայրին...

Կնոջ ուսերը գրկելով՝ Անտուանը նրան տանում, նստեցնում է բազմոցին:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - (*հեծկլտում է:*) Հայրին, այդ ինչ ես արել, այդ ինչ ես արել...

Անտուանը մոտենում է սեղանին, կոնյակ լցնելով՝ մատուցում կնոջը: Մի կողմ հրելով բաժակը՝ Էլիզաբեթը ոտքի է կանգնում կախարդկածի պես: Քայլում է դեպի քեմեզը՝ հանդիսատեսին դեմ հանդիման: Առաջ պարզված ձեռքերը կարծես խորդուրորդ պատեր են շոշափում: Իր անհուսության և վշտի մեջ քարանալով՝ Էլիզաբեթը ՄԵՆԱԽՈՍՈՒՄ է:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Հայր իմ... Մենք ա-

մո՞ւր, ամո՞ւր կառչել էինք աշնան քամուց ու երամ կորցրած թռչուններ էինք փրկում: Այդ խելահեղ պայքարում գոյատևելով՝ մենք փոքրիշատե ըմբռնում էինք, թե երբեմն ինչքան թանկ կարող են լինել անհջալ մարդիկ: Իհարկե... Մենք ամո՞ւր, ամո՞ւր կառչել էինք աշնան քամահածոյթից, իսկ անձրևը անտերունչ աղոթքներ էր զորում երկինքն ի վար: Մարդն իր ողջ կյանքի ընթացքում անում է ընդամենը մեկ բան: Նա զբաղված է հազար ու մի գործերով, արարում ու կառուցում է, մշակում և հայտնաբերում է, կյանքի է կոչում ու իմաստավորում է... Իրականում, անելով այս ամենը, մարդն ընդամենը պայքարում է՝ փորձելով կանոնակարգել իր կյանքն ու գոյության բանաձևը, որովհետև շուրջբոլորը քառու է:

**ՔԱՂՈՒ:** Մեղյաները հողի հավիտենական երեխաներն են: Նրանք քնած են հողի որովայնում, որը մենք երբեմ մի անգամ և շարունակարար բացում ենք բահ ու քլունգների վիրահատությամբ, որպեսզի ամփոփենք նվիրականն ու անդառնալին: Բայց ինչ է սա: Սա անելով մենք քահն ենք կանոնակարգում, թե՞ ուժ ենք հաղորդում համընդհանուր քառասին: Ո՞վ գիտի:

Հայր իմ...

Կառչելով աշնան հարափոփոխ

քամիներից և ամո՞ւր-ամո՞ւր կառչելով, մեր ենթագիտակցության ողջ զորությամբ փորձում ենք պահպանել երիտասարդություն, սեր, փաղաքշանք: Այդ խելահեղ պայքարում ծերանալով՝ մենք փոքրիշատե ըմբռնում ենք, թե երբեմն ինչքան թանկ կարող են լինել անհջալ մարդիկ:

### Մքնաւմ է:

### Տեսարան վեցերորդ

Ելիզաբետը կուչուձիգ նստած է քազմոցին, շալով փաթաթված: Նայում է մի կետի, կամացուկ ճոճվում՝ քի տակ ինչ-որ քան շշնչալով: Նրա կեցվածքը խոր վիշտ է արտահայտում: Անտունը կանգնած է պատուհանի մոտ:

### Զայներ՝ դրսից:

- 1.- Արա՛գ, արա՛գ, մեքենաները մոտեցրեք բարիկադին:
- 2.- Բենզինով շշերը բերեք:
- 3.- Զեզանից ո՞վ զենք չունի:

Քացվում է դուռը, վճռական քայլքով ներս է մտնում իզաբելը: Խոշոր պայուսակը կախված է ուսից: Անձրևանցն ու պայուսակը կախելով՝ առաջանում է: Անտունը չի շրջվում:

**ԻՉԱԲԵԼ** - Բարի օր: Ինչ եք թթվել, ի՞ն բան չի պատահել:

**ԱՆՏՈՒԱՆ** - Որտեղից ես գալիս:  
**ԻՉԱԲԵԼ** - Լավ հարց է: Էլիզաբեթ,  
 հիվանդացել ես, ինչ է...

Էլիզաբեթը չի արձագանքում:  
 Անտուանը փայտ է զցում վառա-  
 րանը, Իզաբելը շվարած մնացել  
 է սենյակի կենտրոնում:

**ԱՆՏՈՒԱՆ** - Չասացիր՝ որտեղից ես  
 գալիս:

**ԻՉԱԲԵԼ** - (ոյուրագրիո): Իսկ դուք  
 իմ հարցերին չեք պատասխա-  
 նում:

**ԱՆՏՈՒԱՆ** - Գնա, նստիր քրոջ  
 մոտ, հիմա նա քո կարիքն ունի:

Իզաբելը նատում է քազմոցին,  
 գրկում քրոջ ուսերը:

**ԻՉԱԲԵԼ** - Խոսկիր, քույրս, սիրտս չի  
 դիմանում:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Լսել ես Վերջին լուրե-  
 րը:

**ԻՉԱԲԵԼ** - (Անտուանին): Վերջին  
 լուրերը:

**ԱՆՏՈՒԱՆ** - Տեսնում եմ՝ բանից ան-  
 տեղյակ ես: Պատրաստվիր, վատ  
 նորություն եմ հայտնելու... Զեր  
 հայրը փախել է հոգեբուժարա-  
 նից:

Էլիզաբեթը հեծկլսում է:

**ԻՉԱԲԵԼ** - Ինչպես թե՝ փախել է:  
 Հսկողությունն այնտեղ ծայրահեղ  
 խիստ է:

**ԱՆՏՈՒԱՆ** - Համամիտ եմ: Սակայն,  
 իմ կարծիքով, այնտեղ հիմա այլ  
 իրավիճակ է:

**ԻՉԱԲԵԼ** - Որտե՞ղ:  
**ԱՆՏՈՒԱՆ** - Հոգեբուժարանում, ի-  
 հարկե:

Էլիզաբեթը փարաքվում է քրոջ,  
 անմխիքար հեկեկում է:

**ԻՉԱԲԵԼ** - Անտուան, մի ծգծգիր,  
 խնդրում եմ, միանգամից պատ-  
 միր ողջ եղելությունը:

**ԱՆՏՈՒԱՆ** - Քիչ բան գիտենք: Հե-  
 ռուստացույցով հայտնեցին, որ  
 Զոնին կտրել է գլխավոր բժշկի  
 քններակը: Բժիշկը մահացել է,  
 իսկ ձեր հայրը հիմա թափառում  
 է քաղաքում: Նրան որոնում են:

**ԻՉԱԲԵԼ** - Ո՞վ կմտածեր... ախր,  
 հայրիկն այնքան բարի, այնքան  
 գթասիրտ է:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Մարդը պատասխա-  
 նատու չի իր արարքների համար.  
 Խելագարից ինչ պահանջես:

**ԻՉԱԲԵԼ** - (քրոջը): Հիշո՞ւ ես... Թա-  
 փառական շներ ու կատուներ  
 էինք կերակրում, կաթնամթերք  
 էինք հասցնում մեր շենքի ցնդած  
 պառավներին... Իսկ հիշո՞ւ ես,  
 քանի անգամ ենք ծեծվել՝ ծաղ-  
 րուծանակից պաշտպանելով մեր  
 բակի Ռուզանին ու Լուսինեին:  
 Ախր, այդ ամենը հայրիկն է մեզ  
 սովորեցրել:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Զարմանալի մարդ էր:  
 Նրա ամենախորը զայրույթի մեջ  
 անգամ անպաշտպան գթասր-  
 տություն կար:

**ԻՉԱԲԵԼ** - Խեղջ Զոնի: Խեղջ հայրիկ:

Տեսնես, ինչն է նրան հունից հանել:

**ԱՆՏՈՒԱՆ** - Կարծում եմ, ազդել են փողոցում ծավալվող իրադարձությունները: Հոգեբուժարանը մնացել է ցուցարարների օղակում: Այնտեղ իհմա արյունոտ բախումներ են:

**ԻՉԱԲԵԼ** - Ասում եք՝ նրան որոն՞ւմ են:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Որոն՞ւմ են: Լուսանկարն էլ ցույց տվեցին հեռուստացույցով:

**ԱՆՏՈՒԱՆ** - Գիտե՞ք, ինչ եմ մտածում: Այդ բժիշկը, հավանաբար, երեխաներ ունի... Հարազատներ... Նրանք կարող են օգտվել այս խառը իրավիճակից...

**ԻՉԱԲԵԼ** - Այսինքն... ինչպես հասկանանք խոսքի:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Վրեմի ծարավը կուրացնում է մարդկանց: Եթե ես լինեի բժշկի դուստրը, անպայման վրեժ կլուծեի: Մանավանդ, փողոցներում շունը տիրոջը չի ծանաչում:

**ԱՆՏՈՒԱՆ** - Վրեժ կարելի է լուծել անուղղակի: Զոնիին կարող են խաբեությամբ դրել անմիտ արարքի, կարող են ուղարկել այնպիսի մի տեղ, որ մեռնելու հավանականությունը մեծ է: Խելացնոր մարդու երևակայության հետ խաղալը դժվար չի:

**ԻՉԱԲԵԼ** - Եկեք պարզ խոսենք: Ձեր ասելով՝ բժշկի հարազատները

կամ իրենք վրեժ կլուծեն, կամ անուղղակի, ձի՞շտ եմ հասկանում:

**ԱՆՏՈՒԱՆ** - Մենք չենք պնդում, թե հենց այդպես կլինի: Պարզապես չի բացառվում նաև այդ տարբերակը: Ու իհմա լավ կլինի մտածնք, թե ինչով կարող ենք օգնել Զոնիին:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Առաջարկներ կա՞ն:

**ԱՆՏՈՒԱՆ** - Ինչ ասեմ: Փորձեք կուհել, թե ձեր հայրը ո՞ւր կարող էր գնալ, քաղաքի ո՞ր փողոցներն էին նրան հարազատ:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Մայրիկը հածախ էր հիշում քնարով աղջկա արձանը: Նրանք այդ արձանի մոտ ժամադրվել են բազմիցս...

**ԻՉԱԲԵԼ** - Պայծառ հիշողություններ կան նաև Մանկական երկաթօճի հետ կապված: Հայրիկը սիրում էր կաղնիների պուրակը: Ծառ անգամ ենք եղել այնտեղ: Ինձ ման էր տալիս ուսերին դրած, իսկ ես խառնում էի նրա մազերը:

**ԱՆՏՈՒԱՆ** - Ուրեմն այսպես... քաղաքում վտանգավոր է, դուք մնում եք տանը, իսկ ես գնում եմ Զոնիին որոնելու:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Բայց...

**ԱՆՏՈՒԱՆ** - Վերջ: Սա չի քննարկվում:

**ԻՉԱԲԵԼ** - Կնոջդ կարող ես հրամայել, ինձ՝ ոչ: Ասեմ նաև, որ ուրիշ գործեր էլ ունեմ քաղաքում: Ունեմ ծանոթներ, որոնք կօգնեն ինձ:

**ԷԼԻՉԱԲԵԹ** - Բայց ինչպես կարող

Եմ մնալ տանը՝ գիտենալով, որ հայրս, քոյրս ու ամուսինս թափառում են իրար բզկտող մարդկանց քաղաքում: Լինելու բան չի, ես էլ եմ գալիս:

#### **Դռան զանգ:**

**ԱՆՏՈՒԱՆ -** Ես կրացեմ:

Քացում է դուռը: Ներս են մտնում քոուցիկ քածանողը, երկու տղամարդ: Թոռուցիկ քածանողն ու նրանցից մեկը զինվոր են, մյուսը՝ ենքասպա:

**ԹՌՈՒՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ -** (Անտուանին մատնացուց անելով): Ահա: Այս մարդն էր ինձ սպառնում, բայց ամենավաշտը՝ սպառնում էր հեղափոխությանը՝ հակաքարոզչություն ծավալելով:

**ԱՆՏՈՒԱՆ -** Նախ՝ ներկայացեք, տեսնեմ՝ ինչ եք ուզում:

**ԶԻՆՎՈՐ -** Մենք ներկայացնում ենք նորդնտիր կառավարության իշխանությունը: Պաշտպանության նախարարի հրամանով դուք ձերք բակալված եք:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ինչ նախարար:

**ԵՆԹԱՍՊԱ -** Առայժմ չենք հրապարակում անոնը, բայց ուզում ենք իմանաք, որ նախկին կառավարությունը լուծարվել է: Ձեր սիրելի նախագահը, վարչապետն ու նախարարները այլևս չկան: Ումանց գնդակահարել ենք, ոմանք էլ ճղել են արանքը:

**ԶԻՆՎՈՐ -** Իսկ մանր-մունր պաշտոնյաների լինել-չլինելը ժամանակի հարց է: (Երկիմաստ: ) Խելամիտ մարդը հոսանքին հակառակ չի գնում:

**ԵՆԹԱՍՊԱ -** (Ճեռնաշղթաներ հանելով): Կարող եք վերցնել առաջին անհրաժեշտության իրեր, հիգիենայի պարագաներ: Ձեզ հինգ րոպե ժամանակ:

Էլիզաբեթն ու Էզաբելը շվարած կանգնել են:

**ԱՆՏՈՒԱՆ -** Իսկ ո՞ւր է հրամանը, տվեք տեսնեմ:

Ենքասպան քառածալ քուրք է հանում գրապանից, մեկնում Անտուանին: Տեղից պոկվելով՝ Էլիզաբեթը կանգնում է ամուսու և զինվորականի միջև, տարածում ձեռքերը՝ կարծես իման պաշտպանելու և Անտուանին ու նրան չեն տանելու:

**ԶԻՆՎՈՐ -** Տիկին: Մի խանգարեք, այլապես ուժի կղիմենք:

**ԵԼԻԶԱԲԵԹ -** Դուք չեք կարող ձերք բակալված անմեղ մարդուն: Նա ինչ է արել, ինչպես կարող էր թշնամի դառնալ, եթե օրեր շարունակ դուրս չի եկել տնից ու ոչ մեկի հետ չի շփվել:

**ԵՆԹԱՍՊԱ -** Ռազմական ոստիկանությունը կորոշի: Հեղափոխության առաքելությունը արդարություն վերականգնելու մեջ է:

**ԱՆՏՈՒԱՆ - (Կարդալով թուղթը):**

Սպասիր, Էլիզաբեթ: Համոզված եմ՝ լուրջ բան չկա: Տեսնում ես, եթե չգնամ՝ ուժով տանելու են: Մի կողմ քաշվիր, իսկ ավելի ձիշտ՝ իրերս հավաքիր:

**ԻՉԱԲԵԼ - (Քրոջը մոտենալով):** Ես

ծանոթներ ունեմ շտաբում, կգնամ Անտուանի հետ, իսկ հետո կփորձեմ գտնել Զոնիին:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Պայուսակը հավա-

քեմ... ի՞նչ դնեմ մեջը... ի՞նչ անեմ... (Նշասենյակ գնալով:) Աշխարհի վերջն է... Ո՞ր մեղքի համար...

**Իզարելը հագնում է անձրևանոցը, Անտուանը՝ նույնպես:**

**ԱՆՏՈՒԱՆ -** Զենաշղթաների կարիք չկա, չեմ փախչի: Ազնիվ խոսք եմ տալիս:**ԵՆԹԱՍՊԱ -** Դեմ... Զեր մեղքը ձեր վիզը: Փախուստի փորձ արեցիք՝ կրակելու ենք առանց նախազգուշացման:

**Վերադառնում է Էլիզաբեթը՝ պայուսակով: Անտուանին փաքար-վում, հեկեկում է:**

**ԱՆՏՈՒԱՆ -** Ամեն բան լավ կլինի... վերջ տուր, հիմա քեզ հուզվել չի կարելի:**ԻՉԱԲԵԼ -** Անտուան... ի՞նչ ես ուզում ասել, խոսքիդ տակ ի՞նչ կա:**ԶԻՆՎՈՐ -** Լավ, լավ, իերիք է: Զեզ նմաններին չենք գնդակահարում:**ԱՆՏՈՒԱՆ -** Ճիշտ ես հասկացել, ի- զարել, մեր առաջնեկին ենք սպասում: Երկու ամսվա հղիություն է:**ԻՉԱԲԵԼ - (Էլիզաբեթին գրկելով):** Ծնորհավորում եմ, ինչո՞ւ չէիր ասում:

**Զիմվիրականները տարակու- սանքի մեջ են, անհանգիստ դր- վում են տեղում:**

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Հիմա դրա ժամանա- կը չի, իզարել: Գնայ Անտուանի հետ, տես՝ ինչ ես անում: Չուշա- նաս, քո լուրին եմ սպասում:**ԵՆԹԱՍՊԱ - (Էլիզաբեթին):** Տի- կին... Ես չունեմ մանրամասներ բացահայտելու իրավունքը, բայց ծեր դրությունը տեսնելով՝ կասեմ: Զեր ամուսնուն բան չի պատահի, հանգիստ եղեք, եթե, իհարկե, լեզուն շաղ շտա ու ամբախ-զամ- բախ չխոսի: Նրանից ստորագ- րություն են պահանջելու: Հիմա հավաքում են բոլոր նրանց, ով- քեր հետագայում կարող են ընդունածիր կուսակցություններ ծևավորել: Այդ վտանգը կանխե- լու նպատակով բոլորին տալիս են մի փաստաթուղթ, որտեղ աս- վում է՝ Ես, այսինչ այսինչյանս, պարտավորվում եմ, որ իմ հա- յացքներն ու գաղափարները չեմ օգտագործելու նորընտիր կառա- վարության դեմ: Ովքեր չեն ստո- րագրում՝ մնում են բանտում:

Դրա համար ասացի, որ հագուստ վերցնի: Բայց եթե ստորագրեց՝ այսօր իսկ տուն կգա:

**ԱՆՏՈՒԱՆ** - Ինչ նողկալի բան: Իշխանությունը դեռ կարգին չձևավորած, արդեն մարդկանց են գլխատում: Այսինքն, կամ բանտում կփտես, կամ կմեռնես բարոյական մահով: Հրաշալիք, չտեսնված երկիր եք կառուցելու, խոսք չկա:

**ԵՌԱԲԱՍՊԱ** - Ասում էի, չե՞ն, սրա նմաններին լավ եմ ճանաչում: Թվում է՝ կրթված, խելացի մարդիկ են, բայց խոսում են ամբախզամբախ՝ տհած պատմությունների մեջ ընկնելով:

**ԹՈՌՈՒՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ** - Բա ինձ ինչեր էր ասում, թող ու փախի:

**ԶԻՆՎՈՐ** - (*հեգնանքով*): Դրա համար փախար, չե՞ն:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - (*Անտուանին*): Խնդրում եմ... (*Ծունկի է իշնում*): Հանուն մեր երեխայի ստորագրի այդ փաստաթուղթը: Թող քեզ բարոյապես գնդակահարեն, բայց ողջ-առողջ տուն վերադարձիր: Խնդրում եմ...

**ԱՆՏՈՒԱՆ** - (*կնոջը բարձրացնելով*): Հանգստացիր, ելիզաբեթ: Մենք բոլորս բազմիցս մեռնում ենք մեր եզակի կյանքում: Իմ կյանքի վրա կթքեմ հանուն համոզմունքի, հանուն պատվի կամ շնորհապարտության, բայց մեր սիրո վրայով չեմ անցնի երբեք: Ես կստորագ-

րեմ այդ անիջալ փաստաթուղթը: Կստորագրեմ, գրողը տանի:

**ԵՌԱԲԱՍՊԱ** - Գնացինք:

Անտուանին իրենց մեջ առնելով, զինվորականները դուրս են գալիս, նրանց հետևում է Իզարելը, սակայն վերադառնում է:

**ԻԶԱԲԵԼ** - Պայուսակս մոռացած:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Շարունակ ուզում եմ հարցնել ու մոռանում եմ: Ինչ կա ծանր պայուսակիդ մեջ:

**ԻԶԱԲԵԼ** - Գրքերս են: Ուսանող եմ, չե՞ն:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - (*ձեռքը պայուսակին ցցելով*): Թող տեսնեմ:

Իզարելը փորձում է դիմադրել, Ելիզաբեթը խլում է պայուսակը:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - (*պարունակությանը ծանոթանալով*): Թուցիկներ ես բաժանում:

**ԻԶԱԲԵԼ** - Այո, բաժանում եմ: Ասել եմ, չե՞ն, որ կողմ եմ հեղափոխությանը: Մենք պիտի լավ ապրենք: Ես քո հնամաշ կոշիկներով ու շրջագեստներով եմ մեծացել: «Ոչինչ», - ասում էր մայրիկը, - մեծ քրոջդ շորերն են, տես, ինչ լավ են պահպանվել, ամոթ բան չկա»: Իսկ համադասարանցիներս ծաղրում էին, արհամարհում: Ամբողջ կյանքում խեղդվել եմ աղքատության հոտից: Բավական է:

Մի կերպ հասնելով աքոռին՝ Էլիզաբեթը նստում է: Նրա ողջ կերպարանը հուսահատություն է արտացոլում:

#### **ԻՉԱԲԵԼ - (պայուսակը վերցնելով):**

Մի հոգվիր, խնդրում եմ, լավ օրերը դեռ առջևում են: Արի քեզ ննջարան տանեմ, որ խիդս հանգիստ լինի:

#### **ԷԼԻՉԱԲԵԹ - Գնա, չեմ ուզում քեզ տեսնել:**

Իզաբելը զմում է, Էլիզաբեթը փայտ է զցում վառարանի մեջ, միացնում է հեռուստացույցը: Երածշտություն:

#### **ԷԼԻՉԱԲԵԹ - Մի տեսակ լավ չեմ: Երազն ու իրականությունը խառնվել են: Գլխիս մեջ քառո է... Սա ինչ կյանք է, ախր... (Պառկում է բազմոցին:)**

Վառվում է ձախակողմյան սենյակի լույսը: Ներս են խուժում երկու սանհիտարները: Վախեցած են: Յուրաքանչյուրի ձեռքում մահակ կա: Քաշելով մահճակալը, որի վրա բժշկի դիակն է, դեմ են տալիս դրանք:

#### **1-ԻՆ ՍԱԱԼԻՏԱՐ - Հազիվ պրծանք:**

#### **2-ՐԴ ՍԱԱԼԻՏԱՐ - Եթե գտնեն՝ բաներս բուրդ է:**

#### **1-ԻՆ ՍԱԱԼԻՏԱՐ - (ականջ է դնում):**

Ոտնաձայներ լսո՞ւմ ես:

#### **2-ՐԴ ՍԱԱԼԻՏԱՐ - (ականջ դնելով):**

Չէ, քեզ թվում է:

**1-ԻՆ ՍԱԱԼԻՏԱՐ - Զի թվում, հաստատ բան եմ ասում:**

**Գողգոռոցներ դրսից:**

**1.- Էստեղ մարդ կա:**

**2.- Ուրիշ ո՞ւր պիտի փախչեին:**

**3.- Դուռը կոտրեք, դուռը:**

**Դռանը տեղացող հարվածներ:**

Սանհիտարները ահարեկված են, բայց և ունեն պայքարելու վճռականություն:

**Աջակողմյան սենյակում լրում է երաժշտությունը:**

#### **ՀԱՂՈՐԴԱՎԱՐ - Կրկին բարև ձեզ:**

Եթերում լուրերի արտահերթ թողարկումն է: Որոնումները շարունակվում են: Ձոնի անունով մոլագարը դեռևս ազատության մեջ է: Ահա նրա լուսանկարը: Նրան տեսնողները կամ ծանաչողները թող զանգահարեն թեժ գծի հեռայիսոսահամարով: Ուշադրություն:

**Բազմոցից պոկվելով՝ Էլիզաբեթը նստում է էկրանի դիմաց:**

Զախակողմյան սենյակում դուռը կոտրում են: Մի քանի խելագար՝ գծավոր պիժամաներով, ներխուժում են սենյակ՝ շրջելով մահճակալը: Բժշկի դիակը, գլորվելով, բեմից ընկնում է դասիիմ: Ակսվում է ձեռնամարտ: Ծիչեր: Հիշոցներ:

Այս ընթացքում հնչում է հեռուստատեսային հաղորդագրությունը՝ դեպքերը ծավալվում են հաղորդագրության ներք:

**ՀԱՂՈՐԴԱՎԱՐ** - Մայրաքաղաքի գլխավոր հոգեբուժարանում բունտ է: Ցուցարարները կոտրել են հոգեբուժարանի դռները՝ հոգեկան հիվանդներին ազատություն շնորհելով: Իրենց շարքերը համարելու նպատակով զենք ու հագուստ են բաժանել հիվանդներին: Զգուշացեք: Բոլորդ մնացեք տներում: Քաղաքում զինված խելագարներ են վխտում:

Սանհիտարները պարտվում են անհավասար մարտում: Հոգեկան հիվանդները ոլորում են նրանց թևերն ու տաճում են: Տեսարանն ավարտվում է. «Զգուշացեք: Բոլորդ մնացեք տներում: Քաղաքում զինված խելագարներ են վխտում» նախադասությամբ:

### Տեսարան յորերորդ

Զախակողմյան սենյակում մքություն:

Աջակողմյան սենյակ: Էլիզարերը պառկած է քաղմոցին: Բացվում է դռուը, Անտուանը մտնում է ներս:

**ԱՆՏՈՒԱՆ** - (ուրախ): Որտե՞ղ ես, սերիմ:

Քաղմոցից պոկվելով՝ Էլիզարերը վազում է նրան ընդառաջ:

**ԵԼԻԶԱԲԵԹ** - Վերջապես... (Գրկայառնվում են:)

**ԱՆՏՈՒԱՆ** - Գիտե՞ս, որտեղից եմ գալիս:

**ԵԼԻԶԱԲԵԹ** - Որտեղից:

**ԱՆՏՈՒԱՆ** - Հիմարների թագավորությունից: Չես կարող պատկերացնել, թե բթամտության ինչ արգելվներ եմ հաղթահարել:

**ԵԼԻԶԱԲԵԹ** - (ցնծությամբ): Դե արի նշենք վերադարձդ: Համ էլ կպատմես գլխովդ անցածը:

Անձրևանցն ու պայուսակը կախելով, Անտուանը գրկում է կնոջը, նստում են սեղանի մոտ:

**ԱՆՏՈՒԱՆ** - Մի րոպե: (Փայտ է գցում վառարանը:) Որտե՞ղ է իմ սրտի բալասանը:

**ԵԼԻԶԱԲԵԹ** - Ինձ թվում էր՝ քո սրտի բալասանը ես եմ: (Կոնյակի շիշը ամուսնուն մեկնելով:) Ահա:

Անտուանը լցնում է, ցրված մտքերը ժողովելով՝ դատարկում քածակը:

**ԵԼԻԶԱԲԵԹ** - Դե, պատմիր:

**ԱՆՏՈՒԱՆ** - Սկզբում մտածում էի՝ կիհմողեմ ու կխուսափեմ փաստաթուղթը ստորագրելուց: Բայց հիմարի հետ վիճաբանելն անհնար է, որովհետև իր հիմարության դաշտում նա ամենաուժեղն է:

Բանը հասավ նրան, որ ինձ ուզում էին կալանավորել: Ինչ պիտակ ասես չկպցրեցին. Էլ ազգի դավաձան, Էլ արկածախնդիր ու հեղափոխության թշնամի... Մի գաղտնիք ասեմ:

**ԷԼԻՉԱԲԵԹ - Դեմ...**

**ԱՆՏՈՒԱՆ -** Կեղծ ստորագրություն եմ դրել: Բթամիտ են՝ ահավոր: Մտքներով չանցավ, որ ստորագրությանս իսկությունը պետք է ծշտել՝ անձնագրում եղածի հետ համեմատելով: Սակայն դրանց այդքան խելք որտեղից:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Այնուամենայնիվ, ասածի արեցիր:

**ԱՆՏՈՒԱՆ -** Դատապարտում ես:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Ոչ, իհարկե: Ամեն գնով պահպանել ես մարդկային քո դեմքը: Միշտ էլ սիրել եմ քո հաստատակամությունը, գնահատել եմ՝ հպարտության թաքուն զգացումով:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ծնորհակալ եմ: Ինչո՞վ էիր զբաղված:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Քնել էի: Երազն ու իրականությունը խառնվել էին... Արթնացա հեռուստացույցի ծայնից: Գիտե՞ս, ինչ է եղել:

**ԱՆՏՈՒԱՆ -** Հաստատ արտառոց միքան են հայտարարել զոմբիացնող էս արկդով:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Այդպես էլ կա: Պատկերացնում ես, հեղափոխության, այսպես կոչված, մարտիկները բացել են հոգեբուժարանի դռնե-

ով՝ գծերին ազատություն շնորհելով: Հետո զենք ու հագուստ են բաժանել նրանց:

**ԱՆՏՈՒԱՆ -** Հեղափոխություն՝ առանց կանոնների: Նպատակը արդարացնում է միջոցները: Ահա ևս մի չարչրկված ծշմարտություն, որը երբեք չեմ ընդունել ու չեմ ընդունելու:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Նրանք զինվոր են դարձրել հոգեկան հիվանդներին... մտածելն իսկ սարսափելի է:

**ԱՆՏՈՒԱՆ -** Այո, սարսափելի է: Իգարեկը չի վերադարձել:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Մի՛թե քեզ հետ չէր:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ինձ հետ էր մինչև շտար մտնելը, բայց հետո ինչ-որ մարդիկ մոտեցան, երևում էր, որ մտերիմ են, ու քոյլոդ գնաց: Կասկածներ ունեմ, ելիզաբեթ, կասկածներ...

**ԷԼԻՉԱԲԵԹ -** Այսինքն...

**ԱՆՏՈՒԱՆ -** Ինձ թվում է, իզաբելը ևս ներքաշված է այս շարժման մեջ:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** (*ηադարից հետո*): Ճիշտ ես նկատել: Պայուսակի մեջ թուուցիկներ գտա քո գնալուց հետո: Ինչ կարող ենք անել:

**ԱՆՏՈՒԱՆ -** (*ևս մի բաժակ լցնելով*): Կիսուն նրա հետ, տեսնենք՝ ինչ դուրս կգա: Ամեն դեպքում՝ երեխա չի, որ փակենք տանը: Մարդուն պետք է առաջնորդել խելամտությամբ, քանզի ուժը ա-

տեղություն է ծնում, իսկ պարտադրանքը՝ հակառակն անելու ցանկություն: Տեսնենք:

**Քացվում է դուռը:** Ներս են մտնում Իզարելն ու Զոնին: Վերջինս խիստ երկյուղած է, անհավասարակշիռ: Իզարելը նրան բերում է ճեղքից բռնած, համարյա քարշ տալով: Զոնին փորձում է փախչել, Իզարելը կառչում է նրանից:

**ԱՆՏՈՒԱՆ -** Առաջ արի, հայր, քեզ շատ էի կարոտել:

**Փարաքվելով հորը՝ Էլիզարելը համբուրում է նրան:** Բոլորը սեղանի շորջ են նստում:

**ԵԼԻԶԱՐԵԼ -** Սոված կլինեք, ես հիմա...

**ԻՉԱԲԵԼ - (քրոջը):** Դա քիչ հետո... Դրսում հրաշալի աշուն է: Ես ու հայրիկը զբոսնում էինք կաղնիների պուրակում, Մանկական երկաթգծին հասանք: Շոգեքարշը չկար: Բարձրացանք վագոն ու պատկերացնում էինք, թե վագոնն ինչպես է գլորվում ուելսերի վրայով՝ ճեղքելով աշնան քամին ու անձրևը: Ճիշտ եմ ասում, հայրիկ:

**ԶՈՆԻ - (ցնցվելով):** Այո... Վագոնն իսկապես շարժվում էր:

**ԵԼԻԶԱՐԵԼ -** Թող Իզարելն ու Զոնին լվացվեն, իրենց կարգի բերեն, իսկ ես ճաշը կտաքացնեմ:

Հետո կընթրենք բոլորս միասին, կիհշենք իին-իին բաներ:

**ԱՆՏՈՒԱՆ -** Լավ միտք է: Ես էլ մի բաժակ կխմեմ, անիջալ լարվածությունը չի թողնում:

**ԵԼԻԶԱՐԵԼ -** Դն, վեր կացանք:

Էլիզարելը գնում է խոհանոց, Զոնին ու Իզարելը դրւուն են զալիս մյուս դրանով: Անտուանը խմում է: Դռան զանգ:

**ԱՆՏՈՒԱՆ -** Տեսնես հիմա ինչեր են ասելու...

**Քացում է դուռը:** Ներս են մտնում ենթասպան և երկու զինվոր, մեկը քոռոցիկ բաժանողն է:

**ԶԻՆՎՈՐ -** Հանդիպումները շարունակվում են, Անտուան: Մեզ չէիր սպասում, չէ:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ստորագրել եմ, հիմա ինչ եք ուզում:

**ԵՆԹԱՍՊԱ -** Քեզ հետ հարց չկա: Զոնին այստեղ է:

Անտուանն ապուշ կտրած նայում է նրանց՝ փորձելով հասկանալ իր անելիքը:

**ԹՈՌՈՒՑԻԿ ԲԱԺԱՆՈՂ -** Ժխտելն անհմաստ է, տեղեկացված ենք վստահելի աղբյուրից:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ես չեմ էլ փորձում...

**ԶԻՆՎՈՐ -** Ուրեմն՝ որտեղ է, պիտի տանենք նրան:

**ԱՆՏՈՒԱՆ -** Աղաչում եմ, ասացեք, ո՞ւր եք տանելու Զոնիին:

**Զինվորները հայացքներ են փոխանակում:**

**ԱՆՏՈՒԱՆ -** Երդվում եմ, երբեք չեմ քննադատի հեղափոխությունը: Օրինապահ քաղաքացի եմ եղել ու կլինեմ: Ազնիվ խոսք եմ տալիս ու խնդրում եմ: Զոնիին հանգիստ թողեք: Թող մնա մեզ մոտ: Մենք կխնամենք նրան, կտանենք լավագույն մասնագետների մոտ: Գարդիել Իսահակը հաստատ համոզված էր, որ նրա խելագարությունը բուժման ենթակա է:

**ԵՆԹԱՍՊԱ -** Գիտենք, որ խոշոր մտավորական ես, մեր իրականության լավագույն գրողներից մեկը: Եթե խոստանաս, որ լեզուդ շաղ չես տա այսուայնտեղ, կվստահենք քեզ այդ գաղտնիքը: Թեև գաղտնիք կոչվածը՝ գաղտնիք է այս պահի դրությամբ: Մի քանի ժամից հեռուստացուցով կհրապարակեն ծշմարտությունը:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ես կլոեմ, խոստանում եմ:

**ԶԻՆՎՈՐ -** Հոգեբուժարանի շենքն այրվել-ավերվել է: Բանտերը լեկիեցուն են: Զնայած խելագարությանը՝ Զոնին հանցագործ է: Ուազմական դատարանը նրան դատել է պատերազմի օրենքով: Զոնիին գնդակահարելու են:

**ԱՆՏՈՒԱՆ -** Չէ՞ որ խելագար է: Նրան փրկելու տարբերակ չկա՞:

**ԵՆԹԱՍՊԱ -** Չեմ կարծում: Հրամանը գրանումս է:

**ԱՆՏՈՒԱՆ -** (*իրեն հավաքելով*): Այդ դեպքում ձեզ մի բան պիտի խնդրեմ: Երդվում եմ պատվովս, Զոնին այստեղից դուրս չի գա: Չեզ հետ խոսում եմ ինչպես տղամարդը՝ տղամարդու հետ: Դուք էլ ընտանիք ունեք, ծնողներ: Խնդրում եմ, երկու ժամից եկեք: Կինս հիմա ընթրիք է պատրաստում, իսկ Իզարելը Զոնիին օգնում է, որ լվացվի ու մարդու տեսք ստանա: Հնդամենը երկու ժամ: Ինչ կասեք:

**Զինվորականները լրաւմ են՝ ասվածը ծանրութեքն անելով:**

**ԱՆՏՈՒԱՆ -** Հիմա կոնյակ կրերմ:

**ԲԵՐՈՒՄ Է ԿՈՆՅԱԿԻ ՃՐԱԳՎԱԾ ՇԻՀ, ՄԵԿՑՈՒՄ ՆՐԱՑ:**

**ԱՆՏՈՒԱՆ -** Մնացեք ներքեսում, մուտքի մոտ՝ փախուստի հնարավորություն բացառելու համար: Խնդրում եմ: Հնդամենը երկու ժամ:

**ԵՆԹԱՍՊԱ -** (*կոնյակի շիհը վերցնելով*): Համոզեցիր: Երկու ժամ, ոչ ավել:

**ԱՆՏՈՒԱՆ -** Ծնորհակալ եմ, տղերը: Զեր լավությունը չեմ մոռանա:

**Զինվորականները դրաս են գալիս: ՍԵՆՅԱԿ Են մտնում Էլիզարեթը, Զոնին և Իզարելը: Էլիզարեթը**

**բերում է ուտեստ, ափսեներ:** Ի-  
զարելը օգնում է նրան: Մեղան են  
զցում: Զոնին խնամված, կոկիկ  
տեսք ունի: Ի վերջո՝ հավաքվում  
են սեղանի շուրջ:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Կարծես դուք զանգ  
լսեցի...

**ԱՍՏՈՒԱՆ** - Մարդահամար են անց-  
կացնում, ծշտում էին այստեղ  
բնակվողների թիվը:

**ԻՉԱԲԵԼ** - Բաժակները լցուեք: Ինչ  
հաճելի է, երբ բոլորս միասին  
ենք:

**ԱՍՏՈՒԱՆ** - Եկեք խմենք այս հան-  
դիպման համար: (Զոնիին.)  
Ճիշտ եմ ասում, հայրիկ:

**ԶՈՆԻ** - Ոչ, եկեք խմենք Մարիան-  
նայի համար: (Դուստրերին.) Զեր  
մայրը չտեսնված կին էր:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Ճիշտ է, եկեք խմենք  
Մարիաննայի համար, համա-  
ձայն եմ հայրիկի հետ:

**ԻՉԱԲԵԼ** - Բառերը մի տեսակ ավե-  
լորդ են դառնում: Ծնորհակալ եմ,  
հայր: Խմեցինք:

#### Խմում են:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Տեսեք, ինչ կարկան-  
դակներ եմ պատրաստել:

**ԱՍՏՈՒԱՆ** - Դու միշտ էլ ընտիր  
խորտիկներ ես պատրաստում:  
Բողոքներ չկան:

**ԶՈՆԻ** - (Անտուանին): Չորս տարի է՝  
ամուսնացած եք, բայց ծեն-ծուն  
չկա: Չեք ուզո՞ւմ մի բան մտածել:

**ԱՍՏՈՒԱՆ** - Ինչպես չէ: Արդեն

մտածել ենք: Մայիսին կծնվի  
թոռնիկդ:

**ԶՈՆԻ** - Իսկապես: Դե լցուու, իո ա-  
մեն անգամ չեմ հիշեցնելու:

**ԱՍՏՈՒԱՆ** - (լցուու է, ապա՝ բաժակ  
բարձրացնում): Ես քիչ տարիներ  
եմ ապրել այս աշխարհում, բայց  
կարողացել եմ գտնել հետաքր-  
քիր մի ծմբարտություն: Մարդը  
սկսում է դավաճանել ինքն իրեն,  
երբ ուրանում է սերը: Այս աշ-  
խարհում բոլոր պտուղները գոյա-  
նում են սիրուց. հողի պտուղը,  
երկնքի պտուղները, որ կոչվում  
են անձրև, ցող, ձյուն... Անձնվեր  
աշխատանքի պտուղները... (Զո-  
նիին.) Մենք քեզ հայր ենք կո-  
չում, որովհետև սիրում ենք  
անկեղծ ու անմնացորդ: Էլիզա-  
բեթն ու Իզարելը քո՞ սիրո պտու-  
ղներն են, հայր, իսկ ամիսներ անց  
թող ես ունենալու: Դու հարուստ  
մարդ ես:

**ԻՉԱԲԵԼ** - Ինչ երջանիկ օր է այսօր:

#### Խմում են:

**ԵԼԻՉԱԲԵԹ** - Եկեք պարենք:

**ՄԵՂԱՆ** երածշտություն: Պարում  
են Զոնին ու Էլիզաբեթը և Իզա-  
բելն ու Անտուանը:

**ԻՉԱԲԵԼ** - Հիմա էլ ես եմ ուզում պա-  
րել հայրիկի հետ:

**ՓՈԽՎՈՒՄ** են զույգերով: Անտու-  
անն ու Էլիզաբեթը նստում են:  
Իզաբելը չի խոսում: Նա փաքաք-

վել է հորը՝ զլովար կրծքին հեճած: Մինչ պարում են Խզաբելն ու Զոնին, ձախակողմյան մութ սենյակն է մտնում գծավոր պիժամայով մի խելազար: Նա վառվող մոմ ունի ձեռքին, ափով պահպանում է դյուրաքեք կրակը: Ոչինչ չի խոսում, պարզապես քարշ է գալիս դեպի սենյակի անկյունը: Նստում է հատակին՝ ծնկները հավաքելով, խոնարհելով զլովարը: Լոկ՝ մոմի կրակն է պահպանում: Քանի որ այս սենյակում մութ է, հանդիսատեսին նկատելի է ընդդամենը խալար անկյունում անշարժ ուրվագիծը, իսկ մոմի կրակը պայծառ կետ է մքության մեջ: Խելազարի հայտնությունը ակնքարքային է: Նա չի շեղում հանդիսատեսին:

Աջակողմյան սենյակում շարունակվում է Խզաբելի և Զոնիի պարը: Երաժշտությունը լրում է: Պարողները վերադառնում են սեղանի մոտ:

**ԱՆՏՈՒԱՆ -** Մի խոսք էլ հասունացավ, սպասեք, լցնեմ բաժակները:

**ԶՈՆԻ -** Թույլ կտան ես ասեմ:

**ԱՆՏՈՒԱՆ -** (*ժամացույցին նայելով*): Իհարկե, հայր, իհարկե:

**ԶՈՆԻ -** Ինձ թվում էր՝ ես ծեր եմ ու

ավելորդ: Տարիներ շարունակ տանջվել եմ խղճի խայթից, որովհետև չհասցրեցի իմ լավագույնը նվիրել կնոցս: Ես շատ հիմարություններ եմ արել: (*Աղջիկներին*) Խնդրում եմ, ներեք ինձ, եթե կարող եք: Ապրել եմ իրականության մեջ խորտակված երազներով, իսկ կյանքս մղձավանջների շղթա է եղել: Բայց հիմա մտքերս պարզ են ու հստակ, կարծես երբեք չեմ եղել հոգեբուժարանում: Թվում է՝ անտեսանելի մի ձեռք վերցրել է ինձանից ողջ տառապանքս՝ թողնելով հուշեր, որոնք պայծառ են և լուսավոր:

**ԻՉԱԲԵԼ -** Այո, հայր, կյանքը շարունակվում է:

**ԷԼԻՉԱԲԵԹ -** (*թաց աչքերը սրբելով*): Թող մեր բոլոր կորուստները մնան անցյալում:

**ԶՈՆԻ -** Ինձ վախեցնում է «անցյալ» բառը: Բայց հոյս եմ գտնում սրտիս մեջ, երբ մտածում եմ ապագայի մասին: Եկեք խմենք լավ օրերի համար: Մենք բոլորս ունենք թաքուն աղոթքներ, որոնք չեն մոռացվում, իսկ Աստված իրականություն է դարձնում մեր նվիրական ցանկությունները, երբ մոտենում է ապրելու ժամը: Եկեք խմենք ապրելու համար:

**Դռան զանգ:** Բաժակ բարձրացրած նրանց ձեռքերը քարանում են օդում:

Ձախակողմյան սենյակի խելազարը մոտենում է քեմեզին,  
փշում-հանգնում է մոմը:

# ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

## գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամատուրգիա», 2018  
Տպագրվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝  
ԿԱՐԻՆԵ ԽՈԴԻԿՅԱՆ

Կազմը և էջադրումը՝  
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:  
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ  
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար  
դիմուն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Ստորագրված է տպագրության 14.06.2018  
Դիմուն՝ պայմանագրային:

Դրանցման վկայական՝ 01Մ 000089

Չափը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 10.25 տպ. մամուլ:  
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ:

Տպագրվել է  
«Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ով՝  
ՀԳՄ «Լ. Զ. ՍՈՒՐԵՆՅԱՆ» տպագրատանը: